


656

8(082)

4 - 79



2 NOV 2009

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ԳԱԼՈՎԱՆԻ Հ 63

Գ Ր Ի Գ Ո Ր Ա Խ Ե Ց Ե Ա ն

# ԹԱՏՐՈՆԱԿԱՆ

## ԳՐԱԴԱՐԱՆ

II հատոր

1. Քւորձալիք
2. Մի բառ մինիուսին
3. Փազանի յետելից
4. Փորորիկ
5. Զարաձմի
6. Զարագուշակ նաևաբան

39

Թ Ի Ֆ Լ Ի Ս  
Էթերական օր. Ն. Աղամենանցի, Պոլից. 7.  
1911

(082)  
- 79

## ԹԱՏՐՈՒՄՆԵՐՆ ՊԻԼՍՆԵՐ

Արէլեան Ա. եքսպրոպրիացիա. կատակ. մի  
գործ. երեք պատկերով

» Գիւղի վարժապետ. պիէս երկու գործ.	20
» Անկոչ ճիւր, պիէս մի գործ.	30
» Խելագար Մինաս, պիէս մի գործ.	25
» Մկիճի հարսանիքը, պիէս մի գործ.	20
» Պօչտի երազը, պիէս մի գործ.	20

Արաբսիան Պ. ժողովրդական թատրոն ժող. Ա.  
Եւս Նոյնի ժողովածու Բ. հատոր.

Բիերնոսի, Նորապահներ, կատակ. Երկու  
գործ. թարգմ. Յովի. Տէր-Մարտիրոսեանց

Բօդրի Մզիւստ Վաքրի, կոմիդիա. դրամա  
չորս գործողութեամբ

Գոլուբին, Փակուած գրան մօտ, պատ. մհ-  
նախոռութիւն, թարգմ. Վ. Տէր-Գրիգորիանց

Գրիգորիան Ռ. Մուխոսի-ամի, գրամ երեք  
արարուածով (պատահել է Ն. քաղաքում)

Ֆըշիւրել Ֆ. Նոր կուսք, թատերդ երեք  
արարուածով, թարգմ. Տ. Վ.

Երիցեան Ա. Սխալ ճաշիւ, կօմեդ. 4 գործ.  
Դաղեան Բարի Է Սուրբիկը. մանկական

պիէս 2 գործ  
Եսայեան Յ. Սօնայի նշանադրէք կամ Մօյի-  
քուլի վրէմք. վօղէիլ մէկ գործողութեամբ

Եակովլի, Կանացի հետաքրքրութիւն կամ Ա-  
գամ ու Եւս, կատակ. 2 գործ., թարգմ. Վըոյր

Էմմասէսո Էմմանուէլ, ողբերգ 5 արար  
Թառայեան Ս. Թագնուած կայծեր, գրամա

հինգ գործողութեամբ

Իրսէն, Հասարակութեան նեցուկները, գրա-  
մա չորս գործ. թարգ. Լ. Բարայեան

Լուազօն Արիւնի Աւելուարանը, գրամատ. մի  
անցք, 1 գործող. թարգմ. Տ. Զաւէնի

Լիսինկո-Կօնիչ Ի. Վ. «Բնդունելութեան  
օրը» վօդ. մէկ. գործ. թարգմ. Վ. Մելքոնան

Լէսնի. Նիօրէ կամ Մարմարիայ վար-  
ժուէնին, ֆարս երեք արարուածով

Հառապտման, Զուրհակներ, գրամա 4 գործ.  
թարգմ. Տիկ. Մ. Արտեմիան

Դաղարեան Յակ. Եագ'Աստ, վօղէիլ մէկ ա-  
րարուածով և երկու պատկերով

Մանուէլեան Մ. Դրամատիկական Էտիւդ-  
ներ, պիրք առաջին (6 պիես)

» Դօկտ. Երւանդ Բօշայեան, կոմ. չորս գործ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ԳԱԼԱՑԵԱՆԻ Ն 63

ԳՐԻԳՈՐ ԱԿԵՍԵԱՆ

# ԹԱՏՐՈՒԱԿԱՆ

8(082)

Վ-79

Մ/

# ԳՐԱԴԱՐԱՆ



1. Զւարձակիք
2. Մի բառ մինիստրին
3. Գազանի յետեւից
4. Փորորիկ
5. Զարաձձիք
6. Զարագուշակ նատարան

Թ. Ի. Ֆ. Լ. Ի. Ա

Էլեկտրական տպարան ՕՐ. Ե. Աղանեանի, պօլից., 7.

1911

21.02.2013


656

## ԶԻԱՐՃԱԼԻՔ

Դրամա 3 արտ. Շնիգլերի

Թարգմ. Գ. Ա հ ե ս ե ս ս ն

Пиеса „Забава“ разрѣшена для представ-  
ленія на сценахъ края.



Ա. Ա. Ր Ա. Ր Կ Ա. Ծ

Ֆրիցի սենեակը, ճոխ եւ մաքուր

ՁՐԻՑ և ԹԷՇՈԴՈՐ

(Առաջինը մտնում է Թէօդօրը ձեռքին վերաբերուն. զլիարկը վերցնում է, փայտը մնում է ձեռքին):

ՖԲ.—(դռան յետեւ) Ոչ ոք չէ եղել...

ԾԱՌ.—(դռան յետեւ) Ոչ ոք, պարո՞ն:

ՖԲ.—(մտնելով) Կառքը կարելի՞ է, կարծում եմ, արձակել:

Թէ.—Ի հարկէ: Ես կարծում էի դու արդէն այդ արել ես:

ՖԲ.—(մոտենալով նորից դռանը) Արձակեցէք կառքը: Դուք էլ, ասենք, կարող էք գնալ. այսօր դուք ինձ հարկաւոր չէք: (Վերադառնալով Թէօդօրին) Ինչու չես հանւում:

Թէ.—(գրասեղանի մօտ) Այստեղ քեզ շնամակ կայ: (Տեռանալով գրասեղանից ձգում է վերաբերուն եւ զլիարկը աթոռի վրայ):

ՖԲ.—(շտապով մոտենում է գրասեղանին)

Ա՛հ...

Թէ.—ի՞նչ կայ, դու մինչև անգամ վախեցար,

Ֆր.—Հօրիցս է. (բացելով միւս նամակը)  
Այս էլ կենսկիից:

Թէ.—Մի քաշւիր, ինգրում եմ:

Ֆր.—(կարդում է նամակը):

Թէ.—Ի՞նչ է գրում հայրդ:

Ֆր.—Արտասովոր ոչինչ. բարիկենդանին  
մի շաբթով պէտք է գնալ կալւածքը:

Թէ.—Այդ շատ խելօք բան կը լինէր, ես  
քեզ մի կէս տարով կուղարկէի այնտեղ:

Ֆր.—(որ կանգնած էր զրասեղանի մօտ,  
դառնում է դէպի նա):

Թէ.—Լուրջ եմ ասում... Զբոսանք ձիով...  
կառքով... թարմ օդ... հովուհիներ...

Ֆր.—Ասենք եգիպտացորենի արտերում  
չեն գտնւում հովւական խրճիթներ գեղեցիկ հով-  
ւուհիներով...

Թէ.—Դու շատ լաւ ես հասկանում թէ ինչ  
եմ ուզում ասել:

Ֆր.—Կուզես ինձ հետ գալ:

Թէ.—Չեմ կարող:

Ֆր.—Ինչու:

Թէ.—Ես, բարեկամո, գեռ քննութիւններ  
ունիմ, իսկ եթէ գայի էլ, միայն այն պատ-  
ճառով, որպէսզի քեզ այնտեղ երկար պահեմ:

Ֆր.—Խնդրում եմ, իմ մասին մի հոգար:

Թէ.—Ես համոզւած եմ, որ քեզ հարկաւոր  
է թարմ օդ և ուրիշ ոչինչ: Ես այդ բանում  
համոզւեցի այսօր: Այնտեղ, նոր ծաղկող գար-  
նան բնութեան մէջ, դու կը դառնաս նորից  
նոյն բարի և լաւ ֆրիցը:

Ֆր.—Շնորհակալ եմ:

Թէ.—Իսկ այժմ... այժմ դու մի տեսակ փը-  
շրւած ես, այս մթնոլորտը շատ մասակար է,  
որ մօտ ես...

Ֆր.—(անբաւականութեան շարժում է ա-  
նում):

Թէ.—Դու մինչև անգամ չես խոստովա-  
նում, թէ ի՞նչպէս փոխւել էիր այնտեղ, որ-  
քան ուրախ էիր, մի տեսակ լըջացել էիր, ինչ-  
պէս անցած հրաշալի օրերին, Մինչև անգամ մի  
քանի օր առաջ, երբ մենք այդ երկու սիրունիկ  
օրիորդների շրջանումն էինք, դու այնքան ուրախ  
էիր, իսկ այժմ, բոլորը շուռ եկաւ և նորից դու  
անհրաժեշտ ես համարում մտածել... (ծաղրա-  
կան տօնով) այն կնոջ մասին...

Ֆր.—(բարեկացած վեր է կենում):

Թէ.—Դու գեռ ինձ չես ճանաչում, բարե-  
կամս, այլևս տանել չեմ ցանկանում այդ բո-  
լորը:

Ֆր.—Ո՞րքան դու եռանդուա ես:

Թէ.—Ես չեմ ստիպում քեզ... (նոյն տօնով)  
որ դու մոռանաս այդ կնոջը... ես միայն ցան-

կանում եմ (բարութեամբ) թանկագին Ֆրից...  
որ դու նայես այդ արկածի վրայ, որի ժամանակ  
ես շարունակ ստիպւած եմ դողալ քո մասին...  
որ դու նայես—ինչպէս մի սովորական արկածի  
վրայ: Եթէ դու դադարէիր աստւածացնել «այդ  
կնոջը», դու ինքդ զարմանքով կը տեսնէիր որ  
նա մի սիմպատիկ կին է, որ նրա մէջ չկայ ոչ  
մի դեական բան, որ ընդհակառակը նա մի դու-  
րեկան կին է, որի հետ կարելի է ուրախ ժա-  
մանակ անցկացնել, ինչպէս ամեն մի սովորա-  
կան երիտասարդ, գեղեցիկ և տէմպէրամէնտի  
փոքրիկ մասնիկ ունեցող կնոջ հետ:

ՖԲ.—Ինչու ես ասում, որ դողում ես իմ  
մասին:

Թէ.—Դու այդ գիտես. Չեմ կարող քեզա-  
նից թագցնել, որ ես գտնւում եմ շարունակ վա-  
խի մէջ, չըլինի թէ յանկարծ, մի գեղեցիկ օր,  
փախչես նրա հետ միասին:

ՖԲ.—Դու կարծում ես:

Թէ.—(փոքրիկ պառզայից յետոյ) Եւ միայն  
այդ չէ վտանգը:

ՖԲ.—Դու ճշմարիտ ես ասում, Թէօդօր,  
կայ և ուրիշ վտանգ էլ:

Թէ.—Պէտք չէ յիմարութիւն անել:

ՖԲ.—(ինքնիրան) Այս, կայ և ուրիշ վտանգ  
էլ:

Թէ.—Ի՞նչ է, չըլինի մի բան ես ոլոշել  
արդէն:

ՖԲ.—Ախ ոչ, ոչինչ... (պատուհանից նայե-  
լով) նա մի անգամ խարել է արդէն:

Թէ.—Ի՞նչ... ի՞նչպէս... չեմ հասկանում  
քեզ:

ՖԲ.—Ախ, ոչինչ:

Թէ.—Ի՞նչ ես ասում, պարզ խօսիր:

ՖԲ.—Վերջին ժամանակները նա սկսել է  
վախենալ... երբեմ:

Թէ.—Ի՞նչից: Զէ որ պէտք է մի պատճառ  
լինի:

ՖԲ.—Բոլորովին ոչ մի պատճառ: Ուղա-  
կի ջղերը... (ծաղրով) խղճի խայթ... եթէ ու-  
զում ես...

Թէ.—Դու ասացիր որ նա մի անգամ ար-  
դէն խարել է:

ՖԲ.—Հա... և այսօր էլ ի հարկէ նոյնպէս...

Թէ.—Այսօր... Վերջապէս ի՞նչ է նշանա-  
կում այդ բոլորը:

ՖԲ.—(փոքրիկ պառզայից յետոյ) Նա կար-  
ծում է թէ մեզ հետևում են:

Թէ.—Ի՞նչ...

ՖԲ.—Նրան սարսափելի տեսիլներ են հե-  
տևում, իսկական հալիւցինացիա... (պատուհա-  
նի մօտ) նա տեսնում է այստեղ, վարագոյրնե-  
րի ճեղքից, իբր այնտեղ, փողոցի անկիւնում

մի մարդ է կանգնած, և նրան թւում է... (խօսքը ընդհատելով) Ասա ինդրեմ, կարելի է միթէ այստեղից մարդուն դէմքով ճանաչել:

Թէ.—Հազիւ թէ...

Թր.—Ես էլ նոյնն եմ ասում: Բայց այդ սարսափելի է, նրան սարսափելի բաներ են թշւում, իստէրիկաներ են պատահում, նա կամենում է մեռնել ինձ հետ միասին:

Թէ.—Պակասն այդ էր:

Թր.—(փոքրիկ պառազայից յետոյ) Այսօր ես ստիպւած էի ցած իջնել, նայելու: Ես ներկայացրի, իբր թէ հանգիստ սրտով դուրս եմ գլունում տնից: Եւ ի հարկէ ոչ մի ծանօթ մարդ չընկատեցի փողոցում: Այս բանը ի հարկէ նըրան պէտք է հանգստացնէր, այնպէս չէ: Զէր կարող հօ մարդը գետնի տակն անցնել: Դէ, պատասխանիր է:

Թէ.—Ի՞նչ ես ուզում ինձնից: Ի հարկէ, գետնի տակն անցնել չէր կարող, բայց մի որ եիցէ տան դռնով ներս ոլկւել կարող էր:

Թր.—Ես ամեն կողմ նայեցի:

Թէ.—Դէ, այն ժամանակ քո վարմունքը կարող էր կասկածելի թւալ:

Թր.—Բայց չէ որ ոչ ոք չկար: Ասում են քեզ, դա ուղղակի հալլիւցինացիա էր...

Թէ.—Երկի: Բայց այդ դէպքը քեզ կը սովորեցնի միւս անգամ զգոյշ յինել:

Թր. Ես կը նկատէի, եթէ ամուսինը կասկածելիս լինէր, երէկ երեկոյեան, թատրոնից յետոյ ընթրուում էինք միասին, նրա ամուսնու հետ... այնպէս հանգիստ... ճշմարիտ... ծիծաղելի է մինչև անգամ:

Թէ.—Խնդրում եմ քեզ, Թրից, բաւականութիւն պատճառիր ինձ և խելօք եղիր: Թող դու այդ յիմար պատմութիւնը... թէկուզ ինձ համար: Զէ որ ես էլ ջղեր ունիմ: Ես գիտեմ, ի հարկէ, դու այնպիսի մարդ չես, որ կարողանաս ինքդ քեզ ազատւել այդ օղակից, ահա զրահամար էլ ես միջոց տւի քեզ դուրս գալ այդ դրութիւնից:

Թր.—Դու...

Թէ.—Ապա ի՞նչպէս: Երկու շաբաթ առաջ եմ չէի, որ տարայ քեզ Միցցիի մօտ, ե՞ս չէի միթէ, որ խնդրեցի Միցցիին բերել իր ամենագեղեցիկ ընկերունուն և միթէ դու կուրանաս, որ այդ աղջիկը քեզ շատ դուր եկաւ:

Թր.—Ի հարկէ, շատ դուր եկաւ. Նա այնքան լաւիկն է: Յետոյ դու երկակայել չես կարող, թէ որքան եմ ես երազում այդպիսի քընքոյշ սիրոյ, այդպիսի քնքոյշ զգացմունքի համար... որտեղ ես կարողանայի հանգստանալ այդ մշտական տանջանքներից և ցաւերից:

Թէ.—Շատ ճշմարիտ է. ի՞նկապէս հանգըստանալ, այդ մեծ նշանակութիւն ունի: Այդպի-

սի կանայք միայն գըա համար են ստեղծւած։  
Ահա ինչու ես միշտ հետաքրքիր կանանց դէմ  
եմ։ Կանայք պէտք է ոչ թէ հետաքրքիր լինեն,  
այլ միմիայն դուրեկան։ Դու էլ աշխատիր ոռ  
բախտը փնտուել այնտեղ, ուր ես փնտուցի և  
գտայ, այնտեղ՝ ուր չկան տեսարաններ, վտան-  
գաւոր դրութիւններ, արագիքական խառնակու-  
թիւններ... ուր առանց զժւարութիւնների է  
սկիզբ և վերջն էլ առանց շարչարանքների։  
Ուր առաջին համբոյրը քաղցր ժաղիտով ես ըս-  
տանում, իսկ բաժանւում յուզող քնքշութեամբ։

ՖԲ.—Այն, այդ այդպէս է։

Թէ.—Կանայք ընդհանրապէս շատ բաղդա-  
ւոր են իրանց մարդկային առաջ զգացմունք-  
ներով, էլ ինչն է մեզ սահպում նրանցից շինել  
հրեշտակներ կամ դկեր։

ՖԲ.—Նա իսկապէս գանձ է, այնքան կապ-  
ւած, այնքան հրաշալի, որ երբեմն ինձ թւում  
է, որ նա չափից դուրս է կապւած ինձ հետ։

Թէ.—Դու անուղղելի ես. «թւում է»։ Եթէ  
դու այժմս էլ ես մտադիր լուրջ վերաբերւել  
դէպի այդպիսի բաները...»

ՖԲ.—Ո՛չ, ես դրա մասին չեմ մտածում.  
Ես համաձայն եմ քեզ հետ։ Դա հանգստու-  
թիւն է։

Թէ.—Հակառակ դէպօւմ ես կը ձգեմ քեզ  
քո ճակատագրին, ես կշտացայ քո սիրային պատ-

մութիւններից, դու ինձ ձանձրացրիր. Եթէ դու  
մտադիր ես այժմ էլ ձանձրացնել ինձ խղճի հար-  
ցերով, այն ժամանակ ես քեզ խորհուրդ կըտամ  
հետեւել իմ օրինակին, իմ պըինցիպն է՝ աւելի  
լաւ է ես՝ քան մի ուրիշը, որովհետեւ ամեն մի  
ուրիշը անխուսափելի է այնպէս, ինչպէս ինքը՝  
ճակատագիրը։

(զանգ)

ՖԲ.—Ինչ է նշանակում այս։

Թէ.—Նայիր, տես։ Նորից վախեցար։ Հան-  
գստացիր, այդ մեր օրիորդներն են։

ՖԲ.—(ուրախ զարմացած) Միթէ։

Թէ.—Ես համարձակւեցի նրանց հրաւիրե-  
լու քեզ մօտ։

ՖԲ.—Ինչու չընախազգուշացրիր, ծառային  
տանից ուղարկեցի։

Թէ.—Աւելի լաւ։

Միթ.—(մտնում է ծեռքին վաթեթներ)։

ՖԲ.—Հապա ուր է Քրիստինը։

Միթ.—Շուտով կըգայ։ Բարե Գօրի։

Թէ.—(համբուրում է նրա ծեռքը)։

Միթ.—Ներեցէք, պարոն Ֆրից, բայց Թէ-  
օդօրը մեզ հրաւիրել է։

ՖԲ.—Հրաշալի իդէա է, միայն թէ Թէօ-  
դօրը մի բան մոռացել է։

Թէ.—Թէօդօրը բան չէ մոռացել. դու բո-

լորն էլ բերել ես, ինչ որ ես քեզ գրել էի:  
Միջ.—Ի հարկէ. (Փղիցին) Ո՞ւր դնեմ ես  
այս բաները:

ՖԲ.—Տւէք ինձ, Միցցի, մենք կը դնենք  
առայժմ այստեղ:

Միջ.—Իսկ ես էլի բան եմ առել, Դօրի,  
որ դու չէիր գրել:

ՖԲ.—Տւէք ձեր գլխարկն էլ, Միցցի, այդ-  
պէս... (դնում է դաշնամուրի վրայ վզնոցի հետ  
միասին):

Թէ.—Իսկ ինչ ես գնել դու:

Միջ.—Կօֆէյի տօրտ կրէմով:

Թէ.—Ախ, քաղցրասէր:

ՖԲ.—Իսկ ինչու Քրիստինն էլ ձեզ հետ  
միասին չեկաւ:

Միջ.—Նա գնաց իւր հօրը ճանապարհելու  
մինչև թատրոն, իսկ այնտեղից էլէքտրաքար-  
շով այստեղ կը գայ:

Թէ.—Նա սիրալիր աղջիկ է:

Միջ.—Նամանաւանդ վերջին ժամանակնե-  
րը, սգից յետոյ:

Թէ.—Իսկ նրանց ինչն է մեռել:

Միջ.—Ծերունու քոյրը:

Թէ.—Հօրաքոյրը...

Միջ.—Այս, պառաւած օրիորդ էր: Միշտ  
նրանց հետ միասին էր ապրում: Այնպէս որ ծե-  
րուկը այժմ իրեն շատ միայնակ է զգում:

Թէ.—Ճշմարիս, թիստինի հայլը այն ցած-  
րիկ հասակով և ճերմակով, կազմած մազե-  
րով մարդը չէ:

Միջ.—(վլուխը թափահարելով) Ոչ, նրա  
մազերը երկար են:

ՖԲ.—Ո՞րտեղից ես դու նրան ճանաչում:

Թէ.—Մի քանի օր առաջ կէնսկու հետ իօ-  
դէֆշտագի թատրոնումն էի, այնտեղ տեսայ նը-  
րան, նա կօնրբասի վրայ էր նւագում:

Միջ.—Նա կօնտրբասի վրայ չէ նւագում,  
այլ ջութակի:

Թէ.—Իսկ ես կարծեցի կօնտրբասի. (Մից-  
ցին, որ ծիծաղում է) ասա, խնդրեմ, ծիծաղե-  
լու ինչ բան կայ, չէ որ ես կարող էի այդ չի-  
մանալ, փոքրիկս:

Միջ.—Այս ինչ սիրուն սարքած սենեակ  
ունէք, պարոն Ֆրից. (պատուհանին մօտենալով)  
իսկ տեսարանը:

ՖԲ.—Այդ պատուհանը մի նեղ փողոցի վը-  
րայ է դուրս գալիս, իսկ միւս սենեակի պա-  
տուհանը...

Թէ.—(արագ) Ասացէք, խնդրեմ, այդ ինչ  
բան է, կարծեմ դուք կարող էք մէկմէկու հետ  
«դու»-ով խօսել:

Միջ.—Այ երբ ընթրիքի ժամանակ բըու-  
գէրշափտ կը խմենք այդ պատճառով:

Թէ.—Յարգելի պատճառ է: Կարելի է բա-

ւականութիւն զգալ: Իսկ ի՞նչպէս է մօրդ առողջութիւնը:

Միջ.—Երեակայիր քեզ... նըա...

Թէ.—Ատամնելն են ցաւում, գիտեմ, գիտեմ: Նըան անհրաժեշտ է դէմել ատամնաբուժին:

Միջ.—Բայց բժիշկն ասում է, որ միմիայն յօդացաւ է:

Թէ.—(ծիծառելով) Ա՛, եթէ միայն յօդացաւ է...

Միջ.—(Վերցնելով ալրոմը) Ինչ հրաշալի իրեր ունէք, պարոն Ֆրից (նայում է). իսկ այս ով է, այս դժւք էք զինւորական հագուստով, պարոն Ֆրից: Դուք զինւոր էք եղել:

Ֆր.—Այն:

Միջ.—Դրագուն: Դեղին թէ սև:

Ֆր.—(Ժպտալով) Դեղին:

Միջ.—(մտածկոտ) Դեղին...

Թէ.—Բոլորովին խելքը կորցրեց: Միցցի, ուշքի եկ:

Միջ.—Իսկ այժմ դուք պահեստում էք:

Ֆր.—Ի հարկէ:

Միջ.—Երկի ձեղ շատ է սագում մորթու գլխարկը:

Թէ.—Բաւականին լաւ տեղեկութիւններ ունես, Միցցի. չէ որ ես էլ եմ զինւորական եղել:

Միջ.—Նոյնպէս դրագուն:

Թէ.—Այն:

Միջ.—Ինչու չես ասել առաջ ինձ այդ մասին:

Թէ.—Որովհետև ես ուզում էի որ ինձ սիրեն և ոչ թէ...

Միջ.—Լսիր, Դօրի, եթէ գնալու լինենք մի որևէ տեղ, որւ անպատճառ պէտք է հագնես մունդիրդ:

Թէ.—Առանց դրան էլ օգոստոսին զօրակաղեր պիտի լինեն:

Միջ.—Տէր իմ Աստւած. սպասել մինչև օգոստոս:

Թէ.—Ա՛յս, ձշմարիտ որ յաւիտենական սէրը այդքան երկար չէ տևում:

Միջ.—Ո՞վ է մայիսին մտածում օգոստոսի մասին: Ձշմարիտ չէ, պարոն Ֆրից: Իսկապէս այդ ինչու երեկ երեկոյեան փախաք մեր մտից, պարոն Ֆրից:

Ֆր.—Այսինքն...

Միջ.—Այն, այն, ներկայացումից յետոյ:

Ֆր.—Թէոդորը միթէ իմ փոխարէն ներութիւն չխնդրեց ձեզանից:

Թէ.—Խնդրեցի, իհարկէ:

Միջ.—Իսկ իմ, նա մանաւանդ Քըիստինի, ի՞նչին է պէտք ձեր ներողութիւն խնդրելը, մի բան որ խոստացել էք, միշտ պէտք է կատարէք:

ԹՌ.—Ճիշտն ասած, ես առաւելութիւն կը  
տայի ձեզ հետ մնալուն...

ՄԻՅ.՝ Ճշմարիտ:

ԹՌ.—Բայց ես անկարող էի: Դուք տեսաք  
ես օթեակում ծանօթների հետ էի և ներկայա-  
ցումից յետոյ էլ նրանցից բաժանւել չկարողա-  
ցայ:

ՄԻՅ.՝ Այս, դուք չկարողացաք բաժանւել  
ձեր սիրուն տիկիններից: Դուք կարծում էք,  
մենք չըտեսանք ձեզ վերնայարկից:

ԹՌ.—Ես էլ ձեզ տեսայ:

ՄԻՅ.՝ Դուք նստած էիք օթեակի յետե-  
ռում:

ԹՌ.—Ոչ բոլոր ժամանակ:

ՄԻՅ.՝ Բայց մեծ մասամբ... ու թաւշեայ-  
շոր հագած տիկնոջ ետևն էիք և շարունակ  
(ներկայացնելով) ահա այսպէս նայում էիք:

ԹՌ.—Բայց դուք կարգին հետեւել էք ինձ:

ՄԻՅ.՝ Ասենք այդ իմ գործը չէ, բայց ե-  
թէ ես Քրիստինի տեղը լինէի... ասացէք ինդ-  
րեմ, ինչու Թէոդորը ներկայացումից յետոյ ժա-  
մանակ ունի: Ի՞նչու նա պարտաւոր չէ գնալ  
ընթրելու ծանօթների հետ:

ԹԻՅ.՝ (հպարտ) Ինչու ես պարտաւոր չեմ  
գնալ ընթրելու ծանօթների հետ:

(Զանգակ)

ՄԻՅ.՝ Այդ Քրիստինն է:

ԹՌ.—(շտապում է դուռը ըացելու)

ԹԻՅ.՝ Միցցիի, կարող ես դու ինձ մի զը-  
ւալճութիւն պատճառել:

ՄԻՅ.՝ (նայում է հարցական)

ԹԻՅ.՝ Մոռացիր, գոնէ մի առժամանակ, քո  
զինւորական այդ յիշողութիւնները:

ՄԻՅ.՝ Ես ոչինչ յիշողութիւններ չունեմ:

ԹԻՅ.՝ Զէ որ իսկոյն երեւում է, որ գրքերից  
չես ուսումնասիրել զինւորական նշանագետ-  
ները:

ԹՌ.—(մտնում է ծաղիկների փունջը ծեռ-  
քին, բարեւում է քիչ ամաշելով միաներին) Բա-  
րի երեկոյ: (Փղիցին) Դու ուրախ ես, որ մենք ե-  
կել ենք, չես բարկանում:

ԹՌ.—Ընդհակառակը, փոքրիկս, երբեմն Թէ-  
ոդորը ինձնից հնարագէտ է դառնում:

ԹԻՅ.՝ Իսկ քո հայրը արդէն նւազնում է:

ԹՌ.—Ի հարկէ, ես նրան ուղեկցեցի մինչև  
թատրոն:

ԹՌ.—Միցցին ասաց մեզ:

ԹՌ.—(Միցցին) Ինձ ուշացը եց նոյնպէս և  
կատրինը:

ՄԻՅ.՝ Սատանան տանի այդ ստախօսին:

ԹՌ.—Օ՛ ոչ, նա դէպի ինձ շատ բարի է:

ՄԻՅ.՝ Դու բոլորին էլ հաւատում ես:

ՔՐ.—Եւ ինչու նա ինձ հետ անկեղծ չը  
պէտք է լինի:

ՖՐ.—Ո՞վ է այդ կատրինը,

ՄԻՅ. —Մի գուլզագործի կին է, նա բար-  
կացած է նրանց բոլորի վրայ, որոնք իրանից  
երիտասարդ են:

ՔՐ.—Նա ինքն էլ բաւականին երիտա-  
սարդ է:

ՖՐ.—Թողնենք հանգիստ կատրինին: Այդ  
ի՞նչ ես բերել:

ՔՐ.—Ես ծաղիկներ եմ բերել քեզ համար:

ՖՐ.—(վերցնելով ծաղիկները, համբուրում  
է նրա ծեռքը) Դու իսկական հրեշտակ ես: Տուր  
ինձ, դնեմ այստեղ, վազայի մէջ:

ԹԷ. —Ո՞չ, ոչ, դու ոչ մի տաղանդ չունես  
հանդէսներ սարքելու. ծաղիկները պէտք է ցրել  
սեղանի վրայ երբ արդէն պնակները և կերա-  
կուրները դարսած կը լինեն: Ճիշտն ասած, ա-  
ւելի լաւ կը լինէր այնպէս անէինք որ նրանք ա-  
ռաստաղից թափւէին, բայց այդ դժբաղդաբար  
անկարելի է:

ՖՐ.—(ծիծաղիլով) Այն, հազիւ թէ:

ԹԷ. —Իսկ առ այժմ մենք կը դնենք սրա  
մէջ: (Դնում է վազայի մէջ):

ՄԻՅ. —Երեխայքս, արդէն մութն է,

ՖՐ.—(օգնում է Քըրիսոինին վերաբկուն հա-  
նելու, վերցնում է նոյնպէս զլիարկը եւ այդ բո-

լորը միասին դնում ըեմի խորքը գտնած աթոռի  
վրայ) Այս ըոպէիս կը վառենք լամպան:

ԹԷ. —Լամպան, ոչ մի պայմանով, մենք մո-  
մերը կը վառենք, աւելի գուրեկան է: Միցցի,  
օգնիր ինձ: (Միցցիի հետ սկսում են վատել աշ-  
տանակների մոմերը: Այդ ժամանակ Փրից եւ  
Քըրիստին խօսակցում են)

ՖՐ.—Դէ իմ գանձս, ի՞նչպէս ես ապրում:

ՔՐ.—Այս ըոպէին լաւ:

ՖՐ.—Իսկ առաջ:

ՔՐ.—Այնպէս եմ տիրում առանց քեզ:

ՖՐ.—Զէ որ մենք հէնց երեկ տեսնեցանք:

ՔՐ.—Տեսնեցանք... հեռւից... լաւ չէ այդ,

Փրից, քո կողմից, որ դու...

ՖՐ.—Ես արդէն գիտեմ այդ, ինձ Միցցին  
ասաց: Դու դարձեալ նոյն երեխան ես. չէ որ  
չէի կարող, դու այդ պէտք է հասկանաս:

ՔՐ.—Այս... բայց դու, Փրից... այն ի՞նչ

մարդիկ էին երեկ քեզ հետ օթեակում:

ՖՐ.—Իմ ծանօթները... միենոյն է, թէ ի՞նչ-

պէս են կոչում նրանց:

ՔՐ.—Հապա այն թաւշեայ հագուստով տի-  
կինը...

ՖՐ.—Սիրելիս, իմ յիշողութիւնը թոյլ է  
կանանց հագուստների վերաբերմամբ:

ՔՐ.—(չորսամանկ) Իբրթէ...

ՔՐ.—Այսինքն... մի քանի գէպերում, Օ-  
րինակ, ես շատ լաւ եմ յիշում մուզ մոխրա-  
գոյն շորը՝ որ դու ունէիր հաղած, երբ մենք  
առաջին անգամ հանդիպեցինք միմեանց, յետոյ,  
սկը՝ ճերմակներով զարդարւած, որով դու երեկ  
թատրոնումն էիր:

ՔՐ.—Ես այսօր էլ այդ շորով եմ:

ՔՐ.—Ճշմարիտ է, բայց հեռուից նա բոլո-  
րովին ուրիշ տեսք ունի, լուրջ եմ ասում, Այ-  
ս մեդալիօնը, նա էլ եմ ճանաչում:

ՔՐ.—(ծիծաղելով) Իսկ Երբ էր նա ինձ վը-  
լայ:

ՔՐ.—Յիշում ես, այն ժամանակ, երբ մենք  
զբունում էինք այդում, տափարակի մօտ, ուր  
այնքան փոքրիկ երեխաներ էին վազվում:  
Ճշմարիտ չէ:

ՔՐ.—Այն, ուրեմն դու երբեմն մտածում ես  
իմ մասին:

ՔՐ.—Շատ յաճախ, մանկիկս,

ՔՐ.—Յամենայն դէպս ոչ այնքան յաճախ,  
որքան ես քո մասին: Ես մտածում եմ քո մա-  
սին ամբողջ օրեր, միշտ, բայց երջանիկ եմ լի-  
նում այն ժամանակ միայն, երբ տեսնում եմ  
քեզ:

ՔՐ.—Միթէ բաւականին յաճախ չենք տես-  
նում մենք միմեանց հետ:

ՔՐ.—Յաճախ:

ՔՐ.—Ի հարկէ: Ամառը աւելի քիչ պէտք է  
տեսնւենք: Իսկ երեակայիր քեզ, եթէ ստիպւած  
լինեմ մի քանի շաբթով գնալ այս տեղից, ինչ  
կասես այն ժամանակ:

ՔՐ.—(սաղսափած) Ինչպէս, դու ուզում  
ես գնալ...

ՔՐ.—Ոչ, բայց այնուամենայնիւ այդ կա-  
րող է պատահել: Ովկ գիտէ, այնպիսի տրամա-  
դրութիւն լինի, որ ցանկանամ թէկուզ հէնց մի  
շաբթ մենակ մնալ:

ՔՐ.—Ինչու:

ՔՐ.—Ես ասում եմ միայն, որ այդ կարող  
է պատահել: Ես ինձ ճանաչում եմ: Զէ՞ որ դու  
էլ կարող ես նոյնպիսի տրամադրութիւն ունե-  
նալ, որ չես ցանկանալ ինձ տեսնել երկու օր:  
Ես այդ լիովին հասկանում եմ:

ՔՐ.—Այդպիսի տրամադրութիւն ես երբէք  
չեմ ունենալ, Թրից:

ՔՐ.—Առաջուց չի կարելի գուշակել:

ՔՐ.—Ես գիտեմ..., Ես սիրում եմ քեզ:

ՔՐ.—Ես էլ քեզ շատ եմ սիրում:

ՔՐ.—Դու ինձ համար ամէն ինչ ես, Թրից,  
իսկ ես քեզ համար կարելի է... (ինքն իրան  
ընդհատելով) աչ, երեակայել չեմ կարող, որ ես  
կարող եմ թէկուզ մի ժամ չուզենալ քեզ տես-  
նել: Քանի ես կենդանի եմ, Թրից...

ԹՌ.—(ընդհատելով նրան) Մանուկ, խընդում եմ քեզ... լաւ է մի խօսիք այդպէս... այդ փքուն խօսքեր են... ես չեմ սիրում նրանց, Զը խօսենք յաւիտենականութեան մասին,

ԹՌ.—(տխուր ժպտալով) Մի վախենար, Ֆրից: Ես գիտեմ որ այդ յաւիտենական չէ:

ԹՌ.—Դու ճիշտ չըհասկացար ինձ, Շատ կարելի է (ժպտալով) որ մենք երբեիցէ չպիտի կարողանանք առանց մէկը միւսի ապրելու, բայց մենք այդ առաջուց կարող ենք չիմանալ: Ճըշ-մարիտ չէ, Զէ որ մենք մարդիկ ենք միայն:

Թէ.—(ցոյց տալով վառած մոմերը) Նայեցէք, խնդրում եմ, չէ որ այս բոլորովին ուրիշ բան է, աւելի լաւ, քան այն, երբ վառւած է այդ յիմար լամպան:

ԹՌ.—Դու, իսկապէս բնածին տաղանդ ես տօնական հանդէսներ սարքելում:

Թէ.—Դէ զաւակներս, ժամանակ չէ և ընթրիքի մասին մտածելու:

ՄԻՅՑ.—Այս... Գնանք, Քրիստին:

ԹՌ.—Սպասեցէք, ես ձեզ ցոյց տամ, որ տեղ են գտնւում բոլոր անհրաժեշտ իրերը:

ՄԻՅՑ.—Նախ և առաջ մեզ հարկաւոր է սըփոցը: Իսկ որտեղ են պնակները: (Փրիցը ցոյց է տալիս պահարանը). Շնորհակալ եմ, մենք միայնակ կը սարքենք, իսկ դուք գնացէք, հեռացէք. մի խանդարէք մեզ:

Թէ.—(պառկելով սազմոցի վրայ, նոյն ժամանակ երբ Փրիցը մօտենում է նրան) Ներիր խնդրեմ:

(Միցցին եւ Քրիստինը սեղանն են պատրաստում)

ՄԻՅՑ.—Դու տեսել ես Ֆրիցի լուսանկարը զինւորական հագուստով:

ԹՌ.—Ոչ:

ՄԻՅՑ.—Անպատճառ տես: Հրաշալիք է:

(Շարունակում են խօսել)

Թէ.—(Փրիցին) Գիտես ի՞նչ Ֆրից, այսպիսէ երեկոյթները իմ թոյլ կողմն են:

ԹՌ.—Այս, վատ չէ:

Թէ.—Ես շատ հանգիստ եմ զգում ինձ, իսկ դու:

ԹՌ.—Օ՛, ես կուգենայի որ միշտ ինձհամար այսպէս լաւ լինէր:

ՄԻՅՑ.—Ասացէք, պարոն Ֆրից, սուրճը սըրճամանի մէջն է:

ԹՌ.—Այս, իսկ սպիրտը պէտք է վառել հէնց իսկոյն, որովհետեւ մի ժամ է հարկաւոր, մինչև սուրճը եփւի:

Թէ.—(Փրիցին) Մի այդպիսի հրաշալի աղջկայ համար ես տասը գեական կանայք կը տայի:

ԹՌ.—Նրանց միմիանց հետ համեմատել չի կարելի:

Թէ.—Ընդհանրապէս մենք ատում ենք այն կանանց, որոնց սիրում ենք, իսկ սիրում ենք մի-

միայն նրանց, դէպի որոնք մենք անտարբեր ենք:  
ՖԲ.—(ծիծաղում է):

ՄԻՅ. — Ի՞նչ է, կարող ենք մենք էլ լսել  
ձեր խօսակցութիւնը:

ԹԷ. — Ո՛չ, այս խօսակցութիւնը ձեզ հա-  
մար չէ, փոքրիկներս, մենք փիլիսոփայութիւն  
ենք անում: (Ֆրիցին) Եթէ մինչև անգամ մեր  
տեսակցութիւնը սրանց հետ այսօր վերջին ան-  
գամը լինէր, այնուամենայնիւ այդ չէր պակա-  
սեցնիլ մեր ուրախութիւնը, այնպէս չէ:

ՖԲ.—Վերջին անգամ... դրա մէջ ինչ որ  
տիուր բան կայ: Բաժանուիլը միշտ ծանը է, թէն  
այդ ցանկանաս էլ:

ՖԲ.— Ֆրից, իսկ ուր են դանակները և պա-  
տառաքաղները:

ՖԲ.— (մօտենալով պահարանին) Ահա նը-  
րանք, թանկագինս:

ՄԻՅ. — (ծածով մօտենալով թիկնաթոռին  
ճեղքով շփում է Թէոլորի զլովսը).

ԹԷ. — Ա՛խ դու կատւիկս:

ՖԲ.— (բացելով Միցցիի քերած փաթթոց-  
ները) հիանալի է,

ՖԲ.— (ֆրիցին) Ինչպէս քեզ մօտ կարգ ու  
կանոնով է դարսւած ամեն բան:

ՖԲ.— Այս: (ղնում է բոլորը պնակների մէջ  
ինչ որ Միցցիի փաթթոցների մէջզտաւ. մի տուփ  
սարդին, պաղ միս, իոդ եւ պանիր)

ԲԲ.— Ֆրից, դու ինձ չես ասիլ:  
ՖԲ.— Ի՞նչ:

ԲԲ.— (քաշելով) Ո՞վ է այն աիկինը:

ՖԲ.— Դէ, մի չարացնիր ինձ. (քննոյց) չէ  
որ մենք վճռեցինք մէկ մէկուց ոչ մի բանի մասին  
հարցում չանել: Այդ ամենից լաւն է: Երբ ես  
քեզ հետ եմ, աշխարհը ինձ համար գոյութիւն  
չունի, չէ որ ես էլ քեզանից ոչ մի բան չեմ  
հարցնում:

ԲԲ.— Ինձնից դու կարող ես ամեն բանի  
մասին հարցնել:

ՖԲ.— Բայց ես չեմ ցանկանում այդ, ես ո-  
չինչ չեմ ուզում իմանալ:

ՄԻՅ. — (սեղանին մօտենալով) Տէր Աստւած,  
այս ինչպիսի անկարգութիւն է. (սկսում է ուսե-  
լեղէնները կարգաւորել պնակների մէջ) Ահա այս-  
պէս:

ԹԷ. — Լոիր, Ֆրից, քեզ մօտ խմելու բան  
կը գտնեմ թէ չէ:

ՖԲ.— Այս, քիչ շատ կը գտնեի: (Գնում է  
նախասենեալ)

ԹԷ. — (ղիտելով սեղանը) Հրաշալի է:

ՄԻՅ. — Կարծեմ ամեն ինչ կարգին է:

ՖԲ.— (ղառնալով նախասենեալից մի քանի  
շեշ ծեռքին) Ահա և խմելու բան:

ԹԷ. — Իսկ ուր են վարդերը, որ պէտք է

առաստաղից թափւէին:

**Միջ.** — Ճիշտ որ, ծաղիկների մասին մենք  
բոլորովին մոռացանք: (Վերցնում է վազայից  
փոնչը, բարձրանում աթոռի վրայ և թափում  
ծաղիկները սեղանի վրայ)

**Քր.** — Այ, այ, ինչ չարութիւններ է ա-  
նում նա:

**Թէ.** — Միայն մի թափիր պնակների վրայ:  
(քաշում է նրան աթոռի վրայից):

**Քր.** — Դու ուր ես ուզումնատել, Քրիստին.

**Թէ.** — Իսկ ուր է խցահանը:

**Քր.** — (պահարանից հանելով) Ահա

**Միջ.** — (Ուզում է բացել շիշը)

**Քր.** — Տւեք ինձ:

**Թէ.** — Ոչ, ես կը բացեմ, (Խլում է շիշը եւ  
խցահանը ֆրիցի ձեռքից): Իսկ դու առ այժմ  
մի քիչ... (ձեռքերով դաշնամուր նւազելու ձեւեր  
է ցոյց տալիս):

**Միջ.** — Այ, այ, այդ հրաշալի կը լինի. (վա-  
զում է դէպի դաշնամուրը, բացում է նրան, վրա-  
յի իրերը տեղափոխելով աթոռի վրայ)

**Քր.** — (Քրիստինին) Յանկաննում ես:

**Քր.** — Խնդրեմ, ես վաղուց երազում եմ այդ  
մասին:

**Քր.** — (դաշնամուրի մօտ) Կարծեմ դու էլ  
քիչ նւազել գիտես:

**Քր.** — Այնպէս:

**Միջ.** — Քրիստինը հրաշալի է նւազում, նա

Երգում էլ է:

**Քր.** — Ճշմարիտ, դու այդ մասին ինձ եր-  
բէք ոչինչ չես ասել:

**Քր.** — Իսկ դու հարցը եւ:

**Քր.** — Իսկ երգելը դու որտեղ ես սովորել:

**Քր.** — Ես, ճիշտն ասած, ոչ մի տեղ չեմ սո-  
վորել: Քիչ հայրս է սովորեցրել, և յետոյ, շատ  
էլ մեծ ձայն չունեմ: Եւ գիտես, այն օրից  
որ մեռաւ հօրաքոյրս, որ շարունակ մեզ հետ էր  
ապրում, մեր տանը աւելի լուսնաթիւն տիրեց,  
քան առաջ:

**Քր.** — Իսկ ինչով ես զբաղւած դու ամբողջ  
օրերով:

**Քր.** — Տէր Աստւած, ես այնքան գործ ու-  
նեմ որ:

**Քր.** — Տնային աշխատանք:

**Քր.** — Ի հարկէ, բացի այդ ես նօտաներ եմ  
արտագրում, բաւականին գործ է:

**Թէ.** — Ինչպէս, նօտաներ:

**Քր.** — Այն:

**Թէ.** — Երկի ահազին վարձատրութիւն էք  
ստանում: (Բոլորը ծիծաղում են) Ես անչափ շատ  
կը վճարէի գրա համար: Նօտաներ արտագրելը,  
ես կարծում եմ, սարսափելի աշխատանք է:

**Միջ.** — Յիմարութիւն է այդպէս իրան տան-  
չել: (Քրիստինին) Եթէ ես քոնի նման ձայն ու-  
նենայի, վաղուց արդէն բեմի վրայ կը լինէի:

32

Թէ.—Քեզ ձայն էլ պէտք չէ։ Զէ որ դու  
միւնոյն է ամբողջ օրերով բան չես շինում։—  
Ճիշտ չէ։

Միջ.—Ների՞ր, խնդրեմ, ես երկու փոքրիկ  
եղբայր ունեմ, նրանք ուսումնարան են գնում,  
և ես պարտաւոր եմ առաւօտները նրանց  
հագթնել, դասերը պատրաստել...»

Թէ.—Բոլորն էլ սուտ է...»

Միջ.—Ինչպէս քէֆդ է, մի հաւատան։ Իսկ  
մինչև անցեալ աշունը, ես ծառայում էի ար-  
հեստանոցում, առաւօտեան ժամը 8-ից մինչև  
երեկոյեան 8-ը։

Թէ.—(ծաղրելով) Այդ մը արհեստանոցում։

Միջ.—Դերձակուհու մօտ։ Մայրս ցանկա-  
նում է որ ես նորից այնտեղ մտնեմ։

Թէ.—(նոյն տօնով) Իսկ ինչմէ դու այնտե-  
ղից դուքս եկար։

ՖՌ.—(Քրիստինին) Դէ, գնանք թամնկագինու-  
(տանում է նրան սեղանի մօտ)

Միջ.—Իսկ սուրճը թափւում է, այն ինչ  
գեռ ոչինչ չենք կերել։

Թէ.—Միւնոյն է։

Միջ.—Բայց չէ որ թափւում է։ (Հանգ-  
ցընում է սպիրտի մեքենան։ Նստում են սե-  
ղան)։

Թէ.—Միցցի, դու ինչ ես ցանկանում։ Մի-  
այն նախազգուշացնում եմ, որ տօրտը ամենից

վերջը պէտք է ուտենք, իսկ առ այժմ դու պէտք  
է ուրիշ բան ուտես։

ՖՌ.—(զինի է ածում)

Թէ.—Այդպէս չէ, այժմ այդ ուրիշ տեսակ  
է արևում։ միթէ դու ծանօթ չես նոր մօ-  
դայի հետ։ (Ներկայացնելով իրանից մի հա-  
րուստ պարոն, շիշը ծեռքին մօտենում է Քրիս-  
տինին, ածում նրա բաժակը եւ ասում վերջին  
բառերը ուտելով)։ Ֆէօսլաւեան գինի 18...թւի,  
(մօտենալով Միցցին նոյնը կրկնելով) Ֆէօսլա-  
ւեան գինի 18...թւի (մօտենում է Քրիցին նոյ-  
նը) Ֆէօսլաւեան գինի 18...թւի։ (մօտենում է  
իւր տեղին) Ֆէօսլաւեան գինի 18...թւի (նըս-  
տում է)։

Միջ.—Միշտ յիմարութիւններ։

Թէ.—(բաժակը բարձրացնելով) Prosit!

Միջ.—Քո կենացը, Թէոդոր։

Թէ.—(կանգնելով) Յարգելի տիկիններ և  
պարոններ...»

ՖՌ.—Միայն ոչ այժմ։

Թէ.—(նստելով) Ես կարող եմ և սպասել:  
(ուտում են)։

Միջ.—Ես սիրում եմ, երբ սեղանի վրայ  
ձառեր են խօսում։ Ես մի հօրեղբօր որդի ու-  
նեմ, որ միշտ ոտանաւորով է խօսում։

Թէ.—Իսկ մը զօրագնդումն է նա ծառա-  
յում։

ՄԻՅ. — Հանգիստ թող ինձ, Գիտես, Քրիստին, նա շարունակ ոտանաւորներով է խօսում, դարձանալի է և բաւականին էլ տարիքով մարդ է:

ԹԵ. — Ինչպէս չէ, պատահում է, որ ծեր մարդիկ էլ են ոտանաւորով խօսում:

ՖՐ. — Բայց դուք, Քրիստին, ոչինչ չէք խխում (նրա հետ բաժակ բաժակի է զարկում) Այն ծեր մարդկանց կենացը, որոնք ոտանաւորով են խօսում:

ՄԻՅ. — (ուրախ) Այն երիտասարդ պարոնների կենացը, որոնք մինչև անգամ շեն էլ խօսում, այ օրինակի համար, ինչպէս Ֆրիցը: Պարոն Ֆրից, կը ցանկանաք բըուդէրշաֆթ խմենք, իսկ Քրիստինը թող թէոդորի հետ խմէ:

ԹԵ. — Բայց ոչ այդ գինիով: Այդ գինին բըուդէրշաֆթի համար չէ: (Անջր կենալով վերցնում է խէրէսի շիշը. նոյն խաղը, ինչ որ առաջ) Xerès de la Frontera, mille huit cent cinquante... Xérès de le Frontera... Xérès de la Frontera...

ՄԻՅ. — (իմելով իր բաժակը) Ա՛խ:

ԹԵ. — ԶԵ՞ս կարող սպասել, մինչև մենք էլ խմենք: Եւ այդպէս, զաւակներս, նախ քան մենք հանդիսաւոր կերպով եղբայրական միութիւն կը կազմենք, մենք խմենք այն բաղդաւոր հանդիպման առիթով, որ... այսպէս ասած... այսինքն... այսինքն... և այլն...

ՄԻՅ. — Դէ լաւ, բաւական է. (իմում են՝ Փրիցը Միցցիի հետ, Թէոդորը Քրիստինի հետ, բաժակները ծեռքերին, զրուդէրշաֆթ են իմում ընդունած սովորովթեան համեմատ)

ՖՐ. — (համբուրում է Միցցիին)

ԹԵ. — (ուզում է համբուրել Քրիստինին)

ՖՐ. — (ծիծաղելով) Միթէ այդ անհրաժեշտ է:

ԹԵ. — Անկասկած: Այլ կերպ բըուդէրշաֆթը իսկական չի լինիլ: (Համբուրում է նրան) Դէ, իսկ այժմ — à place!

ՄԻՅ. — Սարսափելի շող է սենեակում,

ՖՐ. — Այդ մոմերիցն է, Թէոդորը այնքան վառեց:

ՄԻՅ. — Եւ գինուց: (Ընկղղմում է բազկաթոռի մէջ)

ԹԵ. — Միցցի, դէ մօտեցիր այստեղ, այժմ գու կստանաս քաղցըը: (Տօրտից մի կտոր կտրելով խոթում է նրա սերանը) Ինչ է, համեղ է, փոքրիկս:

ՄԻՅ. — Շատ: (Թէոդորը տալիս է եւ մի ուրիշ կտոր)

ԹԵ. — Դէ Ֆրից, այժմ իսկապէս որ ժամանակն է, մի բան նւագիր:

ՖՐ. — Քրիստին, կը ցանկանամ:

ՔՐ. — Խսդըում եմ:

Միջ. — Միայն մի որկիցէ լաւ բան:  
 Թէ. — (լցնում է բաժակները)  
 Միջ. — Զեմ կարող այլես. (խմում է)  
 Քր. — (վերջացնելով իւր զաժակը) Ինչ թունդ  
 գիտի է:  
 Թէ. — (ցոյց տալով բաժակը) Ֆրից:  
 Քր. — (խմում է իւր բաժակը եւ մօտենում  
 դաշնամուրին)  
 Քր. — (նստում է նրա կողքին)  
 Միջ. — Ֆրից, նւագեցէք «Երկուխանի ար-  
 ձիւլ»:  
 Քր. — «Երկուխանի արծիւլ». իսկ ինչպէս է  
 եղանակը:  
 Միջ. — Դօրի, դու դիտես «Երկուխանի ար-  
 ձիւլ»:  
 Թէ. — Ես ընդհանրապէս դաշնամուր չեմ  
 նւագում:  
 Քր. — Ես գիտէի, միայն մոռացել եմ այժմ:  
 Միջ. — Ես ձեզ համար կերգեմ: Լա, լա,  
 լա:  
 Քր. — Ա՛, յիշեցի: (նստում է, բայց սխալ-  
 ներով)

Միջ. — (մօտենալով դաշնամուրին) Ոչ, այ  
 այսպէս (նստում է Երկուխանի արծիւլ մէկ  
 մատով)

Քր. — Այն, այն, յիշեցի: (նստում է. Մից-  
 ին երգում է)

Թէ. — Նորից որևէ քաղցր յիշողութիւններ:  
 Այս:  
 Քր. — (նստում է սխալ, յետոյ դադարում)  
 Ոչ, չի դուքս գալիս: Ես լաւ լսողութիւն չու-  
 նեմ: (նստում է իրա ֆանտազիան)  
 Միջ. — (առաջին տակտից յետոյ) Բոլորո-  
 վին էլ այդպէս չէ:  
 Քր. — (ծիծաղելով) Մի բարկանաք, այդ սե-  
 փական հեղինակութիւնս է:  
 Միջ. — Բայց այդ եղանակով անկարելի է  
 պարել:  
 Քր. — Փորձեցէք:  
 Թէ. — (Միցին) Արի, փորձենք: (Թեւլ առ-  
 նելով սկսում են պարել)  
 Քր. — (կանգնած դաշնամուրի մօտ, հետե-  
 ւում է նստում)

(Զանզակ)

Քր. — (իսկոյն կտրում է նստում, թէողորը  
 եւ Միցին շարունակում են պարել)

Թէ. } — Այդ ինչ կը նշանակի, դէ շա-  
 Միջ. } րունակեցէք:

Քր. — Զանզահարեցին: (Թէողորին) Դու էլի  
 մարդ ես հրաւիրել:  
 Թէ. — Շատ հարկաւոր էր: Դու կարող ես  
 չբացել դուռը:

Թթ.—(Վոհցին) Ի՞նչ պատահեց քեզ:  
Թթ.—Ոչինչ.

(Նորից զանգակ)

Թթ.—(վեր է կենում յանկարծ եւ մնում՝ կանգնած)

Թթ.—Դու ուղղակի տանը չես:

Թթ.—Դոների մօտ լսելի է դաշնամուրի ձայնը, իսկ փողոցում պարզ երևում է, որ բնակարանը լուսաւորւած է:

Թթ.—Դատարկ բան է, դու տանը չես, և վերջ:

Թթ.—Այդ ինձ անհանգստացնում է:

Թթ.—Բայց այդ ինչ կարող է լինել. երկի հեռագիր է կամ նամակ, թէ չէ, ով կարող էր հիւր գալ (ժամացոյցին նայելով) ժամը իննին:

(Նորից զանգակ)

Թթ.—Այսուամենայնիւ պէտք է նայել:  
(Գնում է նախասենեակ)

Միջ.—Ըն, դուք բոլորովին էլ հերոս չեք:  
(Թմբկահարում է կլափշների վրայ)

Թթ.—Դադարիր. (Քըիստինին) Ի՞նչ պատահեց ձեզ: Զանգակը ձեզ էլ անհանգստացրեց:

Թթ.—(վերադառնում է շինծու սառնարիմութիւն երեսին)

Թթ. } (միասին) Դէ, ով է, ով:  
Թթ. }

Թթ.—(ակամայ ժպտալով) Խնդրում եմ, պարոններ, ներեցէք ինձ: Մի բոլէով անցէք այն-տեղ:

Թթ.—Ի՞նչ կայ որ:

Թթ.—Ո՞վ է:

Թթ.—Ոչինչ, մանկիկս, ես պէտք է մի պարոնի երկու բառ ասեմ: (Բացում է հարեւան սենեալի դրուզ եւ թողնում ներս օրիորդներին: Թէողոքը վերջինն է զնում եւ կանգնելով հարցական նայում՝ Փրցին)

Թթ.—(ցած, սալսափած) Նա է:

Թթ.—Ա՛:

Թթ.—Գնամ, դէ, գնամ:

Թթ.—Խնդրում եմ յիմարութիւններ չանես, գուցէ նա պատահաբար...

Թթ.—Գնամ, գնամ... (Թէողոքը զնում է հարեւան սենեալը)

(Փրցը անցնում է դէպի մուտքը, այնպէս որ քեմը մնում է դատարկ: Յետոյ նա վերադառնում է, իր առջեւից թողնելով մի պարոնի, 35 տարեկան, շատ շքեղ հագնւած: Նա դեղին վերաբերու ունի, ծեռնոցներով, ծեռքին զլիարկ)

Թթ.—(դեռ դռների մէջ) Pardon, ես ստիպեցի ձեզ սպասել... Խնդրեմ:

ՊԱՐ. Ա—Ոչինչ, ոչինչ... Շատ ափսոսում

եմ, ես, կարծեմ, խանգարեցի...

ՖԲ.—Ճշմարիտ, ոչ... ԶԵՔ ցանկանալ արդեօք... (աթոռը ցոյց տալով)

ՊԱՐՈՆ Հ...—Այո, ինչպէս տեսնում եմ ձեզ խանգարեցի: Փոքրիկ զւարձութիւն երկի...

ՖԲ.—Այո, մի քանի ընկերներ...

ՊԱՐՈՆ Հ...—(նստելով, ղեռ եա սիրալիք տօնով) երեի գիմակաւորւած:

ՖԲ.—(յանկարծակիի եկած), Այդ ի՞նչպէս:

ՊԱՐՈՆ Հ...—Այո, որովհետեւ ձեր ընկերները կանացի գլխարկներով և վերաբկուներով են:

ՖԲ.—Ա՛խ, այո... (ժպտալով) Բայց չէ որ կարող են լինել և կանացի սեռից ընկերներ: (լոռվթիւն)

ՊԱՐՈՆ Հ...—Այո, կեանքը երբեմն շատ ուրախ է լինում... Այո (շեշտակի նայում է ֆրիցին)

ՖԲ.—(փոքր ժամանակ տանում է նրա հայեացը, բայց յետոյ գետին է խոնարհեցնում աշքերը): Համարձակւում եմ հարցնել, ի՞նչն է ստիպել ձեզ արժանացնել ինձ պատւի ձեր այցելութեամբ:

ՊԱՐՈՆ Հ...—Ի հարկէ... (հանգիստ) Իմ կինը մոռացել է ձեզ մօտ երեսի քողը:

ՖԲ.—Զեր ամուսինը... ինձ մօտ... իւր...

(ժպտալով) Բաւականին տարօրինակ կատակ է:

ՊԱՐՈՆ Հ...—(կատաղած վեր է թռչում տեղից եւ յենելով աթոռի մէջքին) —Նա մոռացել է իր քողը:

ՖԲ.—(նոյնպէս քարձրանում է աթոռից եւ երկուան էլ երկար ժամանակ մէկու են նայում)

ՊԱՐՈՆ Հ...—(քարձրացնելով պոռնցը, ցանկանում է յարժակւել սրտի ամբողջ ուժգնութեամբ նրա վրայ) —Օ...

ՖԲ.—(մի քայլ յետ է քաշում)

ՊԱՐՈՆ Հ...—(երկար պատզայից յետոյ) Ահա ձեր նամակները... (շպրտում է սեղանի վերայ հաստ ծրաբ, որ հանել է վերաբկուի գրպանից): Խնդրեմ—տւէք նամակները, որ դուք եք ստացել:

ՖԲ.—(ըացասական շարժում է անում զըլիով)

ՊԱՐՈՆ Հ...—(ուժեղ, առանձին նշանակութիւնով) Ես չեմ ուզում որ նրանց գտնեն ձեզ մօտ, երբ դուք արդէն...

ՖԲ.—(շատ հաստատ) Նրանց չեն գտնիլ:

ՊԱՐՈՆ Հ...—(նայում է նրան: Պատզա)

ՖԲ.—Էլ ի՞նչ էք կամենում ինձնից:

ՊԱՐՈՆ Հ...—(ծաղրով) Էլ ի՞նչ եմ կամենում:

ՖԲ.—Զեր խոնարհ ծառան եմ:

**ՊԱՐՈՆ** №...—(սառը բարեւելով): Լաւ (նայում է չորս կողմը, եւ երբ նրա աչքին է ընկնում պատրաստի սեղանը, կանացի գլխարկները, նրա երեսին նորից երեսում են կատաղովթեան նշաններ)

**ՖԲ.**—(նկատելով այդ) Ես բոլորովին պատրաստ եմ ձեզ ծառայելու: Վաղը 12 ժամին ես տանը կը լինեմ:

**ՊԱՐՈՆ** №...—(զլուխ է տալիս եւ ուզում է գնալ)

**ՖԲ.**—(ուղեկցում է նրան մինչեւ դուռը, որը ռացում է ինքը—պարոնը №-ը...) Երբ նա զնում է, ֆրիցը մօտենում է զրասեղանին եւ մընում կանգնած մի քանի րոպէ: Յետոյ վազում է պատուհանի մօտ, նայում է վարագոյրի միջով. նկատում է, որ նա նայում է զնացող պարոնի հետեւից: Յետոյ հեռանում է պատուհանից, կանգնում է մտածմոնքի մէջ, ցած թողած աչքերով: Մօտենում է դռան, քացում նրան, կանչում) Թէ-սդոր, մի ընալէ...

(Միա տեսարանը կատարում է շատ արագ)

Թէ.—Է:

**ՖԲ.**—Նա բոլորը գիտէ:

Թէ.—Նա ոչինչ չը գիտէ: Երկի դու ինքդքեզ թակարդը ձգեցիր: Դու կատարեալ յիմար ես... դու, դու...

**ՖԲ.**—Նա բերեց իմ նամակները (ցոյց է տալիս սեղանի վրայ ընկած կապոցը)

Թէ.—(զարմացած) Ա՛... (փոքրիկ պառզայից յետոյ) —Ես միշտ ասում էի, որ հարկաւոր չէ նամակներ գրել:

**ՖԲ.**—Այստեղ ներքեռում, այսօր, ճաշից յետոյ նա է եղել:

Թէ.—Եւ ի՞նչ է պատահել, դէ խօսիր...

**ՖԲ.**—Թէոդոր, դու ինձ մի մեծ ծառայութիւն պէտք է անես:

Թէ.—Ես կաշխատեմ բոլորը կարգի ձգել:

**ՖԲ.**—Այժմ դըա մասին խօսք լինել չէ կարող:

Թէ.—Կը նշանակէ...

**ՖԲ.**—Յամենայն դէպս լաւ կը լինէր որ... (ընդհատելով իրեն) Խեղճ աղջիկներին չպէտք է թողնենք, որ մեզ սպասեն այդքան երկար:

Թէ.—Ոչինչ, կսպասեն: Իսկ ի՞նչ էիր ուզում ասել:

**ՖԲ.**—Լաւ կը լինէր, եթէ դու հէնց այսօր տեսնէիր կենսկուն:

Թէ.—Թէկուզ հէնց այս բոպէին, եթէ ուզում ես:

**ՖԲ.**—Այս ժամին դու նրան տանը չես գտնիլ, բայց ժամը 11-ին, 12-ին նա կաֆէում կլինի, իսկ յետոյ կարելի է երկուսդ էլ միասին կը գաք ինձ մօտ:

Թէ.—Շատ լաւ, միայն այդպիսի ոէլս մի շինիր երեսդ, այդ բաներում հարիւրից ինսուն իննը միշտ յաջող է վերջանում:

ՖԲ.—Այս անգամ ամեն միջոցներ ձեռնարկած կը լինեն, որպէսզի յաջող ելք չունենայ:

Թէ.—Յիշիր, խնդրում եմ, անցեալ տարի գօքտօր Բիլինդերի և Գերցենի հետ նոյնը չը պատահեց:

ՖԲ.—Թող խնդրում եմ, դու ինքդ էլ լաւ գիտես, որ նա կարող էր հէնց այստեղ, իմ սենեակում ինձ սպանել, վերջաւորութիւնը մի տեսակ կը լինէր:

Թէ.—Զէ, այդ ինձ դուր է գալիս: Դու հրաշալի հասկացողութիւն ունիս այդ տեսակ բաների մասին: Իսկ մենք՝ ես և լենսկին, քո կարծիքով, ոչինչ չարժենք էլի՞: Դու կարծում ես, մենք թհյլ կը տանք:

ՖԲ.—Թող խնդրում եմ: Դուք կընդունէք այն բոլորը, ինչ որ ձեզ կառաջարկւի:

Թէ.—Ա...

ՖԲ.—Ինչու համար է այդ ամենը, թէուդիր թէ դու ըստ գիտես:

Թէ.—Յիմարութիւն է: Ընդհանրապէս բոլոր բաղդի բան է: Նոյն տեսակ, կարող ես և դու նրան...

ՖԲ.—(Նրան ըլսելով) «Նա» նախազգում

էր: Մենք երկուսս էլ նախազգում էինք: Մենք գիտէինք:

Թէ.—Թաղ, ֆրից:

ՖԲ.—(մօտենալով զրասեղանին, փակում է նամակները) Ի՞նչ է շինում «Նա» այս բոպէին: Գուցէ նա «Նրան» էլ է... Դու պէտք է վաղը իմանաս բոլորը, թէ ինչ է կատարւել այնտեղ...

Թէ.—Կաշխատեմ:

ՖԲ.—Նայիր, որ առանց անտեղի յետածը գումարի լինի այդ:

Թէ.—Միկնոյն է, մինչև վաղը չէ միւս առաւօտ ոչինչ չի կարելի իմանալ:

ՖԲ.—(սարսափած) Թէոդիր...

Թէ.—Դէ, բարի եղիր: Զէ որ մի բան արժէ մարդու նախազգացումը: Իսկ իմ նախազգացումն է, որ ամեն բանյաջող պիտի վերջանայ: (Ուրախ տօնով) Զը գիտեմ ինչու, բայց ես համոզւած եմ, որ այդպէս է:

ՖԲ.—(ծիծաղելով)—Որքան դու լաւն ես, թէոդոր: Բայց ինչ պիտի ասենք մեր օրիորդներին:

Թէ.—Այդ միկնոյն է: Ուղղակի ճանապարհ կը գնենք նրանց:

ՖԲ.—Ոչ: Մենք պէտք է, որքան կարելի է, ուրախ ձեանանք: Քրիստինը ոչինչ չը պէտք է կասկածի: Ես նորից կը նստեմ դաշնամուրի:

մօտ, իսկ դու նրանց կանչեր։ (Թէողոքը անրասական զնում է)։ Բայց ի՞նչ կասես դու նըրանց։

Թէ. — Որ այդ նրանց չէ վերաբերում։

ՖԲ. — (որ նստել է դաշնամուքի մօտ) Ո՞չ, ի՞չ...

Թէ. — Դէ, կասեմ, որ գործը վերաբերում է մի ընկերոջ, մի բան կը հնարքի էլի...

ՖԲ. — (մի քանի ակորդներ է վերցնում)՝

Թէ. — (դուռը բացելով) Medames, համեցէք, խնդրեմ, (Քըիստին եւ Միցիի ներս են զալիս)

Միջ. — Վերջապէս: Նա գնաց։

ՖԲ. — (վազելով Փրիցի մօտ) Ո՞վ էր, Փրից։

ՖԲ. — (նւազելը շարունակելով) Դարձեմ հետաքրքրութիւն։

ՖԲ. — Ֆրից, խնդրում եմ, ասա։

ՖԲ. — Ոչինչ չեմ կարող ասել, թանկագինս, հաւատացնում եմ քեզ, որովհետև այդ գործը վերաբերում է մարդկանց, որոնց դու բոլորովին չես ճանաչում։

ՖԲ. — (շոյելով) Դէ, խնդրում եմ, Փրից, ասա ինձ ճշմարիտը։

Թէ. — Շատ պարզ է, որ նա քեզ հանգստութիւն չը պիտի տայ, բաց դու միւնոյն է ոչինչ չես ասիլ նրան, որովհետև անրանց դու այդպէս խոստացար։

Միջ. — Թող, Քրիստին, մի տիրից։ Թոյլ

տուը նրանց կոտրատւել, որքան ցանկանում են։ Թէ. — Ես պէտք է վալսս վերջացնեմ ֆըրէյլէյն Միցցիի հետ։ (Կըկէսի միմոսին նմանեցնելով) — Խնդրում եմ, պարօն կապէլմայստէր, մի կտոր երաժշտութիւն։

ՖԲ. — (նւազում է)

(Թէողոք եւ Միցցի պարում են)

Միջ. — (մի քանի պատյաներից յետոյ ընկնում է բազկաթոռի վրայ) — Ես այլ ևս չեմ կարող։

Թէ. — (համբուրում է նրան եւ նստում բազկաթոռի թեւի վրայ)

ՖԲ. — (մնում է դաշնամուքի մօտ, վերցնուած Քըիստինի երկու ծեռքերն էլ եւ նայում նրան)

ՖԲ. — (կարծես քնից սթափելով) Ինչու չես նւազում։

ՖԲ. — (Ժպտալով) Այսօրւայ համար բաւական է։

ՖԲ. — Գիտես, ես կը կամենայի այդպէս նւազել։

ՖԲ. — Իսկ դու շատ ես նւազում։

ՖԲ. — Ո՞չ, ժամանակքիչ ունեմ, շատ գործ կայ տանը։ Բացի այդ մեր դաշնամուրն էլ շատ վատն է։

ՖԲ. — Մի անգամ ուզում եմ փորձել քո դաշնամուրի վրայ նւազել։ Ասենք ես շատ կուզենայի քո սենեակը տեսնել։

ՔՐ.—Նա քոնի պէս գեղեցիկ չէ:

ՔՐ.—Յետոյ ես կը ցանկանայի, որ դու պատմես քո մասին... շատ, շատ... ես, իսկապէս, քո մասին շատ քիչ բան գիտեմ:

ՔՐ.—Պատմելու բան էլ չը կայ: Յետոյ ես ուրիշների նման գաղտնիքներ չունիմ...

ՔՐ.—Առաջ դու ուրիշին չես սիրել:

ՔՐ.—(չը պատասխանելով, նրան է նայում)

ՔՐ.—(համբուրում է նրա ձեռքը)

ՔՐ.—Եւ չեմ էլ սիրի ուրիշ ոչ ոքի:

ՔՐ.—(համարեա դառնութեամբ) Մի ասիրայդ, մի ասիր, ի՞նչ կարող ես դու իմանալ: Դու շատ ես սիրում քո հօրը, Քրիստին:

ՔՐ.—Օ՛, այո... Ժամանակ կար, որ ես նրան ամեն ինչ պատմում էի:

ՔՐ.—Մի կշամքիր քեզ, մանկիկս... բայց երբեմն մարդիկ գաղտնիքներ էլ են ունենում, այդ աշխարհի օրէնքն է:

ՔՐ.—Եթէ միայն ես հաւատացած լինէի որ դու ինձ սիրում ես, այն ժամանակ ոչինչ...

ՔՐ.—Իսկ դու միթէ չգիտես:

ՔՐ.—Եթէ դու միշտ այդպէս խօսէիր հետո, այն ժամանակ... այո:

ՔՐ.—Քրիստին, դու անյարմար ես նստած:

ՔՐ.—Թող ինձ, այդպէս ինձ համար շատ լաւ է: (դնում է զլուխը դաշնամուրին)

ՔՐ.—(շոյելով նրա մազերը)

ՔՐ.—Ալս, որքան լաւ է:

(Հոռթիւն)

Թէ.—Ֆրից, որտեղ են սիգարները:

ՔՐ.—(մօտենում է Թէոլորին, որ պահանի մօտ սիգարներն է փնտում)

Միջ.—(ընած է)

ՔՐ.—(տալիս է սիգարների տուփը) Իսկ սկ սուրճը մենք բոլորովին մոռացանք: (Ածում է շաւաթ)

Թէ.—Իսկ դուք, երեխաներ, սկ սուրճ չէք ցանկանում:

ՔՐ.—Միցցի, քեզ սուրճ տամ:

Թէ.—Թող նրան, թող քնի: Իսկ դու այսօր սուրճ մի խմիր, Դու պէտք է, որքան կարելի է, շուտ անկողին մտնես և աշխատես լաւ քնել,

ՔՐ.—(նայում է նրան դառնութեամբ)

Թէ.—Այս գործը շատ պարզ է, այժմ նրա մասին չը պէտք է մտածել, թէ որքան կարելի է մեծահոգի և վեհանձն լինել, այլ նրա մասին, որ խելօք լինել, միմիայն դրա մասին... այդպիսի դէպքերի ժամանակ...

ՔՐ.—Դու կը գմա այս գիշեր ինձ մօտ լէ-նսկու հետ:

Թէ.—Յիմարութիւն է: Առաւօտն էլ կարող ենք դալ:

ՔՐ.—Խնդրում եմ:

Թէ.—Դէ լաւ:

ՖԲ.—Օրիորդներին մինչև տուն կռւղեկցես:  
 Թէ.—Այս և այն էլ այժմ: Միցցի, վեր կաց:  
 Միջ.—Դուք սև սմբըն էք խմում. ինձ էլ  
 ու էք:

Թէ.—Ահա և քեզ, զաւակս:

ՖԲ.—(Մօտենալով Քրիստինին) Յոգնել ես,  
 թանկագինս:

ՔԲ.—Ո՞րքան դուք է գալիս ինձ, երբ դու  
 այդպէս ես խօսում:

ՖԲ.—Շատ ես յոգնել:

ՔԲ.—(Ժիծաղելով) Գինուցն է, մի փոքր  
 գլուխս է ցաւում:

ՖԲ.—Պարզ օդում կանցնի:

ՔԲ.—Մենք արդէն զնում ենք. դու մեզ  
 կռւղեկցես, հա:

ՖԲ.—Ո՞չ, մանկիկս, ես այժմ տանը կը  
 մնամ. գործ ունիմ:

ՔԲ.—(իրք մի բան յիշելով) Այժմ, ի՞նչ  
 գործ կարող ես ունենալ այս ժամանակ:

ՖԲ.—(համարեա թէ զրգուած) Դէ, Քրիս-  
 տին, պէտք է վարժւես վերջապէս: (Քնքոյշ) Ես  
 ինձ մի քիչ յոգնած եմ զգում. այսօր Թէզողո-  
 րի հետ 2 ժամ զբօսնել ենք քաղաքից դուրս:

Թէ.—Ի՞նչքան լաւ էր այնտեղ. այս քանի  
 օրը ամենքս միասին կերթանք:

Միջ.—Հրաշալի բան կլինի և դուք երկուսդ  
 էլ ձեր զինուրական հագուստները կը հագնէք:

Թէ.—Բնութեան զարմանալի սէր է այդ:

ՔԲ.—Ե՞րբ կը տեսնւենք նորից:

ՖԲ.—(քիչ ջղայնոտ) Ես քեզ կը գրեմ:

ՔԲ.—(տիսուր) Դէ, ցտեսութիւն: (Գնում է  
 ուշպի դրույզ)

ՖԲ.—(Նկատելով նրա տիսութիւնը) Քրիս-  
 տին, վաղը կը տեսնւենք:

ՔԲ.—(ուզակ) Այս:

ՖԲ.—Այգում... այնտեղ երկաթուղու գծի  
 մօտ, ուր վերջին անգամ... այնտեղ... այսպէս...  
 ժամը... 6-ին, քեզ համար յարմար կը լինի:

ՔԲ.—(զլխով համածայնութիւն է տալիս)

Միջ.—Գալիս ես մեզ հետ, Թրից:

Թէ.—Զարմանալի սովորութիւն է, ամենքի  
 հետ էլ դնուով խօսել:

ՖԲ.—Ո՞չ, ես տանն եմ մնալու:

Միջ.—Քեզ համար լաւ է, իսկ մենք ահա-  
 գին ձանապարհ պիտի գնանք:

ՖԲ.—Միցցի, դու համարեա թէ ամբողջ  
 տորտը անշարժ ես թողել: Սպասիր, ես նրան  
 փաթաթեմ: Ուզում ես:

Միջ.—(Թէզողորին) Իսկ քաղաքավարի կը  
 լինի վերցնելը:

ՖԲ.—(վաթաթում է)

ՔԲ.—Միցցին երեխայի նման է:

Միջ.—(Ժղիցին) Իսկ դրա փոխարէն ես  
 կօգնեմ քեզ մոմերը հանգնելու: (Հանգնում է

- բոլորը, բացի մէկից, որ գրասեղանի վրայ է)
- ՔԲ.—Զը բացեմ պատուհանը, այստեղ այնպիսի տօթ է: (բացում է)
- ՖԲ.—Իսկ այժմ ես կլուսաւորեմ ձեզ:
- ՄԻՅ. —Արդէն լոյս չը կայ սանդուխտների վրայ:
- Թէ. —Շատ հասկանալի է:
- ՔԲ.—Որպիսի սքանչելի օդ է:
- ՄԻՅ. —Մայիս է, չէ... (Դուան մօտ է. Փըհը մոմը ձեռքին) Շնորհակալութիւն սիրալիր ընդունելութեան համար:
- Թէ. —(Նրան բոթելով) Գնա, գնա, գնա...
- ՔԲ.—(Ծանապարհ է ձգում նրանց, Դուռը մուս է բաց, լսում է խօսակցութիւնը եւ բացուղ դուն ձայնը)
- ՄԻՅ. —Այ քեզ բան:
- Թէ. —Զգոյշ, չընկնէք:
- ՄԻՅ. —Շնորհակալութիւն տորտի համար:
- Թէ. —Կամաց, չարթնացնես ամենքին:
- ՔԲ.—Բարի գիշեր:
- Թէ. —Բարի գիշեր:
- (Լսում է ինչպէս կողպում է դուռը)
- ՔԲ.—(այն ժամանակ, երբ նա մտնում է, մոմը դնում գրասեղանի վրա, լսում է փողոցի դուն բացւելու եւ կողպւելու ձայնը, նա մօտենում է պատուհանին)
- ՔԲ.—Բարի գիշեր:

- ԹԻՅ. —Բարի գիշեր, սիրունիկս...
- Թէ. —Դէ, դէ, Միցցի...

(Լսում են ծիծաղի, բայլերի ծայներ: Թէ ողորը սուլում է «Երկալխանի արծիւ», յետոյ կամաց կամաց լրութիւն է տիրում: Փրիցը նայում է նըրանց յետեվց, յետոյ ընկնում է պատուհանի մօտ քաջկաթոռի վրայ)

### Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ք

Բ. Ա. Ր Ա. Ր Ի Ա. Ծ

Քրիստինի համեստ եւ սիրունիկ կահաւորւած  
սենեակը

ՔՊ.—(Հազնում է տնից դուրս գնալու համար)

ԿԱԾ.—(Մտնում է, նախօրօք դուռը ծեծելով) Բարի երեկոյ, Փրէյլէյն Քրիստին:

ՔՊ.—(Կանգնած է հայելու առաջ, յետոցու է զալիս) Բարի երեկոյ:

ԿԱԾ.—Ախ, դուք պատրաստւել էք դժւռս  
գնալու համար:

ՔՊ.—Շատ էլ չեմ շտապում:

ԿԱԾ.—Ամուսինս է ուղարկել ինձ, որ հրաւիրեմ ձեզ միասին լեների այգին գնալ ընթրելու.  
այնտեղ այսօր երաժշտութիւն կայ:

ՔՊ.—Շնորհակալ եմ, ֆրառւ թինդեր... այսօր ես չեմ կարող... մի ուրիշ անդամ... Դուք չէք բարկանում:

ԿԱԾ.—Ամենեին... ի՞նչու... երկի դուք առանձին աւելի լաւ կանցկացնէք ժամանակը, քան  
մեզ հետ:

ՔՊ.—(Նայում է նրան)

ԿԱԾ.—Իսկ հայրդ արդէն թատրոնումն է:  
ՔՊ.—Ո՛չ, նա դեռ տուն կը գայ. չէ որ  
այժմ ներկայացումները եօթ և կէսին են սկըս-  
ւում:

ԿԱԾ.—Իսկապէս որ, իսկ ես շարունակ մո-  
ռանում եմ: Այն ժամանակ ես նրան կը սպա-  
սեմ, ես վաղուց է ուզում եմ նրանից կօնտրա-  
մարկ խնդրել մի որևէ նոր պիէսի ներկայաց-  
ման, այժմ երեկի կարելի կը լինի ստանալ:

ՔՊ.—Ի հարկէ, այժմ ով է գնում թատ-  
րոն, այնպիսի հրաշալի երեկոներ են:

ԿԱԾ.—Իսկ մեզ նմանները երբէք թատրոն  
չեն ընկնի, եթէ պատահաբար մի ծանօթ չու-  
նան. իսկ դուք, Փրէյլէյն Քրիստին, իմ պատճա-  
ռով չուշանաք, եթէ ցանկանում էք գնալ: Ի  
հարկէ իմ ամուսինը շատ կը ցաւի... և նամա-  
նաւանդ մի ուրիշը...

ՔՊ.—Այդ ով:

ԿԱԾ.—Ի հարկէ ամուսնու եղբօրորդին էլ  
մեզ հետ կը լինի: Գիտէք Փրէյլէյն Քրիստին,  
նա այժմ պաշտօն է դտել:

ՔՊ.—(անտարբեր) Այս:

ԿԱԾ.—Այն էլ լաւ ոռճիկով: Նա շատ լա-  
տղայ է և ինչպէս էլ յարգում է ձեզ:

ՔՊ.—Ուրեմն ցտեսութիւն, ֆրառւ թինդեր:

ԿԱԾ.—Ինչ որ ասեն նրան ձեր մասին, ոչ  
մի բանին չի հաւատում:

**ՔՐ.** — (Նայում է նրան) ԿԱԾ. — Այնպիսի տղամարդիկ կան...  
**ՔՐ.** — Յաեսութիւն, Փրառւ Բինդեր:  
**ԲԻՆ.** — Յաեսութիւն... (չար տօնով) Չուշանաք տեսակցութեանը...  
**ՔՐ.** — Իսկապէս դուք ի՞նչ եք կամենում ինձանից:  
**ԲԻՆ.** — Բոլորովին ոչինչ... դուք արդարացի էք — մարդ մի անգամ է երիտասարդ լինում:  
**ՔՐ.** — Յաեսութիւն:  
**ԲԻՆ.** — Եթէ թոյլ տաք, Փրէյլէյն Քրիստին, ձեզ մի խորհուրդ կը տամ. զգոյշ եղէք:  
**ՔՐ.** — Ի՞նչ է նշանակում այդ:  
**ԲԻՆ.** — Վիեննան իհարկէ մեծ քաղաք է... այնպէս որ դուք լաւ կանէիք, որ ձեր rendezvous-ները տնից քիչ հեռու նշանակէիք:  
**ՔՐ.** — Այդ ոչ ոքին չի վերաբերում:  
**ԿԱԾ.** — Ես չէի ցանկանում հաւատալ այն ամենին, ինչ որ պատմեց ինձ իմ ամուսինը: Իբր թէ նա ձեզ տեսել է... Թող, ասում եմ նըրան, երեխ դու սխալւել ես: Ֆրէյլէյն Քրիստինը այնպիսի աղջիկներից չէ, որ երեկոները փողոցները չափչփէ տղամարդկանց հետ, իսկ եթէ պատահել է այդպիսի մի բան, նա այնքան խելօք է, որ մեր փողոցում չէր անի այդ բանը: Դէ ինքդ հարցրու նրանից, պատասխանեց նա: Եւ ոչ մի զարմանալի բան չկայ, ասաց, մեզ

մօտ չէ գալիս, իսկ շարունակ այդ Միցցի Շլագերի հետ է թրև գալիս և ի՞նչ ընկեր է նա կարգին և երիտասարդ աղջկայ համար: Զէ որ տղամարդիկ բոլորն էլ այնքան կոպիտ են, Փրէյլէյն Քրիստին, և ի հարկէ նա այդ բոլորը յայտնել է ֆրանցին, իսկ նա սարսափելի բարկացել է, պատասխանել է, որ Փրէյլէյն Քրիստինի համար պատրաստ է կրակն ընկնել և թէ ով վատ խօսէ նրա մասին, իրա հետ պիտի գործ ունենայ: Եւ ինչ համեստն էք դուք, ասել է, և թէ ինչպէս դուք սիրում էիք ձեր մօրաքըրոջը, Ասուած նրա հոգին լուսաւորի, և որքան բարի էք, ինչպէս մեկուսացած էք ապրում: և այն և այն... (պատրա) Կարելի է այնուամենայնիւ մեզ հետ կերթաք երաժշտութիւն լսելու:  
**ՔՐ.** — Ոչ:

(Նրանք եւ վայրինգ, ծեռքին յամիկի ծիլ)  
**ՎԱՅՐ.** — Բարի երեկոյ... Ա՛, Փրառւ Բինդեր:  
**ԿԱԾ.** — Ենորհակալ եմ:  
**ՎԱՅՐ.** — Իսկ լինան: Զեր ամուսինը:  
**ԿԱԾ.** — Բոլորն էլ առողջութիւնը:  
**ՎԱՅՐ.** — Եւ լաւ է: (Քրիստինին) Իսկ դու դեռ տանն ես այսպիսի հրաշալի երեկոյին:  
**ՔՐ.** — Պատրաստում էի գնալու:  
**ՎԱՅՐ.** — Հրաշալի է: Ի՞նչ օր է այսօր, Փրառւ Բինդեր, ուղղակի հրաշք: Այդիով անցայ, յա-

միկը այնպէս սիրուն ծաղկել է, մինչև անգամ  
մի փոքրիկ յանցանք գործեցի (տալիս է Քրիս-  
տինին յամիկի ծիւղը) ՔՐ.—Շնորհակալ եմ, հայրիկ:  
ԿԱԾ.—Շնորհակալ եղէք, որ այգեպանը չը  
տեսաւ:

ՎԱՅՐ.—Իսկ դուք գնացէք այստեղ, քրառւ  
Բինդեր, տեսէք ինչպէս անուշահնոտութիւն է բու-  
րում այստեղ, կարծես ես այս ձիւղը չեմ էլ պոկել:  
ԿԱԾ.—Եթէ բոլորն էլ այդպէս դատեն...

ՎԱՅՐ.—Այս, այն ժամանակ այդին կը դա-  
տարկւէր, իհարկէ:

ՔՐ.—Ցտեսութիւն, հայրիկ:

ՎԱՅՐ.—Եթէ դու մի քանի բոպէ ինձ  
սպասէիր, մինչև թատրոն միասին կերթայինք:

ՔՐ.—Ես... ես... խոստացել եմ Միցցիին,  
նրա յետեից մտնել...

ՎԱՅՐ.—Ախ այդպէս... Աւելի լաւ, երիտա-  
սարդութիւնը երիտասարդութեանն է պատկա-  
նում: Ցտեսութիւն, Քրիստին:

ՔՐ.—(համբուրում է հօրը)—Ցտեսութիւն,  
քրառւ Բինդեր: (զնում է. Վայրինզը նրան ուղևե-  
ցում է ընթոշ հայեացըու)

ԿԱԾԻՆ և ՎԱՅՐԻՆԴ

ԿԱԾ.—Ա, ժմ Միցցիի հետ նրանք սերտ  
բարեկամներ են դարձել:

ՎԱՅՐ.—Այս: Եւ ես շատ ուրախ եմ, որ  
Քրիստինս այժմ ծանօթ ունի և ստիպւած չէ  
շարունակ տանը մնալ: Այդ տեսակ կեանքը ի՞նչ  
բաւականութիւն է կարող պատճառել երիտա-  
սարդ աղջկան:

ԿԱԾ.—Ի հարկէ:

ՎԱՅՐ.—Դուք երևակայել չէք կարող, քրա-  
ռւ Բինդեր, որքան եմ տխրում, երբ վորձից  
տուն վերադառնալով, տեսնում եմ նրան միայ-  
նակ տանը նստած և կար կարելիս. Ճաշից յե-  
տոյ վեր է կենում թէ չէ, նորից նստում է իւր  
նօտաները արտագրելու:

ԿԱԾ.—Այս, այս, միլիօնատէրերը աւելիլաւ  
են ապրում, քան մենք—աղքատներս: Իսկ ի՞նչ-  
պէս է նրա երգեցողութիւնը:

ՎԱՅՐ.—Ոչինչ չի դուրս գալ: Սենեակի հա-  
մար նրա ձայնը բաւական է, հօր համար բաւա-  
կանին լաւ է երգում, բայց դրանով ապրել ան-  
կարելի է:

ԿԱԾ.—Ափսոս:

ՎԱՅՐ.—Ես շատ ուրախ եմ, որ նա ի՞նքն էլ  
խոստովանում է այդ, գոնէ չէ հիասթափւել: Մեր  
թատրոնի երգեցիկ խմբում, ասենք, նրան  
տեղաւորել ես կարող եմ...

ԿԱԾ.—Իհարկէ այդպիսի գեղեցկութեամբ...

ՎԱՅՐ.—Բայց ապագայի համար այնտեղ  
ոչ մի յոյս...

ԿԱԾ.—Այո, այդպիսի աղջկայ հետ քիչ հոգ-  
սեր չեն կապւած: Երբ մտածում եմ, որ իմ կի-  
նան էլ մի 5—6տարի յետոյ հասունացած աղ-  
ջիկ պիտի դառնայ...

ՎԱՅՐ.—Բայց ինչու չէք նստում, ֆրառ  
Բինդեր:

ԿԱԾ.—Շնորհակալ եմ, ամուսինս իսկոյն  
ինձ կը կանչի, ես եկայ միայն Քրիստինին հրա-  
ւիրելու...

ՎԱՅՐ.—Հրաւիրելու...

ԿԱԾ.—Այո, երաժշառութեան, լեների այ-  
դին: Մտածեցի մի քիչ նրան գւարճութիւն  
պատճառել և հարկաւոր էլ է:

ՎԱՅՐ.—Այո, այդ չէք խանգարիլ, նամա-  
նաւանդ նրա անցկացրած տիրուր ձևեռից յե-  
տոյ: Բայց ի՞նչու նա չը գնաց ձեզ հետ:

ԿԱԾ.—Չգիտեմ, գուցէ նրա համար, որ  
ամուսնուս եղբօր որդին մեզ հետ է լինելու:

ՎԱՅՐ.—Շատ կարելի է, նա նրան տանել  
չի կարող, ինքն ասաց ինձ այդ:

ԿԱԾ.—Ինչու, ֆրանցը շատ քաղաքավարի  
տղայ է, և այժմ էլ նա շատ լաւ ոռնիկով տե-  
ղաւորւել է մի տեղ պաշտօնով, իսկ այժմեան  
ժամանակներում դա մեծ բաղդ է այնպիսի մի...

ՎԱՅՐ.—Այնպիսի մի... աղքատ աղջկայ  
համար:

ԿԱԾ.—Ամեն մի ակջկայ համար բաղդաւո-

բութիւն է:

ՎԱՅՐ.—Ասացէք ինձ, ֆրառ Բինդեր, մի-  
թէ իսկապէս նրա համար է ստեղծւած և նշա-  
նակւած այդպիսի սիրուն և երիտասարդ աղջի-  
կը, որ անպատճառ ամուսնայ քաղաքավարի  
երիտասարդի հետ, որ պատահմամբ լաւ պաշ-  
տօն է ստացել:

ԿԱԾ.—Այդ ամենախելօք բանը կը լինէր:  
Չի կարելի հօ սպասել մի իշխանի. բայց եթէ  
ներկայանայ էլ այդպիսին, դրանից ի՞նչ. այդ-  
պիսիները աւելի շուտ են փախչում չամուսնա-  
նալով: (Վայրինզը պատուհանին է մօտեցել: Պա-  
ուզա) Այո, ահա դրա համար է, որ միշտ ա-  
սում եմ, թէ այդպիսի աղջիկները պէտք է միշտ  
զգոյշ լինին ծանօթութիւնների մէջ:

ՎԱՅՐ.—Ուրեմն, այդ գիպւածում, վերց-  
նել և պատուհանից գուրս շպրտել էլի երիտա-  
սարդութիւնը: Իսկ վերջ ի վերջոյ ի՞նչ պիտի  
ստանայ խեղճ աղջիկը իր անարատութեան փո-  
խարէն, եթէ երկար տարիներ սպասելուց յետոյ  
յանկարծ գայ մի որևէ գուլպագործ:

ԿԱԾ.—Պարոն Վայրինգ, թէև իմ ամուսի-  
նը գուլպագործ է, բայց այնուամենայնիւ նա  
ազնիւ և կարգին մարդ է, որի մասին ես եր-  
բէք չեմ գանգատել:

ՎԱՅՐ.—(հանգստացուցիչ տօնով) Բայց,  
ֆրառ Բինդեր, բանը ձեր մէջ չէ, գուք... ես

կարծում եմ, պատուհանից չէք նետել ձեր երիտասարդութիւնը:

ԿԱՅ. — Այն ժամանակների մասին ես արդէն մոռացել եմ:

ՎԱՅՐ. — Մի պնդէք ինչ ուզում էք, ասացէք, բայց յիշողութիւնները ամենալաւն է, որ մում է մեզ մեր կեանքի մէջ:

ԿԱՅ. — Ես ոչ մի յիշողութիւն չունեմ:

ՎԱՅՐ. — Դէ, դէ...

ԿԱՅ. — Իսկ ի՞նչ է մնում այդ յիշողութիւններից, ինչպէս դուք ասում էք, միմիայն զըղջումն:

ՎԱՅՐ. — Իսկ միթէ լաւ է, երբ մարդ յիշելու մի բան չունի իւր կեանքից: Եթէ ամբողջ կեանքը անցել է այնպէս, մէկ օրը միւսի նման, առանց բաղդաւորութեան, առանց սիրոյ—միթէ դա լաւ է:

ԿԱՅ. — Պարոն Վայրինդ, յիշեցէք միայն ձեր խեղճ քրոջ, պառաւ ֆրեյլէյնի մասին... Ասենք, երկի ձեզ համար դեռ էլի շատ ծանր է նրան յիշելը, պարոն Վայրինդ:

ՎԱՅՐ. — Այո, դեռ շատ ծանր է:

ԿԱՅ. — Ի հարկէ, երբ մարդիկ այնպէս կապւած են մէկ-մէկու հետ: Ես միշտ ասում էի, որ ձեզ նման եղբայր դժւար կը գտնւի:

ՎԱՅՐ. — (ձեռքի նշանով նրան կանգնեցնում է)

ԿԱՅ. — Ո՛չ, իրաւ եմ ասում: Դուք նրան փոխարինում էիք և հօրը, չը նայած որ այն ժամանակ դուք էլ շատ երիտասարդ էիք դեռ:

ՎԱՅՐ. — Այն, այո...

ԿԱՅ. — Զէ որ այդ էլ մէծ սփոփանք է մարդու համար, երբ նա զգում է, որ ամբողջ կեանքում եղել է մի խեղճ աղջկայ պաշտպանը և բարերարը:

ՎԱՅՐ. — Այո, առաջ, երբ նա դեռ մի զըրաւիչ երիտասարդ աղջիկ էր, ես այդպէս էի կարծում և ինքս ինձ երկակայում էի, Աստւած գիտէ, մի վեհանձն, խելօք մարդ: Իսկ յետոյ, երբ սկսեցին երկալ նրա ձերմակ մազերը, կընձիռները, երբ օր օրի վրայ, աննկատելի կերպով, նա դարձաւ մի պառաւ կին... այն ժամանակ, այո, այն ժամանակ միայն զգացի, թէ իսկապէս ինչ եմ ես արել:

ԿԱՅ. — Բայց, պարոն Վայրինդ...

ՎԱՅՐ. — Ես, կարծես, այժմ էլ տեսնում եմ նրան, ինչպէս այն ժամանակ, նստած էր երեկոները ահա այն սենեակում իմ գիմաց, լամպայի տակ և նայում էր ինձ իւր համեստ, ամաչկոտ, հրեշտակային դէմքով և կարծես շնորհակալութիւն էր յայտնում ինչ որ բանի համար... Իսկ ես... Ես պատրաստ էի ընկնել նրա ոտքերը և աղաչել նրա ներողութիւնը, որ ես այնպէս պաշտպանել եմ իրեն ամեն մի յարձա-

կումից, և ամեն մի երջանկութիւնից միհնոյն ժամանակ:

(Հոռովթիւն)

ԿԱՏ.—Իսկ ուրիշները պիտի ուրախանալին, որ այդպիսի եղբայր ունին և որ զղալու տեղիք չը կայ...

ԿԱՏՐԻՆ, ՎԱՅՐԻՆԴ և ՄԻՑՅԻ

ՄԻՅ.—(մտնում է) —Բարի երեկոյ: Արդէն կարգին մութն է...ոչինչ չէ երևում: Ա, ֆրառ Բինդեր: Զեր ամուսինը ներքեռում է և ձեզ է սպասում: Իսկ Քրիստինը միթէ տանը չէ:

ՎԱՅՐ.—Քառորդ ժամ առաջ դուրս գնաց:

ԿԱՏ.—Միթէ դուք չը հանդիպեցիք իրար, չէ՞ որ տեսակցութիւն էիք նշանակել:

ՄԻՅ.—Ո՛չ, մենք միշտ կորցնում ենք մէկ մէկու: Իսկ դուք գնում էք ձեր ամուսնու հետ երաժշտութիւն լսելու, նա ինքն ասաց:

ԿԱՏ.—Այո, նա այնպէս սիրում է երաժշտութիւնը: Իսկ գիտէք, ֆրէյլէյն Միցցի, սքանչելի գլխարկ ունէք: Անկասկած նո՞ր է, երեկի:

ՄԻՅ.—Բոլորովին ոչ միթէ չը ճանաչեցիք, այդ անցեալ տարւանն է, միայն սարգն է նո՞ր:

ԿԱՏ.—Դուք ինքներդ սարգեցիք:

ՄԻՅ.—Ի հարկէ:

ՎԱՅՐ.—Ինչպէս լաւ:

ԿԱՏ.—Հասկանալի է, ես միշտ մոռանում եմ, որ դուք ամբողջ մի տարի ծառայել էք մօդային արհեստանոցում:

ՄԻՅ.—Երեկ նորից կը մտնեմ այնտեղ: Մայրս է ցանկանում—Բնէ անես:

ԿԱՏ.—Ի՞նչպէս է ձեր մօր առողջութիւնը:

ՄԻՅ.—Ոչինչ, միայն ատամներն են ցանում: Բժիշկն ասում է, որ այդ յօդացաւից է:

ՎԱՅՐ.—Դէ, այժմ իմ գնալու ժամանակն է:

ԿԱՏ.—Ես գալիս եմ ձեզ հետ, պարոն Վայրինդ:

ՄԻՅ.—Ես էլ ձեզ հետ... Պարոն Վայրինդ, վերցրէք ձեր վերարկուն, երեկոներին շատ խոնաւ է լինում:

ՎԱՅՐ.—Զեր կարծիքով անհրաժեշտ է:

ԿԱՏ.—Իհարկէ, միթէ կարելի է այդպէս անզգոյշ լինել:

Նրանք և Քրիստին

ՔՐ.—(մտնում է)

ՄԻՅ.—Ահա և Քրիստինը:

ԿԱՏ.—Արդէն զբունելուց դարձմք:

ՔՐ.—Այո, Բարեւ, Միցցի... Գլուխս սկսեցաւել: (Նստում է)

ՎԱՅՐ.—Միթէ:

ԿԱՏ.—Երեկ մայիսեան օդից:

ՎԱՅՐ.—Ի՞նչ է պատահել քեզ, Քրիստին:  
Ֆրէյլէյն Միցցի, վառեցէք, խնդրում եմ, լամ-  
պան:

ՄԻՅՑ.—(ցանկանում է վառել)

ՔՐ.—Ինքս կարող եմ վառել, հայրիկ:

ՎԱՅՐ.—Ես ուզում եմ տեսնել քո երեսը,  
Քրիստին:

ՔՐ.—Դատարկ բան է, հայրիկ, երեխ օ-  
դիցն է:

ՎԱՅՐ.—Շատերը չեն տանում գարունը:

ՎԱՅՐ.—Ֆրէյլէյն Միցցի, դուք դեռ կը  
մնաք Քրիստինի մօտ:

ՄԻՅՑ.—Իհարկէ կը մնամ:

ՔՐ.—Ճշմարիտ, հայրիկ, բան չը կայ:

ՄԻՅՑ.—Երբ իմ գլուխը ցաւում է, մայրս  
այդքան չէ անհանգստանում:

ՎԱՅՐ.—(Քրիստինին, որ դեռ նստած է) Դու  
յոգնել ես:

ՔՐ.—(վեր կենալով) Ահա և կանգնեցի  
(ծիծաղում է)

ՎԱՅՐ.—Այո, այժմ դու փոխւեցիր: (Կատ-  
րինին) Ճշմարիտ չէ, որ նա բոլորին փոխւում  
է, երբ ծիծաղում է: Դէ, ցտեսութիւն, Քրիս-  
տին: (Համբուրում է նրան) իսկ գլուխդ պիտի  
դադրէ ցաւելուց մինչև իմ վերադառնալը: (զլ-  
նում է)

ՎԱՅՐ.—(կամաց Քրիստինին) Դուք կուեցիք...

ՔՐ.—(անգատականովթեան շարժում է անում)

ՎԱՅՐ.—(դոներից) Դէ, քրառւ Բինդեր:

ՄԻՅՑ.—Երթաք բարով:

(Կատրին եւ վայրինգ գնում են)

ՄԻՅՑ.—Գիտես ի՞նչու է գլուխդցաւում. ե-  
րեկւան գինուց: Զարմանում եմ թէ ի՞նչու ես  
բան չեմ զգում, Բայց ուրախ էր, չէ:

ՔՐ.—(համաձայնովթեան նշան է անում)

ՄԻՅՑ.—Շատ լաւ մարդիկ են երկուսն էլ,  
վատ բան չես ասիլ նրանց մասին: Զէ: Իսկ  
Ֆրիթի սենեակը շատ լաւ զարդարւած է, չէ...  
Դօրիի սենեակը... (խօսքը կտրում է) Ի՞նչպէս,  
էլի՞ց ցաւում է գլուխդ... Ինչու չես խօսում, ի՞նչ  
է պատահել քեզ:

ՔՐ.—Երկակայիր, նա չեկաւ:

ՄԻՅՑ.—Եւ ստիպեց քեզ սպասել: Տեղն է  
քեզ:

ՔՐ.—Բայց ի՞նչու, ի՞նչ եմ արել ես նրան:

ՄԻՅՑ.—Շատ ես երես տւել, այ թէ ի՞նչ:  
Իսկ այդ աղամարդկանց ոտիպում է երկակա-  
յել իրանց մասին:

ՔՐ.—Դու ի՞նքդ չես հասկանում, թէ ի՞նչ  
ես խօսում:

ՄԻՅՑ.—Ես շատ լաւ եմ հասկանում, ի՞նչ  
եմ խօսում: Ամբողջ ժամանակ քեզ վրայ եմ  
բարկանում: Նա ուշանում է, չէ գալիս տեսակ-  
ցութեան, չէ ուղեկցում քեզ մինչև տուն, օ-

Թեակ է նստում ինչ որ կանանց հետ—այդ ամենը դու տանում ես լուռ ու մունջ և նայում ես նրա վրայ սիրահարւած աչքերով։

ՔԲ.—Խնդրում եմ, մի խօսիր այդպէս, քեզ մի երևակայիր այն, ինչ որ չես խսկապէս, Զէ որ դու էլ Թէոդորին ես սիրում։

ՄԻՅ.՝ Իհարկէ սիրում եմ նրան, Բայց ոչ Դօրին և ընդհանրապէս ոչ մի տղամարդ չի արժանանայ այն բանին, որ ես տանջւեմ նրանց համար, բոլոր տղամարդիկ միասին՝ չարժեն դրան։

ՔԲ.—Երբէք ես քեզանից չեմ լսել այդպիսի խօսքեր։

ՄԻՅ.՝ Բայց չէ որ, Թրիստին, մենք երբէք առաջ չենք խօսել միմեանց հետ բացարձակ։ Ես այնպիսի յարգանքով էի վերաբերւում դէպի քեզ Գիտես ինչ, ես միշտ հաւատում էի, որ եթէ երբեք է դու սիրահարւես, կը սիրահարւես բոլոր ոյժով։ Առաջին անգամ միշտ այդպէս է լինում, բայց դու պէտք է ուրախ լինիս, որ առաջին սիրահարութեանդ ժամանակ դու ինձ նման մի ընկերուհի ունիս։

ՔԲ.՝ Միցցի։

ՄԻՅ.՝ Դու չես հաւատում որ ես քո բարեկամն եմ։ Եթէ ես շարունակ քո մօտ չը լինէի և միշտ չը կրկնէի՝ «իմացիր Թրիստին որ նա նոյնն է, ինչ որ բոլոր տղամարդիկ», և որ բոլոր

տղամարդիկ միասին չարժեն մեր մի ժամւայ գթութեան», դու ով գիտէ ինչեր մտցնէիր գլուխըդ։ Ես միշտ ասել եմ, որ տղամարդու խօսքին չը պէտք է հաւատալ։

ՔԲ.՝ Ի՞նչ ես ասում դու... տղամարդիկ, տղամարդիկ. Ի՞նչ զործ ունեմ ես տղամարդկանց հետ, ես չեմ խօսում ուրիշ տղամարդկանց մասին։ Ամբողջ կեանքիս ընթացքում ոչ մի տղամարդով չեմ հետաքրքրւել։

ՄԻՅ.՝ Այս, բայց ի՞նչ ես մասձում... միթէ նա քեզ արդէն... Ասենք պատահում է... Դէ, այն ժամանակ դու պէտք է ուրիշ տեսակ տանէիր գործը...»

ՔԲ.՝ Լուիր վերջապէս։

ՄԻՅ.՝ Բայց ի՞նչ ես պահանջում դու ի՞նձանից... ինչ կարող եմ անել այժմ... Պէտք էր առաջ մտածել։ այն ժամանակ պէտք էր սպասել, մինչև որ գար մէկը լուրջ մտադրութիւններով։

ՔԲ.՝ Միցցի. Ես չեմ կարող այսօր լսել այս տեսակ խօսակցութիւններ, նրանք ինձ ցաւեն պատճառում։

ՄԻՅ.՝ Դէ լաւ...»

ՔԲ.՝ Աւելի լաւ է թող ինձ... Մի բարկանար... Թող ինձ միայնակ...»

ՄԻՅ.՝ Ի՞նչու բարկանամ... Դէ, ես կը գը-

նամ... Ճշմարիտ, ես չէի ուզում քեզ ալիքեցնել, Քրիստին: (ուզում է զնալ) Ա՛յս, պ. Ֆրիցը...

### ՆՐԱՆՔ և ՖՐԻՑ

ՖԲ.—(մտնում է) Բարի երեկոյ:

ՔԲ.—(շատ ուրախացած) Ֆրից, Ֆրից! (վագում է ընդունած եւ ընկնում է նրա գիրկը)

ՄԻՅՑ.—(զնում է այնպիսի դէմքով, որ կարծես ասում է. ոչ, ես այստեղ աւելորդ եմ)

ՖԲ.—(ազատելով նրա զրկից) Լսիր...

ՔԲ.—Ինձ բոլորն էլ ասում են, որ դու ինձ ձգել ես... չէ որ այդ ճշմարիտ չէ... Դու այդ չես անիլ... գոնէ ոչ այժմ... դեռ ոչ այժմ...

ՔԲ.—Ո՞վ է ասում քեզ այդ... ի՞նչ է պատահել քեզ... (շոյնլով) Թանգարինս. իսկ ես կարծում էի, դու կը վախենաս իմ յանկարծակի ներս գալուն:

ՔԲ.—Միայն թէ դու ինձ հետ լինես...

ՔԲ.—Դէ հանգստացիր: Դու ինձ երկար սպասեցիր.

ՔԲ.—Ինչու չեկար:

ՔԲ.—Ինձ խանգարեցին, և ես ուշացայ... Այս ըոպէին ես այդումն էի, քեզ չը գտայ այնտեղ և վճռեցի գալ քեզ մօտ: Յանկարծ իմ մէջ այս սիրունիկ դէմքը տեսնելու այնպիսի կարօտը զգացւեց...

ՔԲ.—(երջանիկ) Ճշմարիտ...

ՔԲ.—Ես այնպիսի բուռն ցանկութիւն զզացի տեսնելու թէ ուր ես դու ապրում... Ճշմարիտ: Ես պէտք է տեսնէի... թէկուզ մի անգամ... ես չը կարողացայ ինքս ինձ զապել... և ահա ես այստեղ եմ... Դէ դու ուրախ ես...

ՔԲ.—Աստւած իմ...

ՔԲ.—Ինձ ոչ ոք չը տեսաւ... Բացի այդ ես գիտէի, որ հայրդ թատրոնումն է:

ՔԲ.—Ա՛յս, ի՞նչ գործ ունեմ ես մարդկանց հետ...

ՔԲ.—Ա՛հա այդպէս... (սենեակը դիտելով):

Այս քո սենեակն է: Շատ սիրունն է:

ՔԲ.—Դու այդպէս ոչինչ չես տեսնիլ... (վերցնում է լամպից լուսամփոփով):

ՔԲ.—Զէ հարկաւոր, թող... Լոյսը ինձ կուրացնում է. այսպէս աւելի լաւ է: Այս քո պատուհանն է, որի մօտ դու շարունակ գործում ես, դու ինքդ ես պատմել,—այն. ի՞նչ հրաշալի ես, այս ինքդ ես պատմել, այն ինչ տեսարան, օ որքան կտուրներ են, իսկ այն ինչ է, այն սկ բանը հեռում:

ՔԲ.—Այդ կալենքերգն է:

ՔԲ.—Ճիշտ որ, Քեզ մօտ աւելի լաւ է, քան ինձ մօտ:

ՔԲ.—Դէ...

ՔԲ.—Ես շատ կուզէի ապրել այսքան բարձր... նայել բոլոր կտուրների վրայից—այդ ինձ

դուր է գալիս... երկի ձեր փողոցում շատ  
խաղաղ է:

ՔԲ.—Ոչ. ցեսեկը շատ աղմուկ է լինում...

ՔԲ.—Միթէ այստեղով կառքեր են անցնում:

ՔԲ.—Երբեմն... Բայց մեր դիմացը դարբ-  
նոց է:

ՔԲ.—ԱՌ, այդ դուրեկան բան չէ... (նըս-  
տում է)

ՔԲ.—Բնտելանում ես և համարեա ձայն էլ  
չես լսում:

ՔԲ.—(յանկարծ տեղից վեր թռչելով): Մի-  
թէ ես այստեղ առաջին անգամն եմ... ինձ թը-  
ւում է որ այստեղի ամեն մի առարկան ինձ ծա-  
նօթ է: Հէնց այսպէս էլ ես ինձ առեն ինչ ե-  
րկակայում էի...

ՔԲ.—(նկատելով որ նա ցանկանում է սեն-  
եակը աւելի մանրամասնօրէն տնտղել) Հետաքր-  
քիր բան չը կայ նայելու...

ՔԲ.—Այս ինչ պատկերներ են...

ՔԲ.—Չարժէ...

ՔԲ.—Ես ցանկանում եմ տեսնել: (վերց-  
նում է լամպան եւ լրաւարում պատկերները)

ՔԲ.—Հրաժեշտ և վերադարձ:

ՔԲ.—Այո. հրաժեշտ և վերադարձ:

ՔԲ.—Ես ասացի չէ, որ վաս պատկերներ  
են, իսկ այնտեղ հայրիկիս սենեակում կայ մի  
ուրիշը. նա աւելի լաւ է:

ՔԲ.—Ի՞նչ պատկեր է:

ՔԲ.—Մի աղջիկ է նստած. նա նայում է  
պատուհանից, իսկ այնտեղ դուրսը սարսափելի  
ձմեռ է. պատկերը կոչւում է «Զգւածը»:

ՔԲ.—ԱՌ. (զնում է լամպը սեղանի վրայ) Իսկ  
այս քո գրադարանն է: (նստում է փոքրիկ  
զբակալի մօտ)

ՔԲ.—Աւելի լաւ է մի նայիր:

ՔԲ.—Ինչու... ա. Շիլեր, Հառով, և Էնցի-  
կլոպեդիկ բառարան, սատանան տանի:

ՔԲ.—Այո, մինչև գտառը:

ՔԲ.—(ծիծառելով) Միմիայն... «Գրքոյկ ա-  
մենքի համար»... դու երկի միայն պատկեր-  
ներն ես նայել, այս...

ՔԲ.—Իհարկէ:

ՔԲ.—(շարունակ ղեռ նստած) Իսկ ով է այդ  
պարոնը վառարանի վրայ...

ՔԲ.—(ուսուցչի տօնով): Զէ որ այդ Շու-  
բերտն է:

ՔԲ.—(տեղից բարձրանալով): Իրաւ որ:

ՔԲ.—Հայրիկս նրան շատ է սիրում: Նա  
առաջ շատ լաւ ակօմպանիմէնտ էր անում եր-  
դիչներին...

ՔԲ.—Իսկ այժմ ոչ:

ՔԲ.—Այժմ ոչ. (լրովթին)

ՔԲ.—(նստում է) Որքան այստեղ յարմար է:

ՔԲ.—Ճշմարիտ հաւանիւմ ես:

ՖԲ.—Շատ: Իսկ այս ինչ է... (վերջնում է կեղծ ծաղիկներով վազան)

ՔԲ.—Ելի՞ մի բան գտար...

ՖԲ.—Ոչ, մանկիկս. սա չէ սազում այս-  
տեղ. ծաղիկները սարսափելի փոշոտւած են...

ՔԲ.—Նրանք բոլորովին էլ փոշոտւած չեն...

ՖԲ.—Կեղծ ծաղիկները միշտ փոշոտւածի  
նման են... Քո սենեակում միշտ կենդանի ծա-  
ղիկներ պէտք է լինեն, թարմ և հոտաւէտ. այ-  
սօրւանից ես միշտ պէտք է... (կտրում է իր խոս-  
քը եւ շուռալիս, որպէսզի թագցնէ իր յուզմունքը)

ՔԲ.—Ի՞նչ է, ի՞նչ էիր ուզում ինձ ասել...

ՖԲ.—Ոչինչ, ոչինչ...

ՔԲ.—(վեր կենալով տեղից, քնքոյց) Ի՞նչ,  
դէ ասա:

ՖԲ.—Ուզում էի ասել, որ վաղը ես քեզ  
համար կենդանի ծաղիկներ կուղարկեմ:

ՔԲ.—Արդէն զղջում ես: Պարզ է, վաղը  
դու իմ միասին այլևս չես մտածիլ...

ՖԲ.—(զլիի բացասական շարժում է անում)

ՔԲ.—Իհարկէ, երբ դու ինձ հետ չես... դու  
իմ մասին չես մտածում:

ՖԲ.—Ի՞նչ ես ասում դու:

ՔԲ.—Այո: Ես գիտեմ... ես զգում եմ...,

ՖԲ.—Ի՞նչպէս է այդպիսի յիմար միտք ծա-  
գում բո գլխում:

ՔԲ.—Դու ինքդ ես մեղաւոր... Դու միշտ

ինձնից գաղտնիքներ ունիս... երբէք դու քո-  
մասին ինձ ոչինչ չես պատմում, Ամբողջ օրը  
ինչով ես զբաղւած...

ՖԲ.—Թանգագինս, չէ որ այդ արդէն շատ-  
ձանձրալի է: Գնում եմ դասախոսութիւններ  
լսելու... երբեմն... յետոյ սրճարան եմ գնում...  
կարգում եմ... երբեմն դաշնամուր եմ նւագում...  
այս կամ այն ծանօթի հետ խօսում եմ... այ-  
ցելութիւններ անում... այս բոլորն էլ դատարկ  
բաներ են: Զանձրալի է մինչև անգամ պատ-  
մելը... Դէ այժմ ես պէտք է գնամ, մանկիկս:

ՔԲ.—Արդէն...

ՖԲ.—Քուայրդ էլ շուտով կը վերադառնայ...

ՔԲ.—Դեռ ոչ այդքան շուտ, Ֆրից, մնացիր  
դեռ, թէկուզ մի ըռպէ...

ՔԲ.—Բացի այդ ես... Թէոդորն էլ ինձ սպա-  
սում է, ես նրա հետ պէտք է խօսեմ...

ՔԲ.—Այսօր:

ՖԲ.—Իհարկէ այսօր:

ՔԲ.—Վաղը կը տեսնես նրան...

ՖԲ.—Վաղը... վաղը կարելի է ես վիէն-  
նայում չը լինեմ...

ՔԲ.—Վիէննայում չը լինեմ...

ՖԲ.—(նկատելով նրա սարսափը, հանգիստ  
եւ ուրախ) Իհարկէ շատ կարելի է... ես ուզում  
եմ մէկ երկու օրով գնալ, մանկիկս...

ՔԲ.—Ուր...

ԹԲ.—Ուր... մի որեկցէ տեղ..., ախ, Տէլ Աստւած, միայն այդպիսի դէմք մի շինիր... գնում եմ գիւղը... ծնողներին մօտ... իսկ դու արդէն սարսափեցիր...

ԹԲ.—Այ հէնց ծնողներիդ մասին էլ դու ինձ երբէք ոչինչ չես պատմել...

ԹԲ.—ԶԷ, դու ուղղակի զարմանալի երեւիայ ես... ասա—միթէ դու չես տեսնում թէ որքան լաւ է, երբ մենք բոլորովին մենակ ենք... դու այդ չես զգում...

ԹԲ.—ՈՉ. ես բոլորովին չեմ հաւանում որ դու ոչինչ չես պատմում քո մասին... ինձ հետաքրքրում է այն բոլորը... ինչ որ քեզ է վերաբերում... բոլորը... ես չեմ բաւականանում մեր միասին անցկացրած մի ժամով միայն..., յետոյ դու գնում ես, և ես բոլորովին չը գիտեմ... անցնում է ամբողջ գիշերը, ամբողջ ցերեկը... շատ, շատ ժամեր... և ես ոչինչ չեմ իմանում քո մասին... ահա ինչու ես երբեմն այդպէս տխուր եմ լինում...

ԹԲ.—ՀԱ. ի՞նչու մասին ես այդ ժամանակ մտածում դու...

ԹԲ.—Այնպիսի կարօտ եմ զգում ես դէպի քեզ, իբր դու այս քաղաքումը չես... իբր թէ դու մի ուրիշ, հեռու տեղ ես..., իբր թէ դու գոյութիւն չունիս ինձ համար... որ դու հեռու ես... շատ հեռու...

ԹԲ.—(փոքր ինչ անհամբեր): Բայց, Քրիստին...

ԹԲ.—Բայց իմացիր, որ ասածս միմիայն ձշմարտութիւն է...

ԹԲ.—Դրա համար էլ մօտեցիր ինձ... (Քը թիստինը մօտենում է) Դու պէտք է իմանաս միմիայն մի բան, ինչպէս և ես, որ այդ ըոպէին սիրում ես ինձ... (տեսնելով ոը Քը թիստինը ուզում է խօսել): Մի խօսիր յաւիտենականութեան մասին... (աւելի իւր մասին): Կարող է պատահել, որ կան բոտէներ, որոնք աւելի նըման են յաւիտենականութեան, և այդ միակն է, որ գիւրըմբոնելին է մեր հասկացողութեան, որ մեզ է պատկանում: (Համբուրում է նրան: Լուլթին: Յետոյ վեր է կենում, այլայլած) Օ՛, ինչպէս լաւ է այստեղ... քեզ մօտ... (մօտենում է պատուհանին): Հեռու բոլոր աշխարհից... այս կտուրների բարձրութեան վրայ... այսպէս մենակ... կարծես մենք (ցածր) թագնւել ենք ամենքից...

ԹԲ.—Եթէ դու միշտ այդպէս խօսէիր—ես համարեա թէ կը հաւասայի...

ԹԲ.—Ինչին, մանկիկս:

ԹԲ.—ՈՐ դու ինձ սիրում ես այնպէս, ինչպէս ես երազում էի այն ժամանակ, երբ ստացայ քեզանից առաջին համբոյը... յիշում ես այդ... գոյութիւն չունիս ինձ համբոյը...

ԹԲ.—(ըուտն կը ըով) ես սիրում եմ քեզ...

(զրկում է նրան եւ դուրս պըծնում զրկից): Ի՞սկ  
այժմ թող ինձ...

ՔԲ.—Դու արգէն նորից զզջում ես, որ ա-  
սացիր այդ բոլորը... դու ազատ ես... բոլորովին  
ազատ... Դու կարող ես ինձ թողնել, երբ որ  
ցանկանաս... ԶԵ որ դու ինձ ոչինչ չես խոս-  
տացել... և ոչինչ էլ չեմ պահանջում քեզանից...  
ինչ կը լինի յետոյ ինձ հետ... այդ միենոյն է...  
Ես բաղդաւոր էի... եւ աւելին չեմ էլ պահան-  
ջում կեանքից... Ես կուգէի միայն, որ դու ի-  
մանայիր... և հաւատայիր, որ ոչ ոքի չեմ սիրել  
մինչեւ քեզ և չեմ էլ սիրիլ... իսկ եթէ դու ինձ  
երբեկցէ դադարես սիրել...

ՔԲ.—(աւելի իր համար) Մի ասիր, մի ա-  
սիր այդ... այդ շատ գեղեցիկ է հնչում...

(Դուռը ծեծում են)

ՔԲ.—(ցնցւելով) Այդ Թէոդորն է:

ՔԲ.—(զարմացած): Նա գիտէ, որ դու ինձ  
մօտ ես...

ՔԲԻՍԻՆ, ՔՐԻՅ, ԹԷՈԴՈՐ

ԹԷ.—(մտնելով): Բարի երեկոյ. այդ շատ  
մեծ համարձակութիւն է իմ կողմից, չէ:

ՔԲ.—Զեզ այդքան կարենը է խօսել Քրի-  
ցի հետ...

ԹԷ.—Անկասկած: Ես նրան փնտռեցի ամեն  
տեղ:

ՔԲ.—(ցածր) Ինչու ինձ ներքեռւմ չսպա-  
սեցիր...

ՔԲ.—Ի՞նչ ես փսփսում նրա ականջին:

ԹԷ.—(ղիտմամբ զարծը): Ինչու համար ես  
քեզ չսպասեցի ներքեռւմ... իհարկէ, եթէ ես  
հաստատ իմանայի որ դու այստեղ ես... հակա-  
ռակ գիպւածում ես պիտի երկու ժամ իզուր  
յետ ու առաջ վազվակէի:

ՔԲ.—(շեշտելով) Ուրեմն դու կաղը գնում  
ես ինձ հետ...

ԹԷ.—(հասկանալով) Իհարկէ...

ՔԲ.—Ուրեմն վճռած է...

ԹԷ.—Ես այնպէս եմ վազել... խնդրում եմ  
թոյլ տւէք ինձ մի ըռպէ նստելու:

ՔԲ.—Խնդրեմ.. (մօտենում է պատուհանին)

ՔԲ.—(ցածր թէոդորին) Ինչ որ բան կայ...  
մի բան իմացար նրա մասին:

ԹԷ.—(ցածր Փրիցին) Ոչ, քեզ տանել եմ ու-  
զում այստեղից... դու շատ թեթևամիտ ես վար-  
ւում... ինչի՞ են պէտք այդ աւելորդ յուզումնե-  
րը... դու պէտք է պառկես քնելու... քեզ ան-  
հրաժեշտ է հանգիստը:

ՔԲ.—(մօտենում է նրանց)

ՔԲ.—Ճշմարիտ չէ, որ շատ սիրուն սե-  
նեակ է...

ԹԷ.—Այս, անչափ օիրուն (Քրիստինին):  
Իսկ դուք ամբողջ օրերով երկի տանն էք նրա-

առած. ասենք այստեղ այնքան յարմար է... մի-  
այն մի քիչ բարձր է, իմ կարծիքով:

ՔՐ.—Իսկ ինձ հէնց այդ է դուր գալիս...

ԹԷ.—Դէ, այժմ Ֆրիցին ես կը խլեմ ձե-  
զանից, վաղը առաւօտեան մենք պէտք է շատ  
կանուխ վեր կենանք...

ՔՐ.—Դու իսկապէս գնում ես վաղը:

ԹԷ.—Նա կը վերադառնայ, քրէյլէյն Քրիս-  
տին...

ՔՐ.—Դու ինձ նամակ կը գրեմ...

ԹԷ.—Բայց որ վաղը նա պէտք է վերա-  
դառնայ...

ՔՐ.—Ոչ, ես գիտեմ... նա երկար ժամա-  
նակով է գնում...

ՔՐ.—(ցնցում է)

ԹԷ.—(այդ նկատելով): Եւ իսկոյն պէտք  
է գրի: Ես ձեզ այդպէս սանտիմենտալ չէի կար-  
ծում... այսինքն քեզ էի ուզում ասել... չէ որ  
մենք դու-ով պէտք է խօսենք մէկ մէկու հետ:  
Եւ այդպէս, նւիրեցէք նրան մնաս բարեի մի  
համբոյր, որովհետեւ դուք երկար ժամա...  
(ինքն իրան ընդհատում է)

(Քր. Եւ Ք. համբուրտում են)

ԹԷ.—Դէ, ես այստեղ չեմ: (հանում է ծը-  
խախոտի տուփը, փնտրում է վերաբերուի զբա-  
նում լուցկին եւ չը գտնելով դանում է Քրիստի-  
նին) Ու՞ր են ձեր լուցկիները, սիրելի Քրիստին...

ՔՐ.—Այդտեղ են (ցոյց է տալիս պահանջ  
վրայ)

ԹԷ.—Այստեղ ոչ մի հատ չկայ...

ՔՐ.—Իսկոյն կը բերեմ—(վազում է հարե-  
ան սենեակ)

ՔՐ.—(Նայելով նրա յետեփից, Թէոդորին)

Օ՛ տէր Աստւած, որքան խաբէութիւն այսպի-  
սի բոպէներում...

ԹԷ.—Ի՞նչ ըոպէներ...

ՔՐ.—Այժմ ես լիովին հաւատացած եմ...  
որ այստեղ էր իմ երջանկութիւնը... որ այս  
հրաշալի աղջիկը... (Խօսքը կտրելով) Բայց այս  
ժամը լի է ստով:

ԹԷ.—Դատարկ բան է. դեռ ի՞նչպէս պիտի  
ի՞նքոր ծիծաղես...

ՔՐ.—Ոչ. դրա համար ես ժամանակ չեմ  
ունենալ...

ՔՐ.—(վերադառնում է, լուցկիները ծեռքին)  
Ահա լուցկի:

ԹԷ.—Շնորհակալ եմ: Եւ այդպէս, ցըտեսու-  
թիւն... (Փրիցին) Դու էլի բանի պէտք ունես:

ՔՐ.—(տնտղում է սենեակը, կարծես, յիշելու  
համար): Որքան դժւար է բաժանելը...

ՔՐ.—Դէ ուրախ եղիր...

ԹԷ.—(վճռական) Գնանք: Մնաք բարեաւ,  
Քրիստին,

ՔՐ.—Մնաս բարեաւ...

ՔՐ.—Յտեսութիւն...

(Թէողոք եւ Փրից զնում են)

ՔՐ.—(կանգնած է յուզւած, յետոյ վազում է դէաի բաց մնացած դուռը եւ կիսաձայն կանշում) Ֆըլից...

ՔՐ.—(վերադառնում է եւ սեղմում նրան իւր կըծքին) Մնաս բարեաւ...

ՎԱՐԱԳՈՅՔ

Ք. Ա. Բ. Ա. Բ. Ի. Ա. Ծ.

Երկրորդ արարւածի սենեակը:

Ժամանակը կիսօրւան մօս է:

ՔՐ.—(միայնակ, նստած է պատուհանի մօտ եւ կար է անում, յետոյ դէն է դնում կարը)

ԼԻՆ.—(կատրինի 9 տարեկան աղջկը մըտնելով) Բարեաւ ձեզ, Քրէյլէյն Քրիստին:

ՔՐ.—Բարեաւ զաւակս, մի բան ես ուզում:

ԼԻՆ.—Մայրիկն է ինձ ուղարկել ձեզ մօտ թատրոնի տոմսակները ստանալու:

ՔՐ.—Հայրս դեռ չէ վերադարձել մի գուցէ կը սպասէս:

ԼԻՆ.—Ոչ, Քրէյլէյն Քրիստին, աւելի լաւ է ես ճաշից յետոյ կը դամ:

ՔՐ.—Լաւ:

ԼԻՆ.—(զնալով դառնում է) Մայրիկս ձեզ բարեկում է, Քրէյլէյն Քրիստին և հարցնում է թէ բնչպէս է ձեր գլխացաւը:

ՔՐ.—Մնաս, աղջիկս:

ԼԻՆ.—Մնաք բարեաւ, Քրէյլէյն Քրիստին:

ՔՐ.—Գնաս բարեաւ:

(Հինան զնալիս, դուն մէջ հանդիպսամ է Միցցիին)

ԼԻՆ.—Բարեաւ ձեզ, Քրէյլէյն Միցցի:

ՄԻՑ.—Բարեաւ սիրունիկս:

ԼԻՆ.—(զնում է) մեն վճարաւած բարեաւ

ՔՐ.—(զնալով Միցցիին դիմաւընթլու) Նրանք վերադարձն:

ՄԻՑ.—Ո՞րտեղից պիտի իմանամ:

ՔՐ.—Դու նամակ չես ստացել:

ՄԻՑ.—Ո՞չ:

ՔՐ.—Եւ ինքո էլ չես գրել անդան:

ՄԻՑ.—Ինչու մասին պէտք է գրէի:

ՔՐ.—Նրանք երեկ չէ անցեալ օրը գնացին է:

ՄԻՑ.—Շատ ժամանակ է: Զարժէ մինչեւ անգամ աղմուկ հանել: Ուղակի չեմ հասկանում: Այդ ինչ դէմք է—քեզ մօտ: Աչքերդ լացից ուռել են: Զէ օր կը նկատի հայրդ, երբ վերադառնայ:

ՔՐ.—(Հանգիստ) Հայրս ամեն ինչ գիտէ:

ՄԻՑ.—(վախեցած) Ի՞նչ:

ՔՐ.—Ես յայտնել եմ նրան բոլորը:

ՄԻՑ.—Շատ խելօք բան ես արել, խօսք չունեմ:

Ասենք քո դէմքից ամեն ինչ կարելի է է նկատել:

Նա գիտէ թէ ով է նա:

ՔՐ.—Այո:

ՄԻՑ.—Ի՞նչ է, հայրոյեց:

ՔՐ.—(շարժում է զլուխը)

ՄԻՑ.—Ի՞նչ ասաց հապա նա քեզ:

ՔՐ.—Ոչինչ... հանգիստ դուրս գնաց, ինչ-

պէս միշտ:

ՄԻՑ.—Յամենայն դէպս շատ մեծ յիմարու-

թիւն է արածդ: Այ կտեսնես... Գիտեսթէ ին-

չու նա քեզ ոչինչ շասաց. որովհետև հաւատա-

ցած է որ Ֆրիցը կամուսնանայ քեզ վրայ:

ՔՐ.—Ի՞նչու ես ասում դու այդ:

ՄԻՑ.—Գիտես, ինչ եմ մտածում:

ՔՐ.—Ի՞նչ:

ՄԻՑ.—Որ այդ գնալու ամբողջ պատմու-

թիւնը հնարովի է:

ՔՐ.—Ի՞նչ:

ՄԻՑ.—Նրանք մի գուցէ բոլորովին չեն էլ գնացել:

ՔՐ.—Ոչ, նրանք գնացել են, ես այդ գի-

տեմ: Երեկ երեկոյեան ես անցայ նրա բնակա-

րանի մօտով. բոլոր վարագոյըները ծածկած էին,

նա տանը չէր...:

ՄԻՑ.—Շատ կարելի է գնացել ին, բայց

նրանք դժւար թէ նորից վերադառնան մեղ

մօտ...

ՔՐ.—(սարսափած) Դու...

ՄԻՑ.—Ես ասում եմ՝ շատ կարելի է...

ՔՐ.—Դու այնպէս հանգիստ ես ասում...

ՄԻՑ.—Դէ իհարկէ... այսօր կամ վաղը,

կամ կէս տարուց յետոյ, չէ ո՞ր այդ պէտք է պատահի...  
 ՔԲ.—Դու չը գիտես, թէ ինչ ես խօսում...  
 Դու չես ճանաչում ֆրիցին... նա այնպիսին չէ ինչպէս դու կարծում ես: Ես համոզւեցի դրանում այն ժամանակ, երբ նա ինձ մօտ այստեղ՝ այս սենեակումն էր: Ճիշտ է, երբեմն նա ինձ մի տեսակ սառնասիրտ է թւում, բայց նա սիրում է ինձ... (կարծես հասկանալով Միջցիին) Այս, այս, ես գիտեմ մշտական չէ—այդ, բայց միանգամից այդպէս յանկարծ չէր վերջանարամեն ինչ:

ՄԻՅՑ.—Իհարկէ, ես այդքան մօտ չեմ ճանաչում ֆրիցին:

ՔԲ.—Նա կը վերադառնայ, իհարկէ թէոդորն էլ նոյնպէս:

ՄԻՅՑ.—(ձեռքով ցոյց է տալիս որ իր համար միևնույն է)

ՔԲ.—Միցցի, բարի եղիր...

ՄԻՅՑ.—Միայն խնդրում եմ մի յուզւիր՝ դէ ասա, ինչ ես ուզում:

ՔԲ.—Մտիր թէոդորի մօտ. այդ հեռու չէ, միևնույն է մօտից պիտի անցնես. հարցը ու նրա ընակարանում, տանն է արդեօք նա... իսկ եթէ ոչ, նա տանը չէ, շատ կարելի է այստեղ կիմանան թէ երբ պէտք է վերադառնայ նա,

ՄԻՅՑ.—Շատ հարկաւոր է վազվզել տղա-

մարդկանց յետելից...

ՔԲ.—Այնպէս արա (որ նա չիմանայ այդ մասին: Շատ կարելի է դու նրան կը հանդիպես պատահմամբ. շուտով ժամը 1-ն է, իսկ նա այդ ժամանակ ճաշի է գնում:

ՄԻՅՑ.—Ինչու դու ինքդ չես գնում ֆրիցի ընակարանը այդ բոլորը իմանալու:

ՔԲ.—Ես չեմ համարձակւում... նա այդպիսի բաներ չէ սիրում... և երեխ նա դեռ չէ վերադարձել: Իսկ թէոդորը երեխ արդէն եկել է և գիտէ թէ երբ պիտի վերադառնայ ֆրիցը: Խնդրում եմ, Միցցի:

ՄԻՅՑ.—Դու երբեմն այնպիսի երեխայ ես դառնում...

ՔԲ.—Արա ի սէր ինձի, խնդրում եմ, գնա այստեղ, այդ դժւար չէ քեզ համար:

ՄԻՅՑ.—Դէ եթէ դու այդպէս խնդրում ես, ես կը գնամ... միևնույն է, դրանից բան չի դուրս գայ, նրանք երեխ դեռ չեն վերադարձել:

ՔԲ.—Եւ դու իսկոյն կը գաս այստեղ, չէ:

ՄԻՅՑ.—Դէ լաւ, միայն թէ մայրս ստիպւած ինձ ճաշի պիտի սպասէ:

ՔԲ.—Շնորհակալ եմ, Միցցի, դու այնքան բարի ես...

ՄԻՅՑ.—Ի հարկէ, ես շատ բարի եմ դէպիքեզ. միայն թէ ինելամիտ եղիր. այս, խոստանում ես: Դէ, ցտեսութիւն:

ՔԲ.—Շնորհակալութիւն, Միցցի.

ՄԻՅ.-(զնում է)

Անդրադառն ու անդրադառն անձնանուն ու անձնանուն ՔԲԻՍՏԻՆ, յետոյ ՎԱՅՐԻՆԴ.

ՔԲ.—(միայնակ, կարգի է ղնում սենեակը, ծալում է իր ծեռագործը, յետոյ մօտենում է պատուհանին եւ նայում դէպի դուրս։ Շուտով ներս է մտնում Վայրինգը, որին նա սկզբից չէ նկատում։ Վայրինգը սաստիկ յուրած է եւ սարսափով նայում է պատուհանի մօտ կանգնած աղջկան)։

ՎԱՅՐ.—Նա դեռ ոչինչ չը գիտէ... ոչինչ չը գիտէ... (շնամարձակելով մի քայլ անել, մնում է կանգնած դոների մէջ)

ՔԲ.—(Շոտ գալով նկատում է հօրը եւ ցընցում)։

ՎԱՅՐ.—(Աշխատում է ժպտալ, Մտնում է սենեակ) Դէ ՔԲԻՍՏԻՆ... (կարծես դէպի իրան կանշելով նրան)։

ՔԲ.—(մօտենում է նրան, նրա առաջը չոքելու մտադրութեամբ)։

ՎԱՅՐ.—(քոնելով նրան) Դէ ՔԲԻՍՏԻՆ, ինչպէս ես կարծում... մենք... (վճռողաբար) մենք կը մոռանանք բոլորը, այնպէս չէ։

ՔԲ.—(քարձացնում է պուխը)։

ՎԱՅՐ.—Դէ ինարկէ, դու էլ, ես էլ...։

ՔԲ.—Ի՞նչպէս, հայրիկ, միթէ այս առաւօտ դու ինձ չը հասկացար։

ՎԱՅՐ.—Հասկացայ, բայց ի՞նչ ես ուզում դու ինձնից, ՔԲԻՍՏԻՆ։ Ես պէտք է յայտնեմ քեզ իմ կարծիքը։ Կը ցանկանամու։ Դէ լսիր..։

ՔԲ.—Այդ ի՞նչ է նշանակում, հայրիկ։

ՎԱՅՐ.—Արի ինձ մօտ, զաւակս, լսիր ինձ հանգիստ։ Զէ որ ես հանգիստ կերպով լսում էի քեզ, երբ որ դու ինձ պատմում էիր։ Մենք պէտք է...։

ՔԲ.—Խնդրում եմ, հայրիկ, այդ մի ասիր..։ Եթէ դու մտածել ես և կարծում ես, որ չես կարող ինձ ներել, այն ժամանակ վոնտիր ինձ, բայց մի խօսիր այդպէս։

ՎԱՅՐ.—Լսիր ինձ հանգիստ, ՔԲԻՍՏԻՆ, լսիր. դեռ կարող ես անել այն, ինչ որ ուզում ես։ Լսիր, չէ որ դու դեռ այնքան երիտասարդ ես, ՔԲԻՍՏԻՆ. միթէ չէս մտածել դրա մասին... (ոչ զնողաբար) որ այդ բոլորը, մի գուցէ, սխալ-մունք է։

ՔԲ.—Ինչու համար ես այդ բոլորը ինձ առ սում, հայրիկ։ Ես գիտեմ թէ ինչ եմ արել և չեմ պահանջում ոչ քեզանից և ոչ մի ուրիշից աշխարհիս երեսին որևէ բան։ Եթէ այդ սխալ-մունք է, ես քեզ արդէն ասացի, վանդիր ինձ, միայն թէ..։

ՎԱՅՐ.—(ընդմիջելով) Ի՞նչպէս ես կարող

դու այդպէս խօսել. թէկուղ այդ սխալմունք էլ լինի, այնուամենայնիւ քեզ նման երիտասարդ աղջիկը յուսահատւելու տեղիք չունի։ Մտածիր միայն թէ որքան գեղեցիկ է կեանքը։ Ուրքան գեղեցիկ բաներ կան աշխարհիս երեսին, որդնցով կարելի է ուրախանալ, ինչքան երիտասարդութիւն և երջանկութիւն կայդեռ քո առաջ... գիտես, թէպէտե ես շատ բան չեմ ստացել կեանքից, այնուամենայնիւ կեանքը ինձ այնքան գեղեցիկ է թւում և դեռ շատ բանով եմ ես կարող ուրախանալ... դեռ ինչպէս պիտի ապրենք, քեզ հետ միասին... դու և ես... ինչպէս դեռ կը սարքենք միասին... դու և ես... ինչպէս դու նորից... դեռ մեզ համար էլ լաւ ժամանակներ կը գան... դու կը սկսել երգել, իսկ երբ որ արձակուրդներ կը լինին, մենք կը գընանք գիւղ, ամբողջ օրերով կը զբօսնենք... այն, որքան դեռ գեղեցիկ բաներ կան աշխարհիս երեսին։ Զէ հարկաւոր դեռ յուսահատւել, եթէ ստիպւած եօ զրկւել քո առաջին բաղդից, կամ նրանից, որին դու քեզ համար երջանկութիւն էիր համարում...»

ՔԲ. — (սարսափալ) Ինչո՞ւ... պէտք է հրաժարւեմ։

ՎԱՅՐ. — Միթէ դա երջանկութիւն էր։ Միթէ դու կարծում ես Քրիստին, որ քո հայրը այդ բոլորը իմացաւ այսօք։ Ես վաղուց գիտէի և հա-

ւատացած էի, որ դու ինքդ էլ կը յայտնես ինձ՝ Ո՛չ, այդ երբէք երջանկութիւն չէր քեզ համար։ Միթէ ես չէի նկատում այդ քո աչքերից։ Եթէ դու սիրում լինէիր նրան, որ արժանի էր քո սիրուն, միթէ յաճախ քո աչքերը այդպէս արտասուրզով կը լցւէին, և թշերդ թալկանային...»

ՔԲ. — Ի՞նչպէս ես դու կարող... ի՞նչ գիտես դու... որտեղից իմացար դու։

ՎԱՅՐ. — Ոչինչ, ոչինչ չեմ իմացել... Բայց դու ինքդ պատմեցիր որ նա... այնպէս երիտասարդ է դեռ... և վերջապէս նա գաղափար ունի այն բանի մասին թէ ում հետ գործ ունի... վերջապէս կարող է նա արդեօք զանազանել իսկական սէրը թեթև սիրուց... Գիտէ արդեօք նաքո խելագարութեան հասած սիրոյ մասին և կարող է հասկանալ քեզ։

ՔԲ. — (աւելի սարսափած) Դու նրան... դու եղել ես նրա մօտ...»

ՎԱՅՐ. — Ինչպէս խելքիդ վչեց այդ... չէ որ նա զնացել է այս տեղից։ Բայց Քրիստին, դեռ ես զլուխ ունեմ և աչքեր։ Մոռացիր նրան, զաւակս, մոռացիր, քո ապագան դեռ ևս առջեղ է։ Դու կարող ես դեռ գտնել քո երջանկութիւնը, որին դու արժանի ես։ Դու կը հանդիպես դեռ մարդու, որ կարող է գնահատել քեզ։

ՔԲ. — (վազում է պահարանի մօտ եւ արագ վերցնում իր զինարկը)

ՎԱՅՐ.—Ի՞նչ ես ուզում անել:  
 ՔԲ.—Թող ինձ, ես գնում եմ:  
 ՎԱՅՐ.—Ո՞ւր ես գնում:  
 ՔԲ.—Նրա մօտ... նրա մօտ...  
 ՎԱՅՐ.—Ի՞նչ ես խօսում:  
 ՔԲ.—Դու մի բանի մասին լոռում եմ, թող  
ինձ...

ՎԱՅՐ.—(բռնելով նրան) Սթափւիր զաւակու.  
 Նա այստեղ չէ. երկի նա երկար ժամանակով է  
գնացել, մնա ինձ հետ. Ի՞նչ ես ուզում դու այն-  
տեղ, վաղը կամ այսօր երեկոյեան մենք միա-  
սին կը գնանք այնտեղ, Զի կարելի այս կերպ  
փողոց դուրս գալ այդպիսի գէմքով:  
 ՔԲ.—Դու ցանկանում ես ինձ հետ գնալ  
այնտեղ:

ՎԱՅՐ.—Խոստանում եմ: Միայն թէ այժմ  
մնա, նստիր և ուշբդ քեզ հաւաքիր, չէ որ կը  
սկսեն ծիծաղել վրադ, տեսնելով քեզ այդ դրու-  
թեան մէջ: Մի դուցէ քեզ դուր չէ գալիս քո  
հօր բնակարանը:

ՔԲ.—Դու մի որկիցէ բան գիտես:

ՎԱՅՐ.—(կարկամելով) Ի՞նչ կարող եմ ես  
գիտենալ... ես միայն գիտեմ, որ սիրում եմ  
քեզ, որ դու իմ միակ զաւակն ես, որ դու պէտք  
է մնաս ինձ հետ... որ դու միշտ կը մնաս ինձ  
հետ...

ՔԲ.—Բաւական է... Թող ինձ... (զուրս է  
պըծնում հօր գրկից, եւ վազում է ղէպի ղուր,  
ոթպացւելով երեսում է Միցցին):

ՎԱՅՐԻՆՔ, ՔԲԻՍՏԻՆ, ՄԻՑՑԻ, յետոյ ԹէՌԴՈՒՐ  
(Հայոց)

ՄԻՑ.—(ցած ծայնով աղաղակում է) Ի՞նչպէս  
ինձ վախեցրիր:

ՔԲ.—(Յետ է թուշում տեսնելով ԹէՌԴՈՒՐին)

Թէ.—(կանգնում է շէմքում. նա բոլորովին  
սեւ է հազնւած)

ՔԲ.—Ի՞նչ... Ի՞նչ է պատահել... (պատասխան  
չստանալով նայում է ԹէՌԴՈՒՐին, որ խուսափում է  
նրա հայեացքից) Ո՞ւր է նա... ո՞ւր. (նաստիկ  
սարսափած պատասխան չստանալով, եւ տեսնե-  
լով նրանց այլայլած եւ տիսով ռէմքերը) ո՞ւր է  
նա... (ԹէՌԴՈՒՐին) Թէ խօսեցէք...

Թէ.—(ուզում է խօսել)

ՔԲ.—Նայում է լայն սացած աչքերով իւր շորս  
կողմը, հասկանում է շըջապատողների հայեացք-  
ներից ամեն բան, ցնցում է եւ աղաղակում) Թէ-  
ոդոր... նա...

Թէ.—(լուր զիսով է անում)

ՔԲ.—(բռնում է իւր զիսով, չի հասկանում,  
վազում է ԹէՌԴՈՒՐի մօս եւ խելազարի նման  
բռնում նրա թեւերը) Նա... մեռմա...

ՎԱՅՐ.—Զաւակս...

- ՔԲ.—(Տրելով հօրը) Դէ ասացէք, Թէոդոր...  
 Թէ.—Դուք բոլորը գիտէք:  
 ՔԲ.—Ես ոչինչ չգիտեմ... Ես չգիտեմ  
 թէ ի՞նչ է պատահել... Դուք կարծում էք, որ  
 ես այժմ էլ չեմ կարող իմանալ բոլորը, ի՞նչ որ  
 պատահել է... հայր... Թէոդոր... (Միջցիին)  
 Դու գիտես...  
 Թէ.—Դժբաղդ դէպք:  
 ՔԲ.—Ի՞նչ, ի՞նչ...  
 Թէ.—Նա սպանւած է...  
 ՔԲ.—Ի՞նչ ասացիք...  
 Թէ.—Նա սպանւած է մենամարտի ժամա-  
 նակ:  
 ՔԲ.—(Ծալով) ախ... (քիչ է մնում վայր  
 ընկնի, վայրինզը քոնում է նրան եւ ձեռքով նը-  
 շան է անում Թէոդորին դուրս գնալու)  
 ՔԲ.—(Նկատելով այդ) մնացէք... Ես պէտք  
 է բոլորը իմանամ... միթէ դուք կարծում էք որ  
 այժմ էլ իրաւունք ունէք ինձնից ծածկելու...  
 Թէ.—Էլ ի՞նչ էք ցանկանում իմանալ...  
 ՔԲ.—Ի՞նչու, ի՞նչու համար էր նա մենա-  
 մարտում...  
 Թէ.—Ես պատճառը չը գիտեմ:  
 ՔԲ.—Ում հետ, ով սպանեց նրան, դուք  
 այդ պէտք է որ իմանաք... Դէ, ասացէք...  
 Թէ.—Դուք նրան չէք ճանաչում:  
 ՔԲ.—Ո՞վ, ով...

- Միջ. — Քրիստին...  
 ՔԲ.—Ո՞վ.—(Միջցիին) Ասա ինձ, դու, հայր,  
 (ուզում է դուրս լիախշել, հայրը չը թողնում) Ես  
 պէտք է իմանամ ով է նրան սպանել և ինչու:  
 Թէ.—Կային... լուրջ պատճառներ...  
 ՔԲ.—Դուք ճշմարիտ չէք խօսում, ի՞նչու,  
 ի՞նչու...  
 Թէ.—Թանգագին Քրիստին...  
 ՔԲ.—(կտրում է նրա խօսքը, մօտենում է  
 նրան, ոչինչ չէ ասու, շեշտակի նայում է նրա  
 աշքերին, յետոյ յանկարծ ծշում) Կնոջ պատճառով:  
 Թէ.—Ոչ:  
 ՔԲ.—Այն, այն, կնոջ պատճառով... (դառ-  
 նալով Միջցիին) այն, այն կնոջ... այն... կնոջ,  
 որին նա սիրում էր, իսկ նրա ամուսինը, այն  
 նրա ամուսինը նրան սպանեց: Իսկ ես... ի՞նչ  
 եմ ես... իսկ ի՞նչ էի ես նրա համար. Թէոդոր,  
 իսկ ինձ համար ոչի՞նչ չէ թողել նա... ոչի՞նչ չէ  
 գրել ինձ, չէ խնդրել ձեզ յանձնելու մի օրեէ  
 բան, ինձ... դուք ոչի՞նչ չը գտաք... նամակ...  
 Թղթի կտոր:  
 Թէ.—(զլսով քացասական նշան է անում)  
 ՔԲ.—Եւ այն երեկոյին, երբ որ նա այս-  
 տեղ էր, երբ դուք նրան այս տեղից տարաք...  
 այն ժամանակ նա արդէն գիտէր... նա արդէն  
 գիտէր... որ շատ կարելի է այլ ևս ինձ... և  
 նա գնաց այստեղից, որ մեռնի մի ուրիշի հա-

մար... ոչ, ոչ... այդ չէ կարող պատահել... միթէ նա չգիտէր... թէ ինչ էր նա ինձ համար... միթէ նա...

Թէ.—Նա գիտէր այդ... առաւօտեան, վերջին անգամ գնալու ժամանակ, նա նոյնպէս ձեր մասին էլ խօսեց...

ՔԲ.—Նոյնպէս և իմ մասին էլ խօսեց... իսկ էլի ինչի՞ մասին էր խօսում... քանի՞ ուրիշ մարդկանց և քանի՞ առարկաների մասին, որոնք նոյնքան նշանակութիւն ունէիննրա համար, որքան և ետ... նոյնպէս և իմ ուասին էլ... ծհ... Տէր Աստւած... և իւր հօր մասին... իւր մօր մասին... իւր բարեկամների... իւր սենեակի... գարնան... քաղաքի... բոլորի, որոնք նրա կեանքի մի մասն էին կազմում, որոնց նա նոյնպէս թողնում էր, ինչպէս և ինձ... բոլորի մասին ձեզ հետ խօսեց... նոյնպէս և իմ մասին...

Թէ.—(յուզուծ) Նա իսկապէս սիրում էր ձեզ...

ՔԲ.—Սիրում էր... Նա... ես նրա համար միայն գլարձալիք էի, իսկ մեռաւ ուրիշի համար... իսկ ես... պաշտում էի նրան... միթէ նա չգիտէր այդ... միթէ նա չը գիտէր որ ես տւի նրան այն բոլորը, ինչ որ կարող էի տալ... որ ես կը մեռնէի նրա համար... որ նա իմ հրամանատարն էր, իմ երջանկութիւնը... միթէ նա այդ չէր նկատում... և նա կարողացաւ դուրս

գալ իմ մօտից, ժպտալով... դուրս գալ այս սենեակից և թոյլ տալ իրան սպանել ուրիշ կնոջ պատճառով... հայրիկ, հայրիկ... կարող ես դու հասկանալ այս բոլորը:

ՎԱՅԻ. — Քրիստին (Մօտենում է նրան)

Թէ.—(Միջցիին), կարծեմ դու կարմղ էիր աղատել ինձ սրանից:

ՄԻՅՅ. — (բարկացած նայում է նրան)

Թէ.—Ես շատ յաւզւած էի... այս վերջին օրերը...

ՔԲ.—(յանկարծ վճռելով) Թէոդոր, տարէք ինձ այնտեղ... ես ուզում եմ տեսնել նրան... միանգամ էլ տեսնել նրան... նրա երեսը... Թէ ոգիր, տարէք ինձ այնտեղ...

Թէ.—(խուսափելով) Ոչ:

ՔԲ.—Ինչու ոչ... այդ էլ ինձ մերժում էք... ես իրաւունք չունեմ տեսնելու նրան միանգամ էլ...

Թէ.—Արդէն շատ ուշ է:

ՔԲ.—Շատ ուշ է... տեսնել նրա դիակը... արդէն ուշ է... այն, այն... (չը հասկանալով)

Թէ.—Արդէն այսօր առաւօտեան նրան թաղեցին...

ՔԲ.—(երեսին սարսափի վերին աստիճանը)

Թաղեցին... և ես այդ չը գիտէի... նրան սպանեցին... դրին գագաղի մէջ... տարան և թաղեցին գետնի տակ... իսկ ես նրան չը տեսայ

էլի մի անգամ... արդէն երկու օր է որ նա մեռել է... և դուք չեկաք, չասացիք ինձ... թէ.—(շատ յուզած) Այս երկու օրը... դուք բոլորովին չէք կարող երևակայել թէ որքան այս երկու օրը... մտածեցէք... Ես էի պարտաւոր յայտնել նրա ծնողներին... այնքան մտածում էի... շատ յուզւած էի ես էլ...

ՔԲ.—Դուք...

Թէ.—Բացի այդ... բոլորը գաղտնի էր պահում մօտիկ ազգականներից և ծանօթներից...

ՔԲ.—Մօտիկ... իսկ Ես... իսկ ի՞նչ էի ես...

ՄԻՅՑ.—Դրա մասին կարող էին յանկարծ հարցնել այնտեղ:

ՔԲ.—Իսկ ի՞նչ էի ես նրա համար... հեռու, քանի բոլոր միւսները... Հեռու քան նրա բարեկամները, քան դուք:

ՎԱՅՐ.—Զաւակս, զաւակս... դարձիր դէպի ինձ... (զրկում է նրան. Թէ՛ղողորին) Գնացէք, թողէք մեզ միայնակ:

Թէ.—Ես շատ... (ծայնի մէջ արտասուր) ... Ես չէի կարող երևակայել...

ՔԲ.—Ի՞նչ չէիք կարող երևակայել... որ ես սիրում էի նրան... (Վայրինզը քաշում է նրան դէպի իրան. Թէ՛ղողոր նայում է իւր առաջ, Միցցին կանգնած է Քրիստինի մօտ)

ՔԲ.—(ազատմելով հօր գրկից) Տարէք ինձ նրա գերեզմանը,

ՎԱՅՐ.—Ո՛չ, ոչ... (անցրաց զման և նոյն) ՄԻՅՑ.—Զը գնաս Քրիստին այնտեղ: Թէ.—Քրիստին... յետոյ... վաղը... երբողը դուք կը հանգստանաք!... (գաղում... ամուրաց ՔԲ.—Վաղը... Երբ որեւէս կը հանգստանամ...)

Իսկ մի ամսից յետոյ բոլորովին կը մխիթարւեմ, այն... իսկ կէս տարուց յետոյ նորից կը սկսեմ ծիծաղել, այն... (ծիծաղում է) Իսկ երբ որ մի նոր սիրեկան կը գտնւի...

ՎԱՅՐ.—Քրիստին...

ՔԲ.—Մնացէք, ես միայնակ կը գտնեմ ձանապահը...

ՎԱՅՐ.

ՄԻՅՑ.

ՔԲ.—Աւելի լաւ է եթէ ես... Թողէք ինձ, թողէք...

ՎԱՅՐ.—Քրիստին, մնացիր...

ՄԻՅՑ.—Մի գնար այնտեղ... կարելի է այնտեղ հանգիպես մէկ ուրիշի... նա աղօթում է...

ՔԲ.—(նայում է իւր առաջ, սառը հայեացըով) Ո՛չ, ես չեմ աղօթի այնտեղ... ոչ (վազում է դուրս, միաները մնում են ապշած)

ՎԱՅՐ.—Վաղեցէք նրա յետեկց...

Թէ.

ՄԻՅՑ.

ՎԱՅՐ.—Ես չեմ կարող... չեմ կարող...

(զնում է ծանր քայլերով դէպի պատուհանը) Բնչ  
Եր ուզում նա... ինչ էր ուզում... (նայում է  
պատուհանից տարածովթեան մէջ) Կա էլ չի վե-  
րադառնալ... երբէք չի վերադառնալ... (ընկնուի  
է յատակի վրայ գարօր հեկեկալով): — 19

— սահման ցը միախօյոց լուսի ցյուն ին մամ  
ցը սահման լուսի ցյուն սէմ իւն ... համ և առա-  
ցը լուս (և անցանց) ... համ լուսաճյժ նշոյն  
... իւնոր ցը մարդոյն դու ցն ցո  
... այսայդ 1808  
ամ և ամ ցը մամայն ու ցը պատմութեան 1908  
... ցը պատմութեան

### Վ Ա Ր Ա Գ Ո Յ Թ

... գրամ այսայդ 1808  
... ամ և ամ ու քը ու ու 1808  
... կանքոր ամ ... իւնոր մշի սմաքրման ըստ  
... պատմութեան ու ամ այս ամ 1808  
... կանքոր ամ ... իւնոր մշի սմաքրման ըստ  
... պատմութեան ու ամ այս ամ 1808  
... կանքոր ամ ... իւնոր մշի սմաքրման ըստ  
... պատմութեան ու ամ այս ամ 1808  
... կանքոր ամ ... իւնոր մշի սմաքրման ըստ  
... պատմութեան ու ամ այս ամ 1808  
... կանքոր ամ ... իւնոր մշի սմաքրման ըստ  
... պատմութեան ու ամ այս ամ 1808  
... կանքոր ամ ... իւնոր մշի սմաքրման ըստ  
... պատմութեան ու ամ այս ամ 1808

## Մ Ի Բ Ա Ռ

### Մ Ի Ն Ի Ս Ը Ռ Ի Ն

Կոմիտ. 1 արշար. ներ. Լանգերի

Հայութեան այս ամսաւոր ամս 1808

Թարգմ. Գ. Ր. Ա Կ Ե Տ Ե Ա Ն

Հայութեան այս ամս 1808

Հայութեան այս ամս 1808

Հայութեան այս ամս 1808

Настоящая пьеса, подъ заглавиемъ „Од-  
но слово министру“, перев. Гр. Аветяна, раз-  
рѣшена Намѣстникомъ ЕГО ИМПЕРАТОР-  
СКАГО ВЕЛИЧЕСТВА на Кавказъ, для пред-  
ставленія на сценахъ края (Отзывъ Канцеля-  
рии за № 23379—9082.

11 Ноября 1908 г. г. Тифлисъ

И. Д. Предсѣдателя Комитета **Д. Колобовъ**

Секретарь **А. Гусевъ**

## નાગ દુર્ગ


Ա Ե Զ Ի Ւ Ք

ԻՇԽԱՆ ԿԱՐԻՑՄԱՆ, ՄԻՆԻՍԹՐ  
ԴԱՆԳԵԼՀԱՄԵՐ, ԱՐԱ ՀՎԵՐԺԱՐԸ  
ՆԵՏԼ, ԱՐԱ ՊՈՒՏՄԵՐԸ  
Տ. ՕԲԵՐՏՏԵՆ, Իշխանի ԽՈՒԱՐԱՐԸ ԿԻՆԸ  
ԼԱՅԼԵՐ, Իշխանի ԿԱՄԵՐՊԻՆԵՐԸ  
ՕՊՊԵՆՀԱՅՄԵՐ, ՀԱՐՈՒՏԱ ԾՐԵՎ  
ՀԱՆՁԼ, Իշխանի ՓՈՔՐԻԿ ՃԱՊԱՆԵՐԻԳ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Ազգային Կոմիտեի Հպատակություն

N. V. Deutscher Volkskommunisten-Komitee D. Kondogba

Ceské říšské A. Lázeň



1 փողոցի դարբասը, 2 ծառաների մուտքը, 3 պալատի մուտքը, 4 նստարան, 5 թռվակների հանուրը բագ է:

անդամ Ֆրան) ... բառու ճակ ըմբազու և նորման  
ճակ առ (ինչու ըստով ոչ այլ և անցնի Յի  
քրած այլ քառ առ սկզբ ոչ ըստ և նորման  
դամ պղծածախն եւ այլ առ պղծածախն ճակ  
ոչ այլ . Օ ... նորման պղծած և նորման  
Բեմը մինիստը Կառուցմանի պալատի բազնէ  
ներկայացնում, լայն ղոներ, որ փողոցն են նա-  
յում. Աջ՝ պալատի մոտոք, որի վրայ գրած է  
„Office“ ճախ դրուք, որի վրայ գրած է „Por-  
tier“. Երկու ղոներն եւ բաց են:

### ՏԵՍԻԼ 1

Հանզլ կանգնած է աջ ղուան մօտ եւ կօշիկ-  
ներ է սրբում. նրա մօտ, նստարանի վրայ, կօշ-  
կաներկ եւ մի քանի ջուխտ կօշիկներ. Նա վատ  
է տրամադրւած)

ՀԱՆ. — Ասում են, որ ես յիմար եմ. ի՞նչու  
համար: Երբ ինձ հետ խօսում է կամերդիները,  
կամ պարոն քարտուղարը և կամ թէ տնտեսը,  
ես ոչխար եմ դառնում, բայց երբ ինձ հետ խօ-  
սում է Նէտլը, ուղղակի զարմանք է, թէ ինչպէս  
եմ ես նրան պատասխանում: Նախ և առաջ ես  
ասում եմ... (ցած եւ քնքոյշ) «Նէտլ»... յետոյ...  
(մի քիչ բարձր) գարձեալ «Նէտլ»... իսկ յետոյ  
ես այնքան քաշութիւն եմ զգում, որ ասում  
եմ... (բարձր) — «Նէտլ»... Այնպէս որ մի քանի

անգամ է նրանից ինձ հասել... (ցոյց է տալիս, թէ ինչպէս է նա իր ընթանը փակել) Նա ինձ ծեծում է, իսկ երբ գալիս են այդ լաւ հագուած պարոնները, նա մինչև ականջները կարմրում է և աչքերը խոնարհեցնում... Օ՛, ես կը սպանէի այդ լաւ հագնւած պարոններին, այդ թոկից փախածներին։ Մէկ էլ տեսար, մէկը դուրս պըծաւ (ցոյց տալով կօշիկ անցրած ծեռքը) սպիտակ ձեռնոցը ձեռքին, որ հանում է իր սպիտակ թաշկինակը (հանում է զբանից պատուած եւ կեղտոտ թաշկինակը) որից դեղատան հոտ է բուրում և յանկարծ նկատում է իմ նէտին. (թագնում է թաշկինակը զբանում) Դուրս է ցցում ոէխը իւր լայն օձիքից և սկսում քաղցր խօսքերով սիրաշահել նրան։ (բարկացած, վլրինով սրբում է կօշիկը) Յետոյ նա տւելի է համարձակութիւն ստանում «պարդի» է, ինչ է, ինչպէս ասում են ֆրանսերէն, և երբ բոլորովին «պարդի» է դառնում, սկսում է իմ նէտին կսմթել և ինչպէս է կսմթում, նախ և առաջ աջթել, յետոյ ձախ թել, աջ թուշը, ձախ թուշը, աջ վիզը, ձախ վի... չէ, վիզը մի հատէ... օ, անպիտան... պատահէր ինձ այն ըռպէթին նա, ելք ես սաստիկ բարկացած եմ, այնպէս կը մաքրէի նրան, որ... (ուժով սկսում է կօշիկը սրբել) Բոլոր կսմթումները մտքից կընկնէին, իսկ նէտին էլ ահա ինչ կասեմ...

(շատ համոզեցուցիչ) — օրիորդ նէտ, օրիորդ նէտը... կասեմ ես նրան...  
ՀԵՍԻԼ 2

Նէ. — (դուրս է զալիս „Portier“ դռնից եւ աննկատելի մօտենալով հանգլին յետելից, զնում է ծեռքը նրա ուսին եւ բարկացած ասում) Դէ ինչ։ ՀԱՆ. — (վախեցած յետ է զառնում եւ տեսնելով նրան, ծեռքերը խաչում է կրծքին, մի ծեռքին կօշիկն է։ Կմկմալով եւ սիրաքորքով) — Նէ... տ... տլ...  
Նէ. — Եւ միայն այդ։  
ՀԱՆ. — Հ'ըմ հ'ըմ..

Նէ. — Ինչպիսն է, համարձակում է դեռ քննադատել ինձ, իմ վարմունքը։ Յարգելի պարոն, ինդըրում եմ միւս անգամ չը համարձակւել։

ՀԱՆ. — Հասկանում էք։ (ինքն իրան) Զարացած է, պէտք է մի կատակ հնարել (օգում է նրա զոգնոցի թելը, վերջինս բացւում է) Զէ, որքան համարձակն եմ։

Նէ. — Ա՛խ, որքան անբարոյական են տղամարդիկ։

ՀԱՆ. — Այո, այ, որքան մենք համարձակն ենք։

Նէ.—(կապելով նորից գոգնոցը) Ա՛խ, որքան  
դու անամօթն ես:

ՀԱՆ.—(անկեղծօրէն) Զէ, Նէտլ, ես շատ լաւ  
տղայ եմ, ես ազնիւ երիտասարդ եմ, Աստւած  
վկայ: Ես շատ եմ սիրում քեզ, այնքան եմ սի-  
րում, այնպէս եմ սիրում, որ ուղղակի խայտա-  
ռակութիւն:

Նէ.—Իրաւ: (քաղցր)

ՀԱՆ.—Երդում եմ, Աստւած վկայ: Նէտլ,  
տուր ինձ քո ձեռքը:

Նէ.—Զեռքս տամ:

ՀԱՆ.—Այս:

Նէ.—Այս թէ ոչ: (շտապով) Ապա համրիը  
ոճ ակներդ:

ՀԱՆ.—(իւր կոժակները համրելով) Այս, ոչ,  
այս, ոչ—ոչ: (ախուր) Մի կոճակ պակաս է:  
(բռնած է ծեռքը վերջին կոժակի վրայ)

Նէ.—(մօտեցնելով նրա ձեռքը քթին) Աւե-  
լացրու և այս կոճակը:

ՀԱՆ.—Այս, ձիշտ է, ձիշտ է... Ուրեմն կա-  
րելի է: Հրաշալի, դէ այժմ տուր ձեռքդ: (համ-  
բուրում է նրա ձեռքը)

Նէ.—(ազատելով ձեռքը) Ա՛ս... բաւական է,  
այդպէս յանդուգն մի լինիր:

ՀԱՆ.—Ես այսօր այնպիսի յանդուգն եմ, որ  
մինչև անգամ կուզէի համբուրել էլ քեզ:

Նէ.—Դէ, դէ, խնդրեմ:

ՀԱՆ.—Այնպէս, թեթև կերպով... միայն մի  
անգամ: Ճշմարիտ, թեթև կերպով, դու մինչև  
անգամ չես էլ զգալ:

Նէ.—Բայց ամօթ է, չէ:

ՀԱՆ.—Այդ հվ է ասել քեզ:

Նէ.—Սուրբ Բօնաւենտուրա հայրը:

ՀԱՆ.—Իսկ նա այն օր քարոզի ժամանակ  
ասում էր. «Քարիք գործիր:»

Նէ.—Այս, նա ասում էր:

ՀԱՆ.—Ի՞նչ ես կարծում, Նէտլ, քեզ կը  
ցաւեցնի, եթէ որ ես քեզ համբուրեմ:

Նէ.—(ամաչելով, աչքերն էխոնարհցնում)

ՀԱՆ.—(անվճռական) Բայց մի գուցէ քեզ  
այդ մասամբ բաւականութիւն էլ պատճառի:

Նէ.—(արագ համաձայնութեան նշան է  
տալիս զլխով)

ՀԱՆ.—Բարիք գործիր: (քաշելով նրան զըր-  
կում է.)

Նէ.—(ընդդիմանալով) Զէ որ այդ մեղք է,  
մեծ մեղք:

ՀԱՆ.—Վաղը մենք կը գնանք հաղորդւելու:  
(ուզում է նորից համբուրել) Նէտլ... (տիկին  
Օքերտէնը դուրս է զալիս „Office“ դռնից)

Նէ.—Իսկ եթէ մէկը տեսնի:

ՀԱՆ.—Քո հայրը այժմ զբաղւած է լրա-  
գիրներ կարդալով, այնպէս որ նա ոչինչ չի  
տեսնում և չի լսում: (Դանգելհամերը դուրս է

գալիս միւս դոնից) իոկ միւսները քնած են, ու-  
բեմ էլ ի՞նչից վախենանք... Նէտլ, Նէտլ, հրեշ-  
տակու... (Տամ գուրում է նրան)

### ՏԵՇԻԼ 3

Նոյնք, Տ. ՕԲԵՐՏԷՆ Կ ԴԱՆԳԵԼՀԱՄԵՐ

Տ. ՕԲ.—(բաւականին շքեղ է հագնած ո-  
գլից, մազերին պուզը ածած)

ԴԱՆ.—(լայն ուսերով շվեյցար է, կարծ պա-  
րիկ, á la de pedian, կայծ մախմուրէ վարտի-  
կով, կօշիկննը, գուզաներ եւ լիվրէյ, եօն sour,  
ձեռքին լրագիր եւ շվեյցարական երկար փայտ)  
—Օ՛, օ...

ՀԱՆ. (Քոյլու, հայրու...  
Նէ. ( Նէ.

Տ. ՕԲ.—(սրւակից հոտ քաշելով) Որպիսի  
խայտառակութիւն:

ԴԱՆ.—Սպասիր, անառակ աղջիկ, ես քեզ  
ցոյց կը տամ:

ՀԱՆ.—Չէ, աւելի լաւ է, նրա փոխարէն  
ինձ ծեծեցէք:

Տ. ՕԲ.—Որպիսի անառակութիւն նորին  
վսեմափայլութեան պալատում:

ԴԱՆ.—Իշխան կառւնիցի պալատը ապա-  
կանւած է:

ՀԱՆ. (—Ես նրա ձեռքն եմ խնդրում:

Նէ. (—Նա իմ ձեռքն է խնդրում:

Տ. ՕԲ.—Ի՞նչ, ի՞նչ, անառակ աղջիկ:

ԴԱՆ.—Ինչպիսի աւազակն է:

Տ. ՕԲ.—(վիրաւորւած) Պարոն Դանգելհամեր,  
զգուշացէք, նա աւազակ չէ, այլ իմ եղբայրը,  
իսկ ես, ես... տիկին Օբերտէնն եմ, պարոն Օ-  
բերտէնի կինը, նորին վսեմափայլութեան մի-  
նիստր, իշխան կառւնիցի խոհարարի, որ աւա-  
զակ աներորդի չի կարող ունենալ, հասկանում  
էք: Նա ֆրանսիացի է, ֆրանսիացի, հասկանում  
էք, պարոն: (այս տեսարանի ժամանակ Հանզլը  
եւ Նէտլը յետ են քաշում արևագ, իսկ յետագայ  
տեսարանի ժամանակ կամաց, կամաց)

ԴԱՆ.—Տ. ՕԲԵՐՏԷՆ, ես ինձ թոյլ չը տւի  
վիրաւորել ձեր տոհմը:

Տ. ՕԲ.—Ես խոնարհաբար կը խնդրէի չանել  
այդ, որովհետև մենք ազնիւ տոհմից ենք:

ՀԱՆ.—Ա՛յո, ի հարկէ:

Տ. ՕԲ.—Այո, այո, շատ ազնիւ տոհմից:

ՀԱՆ.—Ա՛յո, մեր մայրը հռչակաւոր խոհա-  
բարուհի էր:

Տ. ՕԲ.—Կը լոես, թէ չէ: (Դանգելհամերին)  
Ինչու դուք չէք տալիս ձեր աղջկան աւելի բար-  
ձըր կրթութիւն, ինչպիս ասում են ֆրանսիացի-  
ները—éducation.

ԴԱՆ.—Ի՞նչ, ի՞նչ, հա, հա... ինձ կշտամ-

բել իմ աղջկայ կրթութեան պատճառով։ Ես, տիկին Օքերտէն, այնքան կրթւած և այնքան եմ լուսաւորւած, որ կարող եմ մասոնների մէջ անդամ գրւել։ Բայց իմ դրութիւնը չի թոյլ տալիս ինձ այդ անելու, որովհետեւ նորին վսեմափայլութեան, իշխան կառւնիցի շվեյցարն եմ։ Եւ որովհետեւ ես ծնւել եմ Մագթաղինէի կալւածքում, ուստի...

ԴԱՆ. — Այո, շվեյցար՝ մկների քաղաքից։

ՆԵ. — Դէ, դու էլ լոիր Է։

ԴԱՆ. — (ոգեւորմելով) Ես Վիէնիացի եմ, թագաւորական աւտորիացի և չեմ վախենում ոչ ձեզանից և ոչ էլ ձեր տոհմից, չը նայած որ գուք ֆրանսիացի էք։ Այս, մենք ինչպիսի ենք։

Տ. ՕԲ. — Ուրեմն ահա թէ ինչ, դուք մեզ պատերազմ էք յայտնում։

ԴԱՆ. — Oui, madame! բնում։

Տ. ՕԲ. — Tres bien, մեսսիօ Դանգելհամեր, tres bien։

ԴԱՆ. — Զեր ամուսինը կարող է խանգարել նորին վսեմափայլութեան ստամոքսը իւր սոսւներով, ֆրիկաէներով և այլն բաներով, իսկ ես իմ շվեյցարական դիրքով և պաշտօնով ամենին, օ, ամենին։

Տ. ՕԲ. — Այդ դեռ յայտնի չէ։ (Նէտլին) Գընացէք, զաւակս, ես պէտք է, խօսեմ ձեր հօր հետ մի գործի մասին, որ դուք չը պէտք է դի

տեսաք։ (Նէտլը եւ Հանգլը հեռանում են դարպասի մօտ, բոլորովին հեռու նրանցից։ Տ. Օքերտէնը յարձակողի պօզա ընդունելով)

Տ. ՕԲ. — Պարոն Դանգելհամեր։

ԴԱՆ. — (վերին աստիճանի անվըրդով դիրք բռնելով եւ սառը) Տիկին Օքերտէն։

Տ. ՕԲ. — Հըմ, հըմ... այս քանի օրը վառելու 26 սայլ փայտ պիտի բերէին. դուք ներկայ էիք և փոխանակ 26-ի բերին 20 սայլ. այդ ի՞նչպէս պատճեց, որ յանկարծ 6 սայլ կորաւ, արդեօք այդ գաղտնիքը գուք չը դիտէք, պարոն Դանգելհամեր, հա...

ԴԱՆ. — (կողմ) Հհհ... պատերազմի առաջին թնդանօթի առաջին ոռւմբը շատ ուժեղ է։ (Նրան) Իմ թանկագին տ. Օքերտէն, հաշւի մէջ դժւար չէ սխալւելը. դուք իբրև խելացի մի կին, լաւ պէտք է գիտենաք, որ այդ այնպիսի մի դատարկ բան է, որ ճիշտն ասած, ես... որ, որ...

Տ. ՕԲ. — Որ գկաղնից հիւրանոցի տիրոջ մառանում մի սայլ անգամ չի տեղաւորւի։ (Հատ, հատ) Ի՞նչ է, այդ հիւրանոցի տիրոջ զինին շամեղ է։

ԴԱՆ. — (կողմ) Երկրորդ ոռւմբը աւելի ուժեղ է։ (Նրան) Շատ համեղ է, բայց և այնպէս նրան համեմատել դժւար է այն ըէյնվայնի հետ, որ լի շիշերով ուղարկում է ոմն պարոն Օքեր-

տէն իւր օգնական խոհարարի հետ ամենայն օր ժամը 7-ին:

ԴԱՆ.—(վախեցած) Այդ գինին... շատ հարկաւոր է...

ԴԱՆ.—(նրա խօսքը կտրելով) Հարկաւոր է իրեւ լաւ գինի այն համեղ կերակուրների հետ, որոնց գողնովի տանում է մի լակոտ: Մի օր հետաքրքրած յետեեցի այդ երեխային և տեսայ, որ նրանք տարւում են տ. Օբերտէնի բնակարանը:

Տ. ՕԲ.—(կակազելով եւ խնդրելով) Պարոն Դանգելհամեր...

ԴԱՆ.—(մեղքացած) Տիկին Օբերտէն...

Տ. ՕԲ.—(զլովազ խոնարհած) Ֆրանսիան յաղթւած է:

ԴԱՆ.—(իւր վեհութիւնը զգալով) —Պատահել է և այն էլ շատ յաճախ:

Տ. ՕԲ.—Աւստրիան յաղթեց:

ԴԱՆ.—Շատ բնական է:

Տ. ՕԲ.—Ֆրանսիան հաշտութիւն է առաջարկում: Արդեօք հաշտութիւն չը կնքենք: (ցոյց տալով Հանզլի եւ Նէտլի վրայ) Աւելի լաւ կը լինի, որ դաշինք կապենք Աւստրիայի և Ֆրանսիայի մէջ:

ԴԱՆ.—Ես կարծում եմ դրանից լաւ բան չի դուրս գալ:

Տ. ՕԲ.—(կողմ) Այն ժամանակ նա ձարա-

հատեալ պիտի լոէ: (նրան) Դէ, պարոն Դանգելհամեր, քարասիրտ մի լինէք, չէ որ աղաւնեակները սիրում են միմեանց: (թեղթեւ նրա կողքին քոթելով եւ սիրալիք նայելով) Դէ, պառաւ Աւստրիա, զիջիր, զիջիր...

ԴԱՆ.—(մի աշքը փակելով, խորամանկ) Լաւ, ես զիջում եմ, համաձայն եմ, Տ. ՕԲ.—Հանզլ, Նէտլ, հայրիկը թոյլատրում է, դուք կարող էք ամուսնանալ:

Նէ.—(զըկելով հօրը) —Իմ թանկագին հայրիկ, իրաւ դուք համաձայն էք, ուրեմն ե՞ս... ՀԱՆ.—Եւ ե՞ս:

ԴԱՆ.—Որպէսզի թէ դու և թէ դու պսակէք իրար հետ, հասկացաք, միայն ձեռք քաշեցէք ինձնից:

ՀԱՆ.—Վիկտորիա, Վիկտորիա (քրոջը վազելով)

Տ. ՕԲ.—Եւ այդ ամենը ես գլուխ բերի, ես:

ՀԱՆ. (Տ. Օբերտէնին) Սիլելի, թանկագին: Նէ.

ԴԱՆ.—(բարկացած) Կանգնիր, բաժանւեցէք... Տես, ինչ ճարպիկն են... բաժանւեցէք, ասում եմ ձեզ... (Հանզլը եւ Նէտլը վախեցած, յետ են քաշում) Այդ պսակը գլուխ կը գայ միայն մի պայմանով:

Տ. ՕԲ.—Պայ...

Նէ.—...ման...

ՀԱՆ.—...ով...

ԴԱՆ.—Այս, առաջին և վերջին կտրական պայմանը, նշանտուքի օրը հանզլը պէտքէ, իբրև նէտի օժիտ, ներկայացնի ինձ 200 ոսկի: (բոլորը զարմանում են)

ՀԱՆ.—Որպէսզի ես ամուսնանամ ձեր աղջկայ հետ, ես պարտաւոր եմ 200...

ԴԱՆ.—(նրա խօսքը կտրելով) — 200 ոսկի տալ, ապա թէոչ, ոչինչ գլուխ չի գալ: Վճռուած և ստորագրւած է: Ես պարտաւոր եմ իմ աղջկայ ապագան ապահովել: Եւ եթէ նորին վսեմափայլութեան իշխան կառւնիցի շվեյցարի աղջիկը կարող է այնքան ստորանալ, որ գնայ մի որևէ աննշան սպասաւորի, գոնէ պէտք է այդ էլ է լինի: Հասկանում էք: (Մատներով փող համրելը ցոյց տալով)

Տ. ՕԲ.—200 ոսկի, ի՞նչ էք ասում, բայց չէ որ դա շատ մեծ գումար է:

ԴԱՆ.—Ոչ մի զիջում չիլինիւ, իսկ մինչև այն ըսպէն, երբ ոսկիները ձեռքումս կը լինին, երկու աղաւնեակներն էլ միմեանցից հեռու պիտի մնան: 5 բոպէ ժամանակ եմ տալիս բաժանւելու: (զրապանի մեծ ժամացոյցին նայելով) 5 բոպէն որ անցաւ, մեկը այս, միւսը այն կողմ: (Հանզլը եւ նէտլը տիսուր միմեանց ձեռք են սեղմում)

Տ. ՕԲ.—(Դանզելիս ներին) — Ես այդ չեմ կարող թոյլ տալ:

ԴԱՆ.—Մի մոռանաք, տ. Օբերտէն, որ Աստրիան է յաղթել և նա է պայմաններ թելադրում: Իսկ այդ դէպքում առաջին տեղը բըռնում է փողը: Դուք պէտք է լուէք: Ճիշտ է:

Տ. ՕԲ.—(խոր հոգոց քաշելով) — Այս: (Դանզելիս ներին կամաց) Դուք էլ պէտք է լուէք:

ԴԱՆ.—Օս, օս, օս, madame!

Տ. ՕԲ.—Գոնէ թողնենք երեխաներին առժամանակ միայնակ:

ԴԱՆ.—Ուշախութեամբ: (նայելով ժամացոյցին) Դեռ ևս 4 բոպէ է մնում: Եւ այդպէս, տիկին Օբերտէն, մենք վերջացրինք:

Տ. ՕԲ.—(խոր ընթրանսով) Պարոն Դանզելիսամեր:

ԴԱՆ.—(խոր գլուխ տալով) Տիկին Օբերտէն: (երկուսն էլ շուր են գալիս եւ հպարտ-հպարտ զնում իրանց դռներով)

#### ՏԵՍԻԼ 4

ՆԷ.—(արտասուրով) — Հանդ՝ լ...

ՀԱՆ.—Նէտլ... (պատրա) Ի՞նչ կասես դու այս սիւրպրիզի համար, հը...

ՆԷ.—(վզակոթը քորելով) Ույ, ույ, ույ...

ՀԱՆ.—Այս, այս, ես էլ նոյն կարծիքին եմ...

բայց մի տիրի, Նէտլ, ես անպատճառ կը դըտ-  
նեմ այդ 200-ը:

Նէ.—Ի՞նչպէս:  
ՀԱՆ.—Ես կը ժողովեմ օ, ես շատ հաշւե-  
տես եմ, ես արդէն 2 ոսկի ունեմ:

Նէ.—(տխուր) —Ի՞նչ ես յիմար, յիմար դուրս  
տալիս, որտեղից կը գտնես դու մնացած 198  
ոսկին:

ՀԱՆ.—Ես ասում եմ, որ կը գանձեմ, ան-  
պատճառ կը գանձեմ... իմ ոռճիկից կը գանձեմ...  
Ես կը սկսեմ քիչ ուտել, քիչ խմել... ես... ես...  
ես... ամեն բանից ինձ կը զրկեմ... և անպատ-  
ճառ կը գանձեմ..., Դու կը տեսնես, որ տարին  
մի ոսկի կը գանձեմ:

Նէ.—(տխուր) —Իսկ այն ժամանակ ես 198  
տարեկան կը լինեմ արդէն:

ՀԱՆ.—Ի՞նչ անենք որ, այդ ոչինչ, այդ ինձ  
համար ամենևին նշանակութիւն չունի, դու ինձ  
համար պառաւ չես լինի:

Նէ.—(լալիս է) —Ախ դու յիմար, յիմար  
չանզլ... 198 տարուց յետոյ ես պառկած կը լի-  
նեմ այնտեղ՝ գերեզմանատանը, սառ գետնի տակ:

ՀԱՆ.—Դու իրաւ ես ասում: (լալիս է) Տէր  
իմ Աստւած, իմ խեղճ Նէտլ... (յանկարծ շա-  
րացած բոռնցք է ցոյց տալիս դէպի Portier դու-  
րը) Եւ բոլորի պատճառը այդ ծեր բողկն է, այդ  
անպէտք թմբկահարը, այդ զգելի...

Նէ.—Լսիր, չէ որ նա հայրս է, հանզլ  
մենք պէտք է բաժանւենք, այլ ևս յոյս չը կայ,  
ոչ մի յայս... բաժանւենք քաղցրութեամբ...

ՀԱՆ.—Ես կը կախւեմ:

Նէ.—Ի՞նչ:

ՀԱՆ.—Այս, կը կախւեմ, կը գնամ վայրենինե-  
րի մօտ... ինքս էլ վայրենի կը դառնամ... մար-  
դակեր... յետոյ կը վերադառնամ մի մարդակե-  
րի հետ և միանգամից կոչնչացնեմ Դանգելհա-  
մերին, մի նախաճաշիկի ընթացքում հէնց... Օ՛,  
նրանք կը տեսնեն, թէ ես ով եմ, սպասեցէք...

Նէ.—(նրա ըերանը փակելով) կը լոես, թէ  
չէ, ի՞նչեր ես դուրս տալիս: Օ՛, ինչպիսի մե-  
ղաւոր բաներ ես ասում դու, միթէ քրիստո-  
նեան այդպիսի բաներ կասի, կանի: Մտաբերիր,  
չէ որ դու կաթոլիկ ես:

ՀԱՆ.—Ո՛չ, ես այժմ այլ ևս կաթոլիկ չեմ,  
ես վայրենի եմ:

Նէ.—(տխուր) Դէ, բաւական է ցանցառու-  
թիւններ դուրս տաս: (բռնելով նրա ծերոք) Հան-  
զըլ, այդ չէ որ կատակ չէ, մենք պէտք է բա-  
ժանւենք, մենք այսօր չէ որ վերջին անգամն  
ենք տեսնուում, իսկ յետոյ մենք պէտք է յա-  
ւիտեան բաժանւենք: Դու կարող ես ինձ համ-  
բուրել: (Հանզլը համբուրում է նրան) Սա վեր-  
ջին համբոյըն է այս աշխարհում, ես ուզում  
եմ խոնարհ աղջիկ լինել: Հինգերորդ պատրիքա-

նը ասում է. «յարգիր քո հօրը, քո մօրը և...»  
ՀԱՆ.—(նրան ընդհատելով) — Ճիշտ չէ, հին-  
գերորդ պատւիրանը ասում է. «մի գողանարձ...

ՆԵ. — Ճիշտ չէ: Հինգերորդ պատւիրանը  
ասում է «յարգիր քո հօրը և քո մօրը»: Համ-  
բուրիր ինձ վերջին անգամ: (համբուրտում են) — Բոլոր անցեալը և ապագան, բոլոր լաւն ու  
վատը, ուրախութիւնն ու վիշտը, միանում են  
այս համբոյրի մէջ. (նորից համբուրտում են) Տէր  
իմ Աստւած, տէր իմ Աստւած. Երկի գու կը  
դաւաճանես ինձ և կը սիրես մի ուրիշի, կը համ-  
բուրես նրան... Օ՛ ես գիտեմ... դուք տղամար-  
դիք այդ շատ էք սիրում: (համբուրտում են) Թէկուզ այդ շատ, շատ վատ է...

ԴԱՆ.—(Դոներում՝ ծեղորում ժամացոյց) —  
Նէտլ:

ՆԵ. — Գալիս եմ, գալիս եմ. տէր Աստւած,  
ի՞նչ բան է այս, ծանր է, շատ ծանր... վերջին  
անգամն եմ իմ հանգի հետ, իմ թանկագին հան-  
գի հետ, Վերջին անգամն եմ նրան համբուրում:  
(Արագ զրկում, համբուրտում են) Հանգը, մաս  
բարեաւ, առ միշտ... Աստւած պահի քեզ...  
(զնում է)

ՀԱՆ.— (Միայնակ) Բոլորը վերջացաւ, բո-  
լորը... Օ՛, Նէտլ, Երկու հարիւրանոց Նէտլ...  
թանկագին Նէտլ... ինչ էլ որ լինի, ես կը գըտ-  
նեմ այդ 200.ը, իսկ հակառակ դէպօւմ բաժան-

ւում եմ քեզանից յաւետեանս յաւետենից ամէն+  
(լալիս է եւ նայում նստարանի վրայ)

### ՏԵՍԻԼ 5

ՀԱՆՉԼ, ԼԱՖԼԻՐ և ՕՊՊԵՆՀԱՅՄԵՐ (փողոցի դռնից)

ՕՊ.—(սեւ հարուստ հագուստով, սիմպատիկ ե-  
րեսով, ծնւերը պատշաճ): — Եւ այդպէս, դուք  
չէք փոխում ձեր կարծիքը:

ԼԱՖ.—Պարոն Օպպենհայմեր, ես արդէն ա-  
սացի ձեզ, որ ոչ մի կերպ չեմ կատարիլ այդ...,  
չէ որ ես նրա քարտուղարը չեմ, այլ միմիայն  
կամերդիները:

ՕՊ.—Ահա հէնց դրա համար էլ ձեզ եմ դի-  
մում... աշխարհիս ուժեղները ուրիշների մօտ  
միշտ աստւածներ են, իսկ իրենց կամերդի-  
ներների մօտ սովորական մարդիկ: Եւ ահա հէնց  
այդպիսի մի ըոպէին...

ԼԱՖ.—(ընդհատելով) Անկարելի է: Նորին  
վսեմափայլութիւնը միանգամ ընդմիշտ արգե-  
լել է թողնել ջնուղներին իր մօտ: Ներեցէք,  
պարոն Օպպէնհայմեր, եթէ ես ձեզ վիրաւո-  
րեցի:

ՕՊ.—Ես համարեա 60 տարի է սովորել  
եմ ջհուդ բառին:

ԼԱՖ.—Ես այս ըոպէին պէտք է գնամ մի-  
նիստրի մօտ: Ես կարող եմ կորցնել տեղս, իսկ

Ես երեխաների հայր եմ, ինձ անկարելի է անուշադիր լինել:

ՕՊ.—Թող Աստւած հեռու պահէ ինձ զաւակներ ունեցող մի մարդութշւառութեան պատճառ լինելոց; Ես ինքս էլ տասներեք հատ բարի և ազնիւ որդիներ ունեմ:

ԼԱՅ.—Կըկին խնդրում եմ, ներեցէք ինձ: Իսկ ձեր ինձ ուղարկած փողը ես մի քանի օրից կը վերադարձնեմ:

ՕՊ.—Թող ձեղ մօտ մնայ, ձեր բարի ցանկութեան համար: Իսկ եթէ ձեր հպարտութիւնը արգելք հենդիսանայ, նուիրեցէք ձեր երեխաներին:

ԼԱՅ.—Շնորհակալ եմ, ներեցէք, ես շտապում եմ: (Ժամացոյցին նայելով) Իններորդ ժամըն է, վաղուց իմ գնալու ժամանակն է: (Մըտնում է պալատը)

## ՏԵՍԻԼ 6

ՕՊԻՆՀԱՑՄԵՐ և ՀԱՆՁԼ

ՕՊ.—Ազնիւ անձնաւորութիւնն է. եթէ կարելի լինէր, իհարկէ նա կը յաջողեցնէր մինիստրի հետ իմ տեսակցութիւնը: Բոլոր իմ ջանքերը իզուր են անցնում և երկի երթէք չեմ տեսնի կառւնիցին: Մեր օգտին պիտի խօսեն խորհըրդարանում 4 ձայն, իսկ ընդդէմ մեղ սիմի-

այն մի ձայն պէտք է լինի և այդ էլ կառւնիցինն է, իսկ նրա վճիռը վեր է, քան ամեն բան: Եւ ես, որի վրայ են որել իրանց յոյսը իմ կրօնակից եղբայրները, չեմ կարողանում հասնել մինխստրին: (Հանգը, որ նստած նստարանի վըրայ կօշիկ էր սրբում, սկսում է լաց լինել)

ՕՊ.—Ահա և մի ուրիշ դժբաղդ մարդ. ինչու ես լալիս, բարեկամս:

ՀԱՅ.—Այդ ձեր գործը չէ: Թիւ, սատանան տանի, սա ջնուղ է, կորիր այստեղից:

ՕՊ.—Ես քեզ դիմում եմ ցաւելով, իսկ դու ինձ հետ կոպիտ ես վարւում:

ՀԱՅ.—Որովհետև ամեն անգամ՝ երբ ջնուղի եմ հանդիպում, ինձ դժբաղդութիւն է պատահում:

ՕՊ.—Բայց դու նախ քան ինձ հանդիպելու էիր լալիս, ուրեմն քեզ դժբաղդութիւն պատահել է ինձ տեսնելուցդ առաջ.

ՀԱՅ.—(զարմացած: Պարուզա) Եւ իրաւ որ է. այդ ջնուղները շատ էլ յիմար չեն, այլ նենդամիտ: Մի խօսքով, որպէսզի, պարոն, դուք իմանաք՝ կասեմ. ես տանել չեմ կարող ջնուղներին:

ՕՊ.—Ի՞նչ են արել քեզ իմ հաւատակիցները:

ՀԱՅ.—Ի՞նձ ոչինչ: Դէ լաւ, մի չարանալ դու ինձ վրայ, ես շտայ յուղած էի: Դուք ինք-

Ներդ էլ ինձանից պակաս չէիք յուզւիլ, եթէ հոգեակդ խլէին: Դուք ինարկէ, այժմ շատ ծեր էք, որպէսզի սեփական հոգեակ ունենաք. բայց յիշեցէք, երբ երիտասարդ էիք, ի՞նչ կը զգայիք, եթէ այդ պատահէր:

ՕՊ.—Ի՞նչ է, նա մեռել է, թէ դաւաճանել է քեզ:

ՀԱՆ.—Տէրը մի արասցէ. նա կենդանի և առողջ է. սիրում է ինձ. այնքան էլ հաւատարիմ է:

ՕՊ.—Եւ դու կորցնում ես նրան, բայց այդ ի՞նչպէս:

ՀԱՆ.—Նրա հայրը չի ցանկանում նրան ինձ տալ, մինչև որ ես իբրև օժիտ՝ չգտնեմ 200 ոսկի: Ասացէք, ինդրեմ, որտեղից գտնեմ ես այդքան փողը, այսպիսի պաշտօն ունենալով: (սըր-ըում է կօշիկը)

ՕՊ.—Ճակատագիր, ճակատագիր... Այս թըշւառը զրկում է մի քանի չնչին ոսկիների համար իւր բաղդից, իսկ ես՝ միլիօնատէրս, զրկում եմ նոյնպէս իմ բաղդից: (խոր հոգոց հանելով) Որպիսի ուրախութեամբ ես այդ փողը կը տայի, եթէ միայն կարողանայիր մինհսարի հետ տեսակցութիւնս յաջողեցնել:

ՀԱՆ.—(իրեն կորցնելով ուրախութիւնից) Ի՞նչ-պէս, դուք ուզում էք ինձ տալ...

ՕՊ.—...200 ոսկի, եթէ միայն դու կարո-

դանաս յաջողեցնել որ տեսնեմ նորին վսեմա- փայլութեան և կարողանամ ասել միմիայն մի բառ մինիստրին:

ՀԱՆ.—200 ոսկի... ոչինչ չեմ կորցնիլ... Շատ, շատ, վիզս կտրի էլի... մեծ դժբաղու- թիւն չէ, ինձ համար միենոյն է. (ձեռքը մեկ- նելով) Տէք ինձ այդ փողը, ես տեսակցութիւ- նը կը սարքեմ:

ՕՊ.—Միթէ, բայց ի՞նչպէս, Երբ, ո՞րտեղ:

ՀԱՆ.—Այդ արգէն ձեր գործը չէ, նախե

առաջ փողը տւէք:

ՕՊ.—Հետո այդքան չունեմ, բայց շատ մօտ- իմ մի բարեկամն է ապրում, կերթամ և իսկոյն կը բերեմ:

ՀԱՆ.—Լաւ, միայն շուտ, ապա թէ ոչ, միտքս կը փոխեմ:

ՕՊ.—(յուզւած) Շնորհակալ կը լինեմ, հա- զար շնորհակալութիւն կը յայտնեմ: (կողմ) Քիչ յոյս ունեմ սրա վրայ, բայց ո՞վ գիտէ, կարելի է Տէրը, որ զօրեղացրեց մանուկ Դաւթի բա- զուկը, կատարի իմ և իմ խեղճ հայրենակիցնե- րի իղձը: (նրան) Ես փողերը կը բերեմ... և կա- րելի է քո սիրուհին դարձեալ քոնը կը դառնայ և Աստւած կօրհնի ձեր զաւակներին և թոռնե- րին: Ես կը բերեմ, կը բերեմ փողը, (զնուա է դարպասով)

ՀԱՆ.—(միայնակ) —Ի՞նչեր էր նա դուրս

տալիս զաւակների մասին, միթէ նա կարծում է որ Նէտլը... այ ծիծաղ... Այժմ թէկուզ տրաքուր 200 ոսկու համար, միևնոյն է, մեծ բիսկ է—ինչ ասած: Կարելի է մէջքիս փայտի մի քանի հարւածներ կպչեն: Նորին վսեմափայլութիւնը ամեն անդամ նախ քան տանից գուրս գալը, գալիս է այստեղով անցնում և այգին գնում հոգանոցում հանգստանալու. ահա հէնց այն բռպէին, երբ նա անցնելիս լինի, ես կընկնեմ նրա ոտքերը, կը գրկեմ նրանց և... (մէջքով կանգնած է դէպի պալատը) — Կասեմ. Զերդ վսեմափայլութիւն, ես մի բան ունեմ Զերդ վսեմափայլութեան ասելու... .

## ՏԵՍԻԼ 7

ՀԱՆՉԼ, ԿԱՌԻՆԻՑ, յետոյ ՆԷՏԼ.

ԿԱ.—(Դուքս է գալիս տնից եւ տեսնելով չանգլին ծնկաշոք եւ լսելով նրա վերջին խօսքերը, կամաց մօտենում է նրա յետելից եւ ծեռը դնում նրա ուախն) — Ի՞նչ:

(Նէտլը երեսում է ձախ դռներում)

ՀԱՆՉԼ.—(Վախնեցած յետ է նայում եւ տեսնելով կառնիցին, ընկնում է նրա ոտքերը) — Մարդիամ Աստւածածին, Զերդ վսեմափայլութիւն..

ԿԱ.—Դէ, ի՞նչ պէտք է յայտնէիր ինձ:

ՀԱՆՉԼ.—(Շփոթւած) — Ես... ես... Զերդ վսեմափայլութիւն, Զերդ վսեմափայլութիւն... պատիւ չնւնէք ինձ ճանաչելու... ես Զերդ վսեմափայլութեան վսեմափայլ կօշիկների... վսեմափայլ... մաքրողն եմ... ես չեմ կարողանում խօսել... ես... ես... էշ եմ...

ԿԱ.—Ամեն բանից էլ այդ երեսում է:

ՀԱ.—Ես... ես ունէի... այսինքն ես... ջըհուդ էի... ոչ, ոչ... այդ չէ... ես խօսել չեմ կարողանում: (կրղմ) Լեզուս կապւեց:

ՆԷ.—(վազելով գալիս է եւ չոքում) Զերդ վսեմափայլութիւն:

ԿԱ.—(զարմացած) Տեսէք, տեսէք, շվեյցարիս փոքրիկ գուստարը, ես քեզ, սիրելիս, դեռ այսքան մօտիկից չեմ տեսել: (նրա ծնօտից ըռնելով) Բայց իսկապէս, դու շատ սիրունիկն ես:

ՀԱ.—Ճշմարիտ է, Զերդ վսեմափայլութիւն,

իմ ճաշակը շատ զարգացած է:

ԿԱ.—Այո... բայց այդ միևնոյնը չի կարելի ասել քո հարմացուի մասին: Ի՞նչ է, ի՞նչ ներդ է պակաս:

ՆԷ.—Ախ, Զերդ վսեմափայլութիւն, եթէ դուք իմանայիք, իմ հայրը...

ԿԱ.—Այդպէս է, այդպէս է... հայրերը երբէք բաւականութիւն չեն պատճառում իրենց որդիկերանց: (Ուզում է նորից նէտլի ծնօտից ըռնել, բայց այդ ըոսէին չանգլը նրան բոլորում է,

ինքն է մեկնում իւր զլուխը եւ Կառունիցը շը նկատելով, բռնում է նրա ծնօտից) Այնուամենայնիւ, սիրելիս, ձեր հայրը լաւ գիտէ, թէ ինչ է անում: (Նկատելով որ Հանզլի ծնօտն է բռնել, բռնում է նրան) Է՞ն, սատանայ, ի՞նչ ես յիմար գլուխդէմ արել... (սրբելով իւր Մատները) Ֆու, բոլորովին աղտոտեցի:

ՀԱՆ.—Այդ ոչինչ, այդ կօշկաներկ է, այդ պսպղուն, մաքուր կօշկաներկ է:

ԿԱՆ.—Դէ կանգնեցէք, ես չեմ սիրում, երբ չոքում են իմ առաջ: (Երկուսն էլ ոտքի են կանգնում)

ՆԷ.—Զերդ վսեմափայլութիւն,.. Դուք մեր հայրն էք, ձեզանից ենք սպասում մեր բաղդը և այդ պատճառով:

ՀԱՆ.—Այդ պատճառով էլ ես ոտքերդ կընկնեմ և չեմ վեր կենալ, թէկուզ իմ վարտիկը պատառուի էլ... (Երկուսն էլ ոտքի են ղնկնում)

ԿԱՆ.—(քարծրացնում է Երկուսին էլ) Նէտլին ծնօտից, իսկ Հանզլին ականջից) —Վեր կացէք, ի՞նչ կարող եմ անել ես ձեզ համար:

ՆԷ.—Հըմ... հըմ... պէտք է ասել ձերդ վսեմափայլութեան, որ հայրս համաձայն է մեր պսակին:

ԿԱՆ.—Ուրեմն էլ ի՞նչ:

ՀԱՆ.—Բանը նըանումն է, որ պէտք է մի

տեսակ, ինչ էլ որ լինի, 200 ոսկի գտնեմ նըան օժիտ:

ԿԱՆ.—Ի՞նչ է, ուզում էք, որ ես տամ ձեզ այդ 200-ը, այդ. ոչ, բարեկամներս, այդ բանի վրայ յոյս մի դնէք: Ես մանը փող չունեմ և ցանկութիւն էլ չունեմ փողերս ծախսելու իմ ծառաների պէտքերի վրայ:

ՀԱՆ.—Ախ ոչ, Զերդ վսեմափայլութիւնը մի գրօշ անգամ չը պէտք է ծախսի մեզ վրայ, փողերը ես կը ստանամ ջնուղից:

ՆԷ.—(զարմացած) —Ջնուղից:

ԿԱՆ.—Ի՞նչ. դու համարձակւում ես պարտք վերցնել ջնուղից, այն էլ 200 ոսկի և այն էլ 6—7 դուղին ոռճիկ ունենալով:

ՀԱՆ.—Ախ, Զերդ վսեմափայլութիւն, ի՞նչ էք ասում: Զերդ վսեմափայլութիւն, դեռ ոչինչ չը գիտէք... ջնուղը ինձ նւիրում է այդ փողերը:

ԿԱՆ.—Ի՞նչպէս... ջնուղը նւիրում է իմ ծառային 200 ոսկի:

ՀԱՆ.—Այսինքն, նա չէ նւիրում, այլ տալիս է իբրև վարձատրութիւն իմ մի չնչին ծառայութեան համար:

ԿԱՆ.—Ծառայութեան համար: Իմ ծառային 200 ոսկի են նւիրում ծառայութեան համար: Եւ ի՞նչ ծառայութիւն է այդ:

ՀԱՆ.—Նա ուզում է խօսել Զերդ վսեմափայլութեան հետ:

ԿԱ. — Նա ուզում է խօսել ինձ հետ։  
ՀԱՆ. — Ճիշտ է, բոլորովին ճիշտ է։ Զար-  
մանալի է, Զերդ վսեմափայլութիւն, որտեղից  
դուք այդ գուշակեցիք։ (աշխատելով նմանեցնել  
հրէալին) — ո Երբ կարող եմ, ասում էր՝ նա,  
«տեսակցութիւն ունենալ ամենամեծ մինիստրի  
հետ», ասում է, «և ասել նրան մի բառ, դու կը  
ստանաս 200 ոսկի և օրնութիւն որդկերանցդ,  
և այլն և ամեն ինչ»... ասաց նա։

ԿԱ. — (մտածմոնքի մէջ) — Ա՛խ, ինչպէս  
կուզէի ես պատժել այդ ջնուդին, որ համար-  
ձակւել է կաշառել իմ ծառային։ Լսեցէք, զա-  
ւակներս, իմ բոլոր ծառաները գիտեն, որ ես  
միշտ բարի եմ եղել դէպի իրենց։

ՆԷ. — Ի՞նչպէս չէ, Զերդ վսեմափայլութիւ-  
նը միշտ մեր հայրն էք եղել։

ՀԱՆ. — Այո, հայր, հայր...

ԿԱ. — Դէ, ես շատ, շատ ուրախ եմ, որ կա-  
րող եմ մի որևէ բանով օգնել ձեզ, նամանա-  
ւանդ որ այդ անուսմ է այդպիսի սիրուն ա-  
չիկների համար։

ՀԱՆ. — Այո, Զերդ վսեմափայլութիւն, ես  
իրաւ գեղեցիկ աշբեր ունեմ։

ԿԱ. — (Նէտի ծեռքը վերցնելով) — Ես չեմ ու-  
զում քեզ բաղդից զրկել սիրուն զաւակա... ես  
միացնում եմ ձեր ձեռքերը։ (Հանգը մեկնում  
է իր ծեռքը, Կառնիցը շարունակում է քռնել

Նէտի ծեռքը) Քո թաթիկը շատ սիրունիկ է,  
սպիտակ, փափուկ... ուղղակի ուուցի ուուցի  
(քաց թողնելով Նէտի ծեռքը) Տեսակցութիւնը  
թոյլատրում է։

ՆԷ. — Միթէ, Զերդ վսեմափայլութիւնը ուղ-  
ղակի հրեշտակ է։

ՀԱՆ. — Ի՞նչ բան է հրեշտակը որ... Նորին  
վսեմափայլութիւնը այնքան բարի է, այնքան  
բարեսիրա, որ ամբողջ աշխարհում չի գը-  
տնւի մի ուրիշը, որ նմանւի նորին վսեմափայ-  
լութեան։

ԿԱ. — Յայտնիր քո ջնուդին, որ ցանկանում  
է ինձ ասել միայն մի բառ, թէ տեսակցութիւ-  
նը թոյլատրած է, միայն ոչ իմ առանձ-  
նասենեակում, այլ այստեղ՝ բագում, երբ ես կը  
վերադառնամ այգուց։ Նա կարող է ինձ այս-  
տեղ տեսնել։ Միայն ասա նրան, որ թոյլատրր-  
ուում է ասել ինձ միայն մի բառ, յիշիր, մի-  
միայն մի բառ։ Եթէ նա համարձակւի աւելաց-  
նել գոնէ կէս բառ, ես իսկոյն կը հրամայեմ  
վընդել նրան, իսկ քեզ, սիրելի բարեկամս, ջը-  
հուդների պաշտպանին, կը տան հաստ ճիպոտ-  
ների 25 հարւած։

ՀԱՆ. — Նէտի սիրոյն համար ես պատրաստ  
եմ տանել ամեն բան, մինչև անգամ 26 հար-  
ւած։

ԿԱ. — Դէ, զաւակներս, ցտեսութիւն։ (ուզում է զնալ։)

ՆԵ. — (խաչելով ծեռքերը կրծքին) Զերդ վաեմափայլութիւն, ի սէր Աստծոյ, խնդրում—աղաչում եմ, ծեծել չը տաք նշանածիս, եթէ ջըհուղը սկսի տակից գլխից դուրս տալ։

ԿԱ. — (ցած եւ ծիծաղելով) Այդքան խիստ չենք լինի, այդ միայն նրան վախեցնելու համար ասացի, յոյս ունեմ այդ նրան չի վնասի։ (նրա ծնոտից բռնելով) —Թանկադինս, եթէ ես նրան պատժել ուզենամ, բաւական է, որ դու գաս իմ առանձնասենեակը, և ես նրան կը ներեմ, այդպիսի սիրուն աչիկներին ոչ մի բան չեմ մերժիլ։ Դէ, ցտեսութիւն, փոքրիկս։ (զնում է այզի)

ՀԱՆ. — (քաշելով նէտին մի կողմ) — Ի՞նչ էր նա քեզ հետ բչփշում։

ՆԵ. — Նա ասում է, որ եթէ գործը վատ ընթացք ստանայ, բաւական է, որ ես գնամ նրա առանձնասենեակը և քեզ ոչ մի բան չի լինիլ,

ՀԱՆ. — (քիշ լոելուց յետոյ) — Նէտլ, ես աւելի լաւ է, կը համաձայնւեմ և 50 հարւածի, միայն թէ դու նրա առանձնասենեակը չը գնաս։

ՆԵ. — Ախ դու յիմար, յիմար։  
ՀԱՆ. — (հպարտ) Օ՛, ոչ, ընդհակառակը, ես շատ խելօքն եմ։ Տեսար, ինչպէս գլուխ բերի ամեն բան։ Չէ որ նա մինիստը է, իսկ այդպի-

սիների հետ չի կարելի այնպէս վարւել, ինչպէս մերոնց... չի կարելի այնպէս հասարակ կերպով, պէտք է որ այստեղ (ծակատը ցոյց տալով) լիքը լինի։ Ես, ճիշտն ասած, ոչ թէ կօշիկներ մաքրող պէտք է լինեմ, այլ քաղաքագէտ, այու։

ՆԵ. — Դէ, բաւական է ցանցառութիւններ դուրս տաս, կարծեմ ջնուդդ գալիս է։

### ՏԵՍԻԼ 8

Նոյնը և ՕՊՊԵՆՀԱՅՄԵՐ

ՕՊ. — (մտնելով) Դէ, բարեկամս, ինչ եղաւ, ինչպէս են մեր գործերը։ Դէ ասա, շուտ ասա, որևէ փոքրիկ յոյս կմյ։

ՀԱՆ. — (հպարտ) Փոքրիկ յոյս։ Ի՞նչ է ասում, ես եմ վերցրել վրաս, երբ գործը իմ ձեռքին է, ուրեմն այնպէս կը կարգադրեմ, ինչպէս որ հարկն է, առաջին տեսակի, ուրիշ տեսակ ես չեմ կարող։

ՕՊ. — (յուզլած) — Ի՞նչ, ի՞նչ... մի ծիծաղիւ ծերուկիս վրայ, ի՞նչ ասացիր։

ՀԱՆ. — (շեշտելով) — Թոյլատրւած է։

ՕՊ. — Թոյլատրւած է, տեսակցութիւնը...։

ՀԱՆ. — Թոյլատրւած է։

ՕՊ. — (յուզլած, աչքերին արցունք) Տէր Աստած, իմ ականջներն են այդ լսում արդեօք։ Իմ

բարեկամ, ի՞նչպէս շնորհակալ լինեմ քեզանից:  
ՀԱՆ.—Թէկուզ շնորհակալութիւն էլ մի ա-

նիր, միևնույն է, միայն թէ փողերը տուր շուտա:  
ՕՊ.—(հանելով 2 քսակ լի փողով) Ահա,  
դաւակս. վերցրու, ուղիղ 200 ոսկի է, համըիր,  
ուղիղ 200 է,

ՀԱՆ.—(ուրախովծինից ծիծաղելով) հա, հա,  
հա... 200, ուղիղ 200... բոլորը ոսկիներ: Նէտլ,  
Նէտլ... նայիր, այ քեզ բան, հա, հա, հա...

ՆԷ.—Իսկ դու մռացցար պայմանը յայտ-  
նելու:

ՕՊ.—Պայմանը:

ՀԱՆ.—Ա՛խ, այո, բայց դա դատարկ բան  
է... Մինիստրը ասաց, որ տեսակցութեան ժա-  
մանակ դուք կարող էք նրան միմիայն մի բառ  
ասել:

ՕՊ.—Մի բառ... այդ ի՞նչպէս, իսկ եթէ ես  
աւել ասեմ:

ՀԱՆ.—Իսկ եթէ աւել ասէք, նորին վսե-  
մափայլութիւնը ասաց, որ ձեզ կը վռնդեն, իսկ  
ինձ 25 ճիպոտի հարւած կը տան:

ՆԷ.—Այո, իշխանն այդպէս ասաց:

ՕՊ.—Այն բոլորը, ինչ որ ծանրացած է սըր-  
տիս վրայ, որ ճնշում է ինձ, որ այնպէս տան-  
ջում է ինձ,—ես այդ ամենը պիտի յայտնեմ  
միմիայն մի բառով:

ՆԷ.—Իշխանը, իշխանը գալիս է: (ղուրս է  
վազում)

ՀԱՆ.—Ես էլ գնամ: (նրան) Ես գործը գը-  
լուխ բերի, իսկ այժմ ինչպէս Աստուած կը  
ցանկանայ, Փողի համար ձեզանից շատ, շատ  
շնորհակալ եմ, թող Աստուած օգնի ձեզ, (իսա-  
ղալով փողերի հետ ղուրս է վազում)

### ՏԵՍԻԼ 9

ՕՊ.—(սաստիկ յուզւած, ճակատի քրտինքն  
է սրբում) — Նա գալիս է, ես պէտք է տեսնեմ  
և խօսեմ նրա հետ, նրա՝ մեծ մարդու, զօրեղ  
մինիստրի հետ, որին ամենքը, մինչև անգամ  
թագաւորները յարգում են. Օ՛, նա ինձ կը ո-  
չընչացնի իւր մի հայեացքով, չը գնամ արդեօք,  
քանի որ չեն վոնդել և չեն ծիծաղել իմ հաւա-  
տի, կամ հաւատակիցների վրայ: (զլովսը թափա-  
հարելով) Ո՛չ, ո՛չ, դու 50 տարուց աւել է, որ  
տարել ես ամեն մի անսարդանք և վիրաւորանք,  
ի՞նչ կարող ես դու անել, դու պարտական ես  
համբերել և տանել այս էլ: Սարսափելի 5—10  
ըռպէներ:

## ՏԵՍԻԼ 10

ՕՊԵՆՀԱՅՄՆԵՐ և ԿԱՌԻՆԻՑ

**ԿԱ.**—(լուրս է գալիս այսուց, ձեռքին վարդ: Օպպէնհայմերը խորը զլուխ է տալիս, Կառնիցը թեթեւ գլխի շարժումով—պատասխանում է նրա բարեկին եւ մի քանի քայլ անելով—կանգնում: Օպպէնհայմերը բաւականին հեռու, զլուխը բաց կանգնած է) **Ա'**, պարոն Օպպէնհայմեր: (վերջինս զլուխ է տալիս, առանց խօսելու, ձեռքերը կրծքին խաշելով)—**ԶԵՐ** պաշտպանը, իմ ժառան, ինձ յայտնեց ձեր ցանկութեան մասին: Ես բոլոր տեսակի դիպլօմատների հետ գործ ունեցել եմ, բայց ջնուդական դիպլօմատիայի մասին ես չեի լսել: Ինձ շատ է հետաքրքրում ջընուդական կօնֆերենցիան, որ երազում է մի բառով ստանալ այն, ինչ որ չեն կարողացել ստանալ ոչ ֆրանսիան, ոչ Պրուսիան և ոչ Տաճկաստանը: (Օպպէնհայմերը զլուխը խոնարհեցնելով, ցոյց է տալիս նրան միմիկայով, որ նա արդեար չէ դէպի նա) —**ԱՍԵՆՔ** ես միշտ արդարադատ եմ եղել, ես թոյլ տւի ձեզ սպասել ինձ այստեղ, ես չեմ ուզում ձեզ վոնդել, առանց իմանալու թէ ինչպէս գուք ձեր խնդիրքը կը յայտնէք միմիայն մի բառով: Եւ այդպէս, խօսեցէք: (Օպպէնհայմերը հանելով զրպանից զրած

խնդիո, տալիս է նրան) **Օ'**, ոչ, թագցրէք այդ, ապա թէ ոչ մեր պայմանը կը խախտւի: Դուք պէտք է խօսէք: (անգիտակցաբար վայր է ձրգում ձեռքի վարդը, որը դժւարութեամբ գնտնից վերցնում է Օպպէնհայմերը եւ դնելով գլխարկի վրայ, առաջարկում է հառնիցին, որ զլխի թեթեւ շարժումով շնորհակալութիւն է յայտնում) —  
—**ԵՍ** չեմ կասկածում, որ ձեր խնդիրը շատ հմտութեամբ է գրւած, ձեր հաւատակիցները գրել գիտեն: Ես մի փոքր ժամանակ առաջ թերթում էի Մենդելսօնի գրած Plato-ն, շատ խելօք բան... ջնուդների համար... յետոյ կայսերական թատրոնում տեսայ Լեսսինգի «Նաթան իմաստուն» պիեսան, որտեղ գիտունը պատմում է Մալադինի երեք օղակների մասին և գալիս է այն եզրակացութեան, թէ բրիստոնեան, տաճիկը և ջնուդը հաւասար են: (Օպպէնհայմերը խաչում է ձեռքերը կրծքի վրայ եւ լսում) —  
**ԶԵՐ** Նաթան իմաստունը-յիմար է: (պատզա) Իսկ պարոն Օպպէնհայմերին, որ կարծում է թէ մեր երկրում կարելի է մի հաւասար աստիճանի վըրայ դնել և քրիստոնեային և ջնուդին, ես կարող եմ տալ միկնոյն խորհուրդը, որը տւել է իմաստուն Նաթանը Սութանին, «Եկ, 100 տարուց յետոյ կարելի է քեզ համար կանեմ այն, ինչ որ այսօր չեմ կարող»: Ասենք այն էլ բաւական է, որ այսօր այնքան խորհրդականներ

ձեր դաւանութիւնը ճճշումից ազատ թողնելու համար ձայն կը տան։ Ես ձեր դէմ եմ և ես այդ չեմ էլ թագնում, ես իմ առանձին գործելակերպն ունեմ և նա ինձ ստիպում է գործել ձեր դէմ և, երդում եմ, որ երբէք չը պիտի խօսեմ ձեր օգտին... ինչ անեմ ես։ Դուք, իմաստուն Օպպէնհայմեր, ինքներդ ասացէք, երբ բոլորը կը խօսեն ձեր օգտին, ինչ անեմ այն ժամանակ։

ՕՊ. — (խաչելով կրծքին ծեռքերը, մօտենում է նրան եւ աղաշանօք ասում) — Լոեցէք։ (փակում է ծեռքերով բերանը, հեռանում, պառզա)

ԿԱ. — (դնելով ծեռքերը մէջքին, չարութիւնից կծում է շրջունքները, պառզայից յետոյ հանում է քթախոտի տուփը եւ քաշում) — Կեցցէք, պարոն Օպպէնհայմեր, շատ սրամիտ է... Այդ մի բառը բացատրում է այն ամենը, ինչ որ կարող էր պահանջել ինձանից Օպպէնհայմերը։ (ուզում է խփել նրա ուսին, բայց զգանքով յետ է քաշում ծեռքը) Դուք տեսնում էք, որ ես կարողանում եմ յարգել մարդու խելքը, ինչ դաւանութեան էլ պատկանելիս լինի նա։

ՕՊ. — (խոնարհ գլուխ է տալիս)

ԿԱ. — Ես ձեզ խօսք եմ տւել և ձեր խնդիրքը կը կատարէի։ Ես այսօր խորհրդարանում ոչ մի խօսք չեմ ասիլ, այլ կը լուեմ։

ՕՊ. — (ուզում է շոքել նրա առաջ)

ԿԱ. — Կանգնեցէք, կանգնեցէք, ինչ էք անում։ Բայց ոչ ոքի չը պատմէք այն ամենը, ինչ որ պատահեց այստեղ, որ հրէական նոր դիպլոմատիան յաղթութիւն տարաւ, և կառւնիցը յաղթւեց այն ժամանակ, երբ նրան ոչ ոք չէր կարողանում յաղթել։ Յտեսութիւն, պարոն Օպպէնհայմեր։ (գնում է պալատ)։

ՕՊ. — (խոնարհ գլուխ է տալիս նրան) Միայնակ մնալով, ընկնում է ծնկան վրայ) Մեր հայրերի բարի Աստւած, եղիր օրհնեալ յաւիտեան։ (Երկար պառզայից յետոյ ոտքի կանգնելով) Բայց հիանալի, սքանչելի դիպլամատ։ Եւ ուղարկիր, Տէր, կառւնիցին ուրախ տրամադրութիւն, որ նա իր ասածի վրայ կանգնի։

## ՏԵՍԻԼ 11

ՕՊՊԷՆՀԱՅՄԵՐ, յետոյ ՀԱՆՁԼ, ՆԷՏԼ, ԴԱՆԳԵԼՀԱՄԵՐ  
և Տ. ՕԲԵՐՏԷՆ

ՀԱՆ. — (գլուխը դուրս հանելով դոներից, նայում է աջ ու ձախ եւ վազելով շվեյցարի դռան մօտ՝ կանչում է) Նէտլ, Նէտլ, դուրս արի, կարծեմ մեր բանը բուրդ է։ Ես տեսայ թէ ինչպէս ջըհուդը չոքել էր։

ՆԷ. — (գուրս զալով) Խեղճ իմ հանգլ, երեխ գեղ կը կը պատժեն էլ։ (գրկում է նրան)

ԴԱՆ. — (գուրս զալով) Դարձեալ միասին,

սատանան տանի ձեզ:

ՀԱՆ.—Խնդրեմ, խնդրեմ առանց բղաւոցների:

ԴԱՆ.—Ի՞նչ...

ՀԱՆ.—(Նրա քթին մօտեցնելով քակներով փողը) Ահա, ահա 200-ը:

ԴԱՆ.—(վախեցած) Այդ մըտեղից ես գողացել.

ՀԱՆ.—Դէ, դէ, դէ... (կռները յետ ծալելով) Նէտլ, քաշւիր մի կողմ:

Նէ.—Հանգլ, Բնչ է պատահել քեզ:

ՕՊ.—Ո՛, ոչ, բարեկամս, նա այդ փողերը ազնիւ կերպով էստացել ինձանից, մի մեծ ծառայութիւն անելով:

ԴԱՆ.—Հա... ես ախար միշտ ասում էի, որ նա շատ լաւ տղայ է... որ նա չի կորչի, շատ լաւ է: Շատ էլ գեղիցիկ է և...

ՀԱՆ.—200 էլ ոսկի ունի:

ԴԱՆ.—Ճիշտ է, ինչպէս ազնիւ Աւստրիացի և իշխանի շվեյցարը, ես իմ խօսքը կը կատարեմ: Հանգլ, ահա քեզիմ զաւակը, իմ արիւնը և իմ սէրը:

(Միացնում է նրանց ձեռքերը)

ԱՄԵՆՔԸ.—Ուրա...

ՎԱՐԱԳՈՅՔ

## ԳԱԶԱՆԻ ՅԵՏԵՒԻՑ

Գ Տ Վ Ո Յ Ա

Կատակ-կոմեդ. 2 արար. Զախարյինի

Դպրության ամենալավ գրառ պատճենը

Թարգմ. Գ. Ր. Ս Ի Ե Տ Ե Ա Ն

(նաև այլ պատճեններու այլ ամենալավ գրառ պատճենը)

Խոզդական պատճենը այլ պատճեններու այլ ամենալավ գրառ պատճենը

Խոզդական պատճենը այլ պատճեններու այլ ամենալավ գրառ պատճենը

Настоящая пьеса, подъ заглавием „По звѣрю“, перев. Гр. Аветяна, разрѣшена Намѣстникомъ ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА на Кавказѣ, для представлени¤ на сценахъ края (Отзывъ Канцелярии за № 23728—908.

17 Ноября 1908 г. г. Тифлисъ

И. Д. Предсѣдателя Комитета **Д. Колобовъ**

Секретарь **А. Гусевъ**

# Ա Ն Գ Ի Ն Ք

ԻՎԱՆ ԻՎԱՆՈՎԻՉ ՍԱՐԱՏՈՎՑԵԼԻ, միջին կարու-  
ղութեան տէր կալւածատէր  
ՏԱՏԵԱՆԱ. ՍՏԵՊԱՆՈՎՆԱ, նրա կինը  
ՎԵՐՈԶԿԱ. ( նրա աղջիկները (պառաւած)  
ՄՈՒՀԶԿԱ. ( Ալեքսանդր Պատրիարքականի, գրագու-  
նի բառմիստր, ամուրի, տարիքով  
ԳԻՐԻԼԱԾ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ՍՏՈՒՊԻՆ, պօրուչիկ  
ՕԳՆԵՑՉԵՊԵՆՍԿԻՑ, գաւառային բժիշկ, մի ա-  
ռաջական կանչը ծանը է լսում  
Վերահսկիչ (исправник)  
ՆԱՍՏԵԱ, աղախին  
ՍԵՄԵՆ, ծառա  
ԴԵՄԻԴՈՎ, տասնապետ  
ՊԱՆՏԵԼԵՅՄՈՆ, զինուոր

Գործողութիւնը կատարւում է Սարատովցեւների  
կալւածքում:

ՏԵՇԻՄՈՒ ԱՊԵԼԱՅՈՒԹԵԱԾ Ա. Դ. Ն.

ՉԵԿԵԼԵՏԱԲ Ա. Լ. 0. 0. 8.

Ա. Ա. Բ. Ա. Բ. Ա. Ծ

(Կալւածատիրոջ տան հիլասենեակն է գիւ-  
ղում. Կահկարասիքը հին, ծանր, մաշւած պատ-  
կերներ պատերին: Մի քանի դուռը: Հասարակու-  
թինից ճախ գրասեղան):

## ՏԵՇԻԼ 1

ԻՎԱՆ ԻՎԱՆՈՎԻՉ և ՏԱՏԵԱՆԱ. ՍՏԵՊԱՆՈՎՆԱ. (Կրս-  
տած են գրասեղանի մօտ: Իվան Իվանովիչը խաղա-  
թով է)

Իվ. Իվ.—(Հաշւէգիրքը թերթելով)—Վնաս,  
վնաս, և վնաս... կալւածքը վնաս է տալիս, օղէ-  
գործարանը վնաս, աղջիկներս վնաս... այդ գրա-  
գուները նոյնպէս վնաս... Ո՞չ, մայրիկ, այդ-  
պէս ապրել անկարելի է:

ՏԸ. Ս. — Դու սիրելիս, ամեն ինչ սրտիդ  
մօտ ես ընդունում, ամեն բանի համար տա-  
քանում ես...

Իվ. Իվ.—(տաքանալով) Քո կարծիքով պէտք  
է նստել և սպասել այն օրւան, երբ եղած-չե-  
ղածս աճուրդով կը ծախեն, հա...

ՏԱՏ. ՍՏ.—Ո՞վ է բան ասում, իվան իվանովիչ։ Այնուամենայնիւ չը պէտք է այդպէս յուզւել, ինչպէս գնւ և արիւնը պղտորել։

ԻՎ. ԻՎ.—(Համոզեցուցիչ) Նբա համար էլ ես յուզւում եմ, մայրիկս, որ չեմ ցանկանում կալւածատէրից դառնալ մի... մի... (իսուր է փղնտում) պլօրէտարի... այ, ինչպէս լրագրներումն են գրում։

ՏԱՏ. ՍՏ.—Այդ ի՞նչ բան է այդ պրօլետարին։

ԻՎ. ԻՎ.—Պրօլետարին... այդ նշանակում է, այսինքն այն մարդն է կոչւում պրօլետարի, որի դրապանում մկներ են խաղում։ Հասկացար... Դու աւելի լաւ է ինձ ասա, կը պատկի այդ կուլիկովսկին մեր Վէրօչկի հետ թէ չէ։

ՏԱՏ. ՍՏ.—Հապա ես ի՞նչ իմանամ, Մենք մեր կողմից ամեն ջանք գործ ենք դնում և յոյս կայ, ո՞ր։

ԻՎ. ԻՎ.—(Չեռքը թափ տալով) Վաղուց եմ ես այդ յոյսերի մասին լսում, Որպիսի։

ՏԱՏ. ՍՏ.—Ես կարծում եմ Վէրօչկան սկսել է նրան դուք գալ։

ԻՎ. ԻՎ.—Միայն այդ Ռ՝ ես ինչպէս տեսնում եմ, պէտք է ուրիշ միջոցների դիմել, ապա թէ ոչ, դրան վերջ չի լինելու։ (Տաքանալով) Որքան փող ծախսել տւիք այս տարի ձեր աղջկերանց փալաս-փլուսների համար, Ամեն ամիսնոր

շոր։ Քո աղջիկները իմ ահա որտեղին են նստած։ (ցոյց է տալիս վիզը) ՅՈ տարի է նրանցով եմ զբաղւած։ Մրգան փող ծախսեցինք երիտասարդ պարոններ ընդունելու, երեկոյթներ և բալեր սարքելու համար։ Այժմ էլ քո այդ դրագունները. գիտմամբ նրանց իմ կալւածքը հրաւիրեցի ապրելու. կերակրում, խմացնում եմ, նրանց ձիաներին ուտելեղէն եմ մատակարարում, շներին միս եմ տալիս, օդին գործարանից ձրի է բաց թողնում, միմիայն նրանց դենչչիկը խմում է օրական կէս վեդրօ, և ինչպէս էլ է, որ չի սատկում։

ՏԱՏ. ՍՏ.—Ես ճշմարիտ մեղաւոր չեմ։ Յոյս կայ ո՞ր...։

ԻՎ. ԻՎ.—Ռ՝, թոյլ տւէք, գնւք էք ամեն բանում մեղաւոր։ Տէր Աստւած, երկու երիտասարդ պարոն են ապրում համարեա թէ մեզ նետ մի բնակարանում և նա չի կարողանում նրանց ամուսնացնել։ Այդ ոչ մի բանի նման չէ։ Նրա համար էլ դու կին ես, նրա համար էլ դու մայր ես, որ գլուխ բերես այդ բանը։ Այս, և ես ձանձրացայ ձեր այդ սպասելուց, ես ուզում եմ իմ գործը կտրուկ բռնել, իմ այստեղում (ծակատը ցոյց տալով) նստած է մի հանճարեղ միտք։ Այսօր մեր տուն կը գան մեր հարեւններից մի քանի հոգի և ես էլ ուզում եմ իրագործել իմ միտքը։

*SUS. US.*—(հետաքրքրւած) Ասա, շուտ ա-  
սա, այդ ի՞նչ ծրագիր է:

Իվ. Իվ.—Ո՞չ, տիրուհի, առայժմ չեմ ա-  
սիլ: Քո բերանում լօբի չի թրջւի, իսկոյն այս-  
տեղայնտեղ բերանիցդ խօսք կը թոցնես:

*SUS. US.*—(վիրաւորւած) Լաւ, մի ասիլ,  
շատ էլ չեմ հետաքրքրւում: (պատզա) Այդ շատ  
էլ սարօրինակ է, ինձանից, ծնողից՝ թագցնել  
այն, ինչ վերաբերւում է իմ դստրին: (քաղցր)  
Դէ լաւ, իվան իվանովիչ, ասա ինդրում եմ:

Իվ. Իվ.—Ո՞չ, ոչ, չեմ կարող: Դու մաղ  
ես, մէջդ ջուր չի պահւիլ, իսկոյն չաշանակի  
նման կը սկսես դէս ու դէն պատմել:

*SUS. US.*—Դէ լաւ, չեմ ուզում իմանալ,  
միայն թէ մի սկսիլ կառապանների նման հայ-  
նոյել: (Պատզա: Քաղցրովթեամբ) Դէ լաւ, ի-  
վան իվանովիչ, թանկագինս, սիրելիս, ասա:

Իվ. Իվ.—(վճռականապէս) Մի գայթակղեց-  
նիր: Ասացի ոչ, ուրեմն չեմ ասիլ: (Մտնում են  
Վէրօչկան եւ Սօնիչկան)

## ՏԵՍԻԼ 2

Առաջիններ, Վէրօջկան և Սօնիջկան

Վէ.—(արագ) Շնորհաւորում եմ, հայրիկ,  
ձեր անւանակոչութիւնը և ցանկանում եմ ձեզ  
ամեն բարիք: (համբուրում է նրան եւ նրա ձեռքը)

*ՍՕՆ.*—(աւելի արագովթեամբ) Շնորհաւո-  
րում եմ, հայրիկ, ձեր անւանակոչութիւնը և  
ցանկանում երկար, երկար կեանք: (նոյնպէս  
համբուրում է) Ահա ձեզ ձեր տօնին ինձնից ըն-  
ծայ—իմ ձեռագործը: (տալիս է գործած փողի  
քսակ):

Վէ.—Ինձնից էլ ստացէք: (նոյնպէս փողա-  
ման տալով)

Իվ. Իվ.—Խելքահան արիք ինձ բոլորովին:  
(ցոյց տալով հասարակովթեան քսակները) Փո-  
ղամաններ շատ, իսկ փող քիչ: (զբաղտում է իվ  
գործով)

*SUS. US.*—Այս ի՞նչ է, այսպէս գոյնզգոյն  
էք հագնւել:

Վէ.—Ինձ, մայրիկ, գոյնզգոյն շորը սա-  
զում է:

*ՍՕՆ.*—Ինձ էլ մայրիկ:

Վէ.—(քըռջը) Ամեննին էլ քեզ չի սազում:  
Դու իմ օրինակին ես յետենում:

*ՍՕՆ.*—Ընդհակառակը, ես առաջինը այս  
շորը հագայ և ոչ թէ դու:

Վէ.—Ո՞չ, ես, իսկ դու յետենում ես:

*ՍՕՆ.*—Բոլորովին էլ ոչ, ես դեռ առաւօ-  
տեան հրամայեցի նաստեային պատրաստել այս  
շորը:

Վէ.—Այդ ես հրամայեցի:

*ՍՕՆ.*—Ո՞չ, ես, ոչ, ես...

իվ. իվ.—Դադարեցէք աղմկել։ Ի՞նչ էք  
վիճում։

ՏԱՏ. ԱՏ.—Ներս մտան թէ չէ, իսկոյն  
սկսեցին կուել։ Աւելի լաւ է խօսենք, վեսացու-  
ների մասին։

Վէ. { —Այս, այս, խօսենք,  
ՍՕՆ. (

իվ. իվ.—Այս, ես շատ կուզէի իմանալ,  
մտադիր էք դուք գնալու բօտմիստը կուլիկո-  
վսկուն, թէ չէ։

Վէ.—Ի՞նչ է, հայրիկ, նա արդէն խնդրել  
է իմ ձեռքը։ (իբրեւ ամաչելով) Ախ Աստած,  
և ինչպէս կատարեց այդ ամենը։

ՍՕՆ.—(նախանձով) Միթէ՞ նա առաջար-  
կութիւն է արել... այնպէս զարմանալի է...

իվ. իվ.—Դէ. չաչանակներ, բաւական է,  
լուցէք էլի՞... (Վէրոշկին) —Կուլիկովսկին ոչ մի  
առաջարկութիւն չի արել և երեկի չի էլ անիլ,  
այնուամենայնիւ այսպէս թէ այնպէս, դուք  
պէտք է գնաք նրան։

Վէ.—Ես, հայրիկ, շատ ուրախ կը լինեմ,  
միայն թէ...

իվ. իվ.—Ի՞նչ «միայն թէ»... երբ ուրախ  
ես, ուրեմն և գնա նրան։ Աշխատիր, բոլոր հը-  
նարքները բանեցրու, զայթակղեցրու, սիրահա-  
րեցրու վրադ... իսկ դու միայն աչքերդ ես խա-  
ղացնում և քնքոյշ ոօմանսներ երգում, իսկ մէ-

ջը բան չը կայ, օգուտ չը կայ։ Ես ձեզ յայտ-  
նում եմ, Վէրա իվանովսա, այնպէս արէք, որ  
կուլիկովսկին ձեզ գողանայ։

ՏԱՏ. ԱՏ.—Ախ, ախ, իվան իվանովիչ, այդ  
ի՞նչպէս կարելի է։

Վէ. (—Այդ ի՞նչպէս կարելի է, հայրիկ,  
ՍՕՆ. ( ամօթ է, չէ։

իվ. իվ.—(լուզ տօնով) —Այս, ես ցանկա-  
նում եմ, որ դուք գնաք նրան, բայց որովհետեւ  
նա ձեզ առաջարկութիւն չի անում, ուստի ցան-  
կանում եմ, որ նա ձեզ գողանայ։

Վէ.—Ես, ճիշտն ասած, հայրիկ, ի՞նչպէս  
անեմ, որ...

իվ. իվ.—Շատ հասարակ կերպով. Կուլի-  
կովսկին շատ վճռական մարդ է և միկնոյն ժա-  
մանակ զինւորական, նրան բացատրիր որ դու  
սառնասիրտ չես դէպի նա, որ դու մինչեւ ան-  
գամ սիրահարւած ես նրա վրայ, աւելացրու  
որ դու խոստովանել ես այդ քո մօրը, որ նա  
և ես համաձայն չենք այդ ամուսնութեան, գըր-  
գուիր նրան և նա էլ ստիպւած կը գողանայքեզ։  
Նա ինքնասէր մարդ է։

Վէ.—(ամաչելով) Ես փորձել եմ, հայրիկ,  
նրան այդ ասելու։

իվ. իվ.—Փորձել ես... Եսկ ի՞նչ ասաց նա։

Վէ.—Ոչինչ, կարծես նա բան չէ հասկա-  
նում։

իվ. իվ.—ԱՌ... բան չի՞ հասկանում։ Ուրեմն մենք նրան կը ստիպենք հասկանալ։ Մենք նրան ցոյց կը տանք թէ ինչպէս կարելի է կէս տարի ապրել մի ընտանիքում, ուր երիտասարդ աղջիկներ կան... (յուզլած ման է զալիս) ՈՇ... չի կարելի։ Նրա հետ պիտի կտրուկ լինել. ես ինչպէս ձեզ ասացի՝ կազմած ունեմ մի հանճարեղ ծրագիր և ես նրան ի կատար կածեմ, կը գործադրեմ, սատանան տանի։

ՏԱՏ. ԱՏ.—Ով գիտէ, էլի ինչ ես հնարել, իվան իվանովիչ։

իվ. իվ.—Ինչ հնարել եմ, այն էլ կը գործադրեմ։ Կը վարւեմ այնպէս, ինչպէս վարւեց ինձ հետ քո հանգուցեալ քեռին։

ՏԱՏ. ԱՏ.—Ինչու յիշել հրաշալի անցեալը։  
իվ. իվ.—Նրա համար, որ ահա սրանց հարկաւոր է մարդու տալ, և կը տամ, երկուսին էլ կը տամ։

ՎԵ. (—Թանկագին հայրիկ... (համբու-  
ՍՕՆ. ( րում են հօրը եւ պտտեցնում։

իվ. իվ.—Սօնիչկա, հեռացիր այստեղից։  
ՍՕՆ.—Ինչու հայրիկ։

իվ. իվ.—Այդպէս հարկաւոր է. խօսակցութիւնը քեզ չի վերաբերւում, ուրեմն դու էլ չը պէտք է լսես։

ՍՕՆ.—Ես չեմ լսի, ես ականջներս կը փա-  
կեմ։

իվ. իվ.—Գիտեմ ես այդ փակելը, փռքըիկ ծակ կը թողնես մատերիդ արանքում, որ լսես։  
ՎԵ.—Գնա, գնա, Սօնիչկա, մի խանգարիլ։ (քօթում է նրա մէջըին)

ՍՕՆ.—Որքան վատն էք։ (գնում է)

իվ. իվ.—Ես ահա ինչ եմ մտածել. միայն նախազգուշացնում եմ ձեզ, որ իմ ծրագիրը գաղտնիք է պահանջում... (մատը շրթումքներին դնելով) սարսափելի, խոր գաղտնիք։ Դու, Տատեանա Ստեպանովսա, քո լեզուն մի տեսոկ կապիր թոկով (Վէրօշկին)։ Դու, ես գիտեմ, չես ասիլ ոչ ոքին, որովհետեւ այդ քո օգուտն է պահանջում։

ՎԵ. ՍՏ.—Կը լուենք, մի անհանգստանալ, խնդրում եմ։

իվ. իվ.—Ուրեմն լսեցէք։ (Վէրօշկին) Ահա բանն ինչումն է։ (շորս կողմը նայելով) Լսեցէք. դու Վէրա աշխատիր այսօր գուր գալ կուլիկովսկուն, սիրահարութիւն արա նրա հետ մի թեթև կերպով և յետոյ նրա հետ տեսակցութիւն նշանակիր նրա մօտ՝ սենեակում։

ՏԱՏ. ԱՏ.—ԱՌի, իվան իվանովիչ, միթէ այդ կարելի է, ես մայր եմ, ես թոյլ չեմ տալ։

ՎԵ.—ՈՇ, ոչ, ոչ մի կերպ։

իվ. իվ.—Դէ մի սպասեցէք է, թոյլ չէք տալիս, որ վերջացնեմ, շաշանակներ։

ՏԱՏ. (—Ո՛չ, ոչ, ոչ մի պայմանով: Տե-  
զէ. (սակցութիւն...  
ԻՎ. ԻՎ.—(ոտը յատակին խիելով) Դէ մի  
թոյլ տւէք, ասեմ, յետոյ Է... Լսիր, Վէրա, գու  
նրան տեսակցութիւննշանակիր նրա սենեակում  
և գնա նրա մօտ ժամը մօտաւորապէս 12-ին,  
իսկ մենք կը սկսենք փնտռել քեզ այստեղ և յե-  
տոյ ամբողջ խմբով կը դիմենք կուլիկովսկու  
սենեակը, աւելի վախեցնելու համար ատրճա-  
նակս էլ հետո կը վերցնեմ: Կը մտնենք և յե-  
տոյ նրան կը ստիպենք ամուսնանալ, Հասկա-  
ցածր:

ՏԱՏ. ԱՏ.—Այժմ ես հասկացայ: Ես ինքս  
էլ ուզում էի առաջարկել այդ ծրագիրը, բայց  
շարունակ մոռանում էի:

Վէ.—Այդ մինչև անգամ շատ ուրախ կը  
լինի, սիրելի հայրիկ: (համբուրում է հօրը)

(Դռներից երեսում է Սօնիշլի գլուխը)

ԻՎ. ԻՎ.—Ահա տեսամ, իսկ սկզբից չէիք  
ուզում: Զէ որ ես ձեզ ասում էի հանձարեղ  
ծրագիր է:

ՏԱՏ. ԱՏ.—Այս, այդ անպատճառ կը յա-  
ջողւի, ես ինքս էլ ուզում էի առաջարկել մի-  
ևնոյնը:

ԻՎ. ԻՎ.—(հանդիսաւոր) —Եւ այդպէս, աղ-  
ջիկս, յիշիր, որ այսօր հանդիսաւոր օր է, այսօր  
պիտի վճռւի քո ճակատագիրը, բոլորը քեզանից

է կախւած, աշխատիր միայն օգտւել հօրդ այդ  
հանձարեղ ծրագրից և գու կը գնաս զինւորա-  
կանի, մի լուրջ մարդու:

Վէ.—(համբուրելով հօրը) Մերսի, մերսի,  
սիրելի, թանկագին հայրիկ:

(Սօնիշլի գլուխը ծածկում է)

ԻՎ. ԻՎ.—Իսկ առայժմ ես կը գնամ և կը  
փոխեմ հագուստս, իսկ գուք մնացէք այստեղ և  
հիւրերին սպասեցէք:

ՏԱՏ. ԱՏ.—Գնա, գնա... և իսկապէս ժա-  
մանակ է: (իվան իվանովիշլ զնում է, Վէրօշկան  
գրկում է մօրը եւ բէփշում նրա հետ)

Վէ.—(համբուրում է մի քանի անգամ մօրը)  
Մերսի, մերսի, մայրիկ, ես շատ զգոյշ կը լի-  
նեմ:

ՏԱՏ. ԱՏ.—Դէ, տես, յիշիր, չը մոռանաս-  
(իվան իվանովիշլ զալիս է սեւ սիրտիկ հազած)

### ՏԵՍԻԼ Յ

Առաջիններ և իվան իվանովիշլ

ԻՎ. ԻՎ.—Ահա և պատրաստ եմ: Կը սպա-  
սենք թանկագին հիւրերին: Դէ աշխատիր, Վէ-  
րա, կարգին գլուխ բերելու ամենը: Զը սխալ-  
ւես:

Վէ.—Կաշխատեմ, հայրիկ, լաւ կը կար-  
գաղըեմ:

**ՏԵՍԻԼ 4****Առաջիններ և ՍԻՄԵՈՆ****ՍԻՄ.** — Կօմանդիրը:**ԲՈՂՈՐԾ** — Գալլս է:**ՍԻՄ.** — Ամենաին էլ ոչ:**ԻՎ.** ԻՎ. — Ուրեմն ինչ, յիմար:**ՍԻՄ.** — Արդէն եկել է: (ցոյց տալով մտնող կոլիկովսկուն) Ահա:**ԻՎ.** ԻՎ. — Թիւ, յիմար: (Սիմեոնը գնում է)**ՏԵՍԻԼ 5****Առաջիններ և ԿՈՒԼԻԿՈՎՍԿԻՑ****ԻՎ.** ԻՎ. — Շնորհ բերէք, շնորհ բերէք, թանկագին հիւր:**ՏԱՏ. ԱՏ.** — Իսկ մեր աչքերը ջուր կտրւեցին սպասելուց: (Կոլիկովսկին քարեւում է ամենըին)**ՎԵ.** — (կոտրատելով) Այո, մենք ձեզ երկար սպասեցինք:**ԿՈՒԼ.** — Ներողութիւն: (Իվան Իվանովիչին) Թոյլ տւէք շնորհաւորել ձեզ ձեր տօնախմբութեան առիթով:**ԻՎ.** ԻՎ. — Շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ: Ապա մւր է ձեր ընկերը:**ԿՈՒԼ.** — Նա իսկոյն կը դայ, նրան բռնեց հրէայ Վիտմանը, որ բերել է ծախելու նրան մի ձի և 2 որսկան շներ:**ԻՎ.** ԻՎ. — Օ՛ի, այդ Վիտմանը, ամեն տեղ հասնում է նա: Դուք ինձ ներեցէք, գնամ կարգադրութիւններ անեմ, մէկ էլ տեսար հիւրերը եկան, յետոյ դժւար կը լինի:**ԿՈՒԼ.** — Օ՛, ես առանց ձեզ այսպիսի ընկերութեան մէջ չեմ տիսրիլ:**ԻՎ.** ԻՎ. — Յոյս ունիմ: (գնում է, Վէրօշկին նշաններ անելով)**ՏԱՏ. ԱՏ.** — Միշտ դուք սիրալիր էք:**ՎԵ.** — Մինչև անգամ չէք վախենում մեզ հետ տիսրելուց:**ԿՈՒԼ.** — Թոյլ տւէք, ինչպէս կարելի է:**ՎԵ.** — (կոտրատելով) Այդ միայն կոմպլիմեններ են:**ԿՈՒԼ.** — Ամենաին... միայն ճշմարտութիւն:**ՏԱՏ. ԱՏ.** — Զէք լսել որեէ նորութիւններ:**ԿՈՒԼ.** — Առանձին ոչինչ: Երեկ միայն նամակ ստացայ շտաբից, գանձապահն է գրում, որ բժշկի կինը փախել է:**ՏԱՏ. ԱՏ.** — Միթէ:**ՎԵ.** Ո՞ւմ հետ:**ԿՈՒԼ.** — (թեթեւ զլուկ տալով եւ շպօնները չնիկացնելով) — Երկրորդ էսկադրօնի կամանդիրի հետ:

ՏԱՏ. ԱՏ.—Լաւ սիւրպիկ է ամուսնու համար:

ԿՈՒԼ.—Հըմ... ի հարկէ, անակնկալ է:

Վէ.—Իսկ ուրիշ նորութիւն:

ԿՈՒԼ.—Յետոյ սաստիկ շատ են խօսում մեր դնդի տեղափոխման մասին:

Վէ.—(վախցած) Ճիշտ, ուր:

ԿՈՒԼ.—Ուր կը հրամայեն:

ՅԱՏ. ԱՏ.—Ռփառս, մենք այնքան ենք ընտելացել ձեզ, ինչպէս մի ազգականի, մինչև անդամ ձեզ օտար էլ չենք հաշւում:

Վէ.—(քնրոյշ) Ա՛խ, այո, այդ ճիշտ է:

ԿՈՒԼ.—(բարձրանալով տեղից եւ գլուխ տալով) Խոնարհաբար շնորհակալ եմ: Դուք այնքան ուշադիր և սիրալիր էք դէպի ինձ, որ ես էլ ցաւում եմ, եթէ մեզ տեղափոխեն այստեղից:

Վէ.—(Արագ) Միթէ ցաւ կը պատճառէր: Այս:

ԿՈՒԼ.—Ի՞սարկէ, մի կողմից սովորութիւնը, միւս կողմից էկօնոմիական հաշիւը:

ՏԱՏ. ԱՏ.—Միայն:

Վէ.—Եւ միայն այդ, միթէ:

ԿՈՒԼ.—Օ՛, ոչ, միւս բաների մասին... (նայելով Վէրօշկին) լուսմ եմ:

ՏԱՏ. ԱՏ.—Ինչու լոել, ես չեմ հասկանում, պարզախօս եղէք, Ալեքսէյ Պետրովիչ:

Վէ.—(աշքերը խաղացնելով)—Այո, իհարկէ:

ՏԱՏ. ԱՏ.—(շեշտելով) Խնդրում եմ ձեզ, պարզ եղէք, Ես պէտք է ձեզ ասեմ, որ Վէրօշկան ոսկի աղջիկ է: Մի կարծէք, որ ես մայր եմ, միակողմանի կը լինեմ, օ, ոչ, նա այնքան համեստ, բարի, քնքոյշ և ամաչոտ աղջիկ է որ...

Վէ.—Ես էլ խնդրում եմ ձեզ, պարզախօս եղէք:

ԿՈՒԼ.—(վախցած) Ո՛չ, ես այդ այնպէս... զգացւած ասացի... (ըեմի յետեւ կառվի զանգակների ծայր):

ՏԱՏ. ԱՏ.—Կարծեմ հիւրեր եկան:

Վէ.—Եւ ինչ անժամանակ, խանգարեցին մեզ: (Կովիկովսկուն) —Գնանք անկիւնի սենեակը և խօսենք:

ԿՈՒԼ.—(վեր է կենում) Մեծ ուրախութեամբ: (կողմ) Կարծեմ թակարդն ընկայ: (զընում են ծախ զոնով) (Միջին զոնից մտնում են քժիշկը եւ վերահսկիչը):

## ՏԵՍԻԼ 6

ՏԱՏԵԱՆԱ ՍՏԵՊԱՆՈՎՆԱ, ԲԺԻՇԿ և ՎԵՐԱՀՍԿԻՉԸ

ՎԵՐ.—Պատիւ ունեմ, Տատեանա Ստեպանովնա, շնորհաւորելու ձեր ամուսնու տօնախըմբութիւնը: Յանկանում եմ նրան ամեն բարիք և մասամբ նորին: (համբուրում է նրա ծեռքը)

ԲԺ. — Եա՞ էլ նոյնն եմ ցանկանում, տայ Աստւած, ու շուտ շուտ բժշկւէք... այսինքն... ուշ ուզում էի ասել: (Համբուրելով նրա ծեռքը) Ներեցէք, տիրուհի, ինչ որ մտքերս մէկ մէկու են խառնել:

ՏԱՏ. ՄՏ. — Զարմանալի չէ բարեկամս, զարմանալի չէ, լսել եմ ձեզ հասած դժբաղդութեան մասին, ափսոսում եմ, խղճում եմ ձեզ:

ԲԺ. — (Չը հասկանալով) Միշտ չէ պատահում, բայց հէնց որ մի որևէ տեղ եմ գնում, այն ժամանակ:

ՏԱՏ. ՄՏ. — Ասացէք խնդրեմ: Հէնց որ դուք ոտքը տանից դուրս էք դնում, նա էլ միւս կողմ... Եւ երիտասարդ էլ կին չէ, բայց գլխում այդպիսի քամիներ ունի:

ԲԺ. — Հատ քամի է այսօր դուրսը, սաստիկ քամի:

ՏԱՏ. — (Վեսահսկիչին) Մի բան չեմ հասկանում, այդ ինչպէս է որ այդպիսի լուրջ և տարիքով կինը, ինչպիսին է Զինադիա Աֆանասևնան, կարող էր այդպիսի բան անել, վերցնել և փախչել էսկադրօնի կօմանդիրի հետ:

ՎԵՐ. — Առաջին անգամն եմ լսում... չի կառող լինել մասամբ նորին:

ՏԱՏ. ՄՏ. — Մեզ Ալեքսէյ Պետրովիչն ասաց:

ՎԵՐ. — (Ծիծառելով) Այդ նրա կինը չէ փախել, այլ քաղաքային բժիշկի. նա երիտասարդ

և սիրուն, մասամբ նորին, տիկին է:

ՏԱՏ. ՄՏ. — Ի՞նչ էք ասում, իսկ ես մէկ մէկու խառնեցի: Դեռ լաւ է, որ մեր բժիշկը մի քիչ խուլ է,

(Մտնում է Ստուպինը)

### ՏԵՍԻԼ 7

#### Առաջիններ և ԱՏՈՒՊԻՆ

ՏԱՏ. ՄՏ. — (Վեր կենալով, հիլզերին) Թոյլ տւէք ծանօթացնել, մեր կենացողներից՝ Գավրիլօ Միխայլովիչ Ստուպին, հրաշալի օֆիցեր բոլոր կողմից:

ՄՏ. — (բարեւելով բոլորին, մօտենում է Տատեանա Ստեպանովինային) Շնորհաւորում եմ ձեր, Տատեանա Ստեպանովսա, ամուսնու տօնախմբութիւնը: Տայ Աստւած ամենայն բարիք նրան: Իսկ ուր է կուլիկովսկին:

ՏԱՏ. ՄՏ. — Նա այնտեղ, միւս սենեակումն է Վէրօչկի հետ միասին: Թոյլ տւէք, թանկագին հիւրեր, խնդրել ձեզ սեղանատուն: (աջ դուռ ցոյց տալով)

ԱՄԵՆՔԸ — Ուրախութեամբ: (գնում են ամենքը աջ, ձախից մտնում է Կովկասկին)

## ՏԵՍԻԼ 8

ԿՈՒԼԻԿՈՎԱԿԻՅ (միայնակ, փնտում է իր զիմարկը)

ԿՈՒԼ. — Այս ժւր է կորել գլխարկս: (Նայելով բազկաթոռների տակը) Այս ինչ զարմանաւու բան է, գլուխս կորցրել եմ: Ճարահատեալ կը կորցնես, չէի մտածում, չէի երկակայում, չէի ցանկանում և յանկարծ վէրօչկան տեսակցութիւն է նշանակում: Դէ արի և էշը ցեխից հանիր: Եւ բոլորի պատճառը իմ ամոչկոտ բնաւորութիւն ունենալն է, պէտք է բացարձակ երեսին ասէի, թէ վէրա իվանովնա, չեմ ցանկանում, մի գաք... Դէ գնա այժմ և գլուխ հանիր: Դեռ խօսք էլ վերցրեց, որ Ստուպինին այս զիշեր մի տեղ ուղարկեմ: Ո՛չ, աւելի հեշտ կը լինէր ինձ համար դիրքերում լինել, թշնամու զընդակների դէմ առ դէմ, քան այս դրութեան սէջ: (Մտածելով) Զէ, աւելի լաւ է գնամ սենեակս և փակւեմ: (Մտնում է Նաստեան վառած մոմեր ըերելով):

## ՏԵՍԻԼ 9

ԿՈՒԼԻԿՈՎԱԿԻՅ և ՆԱՍՏԵԱ

ԿՈՒԼ. — Նաստեա, սիրելիս, լոյս արա մի, գլխարկս գտնել չեմ կարողանում:

ՆԱՍ. — է՞ն, պարոն, պարոն, ամօթ ձեզ, կորցրելէք ձեր գլուխը: (լուսաւորելով նրան) Նայեցէք, այս գիշեր մի ուրիշ բան էլ չը կորցնէք: ԿՈՒԼ. — (յանկարծ) Ի՞նչ կարող եմ ես կորցնել: (գտնելով գլխարկը) Այ թէ որտեղէ ընկել նա: Դէ ասա:

ՆԱՍ. — (Նայելով շորս կողմը) Այս գիշեր ձեզ վրայ յարձակում կը լինի:

ԿՈՒԼ. — (վախեցած) — Ի՞նչպէս թէ:

ՆԱՍ. — (ծիծաղելով) Ա՛յ, ինչպէս արջի վրայ, կամ գազանի:

ԿՈՒԼ. — Արջի վրայ, գազանի վրայ:

ՆԱՍ. — (Չորս կողմը նայելով) Այս... հիւրեմին կը հաւաքեն և յանկարծ վրայ կը տան, կը բռնեն ձեզ մեր օրիորդի հետ միասին և կը պատկեն ձեզ:

ԿՈՒԼ. — (վախեցած) Ի՞նչ ես ասում, Նաստեա, միթէ, իրաւ ես ասում:

ՆԱՍ. — Դեռ ստել չեմ սովորել: Ինձ այդ ասաց օրիորդը, Սօֆիա իվանովսան ծածուկ, գաղտնի:

ԿՈՒԼ. — (գլուխը ըռնելով) Ա... ահա թէ ինչ: Ուրեմն գուք, վերա իվանովսա, ուզում էիք ինձ թակարդի մէջ զցել... չէ... պէտք է փախչել այստեղից... (շտապ շտապ խօսելով) Ահա ինչ, Նաստեա, ասա քո պարոններին, որ վառողի արկղը բռնկւեց, որ ձիաները բաց ընկ-

նելով դաշտը փախան, որ բնակարանիցս գնդի գրոշակն են գողացել, որ 5 հոգի ինքնասպանութիւն են գործել, և որ քօտմիսարը գնաց, ասա, և այլաս չի վերադառնալ: Դէ, ցտեսութիւն, ես գնում եմ, գնում եմ: (արագ դուրս է վազում)

ՆԱԽ.—Ահա... վախեցաւ և փախաւ... (քայլերի ձայն) Ով որ գալիս է, ի՞նչ ասաց նա ինձ... բոլորը մոռացայ:

## ՏԵՍԻԼ 10

ՆԱՍՏԵԱ և ԻՎ. ԻՎԱՆՈՎԻՉ

ԻՎ. ԻՎ.—Ո՞վ գնաց այստեղից:

ՆԱՏ.—Այդ Ալեքսէյ Պետրովիչը գնաց: (առաջ) Նրանց գնդում մեծ դժբաղդութիւն է պատճել, բոլոր ձիաները բռնկւել են... (ծեւերով ցոյց տայով) Վառօդի արկղը անտառն է փախել, գնդի գրոշակը ինքնասպանութիւն է գործել, իսկ զինւորներին գողացել են: (վազում է դուրս)

ԻՎ. ԻՎ.—(թքեռվ) Թիւ, սատանան տանի, բոլորովին բան չը հասկացայ... ովոր ինքնասպանութիւն է գործել, ում որ գողացել են... բան չեմ հասկանում: (մատը թափահարելով դէպի կոլիկովսկու զնացած դուրը) Ո...՝ չ... դումեզանից, սիրելիս, փախչել չես կարող... չես կարող:

Ա Ա Ր Ա Գ Ւ Յ Ռ

## Բ. Ա. Ր Ա Ր Ի Ա. Ծ

(Օֆիցերների ընակարանը: Անշուք սարքած աենեակ, անկիւնում թամբեր, մտրակներ, հրացաններ, թրեր, հագուստներ, կօշիկներ եւ այլ զինւորական պիտոյքներ: Մենեակի մէջ տեղը բազմոց, բազկաթոռներ: Անկիւններում պայուսակներ, արկղներ: 2 պատուհան, դէմ առ դէմ 2 դուռ, աջ դուռը ապակի է, որ պատշամբն է տանում—ծախ դուռը նախասենեակ):

## ՏԵՍԻԼ 1

ԿՈՒԼԻԿՈՎՍԿԻՅ, ՊԱՆՏԵԼԵՅՈՆ և ԴԵՄԻԴՈՎ: (վերցնում են արագ արագ ծանր եւ մեծ իրեր, կահկարափ, եւ նախասենեակի դրան առաջ բարիկադ են սարքում)

ԿՈՒԼ.—(Դեմիդովից վերցնելով աթոռ)՝ Տնւր, Դեմիդով, տնւր: (վերցնում է Պանտելէյմոնից աթոռը եւ դնում) Լաւ է փակւած դուռը:

ԴԵՄ.—Լաւ պնդացրինք,

ՊԵՆ.—(թամբը տալով)՝ Ահա,, սա էլ դըրէք ձերդ գերազանցութիւն:

ԿՈՒԼ. — (թամբը ղնելով) Շտապեցէք, շտապեցէք, տղերք: (պայտասակը եւ մի աթոռ էլ ղընելով) Դէ այժմ պատշգամբի դուռը:

ԴԵՄ. (— և ուսմենք, ձերդ գերազանցութիւն: ՊԱՆ. ( քաշելով բերդում են քաղկաթոռը, արկող եւ 2 աթոռ):

ԴԵՄ. — (նրանց օգնելով) — Համարձակւում եճաւելացնել ձերդ գերազանցութիւն, որ իզուրէք այդքան նեղութիւն քաշում, կալւածքում գողերի մասին լուր չը չկայ:

ԿՈՒԼ. — (խիստ) Առանց խօսակցութիւնների: Այժմ տղերք, ահա ինչ. ես կը պառկեմ մահճակալի վրայառանց հանւելու, դուք էլ պառկեցէք այստեղ, յատակի վրայ, նոյնպէս առանց հանւելու: Մոմերը հանգցրէք, Զը քնէք, չը խօսէք, մի խօսքով այսնպէս, ինչպէս որ դիրքերի վրայ, թշնամու հանդէպ: Եթէ ով որ դուռը ծեծի, չը բացել և չը խօսել: Իսկ եթէ սկսեցին դուռը կոտրել, այն ժամանակ իհարկէ պէտք է պաշտպանւել, ահա, ամեն մէկիդ մի մի մտրակ: (պատից 2 մտրակ վերցնելով, տալիս է նրանց) ՊՈՐՈՎՃԻԼ Ստուպինը պիտի գայ հիւրատեղից, նայեցէք, միանգամբից ներս չը թողնէք, ձայնին չը հաւատաք. ձայնը կարելի է նմանեցնել: Դու Դիմիդով, կամաց կամաց կը մօտենաս պատըշգամբին, լուսնեակ դիշեր է, կերեայ, կը նայես և կը տեսնես նա է, թէ չէ: Նայեցէք որ

Ստուպինի յետեկց մի ուրիշն էլ չը թռչի վերև: Հասկացաք:

ԴԵՄ. (— Հասկացանք, ձերդ գերազանցութիւն: ՊԱՆ. (

ԿՈՒԼ. — Ուրեմն լաւ: Այժմ ճրագը հանգցը և պառկեցէք: Մի բան փոեցէք ձեր տակը: (մօտենում է մահճակալին եւ պառկում վերմակով: Պանտելէյմոնը հին գորզը փոնելով զետնին՝ պառկում է վրան տնքալով: Դեմիդովը հանգցնելով մոմը՝ պառկում է նրանից մի քիչ հեռու, թուրք սաստիկ չըրըխկացնելով)

ԴԻՄ. — ԱՌ, սատանան տանի քեզ:

ԿՈՒԼ. — ԱՌ, Դեմիդով, տեսնում ես ինչ աղմուկ ես հանում:

ԴԵՄ. — Ներեցէք, ձերդ գերազանցութիւն, այլ ևս չեմ անի:

ԿՈՒԼ. — Ի սէր Աստծոյ, զգոյշ եղիր, աղմուկ չը հանես:

ԴԵՄ. — Լսում եմ: (շոտ է զալիս միւս կողքի վրայ, նորից աղմուկ հանելով) ԱՌ սատանան տանի քեզ:

ԿՈՒԼ. — Ի՞նչ է պատահել քեզ:

ԴԵՄ. — Ներողութիւն, ձերդ գերազանցութիւն, ներեցէք: Թոյլ տւէք ինձ նրան փաթաթել շորով, որ ձայն չը հանի:

ԿՈՒԼ. — Զէ մէկ: Կը սկսես մթնում փաթա-

թել, աւելի աղմուկ կը հանես, չանգիստ պառկիր, պրծաւ գնաց:

ՊԱՆ.—Պառկեցէք հանգիստ, ահա և բոլորը:  
ԴԵՄ.—Ռուանց քեզ էլ գիտեմ, յիմար: (լըս-  
տում է դրան քաղից: Կովիկովսկին արագ պլուխը  
ծածկում է վերմակով)

ԴԵՄ.—(ոտքերի ժայրերով կամաց մօտե-  
նում է Կովիկովսկուն) Զերդ գերազանցութիւն,  
դուռն են ծեծում.

ՊԱՆ.—(պառկած տեղից) Այս, ճիշտ: Է. այդ  
երկի պօրուչիկն է,

(յետազայ խօսակցութիւնը կատարում է շշովով)

ԴԵՄ.—Զերդ գերազանցութիւն, պօրուչիկ  
Ստուպինն է եկել:

(դրան քաղիցը սաստկանում է)

ԿՈՒԼ.—(կամաց—կամաց վերմակը պլից  
քաշելով)—Ես քեզ ի՞նչ ասացի, մոռացմբ ար-  
դէն:

ԴԵՄ.—Ներեցէք, ձերդ գերազանցութիւն,  
իսկոյն կը նայեմ: (գնում է պատշգամքի մօտ,  
յետ է ուզում քաշել բարիկադան, վերեւի ամոռոք  
եւ պայուսակը պլուխը են) Ա՛խ, սատանայ...  
(Դուռը սկսում են ծեծնել թրի ծայրով)

## ՏԵՍԻԼ 2

Առաջիններ և ՍՏՈՒՊԻՆ (Ճայնը)

ՍՏ.—Դէ, բացէք է, սատանան ձեզ տանի:  
ՊԱ.Տ.—(վեր է կենում եւ մօտենում Կովի-  
կովսկուն) Այդ պօրուչիկն է եկել, ձայնից իմաց-  
ուում է, կը հրամայէք ներս թողնել:

ԿՈՒԼ.—Ոչ, ոչ, ոչ... (Դեմիդովին) Ուշա-  
դրութեամբ նայիր: (Դեմիդովը ապակու միջով  
նայում է դուրս)

ՍՏ.—Պանտելէյմոն, ինչու չես բացում,  
անպիտան, գու երկի դարձեալ հարբած ես:

ՊԱ.Ն.—(քաշը ծայնով)—Ոչ, ձերդ գե-  
րազանցութիւն, ես բոլորովին զգաստ եմ:

ԿՈՒԼ.—Լոիր, աւանակ, ինչպէս է բղաւում:  
(Դեմիդովին) Դէ, ով է, Դեմիդով:

ՍՏ.—Ինչու չես բացում ուրեմն, աւազակ:  
ՊԱ.Ն.—(ուժեղ ծայնով) Զեր կամքն է, ձերդ

գերազանցութիւն:

ԿՈՒԼ.—(նըան քոթելով) Է՛լի...  
ԴԵՄ.—Երկում է որ պօրուչիկն է:

ԿՈՒԼ.—Զայն տուր նըան, Դեմիդով:

ԴԵՄ.—(մօտենում է Պանտելէյմոնի հետ  
պատուհաններից մէկին, բարիկադը քաշելով, քա-  
ցում է պատուհանը եւ կանչում) Զերդ գերա-  
զանցութիւն, այդ դժւք էք:

ՍՏ.—Ես եմ, ես, ներս թող ինձ, Դեմիդով:  
Երկի այդ աւազակ Պանտելէյմօնը հարբած է:

ՊԱՆ.—(բարձր) Ամենաին ոչ, ձերդ գերա-  
զանցութիւն:

ԴԵՄ.—(դէպի դուրս) Այդ ճշմարիտ, դուք էք:

ՍՏ.—Ի հարկէ ես եմ: Այդ ի՞նչ է, խելա-  
գարւել էք, ի՞նչ է:

ԿՈՒԼ.—(մօտենալով) Այդ դժւ ես, Ստու-  
պին:

ՍՏ.—Ես եմ, ես, ներս թող ինձ, ես բոլո-  
րովին սառել եմ:

ԿՈՒԼ.—Դէ լաւ, մօտեցիր պատուհանին,  
դոներով ես քեզ ամենաին ներս չեմ թողնի:  
Մտիր պատուհանով, դու միայնակ ես, քեզ հետ  
ուրիշ մարդ չը կայ:

ՍՏ.—(պատուհանից ներս է մտնում: Պան-  
տելէյմօնը ծրագ է վառում): Մենակ եմ: Օ՛խ,  
ինչպէս եմ սառել: Ի՞նչ է պատահել ձեզ: (Վեց-  
նում է զիսարկը, հանում է վերարկուն, թուրը եւ  
չորս կողմ նայում) Ա՛, բարիկադաներ, այժմ հաս-  
կանում եմ, հա, հա, հա...

ԿՈՒԼ.—(Հչքով անելով Պանտելէյմօնի եւ Դե-  
միդովի վրայ) Լոիր, խնդրեմ:

ՍՏ.—(շաղունակելով ծիծաղել) Հա, հա, հա...  
Զէ, լաւ սառցըիք ինձ դրսում պահելով: Հոկ-  
տեմբեր է ախր դուրսը, իսկ ես ամառային վե-  
րաբերով եմ: Ուր է ձեր օդին:

ԿՈՒԼ.—Պանտելէյմօն, տնւր օդին (Պանտե-  
լէյմօնը հանում է պահարանից օդին եւ քաժակ-  
ները դարսով սեղանի վրայ):

ՍՏ.—(խմում է) Օ՛խ, ինչպէս եմ սառել:  
ԿՈՒԼ.—(Պանտելէյմօնին) Ի՞նչ ես ցցւել,  
գնա դուրս:

ՍՏ.—Քաշեցէք կահ կարասիքը դռներից:  
Դեմիդով, դու էլ գնա:

ԴԵՄ.—Լսում եմ: (ամեն ինչ քաշում է իր  
տեղը)

ԿՈՒԼ.—Դուք լսեցէք. ոչ մի տեղ չը գնաք  
առանձնասենեակից, այնտեղ եղէք և հսկեցէք,  
ես ձեզ իսկոյն կը կանչեմ: Նայիր, Դեմիդով,  
հեռու չը թողնես գնա Պանտելէյմօնը, քեզ մօտ  
պահիր նրան, որ չը գնայ տանտիրոջ տակից-  
գլխից դուրս տայ:

ԴԵՄ.—Հանգիստ եղէք, ձերդ գերազանցու-  
թիւն, ոչ մի տեղ չեմ թողնիլ: (զնում են)

ԿՈՒԼ.—(ծածկելով դուրը) —Լսել ես նորու-  
թիւն, եղբայր:

ՍՏ.—Լսել եմ, լսել... Նաստեան բոլորը  
պատմեց: Ի՞նչ ես այժմ մտադիր անելու:

ԿՈՒԼ.—Զը գիտեմ, ճշմարիտ... Ահա տես-  
նում ես, վճռել էի պաշտպանւել, իսկ ծէգը-  
ծէգին տեղափոխւել մի ուրիշ բնակարան:

ՍՏ.—Միմիայն... Ո՛չ, ես մի ուրիշ աւելի  
հետաքրքիր բան եմ մտածել:

ԿՈՒԼ.—Ի՞նչ։  
ԱՏ.—Ահա թէ ինչ, մենք կը թողնենք այս-  
տեղ Պանտելէյմօնին, իսկ մենք կը սպասենք  
պատշգամբի վրայ նրանց, ես կը սովորեցնեմ  
Պանտելէյմօնին նրա անելիքը և, երբ բոլորը ներս  
կը թափւին, կը գտնեն Վերօչկին Պանտելէյմօ-  
նի և ոչ քեզ հետ։ Համա։

ԿՈՒԼ.—Կեցցես, շատ լաւ ես մտածել, իսկ  
յետո՞յ։

ԱՏ.—Իսկ վաղը առաւօտեան կը գնանք  
շտաբ, մինչև մի ուրիշ բնակարան կը գտնենք։  
ԿՈՒԼ.—Շատ հրաշալի։

ԱՏ.—Դէ, ժամանակէ, ժամանակ կորց-  
նել չէ հարկաւոր։ (մօտենում է դուան եւ ծեծում)՝  
Էյ, այստեղ եկէք։

### ՏԵՍԻԼ Յ

Առաջիններ, ՊԱՆՏԵԼԵՅՄՈՆ և ԴԵՄԻԴՈՎ

ԱՏ.—Դէ, տղերք, լսեցէք իմ պատւէրնե-  
րը. նախ և առաջ՝ գողեր չը պիտի գան, բարի-  
կադաները դէն հաւաքենք։ (չորսով միասին  
հաւաքում են) Օգնիը և դժւ, կուլիկովսկի։ Շնուտ։  
ԴԵՄ.—Բոլորը իրանց տեղերը դնել, ձերդ  
գերազանցութիւն։

ԿՈՒԼ.—Կահեկարասիքը իրանց տեղերը դը-  
նել, իսկ իրեղէնները պայուսակներում դարսե-

ցէք, վաղը առաւօտեան տեղափոխւում ենք ու-  
րիշ բնակարան։

ԴԻՄ. { — Լսում ենք, (կատարում են)  
ՊԱՆ. {

ԱՏ.—Դէ, շնուտ, շնուտ։ Մէկ, երկու, երեք...  
Դէ, վերջացրիք։

ԴԵՄ.—Համարեա թէ, ձերդ գերազանցու-  
թիւն։

ԿՈՒԼ.—Գնա, Դեմիդով և բացիր ներքենի  
դուռը, բոլորը, երկաթները, աթոռները և նրա-  
տարանները հեռու քաշիր, երբ վերջացնես՝ եկ  
այստեղ։

ԴԵՄ.—Լսում եմ, ձերդ գերազանցութիւն։  
(գնում է, Պանտելէյմօնը շարունակում է դարսել  
իրերը)

ԱՏ.—Այժմ մնում է ամենադժւարը—Պան-  
տելէյմօնին պատրաստել։ (նրան) Էյ, մօտ արի։  
(Պանտելէյմօնը մօտենում է) Ուզո՞ւմ ես Յ բուր-  
լի օղիի փող ստանալ։

ՊԱՆ. — (ուրախ) Ինչու չէ, ձերդ գերազան-  
ցութիւն։

ԱՏ.—Բայց միայն ձրի չէ, գու պէտք է մի  
ծառայութիւն անեմ։

ՊԱՆ.—Կաշխատեմ կատարել, ձերդ գերա-  
զանցութիւն։

ԱՏ.—Բոլոր բանը սրանում է. այս ըոպէ-  
ին այստեղ էր ուզում գալ նաստեան սպիտա-

կեղենը տահնելու, իսկ ես ուզում եմ նրա վրայ մի քիչ ծիծաղել։ Ճրագը կը հանգնենք և բօտմիստրի հետ մենք կը գնանք պատշգամք, իսկ քեզ այստեղ մենակ կը թողնենք, երբ նա կը դայ, մենք էլ ներս կը մտնենք։

ՊԱՆ. — Հասկացայ, ձերդ գերազանցութիւն։

ՍՏ. — Ահա քեզ մի ըռւբլի սկզբից (տալիս է) Միւս 2-ը վաղը կը ստանաս ինձանից, միայն թէ լաւ կատարիր քեզ պատւիրածը։

ԿՈՒԼ. — Միայն դու նրա հետ չը խօսես, թէ չէ նա քեզ իսկոյն կը ճանաչի։

ՍՏ. — Հա, Պանտելէյմոն, դու նրան ոչ մի բառ չասես։ Հէնց որ նա մտնի, դու, դիմաւորիր նրան դռների մօտ և տառ. ս'ս..., յետոյ բեր նրան բազմոցի վրայ նստացըրու, միայն թէ զգոյշ, որ մի որևէ կահակարասիով չընկնի և չը գլորէի, բեր, նստացըրու և ինչ որ նա քեզ ասի, դու միայն ս'ս... արա, կարող ես համբուրել ձեռքը։

ՊԱՆ. — (կոպիտ) Այդ Նաստի ձեռքը։

ԿՈՒԼ. — Իհարկէ, ի՞նչ է, դու չըս կարող։

ՊԱՆ. — Ազատեցէք ձերդ գերազանցութիւն, ես նրա թաթը բոլորովին էլ չեմ համբուրի։

ՍՏ. — Յիմար, դու 3 ըռւբլի ես ստանում այդ բանի համար, չէ։

ՊԱՆ. — Լաւ, ձերդ գերազանցութիւն,

մի անգամ կը համբուրեմ, թող այդպէս լինի, լաւ։

ԿՈՒԼ. — Ա՛յ և խելօք։ Ա՛ո, ինձանից էլ մի ըռւբլի, հաշւից դուրս։ (տալիս է)

ՊԱՆ. — (թագնելով փողը) Խոնարհաբար շընորհակալ եմ, ձերդ գերազանցութիւնից։

ՍՏ. — Դէ, այժմ հագիր իմ վերաբկուն, թուրը և գլխարկու էլ զիր, որ մի փորձ անենք։ (վերցնում է նրան հազգնում։ Պանտելէյմոնը կանգնած է արձանի նման) — Լաւ է, շատ էլ սազում է. Դէ, ես կը գնամ առանձնասենեակը, իսկ դու ինձ գիմաւորիլ։ Յիշում ես... մո... և գրկիր։ (զնում է առանձնասենեակ եւ յետ նայում) — Դէ, սկսիր։

ՊԱՆ. — (ամբողջ ուժով վազում է դէպի նա, ոտքերը եւ թուրը թրիկացնելով, շրիկացնելով եւ բղաւում է) Շշ... և գրկիր։

ԿՈՒԼ. — Եշի գլուխ։

ՍՏ. — Եւ իսկապէս, որքան դու յիմար ես, Պանտելէյմոն, ես քեզ ասացի «գրկիր նրան», այսինքն (ցոյց տալով) ձեռքերով գրկիր։ Իսկ դու ի՞նչ ասացիր։

ՊԱՆ. — (ակշամած) Ես ասացի «գրկիր նրան», այսինքն Նաստեային։

ՍՏ. — Կօշիկներդ էլ մի բանի պէտք չեն, շատ են ձայն հանում։ Այդ ի՞նչ է, — կրունգները փայտից են շինած, կամաց ման արի։ (նո-

ըից զնում է դրան մօտ) Դէեկ, գիմաւորիր ինձ,  
ասա մս... յետոյ մի ձեռքով գրկիր և տար բազ-  
մոցի մօտ, հասկացար:

ՊԱՆ.—Այժմ շատ լաւ հասկացայ, ձերդ գե-  
րազանցութիւն: (կամաց կամաց մօտենում է  
նրան, թեթեւ զրկում եւ ասում) մս...

ՍՏ.—Լաւ է, լաւ... միայն ամուր գրկիր,  
ահա այդպէս: (ցոյց է տալիս ինչպէս) Միայն նա-  
յիր, զգուշութեամբ տար: (մօտենում է բազ-  
մոցին) Լաւ: (Ստուլինը նստում է, Պանտելէյ-  
մօնն էլ նստում է, բայց իսկոյն վեր է թռչու-  
եւ զինտրի նման կանգնում) Դու նստիր, մի վեր  
կենալ:

ԿՈՒԼ.—Այժմ լաւ է:

ՍՏ.—Փորձը վերջացաւ, Պանտելէյմօնը լաւ  
հասկացաւ այժմ:

## ՏԵՍԻԼ 4

Առաջիններ և Դեսիդեր

ԴԵՄ.—Զարչարւեցի, չարչարւեցի, հազիւ  
կարողացայ բանալ դոները, շատ ամուր էիք  
նրանց պնդացըրել: (Պանտելէյմօնին տեսնելով)  
Այս ի՞նչ է, ձերդ գերազանցութիւն, այս ագ-  
ռաւին ինչո՞ւ էք զարդարել:

ԿՈՒԼ.—Պօրուչիկը մի կատակ է հնարել:  
ՍՏ.—(նայելով ժամացոյցին) Շուտով ժա-

մը 11-ն է: Ժամանակ է քաշւել: Կուլիկովսկիյ,  
գնանք: (միասին հազնում են զլիարկները եւ վե-  
րաբերուները)

ԿՈՒԼ.—Գնանք: Դու, Դեմիդով, գնա ձեր  
տուն, միայն առաւտեան ծագը-ծագին այստեղ  
եղիր:

ԴԵՄ.—Լսում եմ, ձերդ գերազանցութիւն:  
Բարի գիշեր: (յետ է դառնում զինտրի նման եւ  
զնում)

ՍՏ.—Իսկ դու, Պանտելէյմօն, հէնց որ մենք  
դուրս եկանք, հանգըրու մոմերը, նստիր և սպա-  
սիր: Մէկ էլ բո յիմար թամբաքուն չը համար-  
ձակւես ծխել: Լսում ես:

ՊԱՆ.—Լսում եմ, ձերդ գերազանցութիւն:  
(դուրս են զնում պատշաճմբ)

ՊԱՆ.—(միայնակ: Նստում է բազմոցի վրայ)  
—Այ, բեզ կեանք, շունը մեզանից էլ լաւ է ապ-  
րում: Գիշեր-ցերեկ հանգստութիւն չունեմ: Այ,  
շունը—որ ուզում է՝ վազում է, իսկ ես: Այս  
բոպէին բոլոր կառապանները, սպասաւորները  
այնտեղ խոհանոցում աղջիկներին գլխներին հա-  
ւաքած—պարում են, իսկ ես ահա այստեղ նստել,  
նաստին եմ սպասում, Զէ, էգուց տանը նստող  
չեմ ես, կը գնամ գինետուն, լաւ է որ փող ունեմ,  
և այսպէս կը հարթեմ, որ քէֆդ գայ: (զնում է սե-  
ղանի մօտ եւ վերցնում պատրաստի ծխախոտ  
եւ ծխում). Մի ծխիր բո թամբաքուն, ասում է,

ի՞նչ է, յիմար եմ որ, ահա քո ծխախոտները  
պատրաստ քթիս տակին, ինչու եմ իմը ծխում։  
(պառկելով դիմանի վրայ)։ Զէ, էլի իմ կեանքը  
բանի նման է։ (մօտենում է սեղանին եւ ուղղա-  
կի շշից ողին խմում)։ Իմ պարոնների հետ դեռ  
կարելի է ապրել միայն թէ ահա պօրուչիկը  
ինձ դուր չէ գալիս, շատ էլհայնոյում է և մէկ  
էլ սա չի գործածում։ (Օղի է լցնում քաժակը  
եւ կու տալիս) Այդ պատճառով էլ յիմար է։  
(մտածելով) Զէ, պէտք է հանգնել ճրագը, թէ  
չէ նաստեան իսկապէս կը ճանաչի ինձ։ (հանգ-  
նում է) Այ, կը ծիծաղենք վրան հա... թէ չէ  
իսկապէս նա շատ է հպարտացել, քիթը վեր քա-  
շել... եւ տեղն է նրան... (պառկում է քաջմո-  
ցի վրայ) Ի՞նչ լաւ կը լինէր, թողնէին մի քը-  
նէի... (Յօրանջում է։ Դուռը ծեծում են) ։ Էհ, սա-  
տանան տանի։ Եկաւ։

## ՏԵՍԻԼ 5

Վերօքկան (մտնում է շալով փաթաթած եւ կանգ-  
նում դռներում։ Բոլոր տեսարանը շշուկով է)

Վէ.՝ Տէր իմ Աստւած, ուր եմ եկել։

ՊԱՆ.՝ (մօտենալով կամաց, նրան)՝ Մ' ո... ։

Վէ.՝ Դուք միայնակ էք։

ՊԱՆ.՝ Մ' ո... (զրկում է նրան եւ քերում

բազկաթոսի վրայ նստացնում, ինքն էլ կողքին  
նստում)։

Վէ.՝ Երկի Պանտելէյմօնը դեռ քնած չէ։

ՊԱՆ.՝ (կողմ) Էհէ, ինձ էլ յիշեց։ (համ-  
բուրում է ձեռքը)

Վէ.՝ Տանել չեմ կարող այդ հարբան Պան-  
տելէյմօնին։

ՊԱՆ.՝ (սրբում է շրթունքները եւ թքում)  
Թիւ... (վերցնում է ձեռքը նրա մէջքից, քայց  
նորից էլի գրկում)։

Վէ.՝ Վերջապէս... ինչպէս գողում եմ, սար-  
սափելի է... Դէ, մի խօսք ասա, սիրում ես ինձ,  
հա... (դնում է զլուկը նրա ուսին) Համբերութիւնս  
կտրւեց մինչև ժամը 11-ը դառաւ և ես եկայ  
քեզ մօտ։ Ասա, դու էլ էիր ինձ սպասում։

ՊԱՆ.՝ Շշ... ։

Վէ.՝ Ի՞նչ ես շարունակ փշշացնում, ես էլ.  
գիտեմ, որ պէտք է կամաց խօսել։ Դէ վերջա-  
պէս ասա... ։

ՊԱՆ.՝ Շշ... ։

Վէ.՝ (կողմ) Ի՞նչ տարօրինակ մարդ է,  
ինքը գայթակեցրեց, բերել տւեց ինձ այստեղ,  
իսկ այժմ միմիայն փշշացնում է։

(դրան յետեւ աղմուկ, ուժեղ թրիթրիկոց)

## ՏԵՍԻԼ 10

Առաջիններ և ՍԱՐԱԾՈՎՑԵՒԻ ձայնը

Իվ. Իվ.—Այստեղ, այստեղ, նա այստեղ է, բռնեցէք նրան:

Վե.—(վեր թուշելով) Ան, հայրս, հայրս... (վեր են թուշում երկուսն էլ եւ մի կողմ քաշում Պանտելէյմոնը վերարկուի փէշով երեսը ծածկում է)

Իվ. Իվ.—(ձեռքին լապտեր, ներս է վազում բղաւելով) Ուր է աղջիկս, ուր է նա: (վայր է ընկնում արկղին կպչելով, ֆօնարը կոտրում է եւ հանգչում)

## ՏԵՍԻԼ 7

Առաջիններ, ՍԱՏ. ՍՏԵՊ, ՎԵՐԱՀԱԿԻՉ, ԲԺԻՇԿ, ՍԵՄԵՈՆ, ՆԱՍԵՅԱ և մի քանի ուրիշ ծառաներ:

Իվ. Իվ.—(բարձրանալով) Սատանան տառի, ոտքս կոտրեցի, կրակ, լոյս տւէք... շնւտ... ուր է իմ աղջիկը: (ծառաները զնում են լոյսի յետելից)

ՍԱՏ.—Զէի սպասում, Ալեքսէյ Պետրովիչ:  
ԲԺԻՇԿ—Լաւ չէ, լաւ չէ...

ՎԵՐ.—(ծիծաղելով) Զը տրաքեց մասամբ նորին ձեր ըանդէվուն, հա, հա, հա...

ՏԱՏ. ՍՏ.—Վէրօչկա, Վէրա... ուր ես դուք Իվ. Իվ.—(խարխափելով առաջ է զնում)

Ուր է իմ աղջիկը. ոչ, յարգելի պարոն, ձեռքիցս չէք պրծնիլ դուք, դուրս չէք պրծնիլ, ես ձեզ դատարան քարշ կը տամ, Սիրիր կաքսութեմ... (Սիրիր բառի վրայ Պանտելէյմոնը դէն է ծգում օֆիցերական շինելը եւ զիսարկը) Կամ թէ ամուսնացէք, միայն վաղն և եթ... Լսում էք, պարոն կուլիկովսկիյ, բայց ուր էք դուք թագ կացել: (ատրճանակը հանելով) Ինչու էք լոել, ո, երբ այդպէս է... (արձակում է ատրճանակը եւ կամաց կամաց առաջ զնալով բղատում: Բոնում է Պանտելէյմոնի օժիքից) —Ա-, ահա թէ դուք ուր էք: (թափահարում է նրան)

ԲՈԼՈՐԸ—Դէ, յանձնւեցէք, պարոն բօմիսուր:

Իվ. Իվ.—Ոչինչ չեմ իմանում, վերջին անգամն եմ հարցնում ձեզ, յարգելի պարոն, համաձայն էք աղջկաս հետ ամուսնանալու թէ չէ:

ՊԱՆ.—(խեղղւած ծայնով) Համաձայն եմ:

Իվ. Իվ.—(բաց թողնելով նրա կոկորդը) Ա-, այդպէս լաւ է: Այժմ հաշտւենք, պարոն կուլիկովսկիյ: Համբուրեցէք ինձ: (քնքոյշ) Համբուրիը ինձ, համբուրիր, փեսաս, իմ թանկագին փեսաս: (երեք անգամ ամուր համբուրում է Պան-

տելէյմօնին. ծառաները մտնում են ճրագներով։  
Բոլորը մէկ մէկու տեսնելով՝ ապշում են)

### ՏԵՍԻԼ 8

Առաջիններ և ծառաները

ԲՈԼՈՐԸ — Այս ի՞նչ է, Պանտելէյմօնը, աէք  
Աստւած։

Իվ. Իվ. — (վրան վագելով) Ուրեմն այդ զ՞ու  
էիր, զզւելի ոէխովդ, որ «համաձայն» եմ ասա-  
ցիր, համաձայն եմ...

ՏԱՏ. ԱՏ. — Այս ի՞նչ բան է։

Իվ. Իվ. — (ապշած, ծեղքերը չուած, կան-  
գնած է) Այս նա չէ, Պանտելէյմօնը չէ...

ՏԱՏ. ԱՏ. — (լացով) — Իվան Իվանովիչ, այս  
ի՞նչ բան է, ուշքի եկ։

Իվ. Իվ. — (նոյն պօզան) — Զէ, չէ... Պանտե-  
լէյմօնի ուրւականն է...

### ՏԵՍԻԼ 9

Առաջիններ, ԿՈՒԼԻԿՈՎԱԿԻՅՑ և ՍՏՈՒՊԻՆ

ԱՏ. — (Իվան Իվանիչին) — Թոյլ տւէք ցան-  
կանալ ձեզ միւս անդամ յաջող որս։ (բոլորին)  
Գաղանի յետեկից աւելի զգոյշ պէտք է որսի  
դնալ։

Իվ. Իվ. — (զլուխը բռնելով) Մորթեցին...  
առանց դանակի մորթեցին։ (ընկնում՝ է բազկա-  
լթոռի վրայ)

(Պատկեր)

ՎԱՐԱԴԻՅՈՅԻ

Пьеса „Ураганъ“ разработана для  
струнного квартета

Тифлис. 1903

Φ Π Φ Α Ρ Η Υ

Կատակ 1 արար. նեղ. Նազարեայի

## ԺԱՐԴԱՅ. Գ. Բ. Ա Խ Ե Տ Ս Ե Ա Ն


Пьеса „Ураганъ“ разрѣшена для представлений на сценахъ края.

Тифлисъ, 1903 г.

U. S. Q. R. U. P.


**Երիտասարդ պարոն (նա) Գեղեցիկ տիկին (նէ)**

W 1 d 8 d 4 B. 999 300000



1 պատուհաններ, 2 տիկնոջ սենեակը, 3  
մուտքի դռւուը, 4 վառարան մեծ հայելիով, 5  
բազկաթոռներ, 6 բազմոց, 7 սեղան, 8 կանգ-  
նած մեծ լամպա, 9 սօֆա: Ընդհանուրը հիւրա-  
սենեակ:

Նրանք ուղարկեցին  
Կուսակցության վեհականությունը



Յ ցքամեմ Համբյու և շամանառություն Դ...  
ծ փայլման հմա մաղառայ և շուռաք դպառն  
-րամ Յ մարձ Յ պոկրու ծ ցման մաթրաց  
-ոյ ոյք ցկամաքը լ տափու Յ արևելյ հմա  
- ի ցումեմ մամա

## Տեսիլ 1

**ՏԻԿԻՆԸ** (նստած է վառարանի մօտ ձեռագործով  
զբաղւած. անհանգիստ է, շարունակ նայում է վա-  
ռարանի վրայի ժամացոյցին)

**ՏԻԿ.**—**Ժամը 11-ն է,** ի՞նչպէս է ա... (սլա-  
ռուզա) **Ժամը 11-ը...** (լսում է տղամարդու քայ-  
լիրի ծայն) **Վերջապէս:** (շարունակում է զոր-  
ծել)

## Տեսիլ 2

**ՆԱ և ՏԻԿԻՆԸ** (նա մտնում է ուրախ, մեկնում է ձեռ-  
ըլ բարեւելու, բայց տիկինը շարունակում է իր զոր-  
ծը իքը նրան չէ նկատում: Նա նայում է կնոջը զար-  
մանքով: Պատզա: Նա ժպտում է, մօտենում է նր-  
ան յետելից գրկելու, տեկինը վեր է ցատկում բար-  
կացած)

**ՏԻԿ.**—**Թողէք ինձ:**

**ՆԱ.**—(ուզում է ինչ որ ասել)

**ՏԻԿ.**—**Ասացի թողէք ինձ:** (զնում է դէպի  
դուռը)

**ՆԱ.**—(զնում է նրա յետելից)

**ՏԻԿ.**—(կանգնում է դռան շէմքին) **Այս բո-**

պէից մեր մէջ ամեն ինչ վերջացած է: Հասկանում էք, ամեն ինչ: (Նայում է, նա ուզում է յետեւել, բայց դուռը երեսին կողազում է)

### ՏԵՍԻԼ 3

ՆԱ. (միայնակ է. միմիքական խաղ. զարմացած է, մօտենում է տիկնոջ սենեակի դրան, ականջ է դրում. ոչ մի ձայն: Տրորում է ձեռները, յանկարծ մի քանի յիշելով, վերցնում է լրագիրը կարդալու մորով և պատկում թիկնաթոռի վրայ)

### ՏԵՍԻԼ 4

#### ՆԱ և ՏԻԿԻՆԸ

ՏԻԿ.—(դուրս է զալիս սենեակից եւ մօտենալով գոռոզաքար հարցնում) Դուք մի դուցէ կարծում էք որ այս տեսակ կեանքը տանելի՞ է: Դուք կարծում էք որ ես կարող եմ տանել:

ՆԱ.—(զարմացած է)

ՏԻԿ.—Ես ձեզ շատ լաւ եմ հասկանում, շատ: Դուք կարծում էք որ ամբողջ երեկոյ ձեզ սպասելով այժմ շատ երջանիկ եմ, որ ձեզ վերջապէս տեսնում եմ: Ձեզ համար ի հարկէ շատ լաւ է այստեղ վառարանի մօտ, իսկ ես ստիպւած եմ, գնալ իմ սենեակը, որտեղ թէ մութն է և թէ ցուրտ...

ՆԱ.—(բարձրանալով թիկնաթոռից)

ՏԻԿ.—(լծու) Մնացէք, մնացէք, խնդրեմ, ես ձեզ խանդարելու մտադրութիւն չունեմ: Ես հասկանում եմ, դուք իհարկէ յոդնած կլինէք, հանգստանալու ցանկութիւն կունենաք:

ՆԱ.—(ուզում է խօսել, բայց տիկինը թոյլ չէ տալիս)

ՏԻԿ.—Ինձ միայն ցաւ է պատճտուում այն, որ ես յիմարութիւն արի հաւատալով ձեր խոստումներին. Եթէ միայն ես կարողանայի իմանալ, թէ դուք պէտք է վերադառնաք ժամը 2-ին.

ՆԱ.—(Նայում է վառարանի վրայի ժամացոյցին)

ՏԻԿ.—Դուք կարծում էք սխալեցի՞. ոչ, մեր ժամացոյցը սխալ է, այժմ առանց 5 րոպէի 2-ն է:

ՆԱ.—(հանում է իր զրապանի ժամացոյցը)

ՏԻԿ.—Այդ ձեզ համար միւնոյն է, Միթէ դուք կարող էք հոգալ ուրիշի մասին: Ձեզ ինչ գործ, թէ այժմ ժամը քանիսն է. դուք այդպէս համարձակ տուն կը գաք և ժամը 2-ին, մինչև անգամ առաւօտեան 6-ին:

ՆԱ.—(ապշում է)

ՏԻԿ.—Աւելորդ օրգիաները միթէ նորութիւն են ձեզ համար:

ՆԱ.—??

ՏԻԿ.—Ոչ մի բան այժմ ինձ չի զարմաց-

Նում: Ես գուշակում եմ թէ ուր կը հասցնէ  
ձեզ այն ուղին, որի վրայ ուաք էք դըել արդէն:  
ՆԱ. — (Ժպտում է)

ՏԻԿ. — Ծիծաղեցէք, ծիծաղեցէք, այդ ձեզ  
սազում է, ձեզ պէս ցինիկին այդ շատ է սա-  
զում:

ՆԱ. — ??

ՏԻԿ. — Իհարկէ, ինչպէս միշտ, յաջողութիւն  
դտաք: Ինչու թագինել ճշմարտութիւնը:

ՆԱ. — ??

ՏԻԿ. — Հը, այդ երիտասարդների ճաշին շատ  
կանայք կային:

ՆԱ. — (ասլշում է)

ՏԻԿ. — Այդպէս, այդպէս, ես գիտեմ ինչ  
կպտասխանէք. այդ պրօֆեսօրների ճաշ էր, մյու-  
պէս չէ, ես գուշակեցի: Ամենքն էլ ուսեալ  
ծերունիներ էին, ամուսնացած, բարեմիտ մար-  
դիկ... նրանք երբէք իրանց ամուսիններից չեն  
բաժանում: Հա, հա, հա... ինչպէս այդ բոլորը  
ճշմարիտ չ... ԶԵ, շատ ուրախ ճաշ էր:

ՆԱ. — ...

ՏԻԿ. — ՈՇ, դուք տխրում էիք, աւելի վատ:  
Ես գիտեմ, դուք սիրում էք զւարճանալ և դեպք  
եղած ժամանակ մի քիչ էլ գժութիւն անել:

ՆԱ. — (համեստ դէմք)

ՏԻԿ. — Գոնէ այդպէս ինձ ասել են... ես  
ինքս իհարկէ չեմ տեսել:

ՆԱ. — ...

ՏԻԿ. — Արժէ միթէ ուրախ լինել կնոջ ներ-  
կայութեամբ. սիրալիր և ուշադիր մենք միայն  
օտարների համար ենք աշխատում լինել:

ՆԱ. — (Ժպտալով ուզում է մօտենալ)

ՏԻԿ. — (յետ քաշւելով) ՈՇ, ոՇ, թողէք ինձ...  
վերադարձէք աւելի լաւ է ձեր սիրուհիների մօտ:  
Նրանց հետ մըցել ես չեմ ցանկանում: Ես ձեր  
կինն եմ դժբաղդաբար, այո, դժբաղդաբար: Զեզ  
այնպիսի կանայք, ինչպիսին ես եմ, դուր չեն  
դալիս, ձեր իդէալն է — նիհար, թռքախտով հի-  
ւանդ անձնաւորութիւններ:

ՆԱ. — ?

ՏԻԿ. — Դուք հէնց որ տեսնում էք երկար,  
անձոռնի մի կին, իսկոյն հիանում էք. Բնչ  
արած, ճաշակները տարբեր են լինում: Բաւա-  
կան է նայել միայն տիկին Միխէեվի վրայ մի  
անգամ և հասկանալ թէ ինչն է ձեզ դուր դա-  
լիս... Եւ նա կին հօ չէ, այլ շարժւող կմախք:

ՆԱ. — ?

ՏԻԿ. — Եւ համարձակւում է դեռ հաճախել  
մեզ մօտ, օ ինչ ցածութիւն:

ՆԱ. — !!!

ՏԻԿ. — Դուք ապշած էք, վրդոված... ինչ-  
քան քէֆներդ տալիս է, ինձ համար միենոյն է,  
ես ճիշտն եմ տսում: Դուք պատրաստ էք ինձ  
հաւատացնելու, որ տիկին Միխէկան հիանալի

կին է, որ նրա ամուսինը ձեր մտերիմ ընկերն է, այս, այդ բոլորը ես հարիւր անգամ եմ լըսել: Նա ձեր կաթնեղբայրն է, ընկերն է... գիտեմ, գիտեմ: Այդ ամենը դուք ինձ ասել էք:

ՆԱ. —!...

ՏԻԿ. — Արդարանալ կարող էք, իհարկէ... ես չեմ կասկածում... Չնայած որ ձեր բնակարանը աւելի մօտ է զրասենեակից, քան Միխէլվերինը, այնուամենայնիւ միշտ այնտեղ էք գնում նախաճաշելու, իհարկէ, նրանց կերակուրները աւելի համեղ են, նրանց տանը աւելի ուրախ է... Դուք այնպէս էք պահում ձեզ, որ ինձ մընում է միմիայն յետենել ձեր օրինակին:

ՆԱ. —...

ՏԻԿ. — Բայց դուք լաւ համոզւած էք, որ ես այնտեսակի կանանցից չեմ, որ առաւօտից մինչև ուշ գիշեր փողոցներն են չափում, որ շարունակ տանն եմ նստում, պարտականութիւններս եմ կատարում:

(Մինչեւ այժմ տիկինը խօսում էր արագ, հազիւ շունչ լաշելով, բայց վերջին նախաղասութիւնից յետոյ կանգ է առնում: Նա ցանկանում է հակամառնը, բայց տիկինը դարձեալ թոյլ չէ տալիս):

ՏԻԿ. — Ամենքն էլ գիտեն, որ Միխէլվերը ապրում են շքեղ... Որտեղից է նրանց մօտ այդքան փողը, չեմ հասկանում: Ի հարկէ ես չեմ

հետաքրքրւում դրանով, այդ միայն իրան Միխէլին է վերաբերում, բայց եթէ նրա տեղը լինէի, կը հետաքրքրւէի գէթ միանգամ տեղեկանալ թէ ով է նրա կնոջ շքեղ հագուստների համար փող վճարում:

ՆԱ. —??

ՏԻԿ. — Ես միայն ասում եմ այն, ինչի մասին խօսում են ամենքը: Առանց ծուխի կրակ չի լինիլ: Դուք հիանում էք նրան տեսնելիս, ձեր կարծիքով նա սքանչելի է... չեմ վիճում: Պինորի աղջկայ համար շատ է այդքոնը:

ՆԱ. —?

ՏԻԿ. — Այս, այս, նա զինւորի աղջիկ է, դուք վիճել էք ցանկանում: Ներեցէք, ես այդ լաւ գիտեմ: Իմ հայրը — նա զեներալ էր, — ցոյց տւառ մի անգամ ինձ Միխէլվայի հօր թղթերը, նա ծառայելիս է եղել հօրս մօտ տանը: Ապացմոյց էք ուզում, իսկոյն:

ՆԱ. —...

ՏԻԿ. — Զէք ուզում հա, ես հասկանում եմ, այդպիսի ապացոյցները ձեզ դուր չեն գալ, այդ կը վիրաւորի ձեր ինքնասիրութիւնը:

ՆԱ. — (աաշած է)

ՏԻԿ. — Ես ձեզ վիրաւորեցի, տրտմեցը, ներեցէք: Միւս անգամ ես զգոյշ կը լինեմ և թոյլ չեմ տալ կպչել ձեր Միխէլվային, բոլորը ինչ որ նա այսուհետեւ անի, ես կը հաւանեմ:

Ամուսնուս սիրառ նա գողացել է, խլել է իմ երեխաների հօրը, նա փշել է մեր կեանքը, նա... նա դժբաղդութիւն թերեց մեր ընտանիքին, բայց ես ոչինչ, ոչինչ չեմ ասիլ: Ես մինչև անգամ կը սկսեմ գովել նրան, ձեր այդ տիկին Միլիենկային, կասեմ որ նրա վարմունքը գովելի է, ազնիւ է... ՆԱ.—...

**ՏԻԿ.**—Բաւական էք: Զեզ բաւականացրեց իմ զոհաբերութիւնը: Մի գուցէ այդ քիչ է, մի գուցէ դուք ուզում էք, որ ես նրա առաջ չոքեմ, գուցէ դուք ցանկանում էք որ ես գնամ նրա մօտ, արտասուքը աչքերիս խնդրեմ, աղաչեմ որ հանգիստ թողի իմ ամուսնուն, որ նա խղճա ինձ ի սէր մեր երեխաների: Խեղճ որբիկներ, նրանց սպասում է քաղց, աղքատութիւն...

ՆԱ.—(ուզում է խօսել, բայց ուսերը վեր է քաշում եւ երեսը շոտ տալիս)

**ՏԻԿ.**—Ա... դուք սկսեմ էք չարանալ, խնդրեմ, այդ ամենայարմար միջոցն է: Երբ մարդ ոչինչ չի կարող ասել, սկսում է չարանալ...

ՆԱ.—(երեսը շոտ է տալիս դէպի նա)

**ՏԻԿ.**—Դուք ցանկանում էք արդարանալ: ՆԱ—?

**ՏԻԿ.**—Ա՛խ, ոչինչ չունէք ասելու: Դուք մինչև անգամ չէք ցանկանում ինձ հետ խօսել: Արդարանալու և ոչ մի խօսք չէք գտնում ասե-

գու, հիանալիք. ոճրագործութիւն գործել, վիրաւորել, խաբել կնոջը, ամենամօտ անձնաւորութեանը և ներեղութիւն չը խնդրել...

ՆԱ.—(մօտենու է նրան)

**ՏԻԿ.**—Ա՛, դուք ուզում էք ինձ ծեծել, այդ էք միային պակասը: Հը, ինչու չէք խփում, խփեցէք, խփեցէք:

ՆԱ.—(զարմացած է)

**ՏԻԿ.**—Հը, ինչու կանգնեցիք, չէ որ դուք տէր էք, ամուսին, տան գլուխը, դուք ինձնից ուժեղ էք, խփեցէք, խփեցէք, մի անհանգստանաք, ես չեմ պաշտպանւիլ...

ՆԱ.—(վեր է քաշում ուսերը եւ զնում դէպի դուռը)

**ՏԻԿ.**—Ա՛խ, դուք չէք ցանկանում օգտւել ձեր իրաւունքներից. կարծում էք ես օգնութեան կը կանչեմ:

ՆԱ.—(վերադառնում է)

**ՏԻԿ.**—Սխալում էք: Ես երբէք չեմ թոյլ տալ ալմուկ, ես այն կանանցից չեմ որ իրանց դարդերը փողոց են դուրս բերում, որոնք իրանց ցաւերը պատմում են ամեն մի պատհածին, որպէսզի գութները շարժեն: Իմ ցաւը շատ մեծ է:

ՆԱ.—...

**ՏԻԿ.**—Դուք ինձ չէք հաւատում, ձեր կարծիքով ես սմուտ եմ ասում:

ՆԱ.—(նայում է առաստաղին, վերցնում է

լրագիրը եւ նստում՝ վառարանի մօմ)

**Տիկ.**—Դուք մինչև անգամ չէք ուզում պատասխանել, դուք լրագիր էք կարդում: Հասկանում եմ, յաւ միջոց է խօսակցութեանը վերջ տալու (մօտենու է նրան) բայց ինձ համար միենոյն է, դուք զբաղւած էք թէ չէ, ես բոլորը կասեմ: Կան մարդիկ, մինչև անգամ ամուսիններ, որոնք զգում են իրանց մեղքը, եթէ նրանք վիրաւորել, տրտմեցրել են կնոջը. եթէ նրանք տեսնում են որ կինը տանջում է, խղճահարւում են. կան և այնպիսիններ, որ աշխատում են մխիթարել կնոջը, եթէ մինչև անգամ նա լին ի մեղաւորը, իսկ դուք... Միթէ ես քո ուշադրութեան արժանի չեմ: Միթէ դու ինձ չես խըդառում... Չէ որ ես քեզ այնպէս սիրում էի, այնպէս սիրում եմ...

**ՆԱ.**—(վեր է կենում, լրագիրը դէն ձգելով)

**Տիկ.**—Կարծես ես չատ բան եմ պահանջում: Ես միայն ցանկանում եմ, որ դու ինձ ասես, դէ, շնորհ արա, ասիր, ուր էիր դու այսօր այդ պրօֆեսօնների ճաշից յետոյ, եթէ միայն իրաւ այդ ճաշը տեղի է ունեցել.

**ՆԱ.**—?

**Տիկ.**—Ես մինչև անգամ պատրաստ եմ թոյլ տալու, որ իսկապէս ճաշը տեղի է ունեցել, բայց որ ճաշը վերջանայ գիշերւայ ժամը 2-ին, այդ մէկը ներիր, ես հաւատալ չեմ կարող, չեմ կարող:

ՆԱ—...

**Տիկ.**—Դէ, դեռ կըսկսես վիճել: Քո կարծիքով այժմ միայն 12 ժամն է, լաւ, լաւ, ես համաձայն եմ, ես միշտ պատրաստ եմ զիջելու, բայց չէ որ ճաշը վերջանում է 9-ին, կամ շատշատ 10-ին, չէ որ դու ինքդ ասացիր, որ այդ ժամանակ կվերջանայ:

ՆԱ—...

**Տիկ.**—Ես սպասում եմ... յուզւում եմ... Գժւում եմ վախից, ես մտածում եմ մի գուցէ քեզ մի դժբաղդութիւն է պատահել... Վերջապէս դու գալիս ես, ես վազում եմ քեզ լնդառաջ, հարցնում եմ... (լաց է լինում) իսկ դու, դու... չես էլ ուզում պատասխանել: (ընկնում է թիկնաթոռի վրայ)

ՆԱ—(նայում է նրան խղճահարւած)

**Տիկ.**—(լացով) Ա՛խ, մայրիկ, մայրիկ, եթէ դու իմանայիր, թէ որքան դժբաղդ է քո խեղճաղիկը:

ՆԱ—(մօտենում է նրան)

**Տիկ.**—Թողէք ինձ, ես պէտք չունիմ լսելու ձեր կեղծ խղճահարւութիւնը, ես ձեզ չեմ հաւատում: Դուք ցանկութիւն ունէիք տեսնելու իմ արտասուքները, իմ տանջանքը... հասաք ձեր նպատակին, դէ հիացէք, փառաւորւեցէք:

ՆԱ—(բարկացած հետ ու առաջ է վազվում)

**Տիկ.**—Ես ծիծաղելի եմ ձեր աչքում, իհար-

կէ, ես հասկանում եմ, շատ լաւ եմ հասկանում՝ ԱՌԻ, ինչքան ճիշտ էր ասում հանգուցեալ մօրաքոյրս, որ նախազգուշացնում էր, թէ մի գնալնը ան, ասում էր, նա փչացած մարդ է, և շատ ուղիղ է։ Մինչեւ անգամ մեռնելու րոպէին ինձ կանչեց իր մօտ և ասաց. լսիր, դու հրեշտակ ես, անմեղ արարած, իսկ նա, նա, պսում էր, կենդանի չարութիւն, կոպիտ, կամակոր և որ գլխաւորն է փչացած մարդ է։

ՆԱ.—(չարութիւնից վերցնում է թուղթ կըտարելու ուսկըէ դանակը եւ միջից կոտրում)

ՏԻԿ.—Տեսաք, տեսաք, ինչ բնաւորութիւն ունէք։ Դուք ամեն ինչ կոտրում էք... Դուք մինչեւ անգամ պատասխան էլ չէք գտնում...

ՆԱ.—(մօտենում է եւ քածակի ջուրը միանգամից խմում)

ՏԻԿ.—Դուք ծարաւ էք, տաքութիւն ունէք, ջերմում էք, ի հարկէ, շատ հասկանալի է, այնպիսի օրգիաներից յետոյ... Պէտք է տարօրինակ առողջութիւն ունենալ, որ կարելի լինի այդ անտանելի կեանքին դիմանալ... խեղճմայրիկս ասում էր...

ՆԱ.—(դարձեալ ջուր է խմում)

ՏԻԿ.—Այդ ի՞նչ է, ես իմ հանգուցեալ մօրըն եմ յիշում, իսկ դուք ձեզ թոյլ էք տալիս ժպտալ. Այդ էր պակաս... իմ մայրը հրաշալի կին էր, իդէալական անձնաւորութիւն։ Այս, այն-

ՆԱ.—(ձեռքերը տարածելով)

ՏԻԿ.—Վիրաւորել իր կնոջ մօրը, նրա մասին վատ ասել, այդ արդէն վրդովեցուցիչ է. Եւ ինչ օք էք ընտրել ձեր խայտառակութիւնների համար, իմ կեանքի ամենալաւ օրը. դուք իհարկէ այդ չէք էլ իմանում. Զեր ի՞նչ գործն է, որ այսօր իմ ծննդեան օրն է, արժէ այդպիսի ցանցաւութիւնների համար մտածել։ Այ, եթէ դատիկին Մեխէեվայի ծննդեան օրը լինէր, այնժամանակ...

ՆԱ.—(ուզում է խօսել)

ՏԻԿ.—Ոչ, ոչ, խնդրեմ, մի վիճէք, դուք կսկսէք ստել, արդարանալ, իսկ առանց այդ էլ կուրծքս սեղմւում է։

ՆԱ.—(նայում է հասարակութեան, ոսերը վեր է քաշում, յետոյ ժպտալով նայում է կնոջը)

ՏԻԿ.—Վերջապէս պատասխան պէտք է ստանամ ձեզանից։ Ասացէք վերջապէս, ես մի ամբողջ ժամ է ձեզ եմ լսում։

ՆԱ.—(հանում է գրպանից մի ֆուտլեար եւ տալիս է կնոջը)

ՏԻԿ.—Բըտալետ, ի՞նձ համար։ (կարդում է վերնազիրը) Վերօչկային։ Ուրեմն ահա ինչո՞ւ ուշացար։ Թանկագին Սաշա, ինչքան դու լաւն ես, մտածող, բարի... Որքան ես քեզ սիրում եմ, իմ թանկագինս (գրկում են)

ՎԱՐԱԳՈՅՔ

Դ Ա Ր Ա Ճ Ճ Ի

**Քարտ 3 արար.**  
Գիով. Գ. Բ. Ա հ Ե Տ Տ Ա Ն

Настоящій водевиль, подъ заглавiemъ „Шалунья“ разрѣшена Г. Помощникомъ Главноначальствующаго къ представлению на сценахъ края.

26 марта 1894 г. г. Тифлисъ.

За Предсъдателя Комитета А. Кишмишевъ

Секретарь Н. Меликъ Нубаровъ

## Ա. Զ Ի Ն Ք.

ՆԱՏԱԼԻԱՅՑ ԳԱԼՍՏԵԱՆ, այրի կին  
ՆՈՒՆԵ, նրա մեռած քրոջ աղջիկը  
ՓԱՌՆԱԿԵՍ ԴԱՐՄՁԻՉԱԿԵԱՆ, հարուստ վաճա-  
ռական  
ԳՐԻԳՈՐ, Նատալիայի եղբայրը:  
ԼԵՒՈՆ ԶԱՆՈՒՄԵԱՆ, հարուստ կալւածատէր  
ՅՈՎԱԿԻՄ, Նատալիայի ծառան:

## Ա. Ա. Բ Ա. Բ Ի Ա. Ծ

ԲԵՄԸ ՆԵՐԿԱՅԱցնում է կիսածաշակ զար-  
դարսած սենեակ: Աչ, ծախ եւ մէջ տեղ դոներ:  
Միջին դոնից երեւում է պարտէզը:

## ՏԵՇԻԼ 1

### ՆԱՏԱԼԻԱՅՑ և ՓԱՌՆԱԿԵՍ

ՆԱՏ.—Հաւատացնում եմ ձեզ, պարոն Փառ-  
նակէս, այս տարի անկարող եմ վճարել. դուք  
զիտէք, որ ամուսնուս մահից յետոյ ես ահա-  
գին ծախքեր եմ արել թէ տունս ու այս ամարանո-  
ցը վերանորոգելու և թէ նունէի ուսումը աւար-  
տելու համար: Մի խօսքով, մինչև եկող ամառ  
անկարող եմ վճարել պարտքս: Դուք պէտք է մի  
կերպ անէք և մուրհակը փոխէք. տոկոսը կը վը-  
ճարեմ, իսկ եկող տարի լիովին կը ստանաք  
10,000 լ:

ՓԱՌ.—Լաւ. պատիւ ունեմ յայտնելու ձեզ,  
որ կը նդունեմ միայն մի պայմանով. խոստացէք,  
որ նունէին ինձ կը տաք: Դուք զիտէք, թէ այժմ-  
եան երիտասարդները որքան փչացած են. նրանց

աղջիկ տալը մեղք է. պատիւ ունեմ յայտնելու ձեզ, որ ինձ տալը մեծ բաղդաւորութիւն է ծնողների համար. հարուստ եմ, գեղեցիկ, երիտասարդ... Եւ պատիւ ունեմ յայտնելու ձեզ, որ ես այնպէս սիրահարւած եմ նունէի վրայ, որ մինչև անգամ ձեր պարտքը կը ներեմ, եթէ յաջողեցնէք այդ բանը:

ՆԱՏ.—Ի հարկէ, եթէ միայն...

ՓԱՌ.—Այնպէս մի դժւար բան չըկայ ձեզ համար: Պատիւ ունեմ յայտնելու ձեզ, որ հարկաւոր է միայն, որ դուք ցանկանաք, և ամեն բան վերջացած է: Խօսք տւէք որ կը յաջողեցնէք, պատիւ ունեմ յայտնելու ձեզ, որ ես ահագին շնորհակալութիւն կանեմ ձեզ: Ճշմարիտ, դուք մի մեծ բարութիւն արած կը լինիք: Կատարեցէք, խնդրում եմ ձեզ, խնդիրքս:

ՆԱՏ.—Նունէն այսօր պիտի գայ, քըոջս մօտ հիւր է նրանց ամարանոցում, կխօսեմ հետը և կաշխատեմ. անպատճառ գլուխ բերել:

ՓԱՌ.—Պատիւ ունեմ յայտնելու ձեզ, որ անշափ շնորհակալ եմ: Տւէք ձեր ձեռքը համբուրեմ: (Համբուրում է: Մտնում է դրիգործ եւ կանգնում դոների մօտ: Առաջինները նրան շեն նկատում)

ՆԱՏ.—Ինձ համար էլ հարկաւոր էր ձեզ—պէս մի բարեկամ: Գիտէք, այսպիսի ժամանակներում լաւ բարեկամ ունենալը մեծ բան է:

ՓԱՌ.—Պատիւ ունեմ յայտնելու ձեզ, որ շատ ուրախ եմ: Մնաք բարեաւ, կը մտնեմ, երբ որ նունէն կը վերադառնայ: Յաեսութիւն, (դուրս է զնով, բայց հանդիպելով դրիգորին, երեսը ծոմում է)

## ՏԵՍԻԼ 2

### ՆԱՏԱԼԻԱՅ և ԳՐԻԳՈՐ

ԳՐ.—Քոյրիկ, ես զարմանում եմ քո համբերութեան վրայ. Բնչպէս ես կարողանում տանել այդ քաւթառի ներկայութիւնը. մարդ պէտք է բոլորովին ճաշակից զուբկ լինի, որ ախորժակ ունենայ նրա հետ խօսելու:

ՆԱՏ.—Ես ապշում եմ քո ասածները լսելով. միթէ դու չըգիտես, որ ես նրան 10,000 ըուբլի եմ պարա. նա եկել էր խնդրելու, որպէսզի պատրաստ ունենամ, որ ժամանակին կարողանամ վճարել, որովհետև երեք օրից մուրհակի պայմանաժամն է: Եւ բացի այդ, եթէ նրան փող էլ չըլինէի պարտ, ես կրկին կընդունէի նրան տանս, որովհետեւ նա ինձ վատ մարդ չէ երեսում, նա իմ լաւ բարեկամն է:

ԳՐ.—Գուցէ, մի քիչ էլ աւելի. ներիր, քոյրիկ, համարձակախօս լինելուս համար. այն ինչ որ ես տեսայ մի քանի ըոպէ առաջ, ինձ ստիպում է այդպէս խօսել և խօսում եմ, իբրև մեծ

եղբայր։ Այս, երբ ես նկատեցի, որ նա համբուրեց քո ձեռքը, զգւանքից չը գիտէի, թէ ինչ անէի։

ՆԱՏ.—Գրիգոր, ես լոռւմ եմ և խնդրում եմ քեզ էլ լոել։ Քանի որ դու չես ճանաչում նրան աւելի լաւ, քան ես, ուրեմն խօսել և դատել նրա մասին դու անկարող ես։ Խնդրում եմ այլ ես և ոչ մի խօսք նրա մասին, դու ինձ բարկացնում ես։

ԳՐ.—Բարկացիք որքան որ կամենաս, բայց ես քեզ ահա ինչ կասեմ։ Նրա ոլխին մի այնպիսի խաղ պիտի խաղամ, որ դու էլ ասես թէ հա։

ՆԱՏ.—Զը համարձակւես, հասկանում ես, չը տեսնեմ, չը լսեմ, որ այդպիսի մի բան ես արել։ Այդպէս անելով, դու ոչ թէ նրան, այլ ինձ կը վիրաւորես։ Ահա այսքան։ Ես դուրս եմ գնում։ (զնում է)

ԳՐ.—Այս ի՞նչ է նշանակում, ես հաւատալ դժւարանում եմ, որ նատալիան կարող է սիրահարւած լինել։ Նրա վրայ։ Նրա վրայ։ Է, ոչ, այդ անկարելի է։ Նատալիան միթէ ճաշակից բոլորովին զուրկ է, որ կարողանայ սիրել այդպիսի մի անձնաւորութիւն, որին չը զիտեմ, թէ ինչի նմանեցնեմ։ (լսում է զանգակների ձայն) Այս հիշ է։ (Նայում է լուսամտից) Օհօ, նունէն է, այս ի՞նչ է։ միայնակ, առանց կառապանի և

այն էլ երեք ձիով, զարմանալի չարաձճի աղջիկ է... եւ ինչպէս էլ չէ վախեցել։ գիւղից ամառանոց է եկել։

### ՏԵՍԻԼ 3

ՆԱՏԱԼԻԱՅ, ԳՐԻԳՈՐ փոքրից ՆՈՒՆԵ, յետոյ ՓԱՌՆԱԿԻՍ

ՆԱՏ—Այդ հիշ եկաւ, մի գուցէ նունէն է։

ԳՐ.—Այս նաև և այն էլ այնպիսի մի փառաւոր կառքով, որ...

ՆՈՒՆԵ—(մտնում է) Այս, ես, և պատիւունեմ յայտնելու... Բարեաւ, մօրաքոյր, Գրիգոր... ի՞նչպէս էք, լաւ էք, ողջ և առողջ։ Հիւանդ հօ չը կայ... (դուան մէջ երեւում է Փառնակէսը) Օհօ, ումն եմ տեսնում, պարոն Փառնակէս.., Կերս համեցէք, խնդրեմ, ինչու դռան մէջ էք կանգնել, մի գուցէ վախենում էք, որ ձեզ կծէն, մի վախէք. մտէք, մտէք...։

ՓԱՌԻ.՝Պատիւունեմ յայտնելու իմ խորին յարգանացս հաւաստիքը։ Ես գնում էի, բայց որ տեսայ գալիս էք, յետ դառայ, որ...

ՆՈՒՆԵ—Մօրաքոյր, հոգեակս, ի՞նչքան նորութիւններ, ինչքան նորութիւններ, Նախ և առաջ Մարիամը բարեց, յետոյ երեխայքը...։ Բայց, պարոններ, ինչու չէք նստում, նստեցէք խնդրեմ։

ԳՐ.—Պարոն Փառնակէսը ուղում էր գնալ,  
կարծեմ:

ՓԱՌ.—Պատիւ ունիմ յայտնելու, որ այն-  
պէս... Բայց ոչինչ, կը նստեմ, եթէ օրիորդը  
թոյլ տայ:

ՆՈՒՆՔ—Խնդրեմ, խնդրեմ, դուք չէք շփո-  
թիլ ինձ, ես իմ նորութիւնները կը պատմեմ:  
(ամենքը նստում են: Մտնում է ծառան իրերը  
ծեռքին): Հա, տար, տար իմ սենեակը: Ներո-  
դութիւն, պարոններ, ես իսկոյն... (զնում է ձախ)

ՆԱՏ.—Շատ չարաճին է:

ՓԱՌ.—Պատիւ ունիմ յայտնելու, որ հիա-  
նալի աղջիկ է, նրա համար հարկաւոր է միլաւ  
ամուսին, իրա պէս գեղեցիկ; աշխոյժ և պա-  
տիւ ունիմ յայտնելու, որ...

ԳՐ.—Դուք կարծում էք, պարոն Փառնա-  
կէս...

ՓԱՌ.—(առանձին) Սա ի՞նչ է կպել:  
ՆՈՒՆՔ—(մտնում է) Եւ այսպէս, մօրաքոյր,  
ես այստեղից գնացի, գտայ ամենքին ողջ և ա-  
ռողջ: Բայց ի՞նչ եմ ասում, խոհարարի քիթը  
կապած էր. անցեալները կատուն մտել է խո-  
հանոց, սեղանի վրայից քաշ է տւել մսի կտո-  
րը, խոհարարը վրայ է հասել և ընկել կատու-  
ի յետևից, որ բռնի նրան պատժի, սակայն կա-  
տուն պատշգամբից թռել է ցած, խոհարարը յե-  
տեսից, կատւին յաջողւել է ողջ և առողջ ա-

զատւել, բայց խոհարարի քիթը կոտըւել է, այ-  
ժըմ փաթաթած ունի:

ՓԱՌ.—Հա, հա, պատիւ ունեմ յայտնելու  
ձեզ, որ...

ՆՈՒՆՔ—Խնդրեմ մի ընդմիջէք: Յետոյ, յե-  
տոյ, հա, էլ ուրիշ վաստած մարդ չկայ: Ան-  
շարժ և շարժական կայքերից փչացած էր մի-  
միայն կառապանի գդակը, որ անցեալները գե-  
տի մօտով անցնելիս է եղել, ընկել է ջուրը,  
վերցրել է որ թափ տայ, կպել է ծառի ճիւղին  
և ծակւել է:

ԳՐ.—Ուրիշ նորութիւններ պատմիր, դը-  
րանք երկրորդական բաներ են:

ՆԱՏ.—Բաւական է, նստիր, քիչ հանգստա-  
ցիր: Յետոյ կը պատմես:

ՆՈՒՆՔ—Ո՞չ, առաջ կը պատմեմ, յետոյ:  
Բայց, եթէ իմանաք, ում հետ ծանօթացայ այն-  
տեղ. Լևոն Զանումեանի հետ. գեղեցիկ, հարուստ  
մի կալւածատէր է: Ուսումը աւարտել է Մոս-  
կայում, գիւղատնտեսական ուսումնարանում:  
Այնպէս մօտեցանք մէկ մէկու հետ, այնպէս  
սիրեցինք մէկ մէկու: Նա այսօր կամ վաղը  
մինչև անգամ մեզ մօտ կը լինի այստեղ. Ես  
նրան հրաւիրեցի: Դու չես նեղանալ, մօրաքոյր:

ՆԱՏ.—Բայց ի՞նչպէս կարելի է, կարող են,  
ով գիտէ՝ ի՞նչեր խօսել մեզ վրայ:

ՆՈՒՆՔ—Ով ի՞նչ ուզում է՝ թող խօսի: Շատ

հարկաւոր է: Նա կը գայ և ես էլ կընդունեմ  
նրան այնպէս, ինչպէս որ ցանկանամ:

ՆԱՏ.—Դու գիտես:

ՆՈՒՆԵ—Եւ այդպէս, պատիւ ունիմ յայտ  
նելու ձեզ, որ ես ծանօթացայ նրա հետ, սի-  
րեցինք մէկ մէկու: Միշտ, ամեն օր համարեա  
թէ, գնում էինք նրա հետ գետի վրայ նաւա-  
կով զբօսնելու, մանաւանդ լուսնեակ գիշերնե-  
րը: Ո՞հ, ինչ սքանչելի էր, ես յենւում էի նրա  
ուսին, նա մերթ ընդ մերթ համբուրում էր իմ  
պարանոցից, երեսիցս չէր համարձակվում, ա-  
մօթ է, միայն պարանոցիցս և այնպէս՝ մեղմ,  
այնպէս քաղցր... Չորս կողմը լուսթիւն էր տի-  
րում, այնպէս լաւ էր, այնպէս լաւ: Երկակայե-  
ցէք. մութն է, լուսնեակը լուսաւորում է ծա-  
ռերի միջով, գետակը հոսում է, ծառերը խըշ-  
խշում են, իսկ այնտեղ հեռու, շատ հեռու լսում  
է կատւի մլաւոց, շան ոռնոց:

ՓԱՌ.—Այն, հիանալի է, հիանալի, պատիւ  
ունիմ ձեզ յայտնելու, բայց այն պարոնը...

ԳԲ.—(տնազելով) Բայց այն պարոնը...

ՆՈՒՆԵ—Պարոն Փառնակէս, դուք նախան-  
ձում էք, դուք հօ սիրահարւած չէք ինձ վրայ,  
բայց այ ծիծաղ կը լինէր հա... Ի՞նչ զոյդ կը  
կազմէինք:

ՓԱՌ.—(զմայլած) Այն, այն, հիանալի, պա-  
տիւ ունիմ յայտնելու ձեզ:

ՆԱՏ.—Լաւ, բաւական է, արի նստիր, քիչ  
հանգստացիր:

ՆՈՒՆԵ—Ահա, այս ըոպէիս վերջացնում  
եմ, Բայց այս ի՞նչ է, մօրաքոյրս, այս ինչպէս  
անձաշակ են դարսւած ձեր կահկարասիքը: Այս  
ի՞նչ է, միթէ կարելի է այսպէս սարքել հիւրա-  
սենեակը: Օգնեցէք, պարոն Փառնակէս, այս  
ըոպէին պիտի զարդարեմ իմ ճաշակով, ապա  
թէ ոչ այս ի՞նչի նման է:

ՆԱՏ.—Նունէ, թող, խնդրում եմ, դրաժաշ-  
մանակը չէ: Մենք դեռ հիւր ունենք, դեռ պէտք  
է նրան զբաղեցնենք: Նատիր, խնդրում եմ:

ԳԲ.—Նունէ, հոգեակս, յօգնած ես, այդ  
յետոյ կը սարքես, դեռ հանգստացիր:

ՓԱՌ.—Այն, ես էլ պատիւ ունիմ յայտնե-  
լու ձեզ, որ...

ՆՈՒՆԵ—Խնդրեմ, խնդրեմ, այդ ձեր գոր-  
ծը չէ, դուք մի խառնւէք: Ես ոչինչ լսել չեմ  
ցանկանում: Ես ցանկանում եմ և պէտք է սարքեմ  
այնպէս, ինչպէս ես եմ ցանկանում. կարող է  
հէնց այս ըոպէիս ներս մտնել Լեռնը և ի՞նչ կա-  
նենք այն ժամանակ, չէ որ նա կը ծիծաղի մեր  
ճաշակի վրայ: Մօրաքոյր, հոգիս, թող զարդա-  
րեմ սենեակը, խնդրում եմ...

ՆԱՏ.—Դու գիտես, Տէր ընդ քեզ, արա  
ինչ որ ուզում ես: Միայն թէ ծառաներին կան-

չիր գոնէ, դու միայնակ չես կարող կահկարա-  
սիքը տեղափոխել:

ՆՈՒՆԵ—Հարկաւոր չէ, չեմ—ուզում, ես  
ինքս ամեն բան կանեմ: (րոնում է դիւանի ծայ-  
րից) Օքնեցէք, պարոն Փառնակէս, թիկնաթոռը  
այս կողմ դնելու, կամաց, ահա այսպէս, ոչ, այս  
կողմը... ահ, որքան դուք կոպիտ էք: Այժմ վեր-  
ցրէք այս բազկաթոռը, դրէք այստեղ, ոչ այս-  
տեղ, ոչ, այս կողմը... ահա այդպէս...  
Վերցրէք, վերցրէք, պահեցէք մի քիչ, ես սե-  
ղանը տեղափոխեմ: Ահա այժմ դրէք. լաւ, ին-  
չու կանգնեցիք, այժմ ծաղկամանները... (վերց-  
նում է շը միասին, բայց տեղափոխելու ժա-  
մանակ վայր է ձգում) Ա՛խ, Աստւած իմ, այս  
ինչ արի... (սկսում է հաւաքել, նոյնը անում է  
եւ Փառնակէսը)

### Վ Ա Ր Ա Գ Ո Յ Թ

այս գծ հացրած քոր ու նմանալու ով մայր  
նմանալու ցը վճարուա ու այսու ուր և զցոն  
անած ամ ացախը ու վայր վայացը ու քծ  
ապ ածութ թ մայր

Քեմը միենոյն սենեակն է ներկայացնում

### ՏԵՍԻԼ 1

ՆԱՏԱԼԻԱ և ՓԱՌՆԱԿԷՍ

ՓԱՌ.—Այն, պատիւ ունիմ յայտնելու, որ  
հիանալի օրիորդ է և նրանից աւելին չեմ ցան  
կանում: Նա բոլորովին ինձ գրաւել է: Ես մեծ  
յաջողութիւն ունիմ կանանց շրջանում, ամեն  
տեղ գեղեցկութիւնս գովում են, շատ անգամ  
պատահում են այնպիսիները, որ երեսները շուռ  
են տալիս ինձ տեսնելիս, որովհետեւ սառնարիւն  
մնալ չեն կարողանում: Պատիւ ունիմ ձեզ յայտ-  
նելու, որ այս այսպէս լինելուց յետոյ ես չեմ  
կարծում, որ Նունէն չը ցանկանայ իմ կինը  
գառնալ:

ՆԱՏ.—Յարգելի պարոն Փառնակէս, ես խոս-  
տացել եմ և անպատճառ գլուխ կը բերեմ. դուք  
հանգիստ եղէք: Նունէն ինձ այնքան է սիրում,  
որ դժւար թէ նա իմ խօսքը կոտրի, ես նրան  
գօր պէս փայփայել, մեծացրել եմ: Ես այսօր

նրան կը յայտնեմ, որ դուք խնդրում էք նրա ձեռքը և յոյս ունիմ որ այսօրեեթ կը յայտնեմ ձեզ ուրախալի նորութիւնը, այսինքն նա համաձայն է ձեր կինը դառնալու։ Այժմ ի՞նչպէս, բաւական էք ինձանից։

**ՓԱՌ.** — Շատ և պատիւ ունիմ յայտնելու ձեզ, որ երբէք չեմ մոռանայ ձեր արած լաւութիւնը։ Մանաւանդ, պատիւ ունիմ յայտնելու, որ նունէին ինձ տալիս ես պատում եմ տասը հազար բուբլու մուրհակը։ Պատիւ ունիմ հասկացնել ձեզ, որ դուք ինձ այլ ևս փող չէք լինի պարտ։

**ՆԱՏ.** — Այդ էլ այդպէս անելով, դուք ինձ մի մեծ լաւութիւն արած կը լինիք, որովհետե ձեզ պարզ յայտնի է իմ դրութիւնը։ Դուք գիտէք, որ ես այս բոպէին այն դրութեան մէջ չեմ, ինչ որ էի ամուսնուս կենդանութեան ժամանակ։ Մի խօսքով, ես ձեզ խօսք եմ տալիս և կաշխատեմ անպատճառ գլուխ բերել։

**ՓԱՌ.** — Այս, պատիւ ունիմ յայտնելու, որ անչափ շնորհակալ եմ և կը լինեմ ձեզանից։ Տւէք, համբուրեմ ձեր ձեռքը։

(Համբուրում է, լսում է հրացանի պայմաններին նրանք վախենում են)

**ՄԻԱՍԻՆ** — Այս ի՞նչ էր։ Այս որտեղ էր։

### ՏԵՍԻԼ 2

Առաջիններ և ՅՈՎԱԿԻՄ

ՅՈՎ. — Այս ձեզ մօտ էր։

ՆԱՏ. — Ո՞չ. դու չիմացար։

ՅՈՎ. — Ո՞չ. բայց դուք լսեցիք։

ԱՄԵՆՔԻԼ — Հապա այս ովկ էր։

### ՏԵՍԻԼ 3

Առաջիններ և ՆՈՒՆԵ (հրացանով, որսորդի հազուտով)

ՆՈՒՆԵ — Ես էի, ի՞նչ է. վախեցաք. Լաւ է, և դուք, պարոն Փառնակէս, նոյնպէս վախեցաք։ Լաւ, շատ լաւ տղամարդ էք ուրեմն։

ՆԱՏ. — Նունէ, միթէ կարելի է հրացանի հետ խաղալ, կարող էիր արձակելիս մէկին ոկալ չել և յետոյ...

ՆՈՒՆԵ — Լաւ վախկոտներ էք, շատ լաւ, ի՞նչ որ է, պատմեմ ինչ որսացի։ Նախ և առաջ դիմացի ապրողների կատւի պոչը կը ակեցի, ապա անտառում երկու ագուաւ քցեցի, ապա ձեզ, մանաւանդ պարոն Փառնակէսին, վախեցրի։ Հա, հա, հա... (ոէմ է անում հրացանը դէպի Փառնակէսը, սա թագնում է սեղանի յետեւը) Այս բոպէիս էլ ձեզ պիտի վայր գցեմ,

հա, հա, հա... որտեղ մտաւ: Եւ դուք դատարկ  
հրացանից վախենում էք... հա, հա, հա...

ՓԱՌ.—Ես այնպէս, պատիւ ունիմ յայտ-  
նելու, որ...

ՆՈՒՆԵ—Հարկաւոր չէ ձեր պատիւ ունիմ  
յայտնելը, գիտեմ որ վախենում էք և պրծաւ  
գնաց, էլ ի՞նչ էք պաշտպանում:

ՆԱՏ.—Լաւ, վայր դիր հրացանը, ես քեզ  
հետ խօսելու բան ունիմ:

ՓԱՌ.—Ես կը հեռանամ, եթէ ձեզ արգելք  
եմ լինում:

ՆԱՏ.—Եթէ կարելի է, խնդրեմ մի ըոսէ  
իմ սենեակում սպասեցէք, քիչ գործ ունիմ ձեզ  
հետ:

ՓԱՌ.—Առայժմ, օրիորդ, ցտեսութիւն, ես  
պատիւ ունիմ յայտնելու, որ հեռանում եմ:  
(դուքս է գնում ճախ դոնից)

#### ՏԵՍԻԼ 4

ՆԱՏԱԼԻԱ և ՆՈՒՆԵ

ՆԱՏ.—Նստիր, Նունէ, այստեղ մօսս, քեզ  
բան ունիմ յայտնելու:

ՆՈՒՆԵ—Ի՞նչ մօրաքոյրս, դու այնպէս լուրջ  
դէմքով ես խօսում, որ ես սկսում եմ վախե-  
նալ, մի գուցէ դժբաղդութիւն է պատահել:

ՆԱՏ.—Ո՛չ, հոգիս. ես ընդհակառակը մի

ուրախալի բան ունիմ քեզ ասելու:

ՆՈՒՆԵ—Ուրախալի. պատմիր:

ՆԱՏ.—Դու, սիրելի Նունէ, գիտես թէ ես  
քեզ որքան եմ սիրում, գիտես որ քո մօր մա-  
հից յետոյ ես քեզ վերցրի ինձ մօտ, վայփա-  
յեցի, գգւեցի, ուսում տւի...

ՆՈՒՆԵ—Բայց ի՞նչու ես դրանք ասում:

ՆԱՏ.—Մի քիչ համբերութիւն ունեցիր, և  
ամենը կիմանաս: Հա, և այդպէս դու լաւ գի-  
տես, որ ես ոչինչ չեմ խնայել, ինչ որ կարո-  
ղացել եմ՝ արել եմ քեզ համար: Երբ ամուսինս  
կենդանի էր, աշխատող ունէի, ես էլ առատու-  
թեամբ էի ծախսում: Ոչ մի բանում քեզ ար-  
գելք չը կար, ամեն մի ցանկութիւնդ կատա-  
րում էինք և, փառք Աստծոյ, դու մեծացար,  
դառար այն, ինչ որ մենք Աստւածանից խնդ-  
րում էինք: Դու նոյնպէս գիտես, որ ես այժմ  
այն դրութեան մէջ չեմ, ինչ որ առաջ: Ես բա-  
ցի այդ, ունիմ տասը հազար ըուբլի պարտք, որ  
անպատճառ պէտք է վճարեմ պարոն Փառնա-  
կէսին:

ՆՈՒՆԵ—Ի՞նչ, դուք այն քաւթառին փող  
էք պարտ:

ՆԱՏ.—Նա քաւթառ չէ, ընդհակառակը նա  
երիտասարդ է, բաւականին հարուստ, ունի սե-  
փական տներ, կառք, ծառաներ: Այս, ես նրան  
պարտ եմ տասը հազար ըուբլի և եթէ չը կա-

բողանամ վճարել, նա հարկադրւած պիտի առաւըդով ծախի մեր ամարանոցը և քաղաքի տունը, այնպէս որ մենք բաց օդի տակ պէտք է մնանք։ Այս, այդպէս կը լինի, եթէ չազատես ինձ, այդ այնպէս մի հեշտ բան է քեզ համար, որ չեմ կարծում, թէ դու պատճառ ունենաս մերժելու։

ՆՈՒՆԵ—Ե՞ս, սիրելի մօրաքոյրս, ես ամենայն ուրախութեամբ կօգնեմ, եթէ այդ դժւար բան չէ։

ՆԱՏ.—Գիտես ի՞նչ. պարոն Փառնակէսը խնդրում է քո ձեռքը, նա սիրահարւած է քեզ վրայ և մինչև անգամ պատրաստ է պատռել տասը հազար րուբլու պարտամուրհակը, եթէ դու համաձայնես նրա կինը դառնալու։

ՆՈՒՆԵ—Ի՞նչ, նրա կինը։ Բայց մօրաքոյրս, նա իմ զոյգը չէ, նա ծեր է, նա տգեղ է. ես ի՞նչպէս կարող եմ նրա կինը դառնալ, ես կը մեռնեմ բոլորովին։ Ա՛խ, մօրաքոյրս, չէ, չը տառինձ նրան, նրանից խորշում եմ, նա սարսափելի է։

ՆԱՏ.—Նունէ, հոգիս, ես հաւատացնում եմ քեզ, նրա հետ դու հարկաւորութիւն չես զգալ ոչ մի բանի, նա հարուստ է։ Այնքան էլ ծեր չէ, միայն տեսքն է այնպէս։

ՆՈՒՆԵ—Չը գիտեմ, ես այնպէս վախենում եմ։ (Մտածում է) Ո՛չ, չեմ գնալ նրան։

ՆԱՏ.—Բայց Նունէ, մտածիր և մեր դրութեան մասին, չէ որ կը ծախին մեր քոլոր ունեցածը և այն ժամանակ ի՞նչ պիտի լինի մեր վիճակը։ Ո՛չ, հոգիս, դու խելօք ես, մտածիր և այնպէս էլ կատարիր իմ խնդիրը։ Դու գիտես, որ ես քեզ սիրում եմ և վատ բան չեմ ցանկանալ քեզ։ Ես գնում եմ, դու մտածիր, փոքրից կը մտնեմ՝ ինձ կը յայտնես քո վճիռը։ (զնումէ) ՆՈՒՆԵ—(միայնակ) Ա՛խ, Աստւած իմ որքան անբաղդ եմ, գնալ Փառնակէսին, որից ես խորշում եմ, թողնել լեռնին, նա կը մեռնի... բայց եթէ չը գնամ, յետո՞... այն ժամանակ այդ անիրաւ քաւթառը կը ծախի խեղճ Նատալիայի ունեցած-չունեցածը, մենք կը մնանք սառն օդում, անձրկը կը գայ—մեզ կը թրջի... (լացով) Բայց ի՞նչ անեմ, գնամ նրան, նա այնքան ծեր է, միշտ ռպատիւ ունիմ յայտնելուա... Ախ ի՞նչ անեմ. ճար չը կայ, պէտք է գնամ...»

## ՏԵՍԻԼ 5

ՆՈՒՆԵ և ԳՐԻԳՈՐ

ՆՈՒՆԵ—Քեռի, որքան ուրախացայ, եթէ իմանաս։ Ասա, դու ինձ սիրում ես։

ԳՐ.—Ի՞նչու համար ես հարցնում։

ՆՈՒՆԵ—Դեռ այս ասա, դու ինձ սիրում ես։

ԳՐ.—Այս, ի՞նչ կայ որ։

ՆՈՒՆԵ—Ի՞նչ անեմ, հապա նա կը ծախի  
մեր տունը և մենք կը մնանք արեգակի տակը  
և ես կը սկանամ, այն ժամանակ Լեռնն էլ ինձ  
չի ուզիլ. իսկ ես այդ չեմ ուզում:

ԳՐ.—Ուրեմն ի՞նչպէս անենք:

ՆՈՒՆԵ—Գիտես ի՞նչ. արի ես սուտ սուտ  
խելագար ձեանամ և Փառնակէսը որ տեսնի այդ  
կը փախչի, նա շատ վախկոտ է, իսկ յետոյ մենք  
էլ ճարենք մի տեսակ այդ փողը, կամ թէ Լե-  
ռնից կուզենք, նա ունի, շատ ունի, ինքը ա-  
սաց, որ հարուստ է:

ԳՐ.—Լաւ, բայց...

ՆՈՒՆԵ—Ես սկսեմ, իսկ գու գնա նրանց  
ասա, որ ես խելագարւել եմ, նրանք այդ սե-  
նեակումն են:

(Գրիգորը գնում է, նունէն վերցնում է հը-  
րացանը, կանգնում է աւանսցենայում, թափթղ-  
փում է մազերը եւ խելագար ձեւացնելով երգում  
է: Ներս են Մտնում Փառնակէսը, Նատալիան,  
Յովակիմը եւ Գրիգորը, կանգնում ծախ դռան մօտ,  
երգը վերջանալուց յետոյ, նունէն հրացանը ուղ-  
ղում է դէպի նրանց, նրանք այս ու այն կողմն-  
են վազվզում, նունէն նրանց յետելից: Պատկեր)

ՎԱՐԱԳՈՅՔ

ՆՈՒՆԵ—Եւ պատրաստ ե՞ս ինձ համար ա-  
մեն զոհողութիւն անել:

ԳՐ.—Ամենը, ինչ որ ոյժս պատէ:

ՆՈՒՆԵ—Տնւր ինձ տասը հազար ըուբլի:

ԳՐ.—Ի՞նչ:

ՆՈՒՆԵ—Տասը հազար ըուբլի:

ԳՐ.—Ի՞նչ կանես տասը հազար ըուբլին:

ՆՈՒՆԵ—Պէտք է, տնւր ինձ:

ԳՐ.—Բայց ես չունիմ, հոգիս, որտեղից  
տամ, ես այդքան փող չունիմ բոլորովին:

ՆՈՒՆԵ—Ի հարկէ քեզ համար հեշտ է այդ-  
պէս խօսելը, գու մարդու չը պէտք է գնաս:

ԳՐ.—Ի՞նչպէս թէ մարդու:

ՆՈՒՆԵ—Յայտնի բան է, գու հօ չպէտք է  
ամուսնանաս Փառնակէսի հետ:

ԳՐ.—Ո՞ւմ հետ:

ՆԱԻՆԵ—Ի հարկէ Փառնակէսի: Նա խնդրում  
է իմ ձեռքը և եթէ ես գնամ նրան, նա չի  
պահանջիլ մօրաքոյը Նատալիայից 10,000 ըուբ-  
լին:

ԳՐ.—Ո՞վ ասաց քեզ այդ:

ՆՈՒՆԵ—Ինքը, մօրաքոյը Նատալիան: Նա  
ասաց, որ եթէ չը գնամ նրան, նա պէտք է  
պարտքի փոխարէն ծախի մեր ամարանոցը և  
տունը: Ես քեզանից ուզում էի վերցնել տա-  
սը հազար ըուբլի և տալ նրան:

ԳՐ.—Եւ գու համաձայն ես նրան գնալ:

զիան ով ամ արած նեմու չափ—ջման  
ցրատ դժարժյա զման ով հան և ուսուա ով  
հմայ մասնաւ մշա նաման ով ով և  
ուսուա նեց բու ով թայ իլիք ով

### Գ. Ա. Ր. Ա. Ր. Ի. Ա. Ծ.

առա առա ով առ զայ սպաթ—ջման

թեմը միեւնոյն սենեակն է

### ՏԵՍԻԼ 1

#### ՆԱՏԱԼԻԱ և ՅՈՎԱԿԻՄ

ՆԱՏ.—(հրացանը տալով) Առ տաք կամաց,  
գգոյշ, որ չը տըաքի:

ՅՈՎ.—(զլխիվայր բռնելով հրացանը), Ուր  
տանեմ, հեռու չասէք, վախենում եմ, եթէ մօ-  
տիկ է, կը տանեմ:

ՆԱՏ.—Տար, տաք պարտիզում հողի տակին  
դիր, ապա թէ ոչ, նա կը զարթնի և նորից կը  
վերցնի: Անպատճառ մի դժբաղդութիւն պիտի  
պատահի:

ՅՈՎ.—Օհ, Աստւած մի արասցէ. հրաժա-  
րիմք ի սատանայէ և յամենայն փորձութենէ  
նորա: (զնում է)

ՆԱՏ.—(աջ զռան բանալիի ծակին մօտենա-  
լով): Դեռ քնած է: Ախ Աստւած իմ, այս ի՞նչ  
դժբաղդութիւն պատահեց, ով կը մտածէր, կամ

ով կը սպասէր, որ իմ սիրուն նունէն պիտի  
խելագարւէր: (մօտենում է կըկին ծակին) Ո՛չ,  
գեռ քնած է:

### ՏԵՍԻԼ 2

#### ՆԱՏԱԼԻԱ և ՓԱՌՆԱԿԻՄ

ՓԱՌ.—(նոյնպէս մօտենալով ծակին) Ի՞նչ  
կայ, մի բան կայ, զարթնել է:

ՆԱՏ.—Ո՛չ, քնած է: Բայց շարունակ եր-  
գում էր ամբողջ գիշերը: Մեզ քնել չէր տալիս,  
ես այս աստիճան վախենում էի, որ Յովակիմին  
տարել էի սենեակում քնելու. սակայն նրա էլ  
քունը տարաւ և քնած ժամանակ աթոռներից  
վայը գլորւեց և աւելի քան նունէն ինձ վախե-  
ցրեց: Եւ ով կը կարծէր, որ իմ նունէն պիտի  
խելագարւի:

ՓԱՌ.—Այո, պատիւ ունիմ յայտնելու, ես  
էլ չէի կարծում. այնպէս երիտասարդ, աշխայժ  
և յանկարծ խելագարւի: Բայց գիտէք ի՞նչ, ես  
էլ գիշերս չեմ քնել, մի գուցէ նրա խելագարու-  
թիւնը նրանից է, որ նա այնքան աշխայժ է:  
Այնպէս որ ես էլ, պատիւ ունիմ յայտնելու,  
սարսափելի վախենում եմ, մի գուցէ ես էլ խե-  
լագարւեմ, որովհետեւ ես էլ փոքր ի՞նչ աշխայժ  
եմ և հէնց այդ աշխայժութիւնիցն է, որ ես  
այսպէս երիտասարդ եմ մնացել:

ՆԱՏ.—Ռ' չ, իսկ ես կարծում եմ, նրա մասին վատ խօսող է եղել՝ հաւատացնում եմ ձեզ։ Դրանից պատահում է, չէք հաւատում։ Անցեալ ները մեր լրագրներից մէկում կարդացի, որ մի ինչ որ գիւղում այդպիսի մի բան պատահել է։

**ՓԱՌ.**—Է՛, պատիւ ունիմ... (լսում է ռտածայն) Գալիս է... գալիս է... (փախչում են)

### ՏԵՍԻԼ 3

ՆՈՒՆԵ—(գալիս է) ԱՌ, ի՞նչու չեկաւ լեռնը, Միթք նա չպիտի գայ, այն, չպիտի գայ ինչպէս երկում է։ Այժմ ով գիտէ, մի գուցէ նա սիրահարւել է ուրիշի վրայ, նրա հետ է գնում նաւակով ման գալ, նրան է երկի համբուրում այնպէս, ինչպէս ինձ։ Այն, անպատճառ նա սիրահարւել է մի որկիցէ Մարիամի, կամ ով գիտէ Վարդուհու վրայ։ ԱՌ, եթէ այս ըսպէին ինձ մօտ լինէր այդ Վարդուհին, ես նրա մազերը կը քանդէի, որ միւս անգամ չը համարձակւէր սիրել Լևոնին։ Բայց ի՞նչու եմ այդպէս ասում, գուցէ մեղաւորը Լևոնն է, նա է առաջինը սիրել Վարդուհուն։ Այժմ նա այլ Ասինձ չէ սիրում, սիրում է ուրիշին, հ՛ը, հ՛ը, որքան անբաղդ եմ ես... ես էլ նրա ջզրու կը գնամ Փառնակէսին։ Սպասիր, պարոն Լևոն, տես

ի՞նչպէս կը գնամ Փառնակէսին, ԱՌ, տղամարդիկ, տղամարդիկ, ի՞նչքան վատ արարածներէք գուք ամենքդ։ ԱՌ մէկը նա, այ և միւսը, երբորդը... մի խօսքով, ամենքդ, ամենքդ վատ էք, գուք արժանի չէք, որ կանայք ձեզ սիրեն։ (լրատում է ռտածայն, նա սկսում է երգել, բայց երբ տեսնում է, որ Գրիգորն է, լրում է)

### ՏԵՍԻԼ 4

ԳՐԻԳՈՐ և ՆՈՒՆԵ

ԳՐ.—Նունէ, սիրելիս, ի՞նչ կը տաս, որ քեզ ուրախացնեմ։

ՆՈՒՆԵ—Տասը հազարը գտար։

ԳՐ.—Ռ' սուրիշ բան, նրանից աւելի լաւ։ Քէ, իմացիր ի՞նչ...։

ՆՈՒՆԵ—Նրանից լաւ, չեմ հասկանում։

ԳՐ.—Ասեմ։ Լեռն՝ը։

ՆՈՒՆԵ—Ի՞նչ, Լեռնը։ ԱՌ Աստւած։ (վագում է դէպի դուռը, բայց իսկոյն յիտ դառնում եւ երեսը շուր տալիս)

### ՏԵՍԻԼ 5

ՆՐԱՆՔ և ԼԵՒՈՆ

ԼԵՒ.—Նունէ, կատարեցի տւած խօսքս և, ի՞նչպէս տեսնում ես, ես այստեղ եմ, քեզ մօտ

ՆՈՒՆԵ—ի՞նձ մօտ ես, ինչո՞ւ նրա մօտ չես»  
Լեհ.—Ո՞ւմ մօտ, ի՞նչեր ես ասում:

ՆՈՒՆԵ—նրա, գնա, գնա աւելի լաւ է նրա  
մօտ:

Լեհ.—Ես ոչինչ չեմ հասկանում, ի՞նչ եմ  
ասում:

ՆՈՒՆԵ—ի հարկէ չես հասկանալ, գիտեմ,  
Ո՞չ, ոչ, գնա, գնա, գնա նաւակով վարդուհու  
հետ ման արի, համբուրիր նրա պարանոցից,  
նրա հետ նայեցէք և զմայլեցէք լուսնի լուսով,  
կատւի մլաւոցով... Այս, այս, գնա, գնա...

Լեհ.—Ի՞նչ վարդուհի, ի՞նչ ես ասում, դու  
հօ խելագարւած չեմ:

ՆՈՒՆԵ—Ես եմ խելագարւած, ներողու-  
թիւն, ես միայն ձևանում եմ խելագար:

Լեհ.—Ի՞նչպէս թէ ձեանում եմ, ծիծա-  
դում ես ինձ վրայ, ի՞նչ է: Աւելի լաւ է, ես  
գնամ այստեղից:

ՆՈՒՆԵ—Գնա... ոչ... ոչ, գնա, գնա... Այ-  
սինքն սպասիր, կաց... ինչո՞ւ ես կանգնել, ան-  
ցիր գնա... ոչ, ոչ, մի քիչ կաց...

Գր.—Ի՞նչու էք երեխայութիւններ անում,  
մանաւանդ դու, Նունէ, քեզ ով ասաց, որ նա  
սիրահարւած է ուրիշի վրայ:

Լեհ.—Ճիշտ, ասա, խնդրեմ, ով էր այդ  
տիմար լրտեսը:

ՆՈՒՆԵ—Ինձ ոչ ոք չասեց, բայց ես երեխ-

կայում էի, որ դու սիրահարւել ես: Գիտես,  
շատ անգամ մարդ մի բան որ երեակայում է,  
ճիշտ է դուրս գալիս, այդպէս էլ ես, կարծեցի  
թէ ճիշտ եմ երեակայել:

Գր.—Այն ինչ, դուրս եկաւ որ ճիշտ չես  
երեակայել: Ահա ես բացատրեմ, պարոն Լևոն,  
թէ բանն ինչումն է: Օրիորդ Նունէի մօրաքոյրը,  
այսինքն իմ քոյրը, տիկին Նատալիան, իր ա-  
մուսնուց թողած պարտք ունի պարոն Փառնա-  
կէս Դարաչիչագեանին, որին կարելի է ճանա-  
չում էք:

Լեհ.—Ո՞չ, պատիւ չեմ ունեցել ճանաչելու:  
ՆՈՒՆԵ—Ես կը ծանօթացնեմ: Եւ պատիւ  
ունիմ յայտնելու, որ...

Գր.—Սպասիր, Նունէ, ես բացատրեմ ա-  
մեն ինչ. ահա այդ պարոն Փառնակէսը սիրա-  
հարւել է Նունէի վրայ և ցանկանում է նրա հետ  
ամուսնանալ: Նա պայմաններ է գնում քրոջս,  
եթէ Նունէին իրեն տայ, այն ժամանակ նա կը  
պատուէ տասը հազար ըուրլու մուրհակը, իսկ  
հակառակ դիպւածում, հարկադրւած պիտի ծա-  
խէ քրոջս ամարանոցը և քաղաքի տունը, որով-  
հետեւ քոյրս անկարող է վճարել 10,000-ը, նա  
այդքան փող չունի: Ահա ամենը:

ՆՈՒՆԵ—Դու կը վճարես ի հարկէ տասը  
հազար ըուրլին, չէ, Լևոն, չէ որ դու ինձ սի-  
րում ես, իմ սիրոյ համար, կարծեմ, կը նւիրես

տասը հազար բուքի: Ես, գիտես, ի՞նչ արի. սուտ  
սուտ խելագարւեցի, որպէսզի այդ քաւթառ  
Փառնակէսին փախցնենք:

ԳՐ.—Իսկապէս հետաքրքիր տեսարան կար,  
պարոն Լեռն, ափսոս այնտեղ չէիք, Բայց էլի  
լաւ ժամանակին եկաք, այժմ կը տեսնէք թէն  
փոքրիկ մասը, բայց այնուամենայնիւ կծիծա-  
ղէք փոքր ինչ:

ԼԵՒ—Բայց ի՞նչպէս:

ԳՐ.—Ահա ի՞նչպէս. ես կը գնամ նրանց կը  
կանչեմ, իսկ դուք այստեղ կը կատարէք բժշշ-  
կի դեր, այսինքն անունով միայն, Նունէն իրա-  
նը կը շարունակի: Ահա ես գնում եմ: (գնում է)

ՆՈՒՆՔ—Կանգնիր մօտս և ձեռքս բռնիր:

ԼԵՒ—Բայց կիմանան, եթէ մէկը նրան-  
ցից ինձ ճանաչում է:

ՆՈՒՆՔ—Ոչոք չի ճանաչում, դու հանգիստ  
կաց: Մ’ս, գալիս են: (Նունէն սկսում է երգել,  
նրանք մտնում են եւ դուն մօս կանգնում:  
Նետու քոնում է նունէի զսրկերակը բժշկի նը-  
ման: Նունէն ժամանակ առ ժամանակ նայում  
է նրանց, նրանք վախենում են: Երգը վերջանա-  
լուց յետոյ, նունէն ծիծաղում է, նրանք ապշում  
են):

ՆՈՒՆՔ—Մօրաքոյրս, խելագարութիւնից  
ինձ ազատեց այս պարոնը, այսինքն Լեռնը, որ

ինդրում է իմ ձեռքը և ես ընդունում եմ. Իսկ  
դուք պարոն Փառնակէս...

ՓԱՌ.—Ի՞նչպէս, բայց տասը հազարը:

ԼԵՒ.—Ես վճարում եմ, պարոն Փառնակէս,  
ինդրում եմ վաղը ինձ մօս շնորհքերէք և ստա-  
նաք:

ՓԱՌ.—Հա... Բայց պատիւ ունիմ յայտնե-  
լու որ...

ՆՈՒՆՔ—Այդ յետոյ, իսկ այժմ...

(Նունէն Փառնակէսին ձեռքերով ըլթ է ցոյց  
տալիս: Նատալիան ուրախացած է: Գրիգորը ծի-  
ծաղում է ուղիղ Փառնակէսը, վերջինս կատաղած  
է եւ ապշած: Պատկեր):

## ՎԱՐԱԳՈՅՔ

## ՀԱՐԱԳՈՒՅԱԿ

## U S U R Y

Վոկրպիլ 1 արար. Խօլոստվի

## Թարգմ. Գ. Բ. Ա Ի Ե Տ Ս Ե Ա Ն

Настоящая пьеса, подъ заглавіемъ „Ро-  
ковая скамейка“, перев. Гр. Аветяна, разрѣ-  
шена Намѣстникомъ ЕГО ИМПЕРАТОРСКА-  
ГО ВЕЛИЧЕСТВА на Кавказѣ, для предста-  
вленія на сценахъ края (Отзывъ Канцеля-  
ріи за № 23728—908.

17 Ноября 1908 г. г. Тифлисъ

И. Д. Предсѣдателя Комитета **Д. Колобовъ**

Секретарь А. Гусевъ

## Ա Ն Ձ Ի Ն Ք

Ամառային այգի է։ Հանդիսականներից ծախնատարան, որի յետեւ յունական մի աստածունու արձան։ Վարագոյրը բացիկիս քեմը դաշտում է։

Stuhl 1

ԱԼԻՎԻՆ, ՓՈՔՐԻց ԴՄԻՏՅՈՒՆԻՑ ԼԱԽՄԵՆՏԻԵԿԻԶ

ԱԼ.—(արագ մտնելով աջլց) — Կարծեմ, չեմ  
ուշացել: (Ժամացոյցին նայելով) — Դեռ ժամը  
12 և կէսն է, իսկ կիզան խոստացել է այստեղ  
գալ ժամը մէկ և կէսին: Մի ժամ պիտի սպա-  
սեմ, շատ շտապեցի: (զբանից լուսանկար հա-  
նելով) Սիրելիս, թանկադինս, ինչ հրաշալի բան  
է ֆօտոգրաֆիան, նայիր, կարծես, կենդանի  
լինի, տես մինչև անգամ ձախ թշի վրայի խալն  
էլ կայ (համբուրում է լուսանկարը) սիրելիս, սի-  
րելիս... (Ժամացոյին նայելով) Օ՛խ, միայն 2  
րոպէ անցաւ, որքան դանդաղ է անցնում ժա-  
մանակը, էհ, նստեմ և սպասեմ, կարելի է նա  
նշանակւած ժամանակից վաղ գայ: (Նստում է  
եւ լուսանկարով զբաղւում)

ԴՄ. ԼԱՀ.—(մտնելով աջից) — Լաւ զբօսանք  
կատարեցի, այժմ կարելի է և հանգստանալ:  
Շատ դուր է գալիս ամարային այգին ինձ—գա-  
ւառացուս, բայց շատ զարմանալի է, որ ոչ մի  
հատ սունկ չի բանում այստեղ, ճիշտն ասեմ  
ձեզ, ամբողջ օրը և ոչ մի հատ էլ չը գտայ,  
այնքան փնտուեցի: (մօտենալով Սլիվինին, քա-  
ղաքավարութեամբ քարձրացնում է պլատկը) —  
Ներեցէք, այս տեղը բռնած չէ:

ԱԼ.—(լուսանկարը թագնելով, սրտնեղած) — Կարծեմ, ինքներդ էլ տեսնում էք, որ բացի  
ինձնից ոչ ոք չէ նստած:

ԴՄ. ԼԱՀ.—Խոնարհաբար շնորհակալ եմ:  
(նստում է ոտը դողողացնելով, հանում է թաշ-  
կինակը եւ ճաղատ զլովս սըրում) — Այսօր սար-  
սափելի շոգ օր է, ճիշտն ասեմ ձեզ:

ԱԼ.—Սրան էլ, այս ցանցառին ի՞նչ սատա-  
նայ բերեց: (փոքրիկ լրութիւն, որի ժամանակ  
Դմիտրիյ Լաւրենտիեվիչը ցանկանում է խօսել եւ  
չի վճռում այդ քայլն անելու, Սլիվինը շարունակ  
ուշի աջ է նայում եւ անհանգստութեան նշան-  
ներ ցոյց տալիս. Դմիտրիյ Լաւրենտիեվիչը հանում  
է զրպանից մի լրազիր եւ ցոյց տալով իբր կար-  
դում է, յետեւում է աշքերով Սլիվինին)

ԱԼ.—(ժամացոյցին նայելով) — ՄԵԿԻՑ քա-  
ռորդ պակաս, նա ամեն բոպէ կարող է գալ:  
Չէ, մի սրան տեսէք, նստել է յանդգնաբար և

գնալու մտադրութիւն չունի ամենեին:

ԴՄ. ԼԱՀ.—(վերջապէս համարձակելով խօ-  
սել, մօտենում է նրան) — Ներեցէք, որ անծա-  
նօթ լինելով՝ համարձակւում եմ, ճիշտն ասեմ  
ձեզ...

ԱԼ.—Ի՞նչ էք ցանկանում դուք:

ԴՄ. ԼԱՀ.—Ներեցէք, դուք հաւատո՞ւմ էք  
հօմէօպատիային:

♦ ԱԼ.—(զարմացած) Հօմէօպատիային:

ԴՄ. ԼԱՀ.—Այո, ճիշտն ասեմ ձեզ, հօմէօ-  
պատիային: Դուք, կարծեմ, հիւանդ էք, չէք  
ցանկանալ արդեօք... (զրպանից հանում է ան-  
գոյն հեղուկով մի սրւակ) կարմիր էլէքտրակա-  
նութիւն, ճիշտն ասեմ ձեզ, օգնում է համարեա-  
թէ բոլոր հիւանդութիւնների ժամանակ: (մի ու-  
րիշ սրւակ հանելով) — Իսկ այս, ճիշտ ասեմ ձեզ,  
դեղին էլէքտրականութիւն է: Դեղին էլ չէք  
ցանկանում:

ԱԼ.—Ո՞չ:

ԴՄ. ԼԱՀ.—(սրւակները թագնելով) — Ի-  
գուր: Ճիշտն ասեմ ձեզ, շատ իգուր:

ԱԼ.—Ի՞նչ է կպել ինձ սա: (ժամացոյցին  
նայելով)

ԴՄ. ԼԱՀ.—Ճիշտն ասեմ ձեզ, ես գաւա-  
ռացի եմ, թոյլ տւէք ներկայանալ. Դմիարիյ  
Լաւրենտիչ Խօխրեակով, Տամբովի կալւածա-  
տէր:

ԱԼ. — Խօխրեակնվ:

ԴՄ. ԼԱՀ. — Բոլորովին ճիշտ է, Խօխրեակնվ: Ճիշտն ասեմ ձեզ ես ամուսնացել եմ Երիտասարդի հետ, ամուսնացել եմ ուղիղ միտարի, 2 ամիս և 14 օր առաջ, Դէ ի հարկէ հասկանալի է, երիտասարդ կին է, ցանկանում է պարել, զւարձանալ և այլն... իսկ ես չեմ կարող, ճիշտն ասեմ ձեզ, չեմ կարող, որովհետև իմ ոտը... այ... (ղողացնում է) Նատաշան էլ ինձ ասում է... իմ կինը Նատալիա Իւանովնա է, ճիշտն ասեմ ձեզ: Ահա Նատաշան ինձ ասում է. «հայրիկ, ինչու չը գնանք Պետերբուրգ, կը բժշկես հօմէօպատիայով, ասում է, հօմէօպատիան շատ է օգնում»: Դէ, իհարկէ միջոց ունիմ, ինձ օգուտ, իսկնատաշին զւարձութիւն: Վճռեցինք, ճիշտն ասեմ ձեզ և եկանք Պետերբուրգ: Դիմեցի մի հօմէօպատ բժշկի, ահա նա էլ ինձ այս դեղերը տւեց. կարմիր, կանաչ և դեղին էլէքտրականութիւն և հօմէօպատիական կաթիւներ 6 տեսակի: Կարմիրը պէտք է ընդունել առաւտեան անօթի, դեղինը...

ԱԼ. — (խօսքը կտրելով) Դուք ասում էք, որ ձեր ազգանունը Խօխրեակնվ է: Վլադիմիր Խօխրեակնվը ձեր ազգականը չէ:

ԴՄ. ԼԱՀ. — Վոլոգեա Խօխրեակնվը, այս, ես նրա քեռին եմ, այսինքն ոչ բոլորովին քեռին, ճիշտն ասեմ ձեզ, նրա հայրը իմ մօրա-

քըոջ աղջկայ հօրեղբօր որդին է: Ասենք միկնոյն է, ճիշտն ասեմ ձեզ, ես նրան սիրում եմ որդուս նման: Երեք տարի է չենք տեսնւել. նա այն ժամանակ գնաց Մօսկվայից և մինչև անգամ հարսանիքիս էլ ներկայ չէր:

ԱԼ. — Նա այժմ այստեղ Պետերբուրգումն է:

ԴՄ. ԼԱՀ. — Միթէ Պետերբուրգումն է: Լաւսիւրպրիդ է, ճիշտն ասեմ ձեզ:

ԱԼ. — Ես նրա բարեկամն եմ — Սլիվին:

ԴՄ. ԼԱՀ. — Շատ ուրախ եմ:

(Մէկ-մէկու ծեռք են սեղմում)

ԱԼ. — Դուք կարելի է հետաքրքրուում էք նրա հասցէն իմանալ:

ԴՄ. ԼԱՀ. — Շատ կը պարտաւորացնէք:

ԱԼ. — Փօնտանկա, համար 56 տունը. Եթէ ուզում էք նրան տեսնել, նա այս բոպէին տանը կը լինի: (Ժամացոյցին նայելով) Երկուսի քառորդն է, նա այս բոպէին տանն է և սուրճ է խմում: Այսօր տօն է, նա տաննէ, իսկ միւս օրերը նա ծառայութեան է գնում:

ԴՄ. ԼԱՀ. — Ահա թէ ինչ, վոլոգեան ծառայում է:

ԱԼ. — Ինչպէս չէ, նա ծառայում է պարտքեր վճարելու կօմմիսիայում:

ԴՄ. ԼԱՀ. — Պարտքեր վճարելու կօմմիսիայում: Ասացէք խնդրեմ, կը նշանակի բոլորովին լըացել — խելօքացել է: Շատ շնորհակալ եմ,

Թոչում եմ: (Դժւարութեամբ քարձրանում է, բայց  
չի կարողանում մի քայլ անել) Ա՛խ...

ՍԼ.—Ի՞նչ պատահեց:

ԴՄ. ԼԱՀ.—Ոտքս, ոչինչ, կանցնի: Այդ պա-  
տահում է, բարի եղէք, բոթեցէք մէջքիս, եթէ  
միայն չի գժւարացնի ձեզ այդ, ճիշտն ասեմ  
ձեզ:

ՍԼ.—Ուրախութեամբ: (Թեթեւ ըոթում է  
նրան)

ԴՄ. ԼԱՀ.—(զնալով) Շնորհակալ եմ: Գնա-  
ցի... (զնում է ծախ, մեծ շրջան անելով քերի  
վրայ) — Յտեսութիւն, շատ դօչաղ եմ, միայն  
ճիշտն ասեմ ձեզ...

ՍԼ.—Փառք Աստծոյ, վերջապէս ազատւեցի:  
Եւ ժամանակն էլ է. այս ըոպէին կը գայ իմ  
Լիդան: (զնում է խորքը եւ նայում է ծախ)

## ՏԵՍԻԼ 2

ՎԱՐԴԻՄԻՐ ՎԱՍԻԼԵՒԻԶ

ՎԼ. ՎԱՄ.—(մտնելով աջից եւ նստելով)  
Ես առաջինն եմ: Իմ ապագայ հարսնացուներիցս  
դեռ ոչ ոք չը կայ: (Սլիվինին տեսնելով) Կո-  
ստեա, այդ դժւ ես, ի՞նչ ես շինում այստեղ,  
բարև...

ՍԼ.—(արագ) Բարև, բարև... Լսիր, Վօլո-  
դեա, գնա այստեղից:

ՎԼ. ՎԱՄ.—Այդ ի՞նչ նորութիւններ են:  
Ինչու:

ՍԼ.—Այնպէս, հարկաւոր է:

ՎԼ. ՎԱՄ.—Ինքդ գնա:

ՊԼ.—Քո քեռին այստեղ է — Պետերբուր-  
գում: Ես նրան ասացի, որ դու ծառայում  
ես պարտքեր վճարելու կօմմիսիայում: (ծախն-  
է նայում)

ՎԼ. ՎԱՄ.—Սրամիտ չէ: Ի՞նչ քեռի:

ՍԼ.—Դմիտրիյ Լաւրենտիևիչ է, ի՞նչ է... (նա-  
յում է)

ՎԼ. ՎԱՄ.—Դմիտրիյ Լաւրենտիևիչը, ախ-  
յիշում եմ, ծերժուկը, և որտեղի՞ քեռի է նա:

ՍԼ.—Միենոյն է, ես նրան քեզ մօտ ու-  
ղարկեցի, երկի նստած քո սենեակում՝ քեզ է  
սպասում: (նայում է)

ՎԼ. ՎԱՄ.—Է՞ն, թնդ, որքան քէֆը տալիս  
է, սպասի: Այդ ի՞նչ է, շարունակ այն կողմն ես  
նայում:

ՍԼ.—Լսիր, գնա այստեղից, խնդրում եմ:  
Այս նստարանի վրայ ես մի օրիորդի հետ տե-  
սակցութիւն եմ նշանակել:

ՎԼ. ՎԱՄ.—Ես էլ եմ տեսակցութիւն նշա-  
նակել, միայն ոչ թէ օրիորդի, այլ միանգամից  
Յայրի տիկինների հետ և ամեն մէկի հետ մի  
մի ժամ յետոյ:

ՍԼ.—Լսիր, գու կատակ ես անում, իսկ ես

կատակների գլուխ չունիմ,  
ՎՀ. ՎԱՍ.—Ամենեն էլ կատակ չեմ անում,  
այդ մի ամբողջ պատմութիւն է: Լսիր...

ՍԼ.—Միայն կարճ կապիր, աղաչում եմ  
քեզ, հինգ բոպէից կը լրանայ...

ՎՀ. ՎԱՍ.—Ես վճռել եմ ամուսնանալ ըստ  
յայտարարութեան, այժմ այդ մօղա է, իսկ ես  
—դու այդ գիտես, չեմ ուզում մօղայից հետ  
մնալ, եւ յետոյ ով գիտէ ինչ է կարող պատա-  
հել:

ՍԼ.—Կարճ, կարճ... (ժամացոյցին նայելով:  
Եյս տեսարանի ժամանակ նա շարունակ նայում  
է ժամացոյցին եւ ծախ կողմը)

ՎՀ. ՎԱՍ.—Զգուշութիւն էր հարկաւոր, դրա  
համար էլ ես յայտարարութիւններ տուի լրագր-  
ների մէջ այս տեսակի, ոմի երիտասարդ պա-  
րոն, մի շատ լուրջ գործի համար ցանկանումէ  
ծանօթանալ երիտասարդ այրի կնոջ հետ, որ ու-  
նի սիմպատիկ արտաքին և դրամագլուխ: Պա-  
տասխանները ուղարկել ըստ պահանջի, լրագրի  
համար 666 անգորբագիրը ցոյց տւողին»:

ՍԼ.—Ուղիղ մէկ և կէս ժամն է:

ՎՀ. ՎԱՍ.—Երեք օրւայ ընթացքում ես  
ստացայ հարիւր ութսուն և երեք նամակ, այդ  
նամակներից առաջին անգամւայ համար ես ըն-  
տրեցի երեքը, և այդ երեք այրի սիրուն տի-  
կիններին նշանակեցի տեսակցութիւն այստեղ,

ամարային այգու այս նստարանի վրայ: Մէկը  
պիտի գայ ժամը մէկ և կէսին, միւսը երկու և  
կէսին, իսկ երրորդը—երեք և կէսին:

ՍԼ.—Ի՞նչպէս պիտ ճանաչես նրանց:

ՎՀ. ՎԱՍ.—Առաջինը պէտք է լինի կրծքին  
կպցրած մի բանտ, որ կարմիր գոյն պիտի ու-  
նենայ, երկրորդը—կանաչ, իսկ երրորդը—վար-  
դագոյն: Իսկ ես անձանանչելի պիտի մնամ,  
մինչև որ գրանիցս մի լրագիր չը հանեմ և  
սկսեմ կարդալ: Այդ մեր նշանը պիտի լինի, որ  
կը նշանակի թէ Ես եմ ծանօթանալ ցանկացողը:  
Ահա ես էլ կը նայեմ, եթէ տեսայ, որ մի ան-  
ձոռնի ոեխով կին է, ի հարկէ լրագիրը չեմ հա-  
նի: Լաւ եմ հնարել, չէ: Տեսար, կոստեա, որ  
այժմ դու ինձ պէտք է զիջես նստարանը:

ՍԼ.—Ոչ մի պայմանով:

ՎՀ. ՎԱՍ.—Լսիր, այդ խոզու...

ՍԼ.—(Նայելով ծախ) — Նա է... (արագ վեր  
է թռչում եւ զիշարկը ճանապարհին, բարեւելու  
հանելով, վազում դուր)

ՎՀ. ՎԱՍ.—Դէ, պատերազմի դաշտը ինձ  
ֆնաց: (զրապանը շօշափելով) — Տէր իմ Աստւած,  
իսկ լրագիր վերցնելը մոռացել եմ, վազեմ—գըտ-  
նեմ, ապա թէ ոչ բոլոր էֆֆէկտը կը կորչի:  
(արագ վազում է աջ)

### ՏԵՍԻԼ Յ

ՊԵՏՈՒԽՈՎԱՆ, յիսոյ ԴՄԻՏՐ. ԼԱԿՐԵՆՏԻԵԿԻՉ

ՊԵՏ.—(մտնում է աջից եւ մօտենում նստարանին) Հինգերորդ նստարանը... Այստեղ է: (նստում է) Զարմանալի է, որ նա դեռ ևս չէ եկել, այդ ինձ գուր չէ գալիս:

ԴՄ. ԼԱԿ.—(մտնելով ձախից մօտենում է աւանցենային)—Որպիսի անախորժ զիալւածք, ճիշտն ասեմ ձեզ, գնալուց մոռացայ վօլոդեայի հասցէն: Երբ այգումն էի՝ յիշում էի, մինչեւ անդամ սունկ էի փնտուում, էլի յիշում էի, դուրս եկայ այգուց, կառք նստեցի—յիշում էի, գնում էի—յիշում էի, բայց յանկարծ կառքը կպաւ մի քարի, վեր թռայ կառքի մէջ և... մոռացայ հասցէն, այսինքն թէ փողոցի անունը և թէ տան համարը, ճիշտն ասեմ ձեզ: Ոչինչ, հանգստանամ մի քիչ: (մօտենալով նստարանին)—Ներեցէք, տիրուհի, այս տեղը բռնւած չէ:

ՊԵՏ.—Իսկ դուք ի՞նչ եք կարծում:

ԴՄ. ԼԱԿ.—Ճիշտն ասեմ ձեզ, ես... (ըստ վերջացնելով խօսքը, նստում է նստարանի միա ծայրին, կողմ) Կարծես, շատ բարկացկոտ տիկին է... (սրբում է ճաղատ գլուխը թաշկինակով)

ՊԵՏ.—(կողմ) Սրան էլ ի՞նչ սատանան բերեց այստեղ: (Նրան հետազոտելով) Մի գուցէ սա է յայտարարութիւն տւող պարոնը... ով դիտէ,

սա է պսակւել ցանկանում այրիի վրայ, նայիր ի՞նչ ճաղատն է, ասենք եթէ նա ունեոր և համեստ պարոն է, ի՞նչու չը գնալ նըան, շուտով կը մեռնի և կարողութիւնը կը թողնի: Ինձ նըան 5 զաւակ ունեցող այրուն շատ էլ մտածելը ձեռնտու չէ, փորձենք... (հազարվ, կամաց կամաց նրան է մօտենում, կը ծքի բանտը ուղղելով) Զէ, կարծես նա չէ, բանտին վրայ էլ ուշագրութիւն չի գարձնում: Ո՛չ, նա չէ:

ԴՄ. ԼԱԿ.—(հանում է գրպանից մի լրազիր եւ սկսում է կարդալ վերջին երեսից)

ՊԵՏ.—Նա է, նա է... լրազիր հանեց... կը նշանակի ես նըան դուր եկայ: Ի՞նչ կայ որ, նա դեռ այնքան էլ ծեր չէ, արտաքինն էլ բաւականին սիմպատիկ է: Բայց ի՞նչու նա չէ խօսում, ախ, որքան համեստն է: Ամուսինը միշտ պէտք է համեստ լինի և կնօջիցն էլ վախենայ: (աւելի մօտ է քաշում, հազում է եւ շարժում քանտը, փոքրիկ լուսթին) Լսեցէք, ի՞նչպէս է ձեր անունը...

ԴՄ. ԼԱԿ.—Ի՞նչ:

ՊԵՏ.—Ի՞նչ նորութիւններ կան լրազրում:

ԴՄ. ԼԱԿ.—Ես տիրուհի, միայն յայտարարութիւնները կարդացի, ես միշտ այդպէս եմ անում, նրանք աւելի հետաքրքիր են:

ՊԵՏ.—(կողմ) Նա է, նա... յայտարարութիւն ասաց, նա ակնարկում է: (մօտենալով) Ի հարկէ յայտարարութիւնները լրազրի ամենահե-

տաքրքիր մասն են: Ընտանեկան պիտոյքների համար շատ բան կարելի է գտնել, նամանաւանդ եթէ տանտիկինը լաւն է, համեստ, աշխատասէր... Այո, տանտիկինութիւնը և ընտանեկան կեանքը շատ մեծ բան է:

ԴՄ. ԼԱՀ.—Ճիշտն ասեմ ձեզ, ես...

ՊԵՏ.—(Նրա խօսքը կտրելով) Ի՞նչը կարող է ընտանեկան կեանքից քաղցր լինել:

ԴՄ. ԼԱՀ.—Ես ձեզ հետ լիովին համաձայն եմ: Ճիշտն ասեմ ձեզ, ես...

ՊԵՏ.—Ճիշտ չէ: Այս, և ես այրի եմ...

ԴՄ. ԼԱՀ.—Ասացէք խնդրեմ:

ՊԵՏ.—Իմ միակ բաղդաւորութիւնը իմ հինգ զաւակներն են: Իսկական հրեշտակներ... ի հարկէ եթէ գոնւէր մի տղամարդ, որը ցանկանար, այսպէս ասած, տաքանալիր ամբողջ կեանքի ընթացքում իմ կրծքի վրայ՝ ես նրան կը պաշտէի, ձեռներիս վրայ մտն կածէի: Ես այնպէս հիանալի կօտեաներ եմ պատրաստում, այնպէս լաւ դեղգիտեմ բեվմատիզմի դէմ, որ...

ԴՄ. ԼԱՀ.—Տիրուհի, ճիշտն ասեմ ձեզ, ես...

ՊԵՏ.—Ինչու ստել և կեղծել: (Բոլորովին նրան մօտենալով)

ԴՄ. ԼԱՀ.—Տիրուհի, ինձ բոլորովին վայրդցեցիք նստարանից:

ՊԵՏ.—Բոլորը մէկ է, մէկ-մէկու հաւանե-

ցինք: Ես Պերեպէտուա Պետրովսա Պէտուխովան եմ, ես այրի եմ... Ի՞նչ է ձեր անունը: Այն դժուք էիք յայտարարել: Ես համաձայն եմ:

ԴՄ. ԼԱՀ.—Ի՞նչ յայտարարութիւն: Ի՞նչին էք դուք համաձայն: Ճիշտն ասեմ ձեզ, ես...

ՊԵՏ.—Այ, այրու վերաբերեալ և անձամբ տեսնւելու առիթով: Ի հարկէ, ես դրամագլուխ չունեմ, բայց դրա փոխարէն լաւ տանտիկին եմ, իսկ այդ մի բան արժէ, չէ:

ԴՄ. ԼԱՀ.—Ոչինչ չեմ հասկանում:

ՊԵՏ.—Էլ ինչու պարզախօս չը լինինք, ցանկանում էք պատկւել ինձ հետ:

ԴՄ. ԼԱՀ.—Պատկւել... Ճիշտն ասեմ ձեզ, ես արդէն ամուսնացած եմ, մի տարի, երկու ամիս և տասներ...

ՊԵՏ.—(բարձրանալով) Ամուսնացած էք... Դուք ամուսնացած էք, ուրեմն այդ ի՞նչ է, յարգելի պարոն, ծիծաղում էք ինձ վրայ:

ԴՄ. ԼԱՀ.—Տիրուհի, ես...

ՊԵՏ.—Կարծում էք, որ ես անպաշտպան մի կին եմ, որ ինձ ոչ ոք չի օգնի:

ԴՄ. ԼԱՀ.—Ճիշտն ասեմ ձեզ...

ՊԵՏ.—Կապիկ, քաւթառ:

ԴՄ. ԼԱՀ.—Տիրուհի... (ուզում է վեր կենալ)

ՊԵՏ.—Մզած կիտրոն, փալաս:

ԴՄ. ԼԱՀ.—Տիրուհի:

ՊԵՏ.—Զգւելի (թքում է եւ գնում):

ԴՄ. ԼԱՀ.—(բարձրանալով) Ես... ես... օխ,  
ուսս էլ չի շաբախում. (նստում է, ծակատը սր-  
բելով, թագոնելով լրազիրը) Խելագար կին, հան-  
գոտանալ չեմ կարող... և ի՞նչ փալաս եմ ես,  
ճիշտն ասեմ ձեզ: Այս ի՞նչ տարօրինակ հասա-  
րակութիւն է այս Պետերբուրգում: Զէ, ընդու-  
նեմ կարմիր էլեքտրականութիւնից, որ մի քիչ  
հանգստանամ: (հանում է սղուակը եւ քիչ խմում)

### ՏԵՍԻԼ 4

ԴՄԻՏՐ. ԼԱՀԻՇՆՏԻԵՒԻՉ և ԶԵՖԻՐՈՎԱ

ԶԵՓ.—(դուրս գալով աջից). Ա՛խ, ինչպէս  
խփում է սիրտս, տեսակցութիւնը նշանակւած  
է հէնց այս նստարանի վրայ, ես ինքս էլ չեմ  
հասկանում, ինչպէս կարողացայ վճռել այսպիսի  
քայլ անել—գալ տեսակցութեան ըստ յայտարա-  
բութեան: Ա՛խ, որքան ամաչում եմ: (ծածկում  
է ծեռքերով երեսը) Կարծում եմ այդ գաղ-  
տնի պարոնը չի տրտնջի, եթէ իմանայ որ ես  
այրի չեմ, այլ օրիորդ: Ի՞նչ հարկաւոր է նրան  
անպատճառ այրի—չեմ հասկանում: Կարծեմ մի  
քիչ շտապեցի,—նստեմ. սպասեմ: Ուժ, ինչ որ  
տգեղ ծերուկ է, անպատճառ պիտի խանգարի  
մեզ: (մօտենալով նստարանին)— Կարմող եմ ես  
էլ նստել:

ԴՄ. ԼԱՀ.—(փոխանակ պատասխանելու, ինչ

որ ձայն է հանում): Աւելի լաւ է լոեմ, ապա թէ  
ոչ էլի կը վիրաւորեն: Ափսոս, կնօջս խօսք տւի  
այստեղ սպասել, ապա թէ ոչ վաղուց տուն  
կերթայի:

ԶԵՓ.—(կողմ) Զէ, սա գնալու մտադրութիւն  
չունի, ինչպէս երկում է: Զեմ հասկանում, ին-  
չու սիրահարւածների համար առանձին նստա-  
րաններ չեն շինում, որոնց վրայ ուրիշները չը  
կարողանային նստել: Ի՞նչ հրաշալի միտք. մի  
գուցէ սա «նրա» հայրն է, և «նա», իբրև խո-  
նարհ որդին, երեխ ուղարկել է հօրը ծանօթա-  
նելու իւր ապագայ նշանածի հետ: (հազում է  
եւ կրծքի բանտը շտկում) Եթէ նրա հայրն է,  
երեխ իսկոյն լրազիր կը հանի գրպանից:

ԴՄ. ԼԱՀ.—(կողմ) Կարծեմ, այս խրտւիլա-  
կը ցանկանում է խօսակցել ինձ հետ, ինչպէս  
չէ, կը սպասես հոգիս, աւելի լաւ է, լրազիրս  
կը կարդամ: (լրազիրը հանում է գրպանից եւ  
սկսում կարդալ)

ԶԵՓ.—(կողմ) Նա է, նա, հայրն է... լրա-  
զիր հանեց: (բարձր) Ա՛խ... (ընկնում է նստա-  
րանի մէջքի վրայ)

ԴՄ. ԼԱՀ.—Ի՞նչ պատահեց ձեզ:

ԶԵՓ.—Ա՛խ...

ԴՄ. ԼԱՀ.—Դուք լաւ չեք զգում ձեզ:

ԶԵՓ.—Օ՛խ...

ԴՄ. ԼԱՀ.—Այս էլ քեզ մի նոր դժբաղդու-

Թիւն։ Աչքերը փակում է։ Մեռաւ։  
Զեֆ.՝ Ա՛խ...

ԴՄ. ԼԱՀ.՝ Ո՞չ, գեռ, կարծեմ, կենդանի է։  
(սրակը հանելով) Խմեցէք, կարմիր էլէքտրակա-  
նութիւն է. խմեցէք։ (բերանն է խցկում սրակը,  
որ կարմիր գոյն ունի)

Զեֆ.՝ Շնորհակալ եմ։ (թոյլ ձայնով) Ես  
միայն հոտ կը քաշեմ... խմելու կարիք չունեմ,  
միմիայն հոտ քաշել է հարկաւոր... Ես շատ  
թոյլ արարած եմ։ (բռնում է Դմիտրիյ Լայրեն-  
տինիշի երկու ձեռքն էլ)

ԴՄ. ԼԱՀ.՝ (վախեցած) — Ի՞նչ պատահեց  
ձեզ։ Ա՛յ, էլէքտրականութիւնը թափեցիք։

Զեֆ.՝ Ա՛խ, որքան դուք բարի էք... հաւա-  
տացէք, թոյլ, անպաշտպան օրիորդը կարող է  
գնահատել ձեր բարութիւնը և գթասրտութիւնը։

ԴՄ. ԼԱՀ.՝ (յետ յետ քաշելով) — Թոյլ տը-  
ւէք, տիրուհի, ճիշտն ասեմ ձեզ...

Զեֆ.՝ (կըքով) — Լսեցէք, ես մեղաւոր չեմ,  
որ այրի չեմ, այլ օրիորդ։

ԴՄ. ԼԱՀ.՝ Ձեզ ոչ ոք էլ չի մեղադրում։  
Միայն թէ ճիշտն ասեմ ձեզ, չեմ հասկանում,  
ինչու էք դուք ինձ յայտնում, որ դուք այրի  
չէք, այլ օրիորդ։

Զեֆ.՝ Բայց միթէ այդ ձեզ համար միե-  
նոյն է։

ԴՄ. ԼԱՀ.՝ Ճիշտն ասեմ ձեզ, բոլորովին

միենոյն է։

Զեֆ.՝ (ուղախ) Ճշմարիչա... Ա՛խ, որքան  
ես ուրախ եմ։ Իսկ ձեր որդուն։

ԴՄ. ԼԱՀ.՝ Ո՞ր որդուն։ Ես, տիրուհի, ոչ  
մի զաւակ չունեմ։

Զեֆ.՝ (խորամանկ) Ո՞չ, ունիք.

ԴՄ. ԼԱՀ.՝ Իսկ ես ասում եմ, որ ոչ։

Զեֆ.՝ Իսկ ես կարծում եմ որ ունիք։

ԴՄ. ԼԱՀ.՝ Թոյլ տւէք ինձ աւելի լաւ ի-  
մանալ, Ճիշտն ասեմ ձեզ, ես պսակւած եմ ըն-  
դամենը մի տարի, երկու ամիս և տասնեւորս  
օր... շատ կարելի է որ որդի կունենամ, բայց  
առայժմ չունիմ։

Զեֆ.՝ Ուրեմն ինչու էիք լրագիր կարդում։

ԴՄ. ԼԱՀ.՝ Ի՞նչպէս, Պետերբուրգում միթէ  
միայն զաւակ ունեցողներին է թոյլատրուում  
լրագիր կարդալ։ Ես չը գիտէի այդ յիմար օրէնքը։

Զեֆ.՝ Ա՛խ ինչու էք չարչարում իմ դըժ-  
բաղդ սիրաց։ Դէ, խոստովանեցէք, դուք որդի  
ունիք թէ չէ։

ԴՄ. ԼԱՀ.՝ Սա էլ ի՞նչ է կպել։ Ո՞չ, ոչ և  
ոչ։ Եղօրորդի, ճշմարիտ է ունեմ։

Զեֆ.՝ (նրան մօտենալով) Եղօրորդի։

ԴՄ. ԼԱՀ.՝ Այս, Վոլոգեան։

Զեֆ.՝ (աչքերը խաղաղեցնելով) Վոլոգեմար...  
ինչ հրաշալի անուն է։ Ա՛խ...

ԴՄ. ԼԱՀ.՝ Առէք, կանաչ էլէքտրականու-  
թիւնից խմեցէք։

ԶԵՖ. — Հարկաւոր չէ:

ԴՄ. ԼԱԻ. — Դուք իմ եղբօրորդու հետ ծառնօթ էք:

ԶԵՖ. — Դժբաղդաբար ոչ, բայց շատ եմ ցանկանում, ասացէք, նա շիկահեր է, թխադիմ... ինչ գոյնի են նրա աչքերը... (մօտենալով)

ԴՄ. ԼԱԻ. — (կողմ) Զէ, սա ինչ որ խելագար է: (նղան) Դեղին էլեքտրականութիւնը չէք ցանկանալ:

ԶԵՖ. — Հարկաւոր չէ: Խսեցէք, ես դողում եմ, եթէ յանկարծ նա ինձ չը հաւանի...

ԴՄ. ԼԱԻ. — Ո՞վ:

ԶԵՖ. — Ձեր որդին:

ԴՄ. ԼԱԻ. — Ասացի ձեզ, որ ես որդի չունիմ:

ԶԵՖ. — Միհնոյն է, ձեր եղբօրորդին, վոլգեմարը: Միայն ձեզ մի բան կասեմ, նա ի հարկէ շնորհիւ իւր գեղեցկութեան, կարող է գտնել աւելի գեղեցիկ և երիտասարդ կին, քան ես եմ, բայց երկում եմ ձեզ, որ այն աղջիկը չի սիրիւ նրան այնպէս խանդավառ կըքով, խելագար սիրով, ինչպէս ես: Ասացէք, ինդըում եմ նրան այդ ամենը:

ԴՄ. ԼԱԻ. Իմ եղբօրորդին, որքան ինձ յայտնի է, ճիշտն ասեմ ձեզ, բոլորովին էլ մտադիր չէ պսակւելու:

ԶԵՖ. — Ուրեմն այդ նա չէ, այլ դուք էք...

(ամաշկոտ) ԱՌԻ, ես որքան ամաչում եմ... (երեսը ծածկում է)

ԴՄ. ԼԱԻ. — Ես ի՞նչ:

ԶԵՖ. — Որ յայտարարել էք:

ԴՄ. ԼԱԻ. — Ի՞նչ եմ յայտարարել:

ԶԵՖ. — Այրիների մասին: Ճիշտ է, ես այրի չեմ, դեռ օրիորդ եմ, բայց դուք արդէն այդ ինձ ներեցէք, այնպէս չէ: Եթէ դուք, ճշմարիտ, ցանկանում էք պսակւել... այն ժամանակ ես... ախ, որքան ամաչում եմ: (ծածկում է ծեղքերով երեսը)

ԴՄ. ԼԱԻ. — (շաբացած) Բաւական է: Ես ոչ մի յայտարարութիւն չեմ տւել և լսում էք, պըսակւելու էլ ցանկութիւն չունեմ, որովհետեւ ես արդէն վաղուց պսակւած եմ, այսինքն մի տարի, երկու ամիս և տասնեւըս օր առաջ, ճիշտն ասեմ՝ ձեզ:

ԶԵՖ. — Պսակւած էք: (վեր թռչելով) Ուրեմըն ինչպէս համարձակւեցիք ծիծաղել վրաս: Այդ տգեղ է, ստորութիւն է, հասկացաք..., զգւելի, քաւթառ ծերուկ (արագ դուրս է վազում)

---

ԴՄ. ԼԱԻ. — Ո՞չ, այդ արդէն չափից դուրս է, ճիշտն ասեմ ձեզ: Երկրորդ անգամ միհնոյնը... (գնում է) Զէ, ոտքերս իրան-իրան են գնում: (գնում է ձախ, մեծ շրջան անելով) Ո՞չ, ես, ես այդպէս չեմ թողնի, ես նրան ոստիկանա-

տուն կուղարկեմ, ճիշտն ասեմ ՃԵՂ, դատարան  
քարշ կը տամ:

### ՏԵՍԻԼ 5

ՆԱՏԱԼԻԱ ԻՎԱՆՈՎՆԱ և ՎԱՐԴԻՄԻՐ ԱՐՄԻԼԵԻԻԶ

(Նատալիա Իվանովնան արագ մտնում է աջից,  
մի քանի քայլ նրանից հեռու վլաղիմիր վասի-  
լեիչը նրան հետևում է: Կանզնում են աւանցե-  
նայում—Նատ. Իվանովնան ձախ, իսկ վլաղիմիր  
վասիլեիչը աջ)

ՆԱՏ. ԻՎ.—(կողմ) Ո՞չ, որքան յանդուգն  
են այստեղ—Պետերբուրգում տղամարդիկ: Այս  
պարոնը քանի երրորդ անգամն է՝ հետեւմ է ինձ:

ՎԼ. ՎԱՍ.—Երրորդ անգամն է հանդիպում  
եմ այս սիրուն տիկնօջը և չեմ համարձակուում  
խօսել նրա հետ:

ՆԱՏ. ԻՎ.—Ես դիտմամբ պտտեցի ամբողջ  
այգու չորս կողմը, իսկ նա շարունակ հետեւում  
է ինձ, որպիսի յանդգնութիւն:

ՎԼ. ՎԱՍ.—Ո՞ւր է կորել իմ համարձա-  
կութիւնը, ես ինքս ինձ չեմ ճանաչում:

ՆԱՏ. ԻՎ.—Ես հաւատացած եմ, որ եթէ  
ես նստեմ այս նստարանի վրայ, նա էլ պիտի  
նստի: Այս, կը տեսնենք: (նստում է)

ՎԼ. ՎԱՍ.—Նստեմ թէ չը նստեմ: Է՞հ, ինչ  
լինելու է, թող լինի-կը նստեմ: (նստում է)

ՆԱՏ. ԻՎ. ՏԵՍԻՔ—Նստեց: Ո՞չ, մի նայեցէք  
որպիսի յանդգնութիւն է: Լաւ է որ զիտեմ, որ  
ամուսինս այստեղ այգումն է և շուտով պիտի  
գայ, զրա համար էլ չեմ վախենում:

ՎԼ. ՎԱՍ.—Ի՞նչ աշխաներ են, ի՞նչ պարա-  
նոց... կարծես սիրահարւել եմ:

ՆԱՏ. ԻՎ.—Ես այնքան տգեղ չեմ, բայց  
որքան յանդուգն են այս տղամարդիկ: Եթէ ու-  
զում է ինձ հետ ծանօթանալ, ես կարծում եմ  
նախ և առաջ պէտք է ծանօթանայ ամուսնուս  
հետ:

ՎԼ. ՎԱՍ.—Ի՞նչ միտք. իսկ եթէ սա իմ  
այրիներիցն է: Նայենք ժամացոյցին... (Նայում է)  
երեքի քսան ըստէն է, ճիշտ երրորդ այրիի գա-  
լու ժամանակն է:

ՆԱՏ. ԻՎ. ՏԵՍԻՔ—սա այնքան յանդուգն  
է, որ կը սկսի մինչև անգամ ինձ հետ խօսակ-  
ցել:

ՎԼ. ՎԱՍ.—Մեր պայմանական նշանը ցոյց  
տանք: (Լրազիր է հանում զրպանից)

ՆԱՏ. ԻՎ. (Հիասթափած) Է՞հ, սա լրագիր  
է սկսում կարդալ:

ՎԼ. ՎԱՍ.—ՏԵՍԻՆԵՆՔ ինչ յաջողութիւն կու-  
նենամ: (Բացում է լրագիրը եւ սկսում է իր թէ  
կարդալ)

ՆԱՏ. ԻՎ.—Լրագիր է կարդում, երեխ յի-  
մարի մէկն է:

ՎԼ. ՎԱՍ.—Նա է, թէ նա չէ, ի՞նչ յիմար  
դրութիւն է:

ՆԱՏ. ԻՎ.—Ինչ անտանելի շոգ է: (բացում  
է վերաբերուն, որի տակ երեւում է վարդագոյն  
բանար)

ՎԼ. ՎԱՍ.—Նա է, վարդագոյն բանա ունի:  
(թողնում է լրագիրը եւ ցանկանում է խօսել) —  
իսկ եթէ յանկարծ նա չը լինի:

ՆԱՏ. ԻՎ.—(նըան) Զը գիտէք այժմ ժամը  
քանիսն է:

ՎԼ. ՎԱՍ.—(Ժամացոյցին նայելով) Տասն և  
երեքի եօթանասուն չորս ըռպէն է:

ՆԱՏ. ԻՎ.—(ծիծաղելով) Ի՞նչպէս:

ՆԱՏ.—ԻՎ. Այսինքն, ներողութիւն, եօթի  
տասներեք ըռպէն... ոչ, ոչ... երկուսի քա-  
ռորդը:

ՆԱՏ. ԻՎ.—Երկուսի քառորդը—շնորհակալ  
եմ:

ՎԼ. ՎԱՍ.—Ներեցէք համարձակութեանս...  
դնւք, դուք սպասում էք... որ և է մէկին:

ՆԱՏ. ԻՎ.—Այո, ամուսնուս:

ՎԼ. ՎԱՍ.—Ապագայի:

ՆԱՏ. ԻՎ.—Ի՞նչպէս թէ ապագայ, ներ-  
կայ:

ՎԼ. ՎԱՍ.—իսկ ես կարծում էի դուք այ-  
րի էք:

ՆԱՏ. ԻՎ.—Այդ ինչն, միթէ ես պառաւ  
եմ:

ՎԼ. ՎԱՍ.—Ի՞նչ էք ասում, ի՞նչ էք ասում  
(կողմ) Այս նա չէ, այրիներից չէ: Ես բոլորո-  
վին խելքս կորցրի, երկու խօսք ասել չեմ կա-  
րողանում: Հաւատում էք դուք ճակատագրին:

ՆԱՏ. ԻՎ.—Ինչու էք հարցնում:

ՎԼ. ՎԱՍ.—Ես հաւատում եմ: Ինքը ճա-  
կատագրին է, որ մեզ ահա երբորդ անդամն է  
միմեանց հետ պատահեցնում է: Ինքը ճակա-  
տագրին է, որ ձեզ բերել է այս չարագուշակ  
նստարանի մօտ... Այո, ես ճակատագրին հաւա-  
տում եմ:

ՆԱՏ. ԻՎ.—Զեմ հասկանում, ինչ գործ ու-  
նի նստարանն այստեղ:

ՎԼ. ՎԱՍ.—Որովհետեւ ես կարծում էի, որ  
դուք այրի էք:

ՆԱՏ. ԻՎ. Բան չեմ հասկանում: Կրկնում  
եմ որ ես ամուսնացած եմ: Դուք ճակատագրին  
էք հաւատում, իսկ իմ ամուսինը հօմէօպա-  
տիային, նա շուտով այստեղ կը գայ, նրա հետ  
ծանօթացէք:

ՎԼ. ՎԱՍ.—Թող կը տաք:

ՆԱՏ. ԻՎ.—Ես արգելել չեմ կարող:

ՎԼ. ՎԱՍ.—Լսեցէք, դուք կարող էք քա-  
ռանւել ձեր ամուսնուց:

ՆԱՏ. ԻՎ.—Այդ ինչն:

ՎԼ. ՎԱՍ.—Դուք չեմ որ նրան չէք սիրում:

ՆԱՏ. ԻՎ.—Այդ ինչն:

ՎԼ. ՎԱՅ.—Ո՛չ, դուք չեք կարող սիրել  
նրան:

ՆԱՏ. ԻՎ.—Յամենայն դեպս ես նրան յար-  
գում եմ: Ճշմարիտ է նա ինձանից շատ մեծ  
է, բայց...

ՎԼ. ՎԱՅ.—Խնդրում եմ, աղաչում եմ ձեզ, բա-  
ժանւեցէք նրանից:

ՆԱՏ. ԻՎ.—Դուք խելագարւել էք:

ՎԼ. ՎԱՅ.—Այս, դուք իրաւ էք ասում:  
Ես խելագարւել եմ, ես ինքս էլ չեմ հասկա-  
նում՝ ինչ եմ ասում, ինչ եմ անում: (Նրա  
ձեռքը բռնելով):

ՆԱՏ. ԻՎ.—Ի՞նչպէս էք համարձակւում:

ՎԼ. ՎԱՅ.—Մի բան միայն գիտեմ, որ ես  
սիրում եմ ձեզ: (Համբուրում է նրա ձեռքը մի  
քանի անգամ):

## ՏԵՍԻԼ 6

ՆՐԱՆՔ ԵՒ ԴՄԻՏՐԻՅ ԼԱԻՐԵՆՏԻԵԽԶ:

ԴՄ. ԼԱԻ.—(Մի փոքր ժամանակ լրտ նա-  
յում է այս տեսարանին) Կեցցէք, կեցցէք:

ՎԼ. ՎԱՅ. (Միասին) Դմիտրիյ Լաւրենտիևը  
ՆԱՏ. ԻՎ. (Միասին) Իմ ամուսինը:

ԴՄ. ԼԱԻ.—Լաւ է, հաւանում եմ, ճիշտ  
ասեմ ձեզ, կը նշանակի դուք արդէն ծանօթա-  
ցել էք:

ՆԱՏ. ԻՎ.—Գիտես ինչ, սիրելիս:

ԴՄ. ԼԱԻՐ.—Գիտեմ, գիտեմ, չէ, Վոլոդեա,  
բարե քեզ... (Համբուրում են)

ՆԱՏ. ԻՎ.—(կողմ) Այս ինչ է նշանակում:

ԴՄ. ԼԱԻ.—Տեսնում ես, Վոլոդեա, ինչ կին  
ունիմ, ինչու չես շնորհաւորում:

ՎԼ. ՎԱՅ.—Սրտանց շնորհաւորում եմ,  
Դմիտրիյ Լաւրենտիևիչ, սրտանց...

ԴՄ. ԼԱԻՐ.—Ի՞նչ Դմիտրի Լաւրենտիևիչ եմ  
ես քեզ համար, առաջւայ նման քեռի կոչիր  
ինձ:

ՆԱՏ. ԻՎ.—Քեռի...

ԴՄ. ԼԱԻՐ.—(կողմը) Մի նայիր, տես, ինչ  
եղբօրորդի ունեմ: Այս ինչ է, Վոլոդեա, ձեր  
Պետերբուրգում բոլոր կանայքն էլ խելագար-  
ներ են:

ՎԼ. ՎԱՅ.—Ի՞նչ է պատահել որ:

ԴՄ. ԼԱԻՐ.—Ահա հէնց այստեղ, երկուսը  
նրանցից կպահ ինձ, հայհոյեցին:

ՎԼ. ՎԱՅ.—(կողմ) Երկի իմ այրիներն են  
եղել:

ԴՄ. ԼԱԻՐ.—Իսկ ես, ճիշտն ասեմ ձեզ,  
շպտ եմ քաղցել, գնանք տուն:

ՎԼ. ՎԱՅ.—Ես ճշմարիտ չը գիտեմ...

ԴՄ. ԼԱԻՐ.—Նատաշա, խնդրիր Վոլոդեա-  
յին:

ՆԱՏ. ԻՎ.—Վլագիմիր Վասիլևիչը ի հարկէ  
չի մերժիլ:

ՎԼ. ՎԱՅ.—(լուր զլուին է տալիս):

**ԴՄ. ԼԱԻԲ.** — Այս և լաւ, ճիշտն ասեմ ձեզ:  
Վոլոգեա, թեդ տուր նատաշին, իսկ ես կամաց  
կը գամաձեր հետեից և սունկեր կը փնտռեմ  
ճանապարհին: (Վլաղիմիր Վասիլեվիչը թել տա-  
լիս է նատախա Դվանովնային եւ զնում են աջ):

**ԴՄ. ԼԱԻԲ.** — (զինարկը հանելով, թաշկի-  
նակով սրբում է ծաղատ զլուխը, յանկարծ ծնորք  
զինի վրայ, մի տեղ կանգնեցնում է եւ սկսում  
շօշափել: Այս ի՞նչ է, կարծես ճակատիս մի  
բան է դուրս գալիս, կարծես թէ պող լինի,  
պէտք է ճիշտն ասեմ ձեզ, բժշկին դիմեմ և  
խորհրդակցեմ նրա հետ, այո, շատ նման է պողի:  
(զնում է աջ):



» Վերածնուածը, դրամա երեք արարուած.	35
Մէրէ Շարլ, «Հիգրա», դրամա հինգ գործ.	50
թարգմ. Փրանսերէնից Վ., Փափաղեան . . . .	40
Միբրո. Դործը գործ է պահանջում, կատ. երեք գործ. թարգմ. բնագրից Կ. Զալալեան	40
» Ժօրժ Դանդէն կամ շփոխուած ամուսինը, կատակ. երեք արար. թարգմ. Գ. Սունդուկիան	40
» Կատակերգը. թարգմ. Նուպարեան 2 հատ.	5 40
Մարիկ Լէօ Դարայեան, դրամա մէկ գործ.	20
Շէքսպիր, Արքայ Լիր, ողբ հինգ արար.	
թարգմ. Մասենեանցի . . . . .	50
» Մակրեթ, ողբերգ. հինգ արար. թարգմա- նեց Ս. Սալիսասեանց . . . . .	50
» Վենետիկի վաճառականը, թատերազրու- թիւն հինգ ար. թարգմ. անգ. Յ. Խան Մասենեան	40
» Ինչպէս կուզէք . . . . .	50
» Օտէլլօ, ողբերգ. 5 արար. Շէքսպիրի կեն- սագր. Թ. Ս. Սուլիսանեանց . . . . .	60
Շիլեր Աւազակներ, ողբերգութ., գերմ.	
թարգմանուած. Փ. Վարդանեան . . . . .	50
Շիրվանզագէ, Պատուի համար. դրամա 4 գ.	60
Շանթ. Եսի մարդը, դրամա հինգ արար.	60
Պշերըշկուկի. Երջանկութեան համար. դրա- մա երեք գործ. թարգմ. Ս. Շխեանց . . . . .	50
Սարդու. Ոգեհարցութիւն, թատերգ. երեք արարուածով, թարգ. Մելիք-Աղամեանց . . . . .	50
Սալդարեան. Արեշտահեան. Երազ կամ Օս- կան Պետրովիչն Եղեմում, ֆէյերիա 1 գոր. .	20
Սունդուկիան Գ. Էլիմէկ զոհ, կոմեդիա 5 ար.	1
» Պէտօ, կատակ. երեք արարուած . . . . .	50
Ամուսիններ, կատակ. չորս արարուած . . . . .	1
Օսկան Պետրովիչն էն կեանքումը, 1 արար.	30
Գիշերվան սարը խէրէ, կատակ. մէկ ար:	30
Խաթարալա, կատակ. 4 ար. և 6 պատկ. . . . .	50
Քանդած օջախ, կատակ. երեք արար. . . . .	50
Բաղնիսի Բօխչա, կատակ. երկու արար. . . . .	40
Եւ այլն կամ նոր Դիոգինէս, 2 արար . . . . .	40
Սումբատով, Դաւաճանութիւն, դրամատ.	
Եղինգա 5 արար. թարգմ. Ա. Մատուրեան . . . . .	50
Վարդանեան Ա. Անարխիստը, վաղբվիլ 1 ար.	15
Տրիտի, դրամ 4 ար. թ. Լ. Մելիք-ազամեան	25
» Մեծն Վարդան, ողբերգութիւն 5 գոր. .	50
Ցագարելի, «Միբիրական» կօմեդիա չորս	
գործող. թարգմ. Գ. Միբաղեան . . . . .	50
Փառնակէս, Նիսիա, վօղբվիլ մէկ արար	40

Փափազեան Վ.	Ժայռ,	դրամա չորս գործ	1	»
Ֆրղբի,	Փառանձիմ,	կօմ. 4 արար	1	»
Արաքսիան,	Ափերպրիզ.	վօղեզիլ 1 արար.	20	
Հառւպաման,	Կառապան	Հենշել. դրամա 5		
գործ.	թարգմ.	Լ.	Բարայեանի	50
Խելքի տօպրակներ			30	

## ԳՐԱՆՑ Ե 1 ՐՈՒԲԼԻ

Դիմել՝ Թիֆլիս, «Գուտեմբերգ» դրավաճառանոցին



